Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

99
491.54-5
Ա-73
2399

ՉԱՊԷԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Գ. ԳԻՐՔ

(Ե. ՄԻՍ)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՎԱՒԵՐԱՑԻԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱՐԱՆՈՒԹԻՒՆ Ն. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1902

Ս 405-10
491.542-5
Ա-73

ՊԱՎԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

Գ. ԳԻՐՔ

(Ա. ՄԱՍ)

ՊՈՂՈՍԱՆՑ-ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Գ. ՊԱԼԷՆՑ
G. POLHU CONSIPLE
G. BALENTZ
LIBRAIRE-ÉDITEUR

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱԼԷՆՑ
Զամիրամեանցեաց, թիւ 20

1902

14 FEB 2013

5880

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ
Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
27, Ֆինանսական եզուշու, Կ. Պոլիս

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ٥ ذی‌الحجه ٣١٨ و ١٣ مارت ٣١٧
تاریخلی و ١٣ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

491.99-5
Ա-73

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դորձնական Բերականութեան Գ. Դրքին Ա. Մասն է ներկայ հատորը, ուր ջանացած ենք ամփոփել արդի աշխարհաբարին մէջ ընդունուած և գործածուած բոլոր այն էական կանոնները որոնք կը վերաբերին առոգանութեան, ուղղագրութեան, տառադարձութեան, տրոհութեան, բառակազմութեան, ինչպէս նաև գոյականի, յօդի, ածականի և դերանունի բառաղխութեանն ու համաձայնութեանը։

Այս Գ. Դրքը, որուն Բ. Մասը պիտի հրատարակուի ընդ հուպ, յատկացած է մեր նախակրթարաններու բարձրագոյն դասընթացքին։ Մեր գլխաւոր նպատակը եղած է պատկերացնել հոն Կ. Պոլսոյ աշխարհաբարը այնպէս ինչպէս կը գրեն մեր արդի լաւագոյն հեղինակները, և այս նպատակին հասնելու համար դիմած ենք երկար հետազօտութեանց, որովհետև դժբախտաբար տակաւին կարելի չէ եղած գոյացնել, նոյնիսկ արեւմտեան աշխարհաբարը գրողներուն մէջ, լեզուի միօրինակութիւն։ Այս է պատճառը որ հարկ կը զգանք ներկայ յառաջաբանով պարզել, հայ ուսուցիչներու դիւրութեան համար, կարգ մը էական կէտեր, բացատրելով մեր նախընտրած քերականական կանոններուն առաւելութիւնները, և կամ զանոնք նախընտրելնուս պատճառները։

Ընդհանուր դիր. — Յոքնակիի կազմութեան մէջ կան քանի մը կէտեր որոնց մասին գրողները բոլորովին համաձայն չեն։ Այսպէս.

Ա. Էջ — պարզնակող միավանկ բառերուն յոքնա-

Պետական Գրադարան
Публичная Библиотека

կին այսօր ընդհանրապէս կը կազմուի առանց կորուսման կանոնին ենթարկելու զանոնք, և կը գրուի անխտիր գէրքեր, թ--ղթեր, ագրեր, դ--ռներ։ Թէև կայ փոքրամասնութիւն մը որ կը գործադրէ կորուսման կանոնը միավանկ բառերէն ոմանց համար, և կը գրէ գրքեր, թղթեր, արտեր, դռներ, և.ն., սակայն մենք առաջին ձևը նախընտրած ենք ոչ միայն որովհետև այդ ձևը ամէնէն սովորականը դառնալ սկսած է, այլ նաև հետևեալ երկու նկատողութիւններով. նախ՝ որովհետև կարելի չէ ճշդել կանոն մը թէ ե՛րբ պէտք է ն և ռ-ն պահել և ե՛րբ ջնջել, և յետոյ՝ որովհետև կարգ մը բառերու համար կորուսման կանոնը գործադրուելով տեղի կը տրուի անճահ հոմոնութեանց, ինչպէս թիզ և թուզ, նիշ և նուշ, կիր և կուր և.ն., որոնց յոքնակիները իրարու հետ պիտի չփոթուէին, եթէ կորուսման կանոնը գործադրուէր անոնց վրայ։

Բ. Մէկ ու կէս վանկ ունեցող բառերէն ոմանց յոքնակիի մասին ալ համաձայն չեն գրողները. կան որ կը գրեն տարրէր, արկղէր, և կան ալ որ կը գրեն տարրեր, արկղեր։ Առաջինները իրենց հետ ունին արդի սովորութիւնը, և վերջինները Այտրնեանի հեղինակութիւնը։ Մենք ընդունած ենք առաջին ձևը, և դիտած ենք որ մէկ ու կէս վանկ ունեցող բառերը յոքնակիի կազմութեան տեսակէտով երկու կարգի կը բաժնուին. առնոնք՝ որոնց սկիզբն է կէս վանկը, և անոնք որոնց վերջն է կէս վանկը։ Առաջինները, ինչպէս գրէր, ձեռքով յոքնակի կ'ըլլան, իսկ վերջինները, ինչպէս արկղ, էջ ով։ Այս կանոնը, զոր ցարդ ո և է քերական չէր դիտած, անդիտակցաբար գործադրուած է գրողներու մեծամասնութեան կողմէ, և իրեն հետ ունի նաև ներդաշնակութիւնը. ուստի տարակոյս չունինք որ տարրեր, արկղեր ձևերը լեզուաբանորեն կորուելու դատապարտուած են։

Գ. Ճիշդ նոյն դիտողութիւնը միավանկներով կամ կէս վանկով վերջացող մեկուկիսավանկներով կազմուած բարդ բառերու յոքնակիին համար ալ։ Այսինքն ասոնց համար միօրինակ կանոն մը ունի՝ Ձեռ ով յոքնակի ընել զանոնք։ Իսկ մենք ճշդած ենք այն կանոնները որոնցմով արդի գրողները երբեմն ձեռ ով և երբեմն ալ Ձեռ ով յոքնակի կ'ընեն այդ կարգի բառերը (տե՛ս կանոն 237)։ Այս դիտողութիւնները, որոնք բոլորովին նոր են, հիմնուած են լաւագոյն գրողներու գրուածներուն վրայ։

Դ. Ինչպէս կ'երևայ մեր ասանդած կանոններէն, կարգ մը գրաբարի ձևով յոքնակիներու գործածութիւնը ընդունած ենք, թէև գրողներէ ոմանք ամէն պարագայի մէջ կ'ուզեն ԷՐ ով կամ Ձեռ ով միայն կազմել յոքնակին։ Անուրանալի է սակայն թէ այսօր ընդհանուրին զրչին տակ նուիրագործուած են այլևս այդ ձևերը, որոնք արդէն ներդաշնակութեան տեսակէտով ալ նախընտրելի են, քանի որ աշխարհաբարի ձևով կազմուած յոքնակիներու կրկնութիւնը յաճախ անտանելի միօրինակութիւն մը յառաջ կը բերէ նախադասութեանց մէջ. այնպէս զատ յայտնի է թէ նոյն իսկ ժողովուրդը դեռ կը պահէ իր լեզուին մէջ գրաբարի ձևով կարգ մը յոգնակիներ, ինչպէս տղաք, տեղուանք, կտրուանք, և.ն.։ Ահա՛ ինչու գրաբարի ձևով յոքնակին տեղ տեղ գործածել թելադրած ենք, մասնաւորապէս կարգ մը մասնիկներով վերջացող հասարակ և յատուկ անուններու, ինչպէս նաև աղգերու վերաբերեալ յատուկ անուններու համար։

Գոյականներու հոլովում. — Մեր արդի աշխարհաբարի գոյականներու հոլովմանց մէջ, այնքան զանազանութիւն կայ որ քերականութեան հեղինակ մը մեծ դժուարութեան հանդէպ կը գտնուի այդ մասին

որոշ կանոն մը ճշդելու համար։ Մեր գրողներէն ոմանք խօսուած լեզուին հլու հետեւող ըլլալ կ'ուզեն, և դրեթէ ամէն պարագայի մէջ, պարզապէս է, ե, -վ աւելցնելով ուղղականին վրայ կը կազմեն սեռականն ու տրականը, բացառականը, գործիականը։ Ուրիշներ կարելի եղածին չափ շատ փոխառութիւններ կ'ընեն գրաբարի հոլովումներէն, գործածելով եղակի և յոգնակի անանկ հոլովման ձեւեր, որոնց համար գրաբարի մէջ ալ սովորութիւնն է միակ կանոնը, ինչպէս. թեւ, թեւոյ, թեւոց. կարգ, կարգաւ, կարգաց. զարդ, զարդուց. հիմ, հիմանց. ծաղր, ծաղրու, և ն.։ Այս երկու ծայրանեղ դրութեանց միջև կայ միջին ճամբայ մը ևս, որուն հետեւողները հեղինեան բաղմանալու վրայ են։ Ասոնք կը ջանան որոշ պարագաներու մէջ սահմանափակել հոլովման գրաբար ձեւերը, այդ պարագաներէն դուրս գործածելով աշխարհաբարի կանոնը միայն։ Մենք ալ հետեւած ենք այս վերջին դրութեան, և ինչ որ գժուար եղած է մեզ, այդ սահմանափակումն է ան։ Երկար հետազօտութեանց պէտք ունեցած ենք ճշդելու և իւրաքանչիւր հանելու համար հոլովման այն զանազան ձեւերը, զորս ներկայացուցած ենք գոյականներու հոլովման պատկերին մէջ (էջ 98—103)։ Կ'արժէ՞ որ առանց մասին քանի մը բացատրութիւններ տանք.

Ա. Է վերջացող բառերը սեռականի մէջ թէ՛ ընդհանուր օրէնքին կը հետեւին է առնելով, ինչպէս հոգի, հոգիէ, և թէ՛ գրաբարի ձեւով կ'ըլլան հոգի, հոգ-ոյ։ Այս կրկին ձեւերն ալ ընդհանուր գործածութեամբ նուազագործուած են այսօր. ուստի աւանդած ենք հաւասարապէս երկու ձեւերն ալ, թէև գանուին գրողներ որոնք -ոյ վերջացող սեռականները ուզեն բոլորովին վտարել աշխարհաբարէն։

Բ. Ուրիշ վերջացող գոյականներու գործիակա-

նին համար աւանդած ենք միայն ուրեամբ ձեւը, թէև ոմանք կը գործածեն նաև ուրիւնով։ Ասոր պատճառն է ոչ միայն ուրեամբ ձեւին կարճ և աւելի ընդհանրացած ըլլալը, այլ և սա պարագան թէ բացառականը ուրէնեն կը գործածուի և ոչ ուրէ-նեն. Ստեփան Ոսկան, որ աշխարհաբարի նշանաւոր վարպետ մըն էր, կը գործածէր արդարեւ ուրէ-նով, բայց տրամաբանական ըլլալու համար կը գործածէր նաեւ ուրէ-նեն, ինչ որ այսօր կարելի չէ ընել այլևս, քանի որ ուրէնեն բացառականը վերջնապէս ընդունուած է։

Գ. Ուղղ վերջացող ածանցեալ անուններուն համար աւանդած ենք թէ՛ աշխարհաբարի ձեւով հոլովում և թէ՛ գրաբարի ձեւով, այնպէս որ զգացում բաւին սեռականը գործածուի հաւասարապէս զգացումի և զգացման, և գործիականը զգացումով և զգացմամբ։ Հոս ալ ընդհանուր կերպով ընդունուած սովորութեան հետեւած ենք։

Դ. Իւ վերջացող բառերուն գալով, անոնցմէ հազիւ տասն տասներկու հատ ընդհանրացած են արդի լեզուին մէջ, և պէտք է ըսել թէ սովորաբար աշխարհաբարի հոլովման կանոնին համեմատ կը գործածուին։ Սակայն որոմ հետեւ չատ գործածական դարձած են պաս-ոյ ատեան, պաս-ոյ ղեգեռն, այս հաշ-ոյ և ն. բացատրութիւնները, իւ վերջացող բառերուն համար աւանդած ենք նաև դրաբարաձեւ հոլովումն ալ։

Ե. «Ուղ վերջացող անուանուոյթներէն երկուքը միայն կը հոլովուին», գրած ենք (կ. 256)։ Արդարեւ մեր արդի գրողները ուղ վերջացող անուանուոյթները ընդհանրապէս չեն հոլովեր, և եթէ երբեք հոլովել հարկադրուին, անոնց տեղ կը գործածեն աշխարհաբար հոմանիշները, ինչպէս երդնուղի տեղ երդում ընել, յեղնուղի տեղ կոթնիչ, և ն.։

Զ. Ոչ-արմատական + ով վերջացող բառերուն գրաբարաձև հոլովումը, զոր այսօր տակաւին կը գործածէ գրողներու կարեւոր մաս մը, չենք աւանդած այս քերականութեան մէջ, և չենք գործածած, օրինակի համար, կրանիֆ, կրանիֆ, աչֆ, աչաց, ոտֆ, ոտֆց և այն. ձեւերը։ Ասոր պատճառն է այն չվոխթութիւնը, որ իմաստի տեսակէտով յառաջ կու գայ այդ հոլովումներէն. արդարեւ երբ ըսենք աչաց, կրանֆց, չի հասկցուիր թէ մէ՞կ աչֆի, մէ՞կ կրանֆի վրայ է խօսքը, թէ բազմաթիւ աչֆերու և կրանֆներու վրայ։ Ուստի աւանդած ենք թէ + վերջացող բառերը իբր եզակի կը հոլովուին ընդհանուր օրէնքին հետեւելով, ինչպէս աչֆի, կրանֆի, և այն. իսկ յոքնակիի մէջ եր կամ ներ կ'առնեն և այնպէս կը հոլովուին, ինչպէս աչֆերու, կրանֆներու, և այն.։

Է. Հոլովման առեն ձայնաւորներու վոխոխման կանոնին գործադրութեան մասին՝ գրողները բոլորովին համաձայն չեն այսօր. կան որ կը դրեն պարտէզ, պարտէզի, ամէն, ամէնուն, ատէ-ն, ատէնի, և կան ալ որ կը գրեն միշտ պարտեզի, ամենեն, ատեն-ի, և այն։ Մենք այս վերջին ձեւը աւանդած ենք, որովհետեւ դիտած ենք թէ հետզհետէ հոլովման առեն փոխոխման կանոնը չգործադրելու սկզբունքը ընդհանրացած է մանաւանդ վերջին տասնըհինգ տարիներուն մէջ։

Ը. Գալով կորուսման կանոնին, կան բառեր որոնց հոլովման մէջ գրեթէ բոլոր գրողները անխտիր կը գործադրեն այդ կանոնը, կան բառեր որոնց մէջ չեն գործադրեր, և կան բառեր ալ որոնց մէջ երբեմն կը գործադրեն և երբեմն չեն գործադրեր։ Այս մասին որոշ կանոն մը ճշդելու աշխատած ենք թէև, սակայն է ձայնաւորին կորուսման նկատմամբ մեր ըրած երկար հետազօտութիւնները չեն յանգած գոհացուցիչ արդիւնքի մը, և կարելի չէ եղած ընդհանուր կանոն մը սահմանել. ստիպուած ենք բաւականանալ ցոյց տալով կարգ մը պարագաներ, որոնց մէջ է՝ն ընդհանրապէս չի կորսուիր (կ. 260), և կարգ մը պարագաներ ալ որոնց մէջ է՝ն ընդհանրապէս կը կորսուի (կ. 261)։ Նոյնպէս կարելի չէ եղած որոշ կանոն մը ճշդել հոլովման առեն ու երկբարբառին կորուսման համար, որ սակայն շատ աւելի հաղուադէպ է։

Թ. Բոլոր այս պարագաներէն զատ, աւանդած ենք հատարակ և յատուկ անուններու եզակիին համար կարգ մը անկանոն հոլովումներ, հետեւելով ընդհանուր սովորութեան. նոյնպէս յոքնակիի համար աւանդած ենք թէ ազգերու անունները, ինչպէս նաև կարգ մը մասնիկներով վերջացող անուններ, գրաբարի ձեւով ալ կը հոլովուին, ըստ արդի գրաւոր աշխարհաբարին։

Յօդի գործածութիւն. — Արդի աշխարհաբարի քերականութեան ամէնէն կնճռոտ մասերէն մէկն է այս, և այս մասին՝ գրողներուն միջև անհամաձայնութեան մէկէ աւելի կէտեր կան։ Հարկ կը նկատենք ուրեմն ուսուցիչներուն ուշադրութիւնը հրաւիրել այդ կէտերէն զլխաւորներուն վրայ.

Ա. Ը և Ն յօդերուն գործածութիւնը այսօր միօրինակ չէ Կ. Պոլսոյ աշխարհաբարին մէջ։ Գրողները համաձայն են, երբ բառը ձայնաւորով կը վերջանայ. այն առեն միշտ Ն յօդը կը գործածուի։ Բայց երբ բառը բաղաձայնով կը վերջանայ, կան գրողներ որոնք Ն յօդը կը գործածեն երբ յօդ առնող բառին յաջորդող բառը ձայնաւորով կը սկսի, և կամ յ կամ հ բաղաձայններով. կան գրողներ ալ որոնք բաղաձայնով վերջացող բառերուն քով միշտ Ը յօդը կը գործածեն, ի բաց առեալ երբ անոնց յաջորդող բառը էական բային սահմանական ներկան կամ անկատարն է և կամ ու, աղ, իսկ, անգամ շաղկապները, և ի վար, ի վեր նա-

խաղրութիւնները։ Մենք այս գործածութեան վերջինը աւանդած ենք, ոչ միայն որովհետև այդ է այսօր Պոլսոյ մէջ ընդունուած ձևը թէ՛ ժողովրդեան կողմէ և թէ՛ գրագէտներու մեծամասնութեան դրչին տակ, այլ նաև որովհետև այդպէս գործածած են Փէշտիմալճեան Գրիգորի, Տէրոյենցի, Զօրայեանի, Սահեան Ոսկանի պէս հեղինակութիւններ, որոնք աչխարհարար գրած են անանկ առեն մը երբ լեզուին մէջ դեռ չէին մտած պարմանագրական նորութիւններ, կամ գրաբարի ազդեցութեամբ կատարուած փոփոխութիւններ։

Բ. Անորոշ յօդին գործածութիւնը կրկին ձև ունի այսօր Պոլսոյ աչխարհարարին մէջ։ Կան որ մը անորոշ յօդին ը-ը կը ջնջեն ձայնաւորներու առջև, ինչ որ նորամուտ սովորութիւն մըն է լեզուին մէջ։ Իսկ մեծամասնութիւնը մը լին ը-ը չի ջնջեր երբեք արձակին մէջ, և էական բային սահմանական ներկային և անկատարին բոլոր դէմքերուն, ինչպէս նաև աղ չաղկապին առջև մը լին քով ն մը կ'աւելցնէ։ Այս ձևը, որ ժողովուրդին գործածած ձևն է, մեր աչխարհարարին անդրանիկ գրիչներէն գործածուելէ ետքը, թէև միջոց մը վարուած է կարգ մը գրողներու կողմէ, բայց սաս սասնընդհանդ տարիէ ի վեր հետզհետէ ընդհանրանալու վրայ է։ Այս ձևն է զոր աւանդած ենք մենք ալ այս Քերականութեան մէջ։

Գ. Զանցած ենք ամփոփել հնար եղածին չափ յատակ կերպով այն կանոնները, որոնցմով կարելի է ճշդել թէ ո՛ւր պէտք է յօդ գործածել, և ո՛ւր չգործածել։ Այդ մասին շատ մը նոր դիտողութիւններ ներկայացուցած ենք։ Կէտ մը, որուն վրայ կ'ուզենք մանաւորապէս հրաւիրել մեր ուսուցիչներուն ուշադրութիւնը, ի, ու, ոյ և ներու է տարբեր վերջաւորութիւն ունեցող եզակի և յոքնակի սեռականներուն և

տրականներուն, ինչպէս նաև գործիականին որոշիչ յօդ չառնելու պարագան է։ Ըսած ենք արդէն (կ. 392) թէ այդ հոլովները չեն առներ որոշիչ յօդ, բայց կ'առնեն դիմորոշ յօդ, և կը դրենք իր ձեռովը, իր միջամտութեանը։ Խնդիր է սակայն թէ մեր, ձեր, իրենց ստացական ածականներուն հետևող գոյականներուն քով դրուած յօդը, — որ միշտ միօրինակ ը է կամ ն, և հետևաբար դիմորոշ յօդի հանդամանք չունի, — պէ՞տք է պահել գործիականին, ինչպէս նաև յօդ չառնող սեռականներուն ու տրականներուն քով։ Այսպէսնեան, ընդունելով հանդերձ թէ՝ այդ պարագային՝ ը-ը դիմորոշ յօդ չէ, և թէ որոշիչ յօդը գործիականի մէջ չի գործածուիր բնաւ, մեր գիրքովը, ձեր գիրքովը, իրենց գրիչներովը գործիականները գործածած է։ Մենք, նկատելով որ մեր, ձեր, իրենց ստացական ածականներուն հետևող գոյականներուն վրայ դրուած յօդը որոշիչ յօդ է, աւանդած ենք թէ այդ յօդը կը յապաւուի կարգ մը պարագաներու մէջ (կ. 444)։ Իսկ արդի դրաւոր լեզուին մէջ երբեմն մեր գիրքովը երբեմն մեր գիրքովը կը գործածուի գրողներուն ճաչակին համեմատ։ Ժամանակը պիտի որոշէ թէ այս երկու ձևերէն ո՛րը պիտի ստանայ վերջնական նուիրագործումը։

Դ. Կարևոր խնդիր մըն ալ յատուկ անուններու յօդին գործածութիւնն է, որուն մասին գրողները բոլորովին համաձայն չեն։ Մենք չանցած ենք կարելի եղածին չափ պակսեցնել յատուկ անուններու քով յօդի գործածութեան պարագաները, ինչ որ որոշ ձգտումը կ'երևայ մեր արդի լաւագոյն գրողներուն։

Դերանուններու գործածութիւն. — Այս Քերականութեան մէջ ընդունած ենք աչխարհարարի դերանունները միայն, մէկ կողմ թողլով դրաբար դերանունի ձևերը, որոնք այլևս բոլորովին դադրած են գործա-

ծական ըլլալէ։ Պէտք է դիտել սանք սակայն թէ արդի աշխարհաբարին մէջ գործածուած դերանունները ժողովուրդին գործածութենէն քիչ մը կը տարբերին։ Այսպէս, երբ ժողովուրդը անձնական դերանուններու հայցականին համար կը գործածէ իս, մեզ, քեզ, ձեզ, և այն., այսօր գրողներուն սուսուր մեծամասնութիւնը այդ ձևերուն տեղ ընդունած է գրաբար հայցականները, այսինքն զիս, զմեզ, զքեզ, զձեզ, և այն.։ Այս գործածութեանն գլխաւոր պատճառը եղած է խմասի շփոթութեանց տեղի չտալու պէտքը, որովհետև եթէ ՀՈՎ հայցականը զանց առնուէր, հարկ պիտի ըլլար ինքզ, իրենք, ան, անոնք ձևերը գործածել թէ՛ ուղղական և թէ՛ հայցականի համար։ Հակառակ սոսր, կան արդի գրողներուն մէջ ոմանք որ ՀՈՎ հայցական չգործածելու համար մեզ, քեզ, ձեզ, և այն. ձևերը իբր հայցական կը գործածեն, և տրականի կը վերապահեն մեզի, քեզի, ձեզի, և այն. ձևերը, որոնք, սակայն, ժողովրդական լեզուին մէջ կը գործածուին նաև իբր հայցական։ Յարաբերականի համար ալ աւանդած ենք զոր կամ զորս հայցա կաններուն գործածութիւնը, թէև ՀՈՎ հակառակորդները որ և որոնք ձևերը կը գործածեն, յաճախ տեղի տալով հոմութեանց։

Տաղաչափական լեզու. — Ուրիշ կէտ մըն ալ, որուն վրայ ուսոց ցիչներուն ուշադրութիւնը կ'ուղղենք հրաւիրել, այն քանի մը քերականական շեղումներն են, զորս յանուն ներդաշնակութեան ստիպուած ենք ընդունիլ տաղաչափական լեզուին մէջ, ինչպէս ամէն լեզուի մէջ ընդունուած են։ Հարկ կը համարինք համառօտ կերպով նշանակել հոս մեր ընդունած հետևեալ երեք շեղումները, որոնք կ'երևան այս դասագրքին ոտանաւորներուն մէջ.

Ա. Ն յօդը գործածած ենք փոխանակ ԸՆ բաղա-

ձայնով վերջացող բառերուն վրայ, ամէն անգամ որ այդ բառերուն հետևէն ձայնաւորով և կամ յ կամ հ բաղաձայնով սկսող բառ մը եկած է։

Բ. Մը անորոշ յօդը ՉՆՉԱԾ ենք ձայնաւորի առջև ամէն անգամ որ վանկին թիւը պահանջած է. այս է պատճառը որ յաճախ մրև աղ, մրև ի ձևերուն տեղ գործածած ենք մ'աղ, մ'ի ձևերը։

Գ. Երբեմն յօդը ՉՆՉԱԾ ենք ոտղին ծայրը յանդի պատճառաւ։

* * *

Մեր այս աշխատութեան մէջ, ջանացած ենք, որքան կարելի է, ամէն կէտերու համար ալ աւանդել այն կանոնները, որոնք իրենց կողմը ունին գրողներու մեծամասնութիւնը, և երբեք չենք մտցուցած լեզուին մէջ կանոն մը զոր չինած ըլլանք անսովոր գործածութիւն մը ընդունել տալու նպատակաւ, ինչպէս ըրած են Ռուսինեան և ուրիշներ։ Երկարամեայ աշխատութիւն մը սակայն հարկ եղած է ամփոփելու համար այն դիտողութիւնները, զորս կը ներկայացնենք այս Գ. տարեշրջանի մէջ, հետզհետէ զանոնք սրբագրելէ ու բարեփոխելէ ետքը։ Տարակոյս չունինք թէ այս գործին երկրորդ տպագրութեան ժամանակ ալ նորանոր դիտողութիւններ պիտի ունենանք տակաւին հոն մտցնելիք, զորս փորձառութիւնը տուն պիտի տայ մեզ։ Առ այժմ ուշադրութիւն կը հրաւիրենք հետևեալ երկու կէտերուն վրայ, որոնք այս գործին տպագրութեան միջոցին կամ ետքը մեր ուշադրութիւնը գրաւած են.

Ա. Բարդութեան և ածանցման մէջ, կորուսման կանոնին վրայ խօսելով (էջ 49-50), չենք նշանակած հետևեալ կանոնը, որ արդիւնք է նոր դիտողութեան մը. «Ռամ մասնիկով վերջացող բոլոր ածանցեալ բա-

ուերը, երբ կրկին անդամ ածանցումն կամ բարդումն, չեն ենթարկուիր կորուստան կանոնին. այսպէս կը գրենք ուս--մնական (և ոչ ուսմնական), բուր--մնաւոր, յուզ--մնալից, և այն.»։

Բ. Վեցերորդ փորձային տպագրութենէն յետոյ, գոյականներու հոլովմանց պատկերը տպագրուած ժամանակ, դիտած ենք որ եզ և բեռ բառերը բացառականի և գործիականի մէջ կ'ըլլան եզէ, բեռէ, եզով, բեռով, մինչդեռ դուռ, թոռ, ղեռ (որոնց յոգնակին կ'ըլլայ դուռնէր, թոռնէր, ղեռնէր) կ'ըլլան դռնէ, թոռնէ, ղեռնէ, թոռնով, ղեռնով, և այն։ Այս տեսակէտով է որ հոլովմանց պատկերին մէջ եզ և բեռ բառերուն իբր յոգնակի ցոյց տուած ենք եզնէր, բեռնէր, մինչդեռ 223րդ. կանոնին մէջ, նշանակած էինք եզնէր, բեռնէր։ Տարակոյս չկայ որ այս երկու ձև յոգնակիներն ալ կը գործածուին, սակայն մեր յիշած պատճառաբանութեամբ նախընտրութիւն պէտք է տալ եզնէր, բեռնէր ձևերուն, որոնք աւելի սովորական են արդէն։

* * *

Այս Գ. Գրքին մէջ հին և նոր հայ հեղինակներէ քաղած ենք 17 հատուած, 3ը ոտանաւոր և 14ը արձակ, որոնց մէջ լեզուական պզտիկ փոփոխութիւններ մտցուցած ենք լեզուի միօրինակութիւնը պահպանելու համար։ Պէտք է դիտնալ սակայն թէ ջանացած ենք ընտրել անանկ կտորներ, ուր կարելի եղածին չափ քիչ բան փոխել հարկ ըլլայ։ Այս գործին Բ. Մասին վերապահած ենք մեր հին ու նոր ուրիշ կարգ մը ընտիր գրողներէն գրական էջեր։ Գալով օտար հեղինակներու, եւրոպական գրականութեանց ամէնէն նշանաւոր գրողներէն մէյմէկ գեղեցիկ հատուած թարգմանած ենք կարելի եղածին չափ շատ պէսպիսութիւն դնելով գրուածները՝ ինչպէս հեղինակներուն մէջ։ Նոյնպէս թարգմանուած կամ հետևողութեամբ պատրաստուած են 14 ոտանաւոր հատուածներ, գրեթէ ամէնքը յատկապէս ներկայ դասագրքին համար։ Թէ՛ արձակ, թէ՛ ոտանաւոր հատուածներուն, ինչպէս նաև հրահանգներուն մէջ, կէտ առ կէտ գործադրած ենք մեր աւանդած կանոնները, գործնական օրինակը դնելով այսպէս տեսականին քով։

Այս գործին Բ. Մասը պիտի պարունակէ մանրամասն կանոններ բայերուն, դերբայներուն, մակբայներուն, նախադրութեանց, շաղկապներուն և միջարկութեանց վրայ, թէ՛ բառակազմական, թէ՛ համաձայնական տեսակէտով. նոյնպէս դասեր քերականական և տրամաբանական լուծմանց, գրական սեռերու և դրագիտութեան վրայ։ Բ. Մասի յառաջաբանին մէջ պիտի խօսինք բայերուն և միւս խօսքի մասերուն վերաբերեալ մեր ընդունած քերականական կանոններուն վրայ, ինչպէս Ա. Մասին համար ըրինք այս յառաջաբանին մէջ։

Կը յուսանք թէ հայ բանասէրները և ուսուցիչները պիտի գնահատեն մեր ներկայ աշխատութիւնը, նկատողութեան առնելով դժուարութիւնը այն գործին որուն ձեռնարկած ենք, և ներողամտութեամբ դիտելով այն թերի մասերը, որոնք կրնան սպրդած ըլլալ այս երկասիրութեան մէջ։

Կ. Պոլիս, 28 Մարտ 1902. Հ. ԵՒ Զ. ԱՍԱՏՈՒՐ

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ուսուցիչներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք այն վրիպակներուն վրայ որոնց ցանկը հրատարակած ենք 192րդ էջին մէջ։ Այդ էջին տպագրութենէն ետքը հետեւեալ վրիպակներն ալ մեր աչքին զարկած են.

43րդ էջի 4րդ տողին մէջ սուրկ բառը պիտի ըլլայ սպունգ։
73րդ էջին մէջ կար բառը նմանաձայն բառերուն հետ գրուած է, մինչ-
գեռ պէտք էր դնել բաղմանիշներուն հետ։
129րդ էջի 27րդ տողին մէջ ի, ու, ոյ պիտի ըլլայ ի, ու, ոյ։
131 էջի 12րդ տողին իր բառը պիտի ըլլայ իրենց։
135 էջի 15րդ տողին այս տարուանը պիտի ըլլայ այս տարուանինը։
158 էջի 7րդ տողին մէջ իր գրով պիտի ըլլայ իր գրովը։
» » 11րդ տողին մէջ իր գիրիւռով պիտի ըլլայ իր գիրիւռովը։
» » 14, 15, 16 տողերուն մէջ գիրին, գիրեն, գիրով պիտի ըլլան
գրին, գրեն, գրով։
159 էջի 19րդ տողին մէջ գիրք-ևրովնիս, ևրովնիդ, ևրովնին պիտի ըլլայ
գիրք-ովնիս, ովնիդ, ովնին։
160 էջին մէջ բաշխական ածականներուն յիշատակութիւնը ընելէ ետքը
մոռացեր է ըսուած թէ՝ «Բաշխական կ'ըսուին այն
Ծուական ածականները որոնք բանի մը ամէն մէկուն
բանիական հատ բաշխուած ըլլալը կը յայտնեն, ինչպէս
յորսական, տասնական»։ (Տե՛ս Բ. Դիրք, էջ85)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԳԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԳԱՂԱՓԱՐ, ԼԵԶՈՒ, ԳԻՐ

ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԳԱՂԱՓԱՐ. — Գաղափար կը կոչուի առարկայի մը կամ իրողութեան մը պատկերը, որ մեր մտքին մէջ կը ներկայանայ։ Գաղափար մը ունենալը բան մը մտքով տեսնել է։ Երբ կ'ըսենք խնձոր, խակոյն մտքին մէջ կը նկարուի մարդ մը որ փակեղ դրած և վերարկու հագած է։ Երբ ըսենք եկեղեցի, մեր մտքին կը ներկայանայ չէնք մը, ուր ժողովուրդը հաւաքուած կ'աղօթէ։

2. Դատողութիւն կը կոչուի այն գործողութիւնը, որով միտքը երկու կամ աւելի գաղափարներ իրարու հետ կը բաղդատէ, և այդ բաղդատութենէն եզրակացութիւն մը կը հանէ։ Եկեղեցի և խնձոր զատ զատ գաղափարներ են, բայց կարելի է մօտեցնել զանոնք իրարու, և ըմբռնել անոնց յարաբերութիւնը։ Երբ հարցնենք մենք մեզի թէ ի՞նչ կ'ընէ քահանան

եկեղեցւոյն մէջ, կրնանք իսկոյն սա դատողութիւնը ընել. իսկ՝ եկեղեցւոյն մէջ։

3. Ցաճախ էակ մը կամ առարկայ մը միտքերնիս բերելով, կարգ մը ուրիշ էակներ, առարկաներ ալ կը յիշենք, որոնք անոնց հետ առնչութիւն ունին. այսպէս իսկ՝ մեր մտքին մէջ կ'արթնցնէ եկեղեցիի, պատարագի, աղօթքի, խորանի, խաչի, խունկի, մոմի, շուրջառի, ուրարի, բուրվառի գաղափարները։ Գաղափարներու զուգորդութիւն կը կոչուի մտքին այս գործողութիւնը, որով պատկեր մը իրեն հետ յարաբերութիւն ունեցող ուրիշ պատկերներ կը ներկայացնէ մտքին։

4. ԼԵԶՈՒ ԵՒ ԳԻՐ. — Գաղափար մը կամ դատողութիւն մը արտայայտելու միջոցն է լեզուն, խօսուած կամ գրաւոր։ Նշանացի կերպով ալ կարելի է մտածումը արտայայտել, ինչպէս կ'ընեն համրերը։ Ազգի մը լեզուն այն եղանակն է, որով այդ ազգին վերաբերող մարդիկ խօսքով կամ գրով իրենց միտքը կը բացատրեն։

5. Մեռեալ լեզու կը կոչուին այն լեզուները, որոնք այլ ևս չեն խօսուիր, ինչպէս լատիներէնը, հին յունարէնը, գրաբար հայերէնը, եւն։

6. Կենդանի լեզու կը կոչուին այն լեզուները, որոնք հիմայ կը խօսուին, ինչպէս իտալերէնը, նոր յունարէնը, աշխարհաբար հայերէնը, եւն։

7. Աշխարհաբարի գերակայութիւնը կը սորվեցնէ այն կանոնները զորս պէտք է գիտնալ՝ անսխալ խօսելու և անսխալ գրելու համար մեր արդի լեզուն։

8. Խօսելու և գրելու համար կը գործածուին բառեր, որոնք գիրերէ կամ տառերէ կազմուած են։

9. Լեզուի մը գիրերուն ամբողջութիւնը կը կոչուի Այբուբեն։ Բուն հայ տառերը երեսունվեց հատ

են։ Անոնց՝ վրայ օտար լեզուէ առնուելով՝ աւելցած են ԺԱ. դարէն ետքը, երկու նոր տառեր՝ օ, որ կը համապատասխանէ ո-ին, և ֆ, որուն տեղ մեր նախնիք կը գործածէին ֆ։ Իսկ և պարզապէս միացումն է ե ու տառերուն։

10. Վանկ կը կոչուի ձայնաւոր մը առանձին կամ ուրիշ գիրերու միացած, երբ այդ գիրերը մէկ հնչումով կ'արտաբերուին. է, տեր, կեանք, եւն։

11. Մէկ վանկով արտասանուած բառերը միավանկ կ'ըսուին, ինչպէս հաց. երկու վանկով արտասանուածները՝ երկավանկ, ինչպէս գի-նի. երեք վանկովները՝ եռավանկ, ինչպէս կար-կան-դակ։ Միավանկ չեղող բառերը կը կոչուին նաև բազմավանկ, ինչպէս ուշիմ, իմաստուն, պաշտպանութիւն, եւն։

12. Կան նաև կարգ մը բառեր, որոնք ոչ միավանկ են, ոչ երկավանկ, այլ մէկ ու կէս վանկ ունին. տարր, անգղ, դրոշմ, գրաստ, եայլն։

13 Գիրերը երկու տեսակ են. ձայնաւոր և բաղաձայն։

14. Ձայնաւորներն են ա, է, ե, ը, ի, ո, ու, օ։

15. Կան քանի մը պարզ ձայներ, որոնց համար յատուկ նշանագիր չունի հայ այբուբենը, և այդ ձայները կ'արտայայտենք երկու ձայնաւորի միացմամբ բաղադրեալ ձայնաւորներ կազմելով. սոնք են ա-ա (տ-ա), է-ա (սէ-ա), և օտար բառերու մէջ էօ (Թէօրիէ)։

16. Երբ երկու կամ աւելի ձայնաւորներ մէկ վանկ կազմեն, և ձայնի մէկ արտաբերումով հնչուին, երկբարբառ կ'ըսուին։

17. Բուն երկբարբառներն են ա-ա (հար-ա), է-ա (որդէ-կ), է-ա (բարէ-), ի-ա (աւէ-ն), ու-ա (ս-ուրբ)։

18. Բայց երկբարբառ կը կազմեն նաև ա-յ (քահանա-յ), է-յ (քրիստոնէ-յ), էօ (էօրթ), ու-ա (Աստ-ուած),

--ոյ (ոտնի--ոյ), --ոտ (տ--ոտ), --է (ատ--էր), --է-- (եր-եքիզ--է--ն), --է (ն--էր), --ը (մատ--ը ներ), --է (ն--է-ական), -ոյ (ղ-ոյ), --ոտ (ազն--ոտ-թիւն), --ռ (բան--ռ), --ոյ (պատ--ոյ), --օ (մօր--օք), --ոյ (եկեղեց--ոյ):

19. Բաղաձայններն են բ, գ, դ, ղ, ք, ժ, լ, ի, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ն, պ, չ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ւ, ֆ:

20. Ըստ մեր հին քերականներուն, բաղաձայն գիրերը երեք կարգ են, ինչպէս.

Նուրբ. պ, կ, տ, ծ, ճ, ժ, ղ:
Միջակ. բ, գ, դ, ձ, չ, —, —:
Թաւ. փ, ւ, ք, ց, լ, շ, ռ:

21. Ասոնցմէ դուրս ղ, մ, ն, ր բաղաձայնները նկատուած են նայ կամ կէս ձայնաւոր, ինչպէս հետեւեալ բառերուն մէջ. կոնդ, այժմ, հիւսն, սանտր: Նայ տառերուն մէջ պէտք է դասել նաև լ և ռ բաղաձայնները, որոնք կէս ձայնաւորի ոյժ ունին, ինչպէս կլափ, կ-եղ:

22. Բաղաձայններու արտասանութեան մէջ, երբեմն շրթունքը, երբեմն ակռաները, երբեմն լեզուն, երբեմն կոկորդը կամ քիմքը գլխաւոր դերը կը կատարեն: Այս տեսակէտով է որ, ըստ նոր լեզուագիտութեան, բաղաձայնները կը բաժնուին եօթը դասակարգի.

Շրթնական. բ, պ, փ, մ, վ, ֆ:
Ատամնական. դ, տ, ք, ծ, ց, ձ:
Շչական. ղ, ռ, շ, ժ:
Հագագային կամ Կոկորդային. գ, կ, ւ, ի, ղ:
Քմական. ն, ն, ճ:
Լեզուական. լ, ն, ր, ռ:
Շնչական. հ:

23. Անդրատառ կ'ըսուի որ և է բառի մը գիրերուն տեղը փոխելով՝ տարբեր իմաստով ուրիշ բառ մը

չինելուն, ինչպէս. Ագռաւ, գաւառ. — Անծեղ, ա-նեղծ. — Աշուն, անուշ. — Այրիլ, յարիլ, — Գոմ, մոգ. — Եղկ, կեղ. — Թանկ, կանթ. — Թօշ, շօթ. — Լեզու, ուզել. — Լեռնակ, կռանել. — Ծանակ, կա-ծան. — Խեղառ, խառեղ. — Կարապ, պարակ. — Մարդ, դրամ. — Մարս, տարմ. — Նուշ, շուն. — Ուղկան, կռուան. — Նուազութիւն, ազնուութիւն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԼԵԶՈՒՆ

Լեզուն թարգմանն է մտքին: Անով մեր պէտքերը կը յայտնենք և ուրիշներուն հետ հաղորդակցութեան կը մտնենք. անով մարդիկը կը յուզեն կամ կը հանդարտեցնեն, մերթ որոտընդոստ պերճախօսութեամբ անոնց եռանդը արծարծելով, և մերթ մեղմ ու սրտագրաւ խօսքերով անոնց կիրքերը մեղմացնելով: Լեզուով է որ արարածը կը հաղորդակցի իր Արարչին հետ, եւ անով է որ կը գոյանան տկարութեան և զօրութեան միջեւ այն սքանչելի յարաբերութիւնները, որոնք ծանրաբեռնեալ հոգին կը սփոփեն: Մէկ խօսքով, լեզուն մարդկային պէտքերէն մէկն է, և որչափ միտքը մշակուի ու զարգանայ, նոյնչափ ալ լեզուն կը կատարելագործուի: Նախնի ժամանակներու մէջ, երբ մարդկութիւնը իր օրրանին մէջ էր, երբ ծանօթութիւնները, գաղափարները և պէտքերը անձուկ սահմանի մը մէջ կ'ամփոփուէին, մարդ կ'ըմբռնէր միայն ինչ որ կը տեսնէր: Իր պէտքերը կը կայանային կեանքի առաջին անհրաժեշտ առարկաներուն մէջ, ուստի գործածած բառերն ալ իր սահմանաւոր ծանօթութեանց եւ պիտոյքներուն կը համապատասխանէին: Ամէն ժողովուրդ մանկութեան հասակէն կը սկսի, եւ աստիճա-

հարար իր խանձարուրէն մերկանալով՝ արբունքի կը հասնի։ Որչափ ժողովուրդ մը յառաջադիմէ, նոյն հաստատամտութեամբ իր մտքին մէջ նոր գաղափարներ, նոր լոյսեր կը ցոլանան, որոնցմէ կը ծնին նոր պէտքեր, նոր ալ բառեր կը գոյանան, որով լեզուն կը ճոխանայ։ Լեզուէ մը կրնայ դատուիլ մասամբ ժողովրդեան մը յառաջադիմութեան աստիճանը։

ՍՐԲՈՒՀԻ ՑԻՒՕԱՆ(1)

1. Զրուցագրել այս հատուածը, և նշանակել բոլոր երկբարբառները։

2. Բացատրել բերանացի յուզել, որոշընդոսս, կիրք, անհրաժեշտ, մասակարարութիւն, սահմանաւոր, խանձարուր բառերը։

3. Գրել քէ ինչ գաղափարներ կ'արթնցնեն մտքին մէջ հետեւեալ բառերը։

Ծով, քաղաք, ազգակ, ջաղացք, խաղող, ապակի, սենեակ, պարտէզ, երաժշտութիւն, ծառ, անառ, աշուն, ձմեռ, գարուն, գիրք, կաթսայ, հնչակ, դէմք, ժայռ, գոնարեղէն, Թատրոն, ախոռ, մարմնամարզ, կրակ, քերականութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն։

Օրինակ. — Ձմեռը կ'արթնցնէ մտքին մէջ ցուրտ, ձիւն, սառոյց, չմշկում, վառարան, կաղանդ, կաղանդչէք, ելն։

ՏՈՒԱՐԾԻԿԸ

Անանուխով, ճիլով հագուեր՝
Կ'երգէ ջաղացքն ու կը դառնայ
Ջուրին վերայ.
Լրջայարար կանանց Թակեր
Քարուտ փուլին վերայ մէկէն
Կ'արձագանգեն։

(1) Տիկին Սրբուհի Ցիւսաբ, Հայ Գրագիտուհի, ծնած է 1842ին, Կ. Պոլսոյ մէջ։ Իր գլխաւոր երկերն են երեք վէպ՝ Մայրա, Սիրանոյշ, Արամիս։ Գրած է տեսութիւն մը Աշխարհաբար հայ լեզուի վերայ և զանազան հատուածներ Արևելեան Մամուլի և Մասիսի մէջ։ Մեռած է 1901ին։

Տրաարծիկը՝ աշխոյժ Թրչուն,
Հոն կը դիտէ իր լանջքը կոյս
Ջուրին մէջ լոյս։
Վերէն վարէն միշտ անկայուն՝
Կը շարժէ տուտն իր դիւրաթեք
Օդին մէջ՝ սէգ։

Եւ նման է Թրչնիկն աղուոր՝
Դրպրապետին հագուած հանակ
Սև ու ճերմակ,
Որ չափ կու տայ շարժմանց բոլոր
Ժիր ջաղացքին, և պարին դիւր
Թակերուն բիւր։

Ցոլ շընորհքներն իր գեղանի
Ըզմեզ սիրով կը քաշքըշեն
Իր ետեւէն։
Ծովեզերքէն դաշտ կը տանի
Քըմշոտ Թրչնիկն ըզմեզ ահա,
Եւ խոյս կու տայ։

Աւազին մէջ կը վազվըզէ,
Ու կը Թրչի նման անգին
Մեր ըղձանքին,
Որ միշտ առաջ կ'երթայ մեզմէ,
Եւ երբ կարծենք Թէ բըռնեցինք
Կը փախչի՞ ինք։

ԱՆՏՈՒԷ ԹԷՕՌԻԷ(1)

4. Կարդալ այս ոտանաւորը բարձրաձայն, և ամէն մէկ տողին վերջը ըսել քէ տողը քանի՞ վանկէ բաղկացած է։

5. Գոց սորվիլ այս ոտանաւորը և արտասանել։

6. Հետեւեալ բառերուն նշանակութիւնը սորվիլ, և անոնց մէջէն որ և է ձայնաւորի տեղ ուրիշ մը դնելով նոր բառ մը կազմել։

Տատրակ, Թիզ, գոհ, գամ, Թիւ, գան, տիպար, արատ, խեղճ, երիզ, գէր, գաւաթ, կաթ, կաղ, երազ, անառակ, բորակ, նիշ, բոց, մորի, յարդել, շիղ, պիտառ, տանջանք, ցից, փոկ, օձել, սինձ։

(1) Ֆրանսացի բանաստեղծ և վիպագիր, որ 1833ին ծնած է Ֆրանսա, Սէն-է-Ուազ նահանգին մէջ։

Օրինակ. — Տաsրակ, տեsրակ. — քիզ, բուզ.

7. Հետեւեալ բառերուն նշանակութիւնը սորվիլ և անոնց իւրաքանչիւրին մէջէն բաղաձայն մը փոխելով ուրիշ բառ մը շինել.

Գոլորշի, կարօտ, յատակ, կորով, կռիւ, խուլ, խորշ, աւազ, խարակ, փիւն, վայրենի, վառարան, ճանճ, լամբակ, շաւիղ, տապակ, վիճակ, որոտում, միրգ, նաւակ, յամել, հարաւ, պատիճ, պատուհաս, պիսակ, նուազ, ցող, անապակ, անգոյն, հովանի, անժոյժ, գաւառ, գրագիր, Քակոյկ, լրջանալ, խայտուած, խարժ, խարշափում, ծերպ, Քուշ, սուտակ, պատուտակ, կողով, դարան, վաշտ, կամար, մռայլ, վարդ, Քոյր, բոյս, ծունկ, շոգի, հիւր, լախտ, լաստ, վտակ, կաղապար, ձորժ, որոմ.

Օրինակ. — Կաղապար. կաղամար. — վտակ, կտակ. — հովանի, հոլանի.

8. Մէյ մէկ անդրատառ կազմել հետեւեալ բառերով.

Տունկ, մահ, Քօն, ծամ, կաՔ, խոփ, պակաս, մարախ, Քուխ, պատ, որա, ուլ, սարՔ, որմ, դար, լոյս, ծոյլ, Քուփ, այն, լերկ, հին, խարել, գոհ, ակներև, բարափ, փուռ, կեռ, գէս, խմել, խակ.

Օրինակ. — Տունկ, կունց. — մահ, համ.

ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

24. Բառերը ուղիղ արտասանելու արուեստին Առոգանութիւն կ'ըսուի։

ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

25. Առոգանութեան նշանները ձայնաւոր գիրերու վրայ կը դրուին, և հետեւեալներն են. Շեշ (՛), Երկար (՜), Պարոյկ (՞)։ Ասոնցմէ զատ, երբեմն կը գործածուէին նաև Բուք (՝) և Սուղ (՛) նշանները։

26. Առոգանութեան նշանները կը ծառայեն ամանակը, այսինքն՝ վանկերու հնչման տեւողութիւնը ցոյց տալու։ Այս նշանները երգի խազերէ առնուած են։

27. ՇԵՇՏ. — Շեշ կը դրուի բառի մը այն ձայնաւորին վրայ, զոր սուր կամ բարձրակերպով կ'ուզենք արտասանել. եկո՛ւր, գնա՛։

28. Կան բառեր, որոնք միշտ շեշտով կը գործածուին, ինչպէս. մի՛, չի՛, այո՛, ո՛չ, հերի՛ք, թէ՛ այս և թէ՛ այն։

29. Աղ երբ մակբայ է, միշտ շեշտով կը գործածուի. ա՛ղ չեմ ուզեր։ Իսկ երբ աղ շաղկապ է, շեշտ չ'առներ. մարդն աղ եկաւ։

30. Կոչականները առաջին վանկին վրայ կը շեշտուին, երբ իրենցմէ առաջ կամ ետքը բայ մը կայ. Ա՛ստուած, ողորմէ՛ ինձի։ Բայց երբ կոչական յատուկ անուն մը մինակ կը գործածուի մէկը կանչելու համար, վերջին վանկին վրայ կը շեշտուի. Մարիա՛մ։

31. Հրամայականները վերջին վանկին վրայ կը շեշտուին. աշխատէ՛, հասէ՛ք:

32. Կոչականներն ու հրամայականները չեն շեշտուիր, երբ իրենցմէ առաջ շեշտեալ բառ մը կայ. Հո՛ս եկուր, խե՛ղճ կին: Սղե՛կ միտդ պահէ, ազնի՛ւ տղայ: Սակայն երբ կոչականն ու հրամայականը իրարու քով գան, երկուքն ալ կը շեշտուին, ինչպէս. Մա՛յր, նե՛ր էի՛ ինձի:

33. Կոչականներուն և հրամայականներուն շեշտը երբեմն կը գրուի, երբեմն ալ զանց կ'առնուի գրութեան մէջ, թէև միշտ կը հնչուի:

34. Կէս հարցական բառերը շեշտ կ'առնեն, փոխանակ հարցական նշանի. Չեմ գիտեր թէ ինչո՛ւ եկած էին:

35. Կան բառեր ալ որոնք կրնան շեշտուիլ նախադասութեան մէջ իրենց բռնած դիրքին համեմատ, և այս պարագային պէտք է շեշտը դրած ածել ամէն անգամ որ անոր զանց առնուիլը կրնայ երկդիմութիւն յառաջ բերել: Այսպէս տարբեր իմաստ ունին. եղբո՛ր աղջիկը (և ո՛չ թէ քրոջս), և եղբօրս աղջիկը (և ո՛չ թէ մանչը):

36. ԵՐԿԱՐ. — Երկարը կը ցուցնէ թէ վանկը սովորականէն աւելի տեւողութիւն ունի. ո՛վ Աստուած, ինչ սիրտ:

37. Երկարը կը գործածուի.

Ա. Միջարկութեանց մեծագոյն մասին վրայ. ա՜խ, երանի՜ քեզ:

Բ. Կիրքով կամ յուզմունքով արտասանուած բառերուն վրայ. ինչ ոճիր, դո՜ւն ես եղեր:

38. ՊԱՐՈՅԿ. — Պարոյկը, որ ոլորակ ալ կ'ըսուի, կը գրուի այն բառին և այն վանկին վրայ, ուր հարցումը կ'ինայ, ինչպէս. Զինքը տեսա՞ր. ո՞ւր տեսար:

39. Պարոյկին գործածութիւնը յաճախ իմաստի տարբերութիւն ալ յառաջ կը բերէ. այսպէս տարբեր իմաստ ունին հետեւեալ երկու հարցումները. Մայրս եկա՞ւ. Մա՞յրս եկաւ:

40. Պարոյկը պէտք չէ երբեք բաղաձայն գրի վրայ դնել, այլ միշտ ձայնաւոր գրի վրայ:

41. ԲՈՒԹ. — Հին առեւները բուրը կը ցուցնէր թէ վանկը շեշտ չունի, ինչպէս. արա՛մի՛ն: Այս նշանը հիմայ չի գործածուիր բնաւ իբրև առոգանութեան նշան, այլ իբր կետադրութեան նշան միայն կը կիրարկուի:

42. ՍՈՒՂ. — Սուղը կը ցուցնէր թէ վանկը սովորականէն աւելի կարճ տեւողութիւն ունի: Օրինակի համար, խղութիւն բառին մէջ, զգալի ընելու համար թէ ի՛ն և ի՛ն միջև զօրութեամբ գտնուած ը ձայնը պէտք է շատ կարճ արտասանել, այդ նշանը կը դրուէր. այսպէս նաև նշան, գրել, և՛ն. բառերուն վրայ:

43. Հիմայ սուղ նշանը բնաւ չի գործածուիր հայ բառերու մէջ: Սակայն բառգիրքներու և բանասիրական գործերու մէջ, երբ օտար բառ մը հայերէն տառերով գրուի, սուղ ը ի հնչումը զգալի ընելու համար այս նշանը կը դրուի, ինչպէս *convenable*, զօնվը՛նապլը՛:

ՏԱՌԵՐՈՒ ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ

44. «Ե» ՁԱՅՆԱՒՈՐ. — Ե Ձայնաւորը բառերուն սկիզբը էէ՝ իսկ բառերուն մէջտեղը, երկու բաղաձայնի միջև, է կը հնչուի. երես, թեղուն:

45. «Է» ՁԱՅՆԱՒՈՐ. — Է Ձայնաւորէն ետքը երբ օ ձայնաւոր գայ, հայ բառերուն մէջ կը հնչուի է-օ, ինչպէս ոսկէօղ, մարգարէօրեն. իսկ օտար բառերու մէջ,

է. կը հնչուի իբր բաղադրեալ ձայնաւոր. Ուիշիէ, էժէնի։

46. «Ը» ՀՆՉՈՒՄԸ. — Բառի մը սկիզբը երբ երկու բաղաձայն կից են իրարու, առաջին բաղաձայնէն անմիջապէս ետքը ը կը հնչուի ընդհանրապէս. բժիշկ, ժշաս, հնայմ, կը հնչուին բըժիշկ, ժըշաս, հըմայմ։

47. Երբ արմատ բառի մը սկիզբը շ, չ, ս բաղաձայններէն ետքը կ, գ, տ, թ — ղ, ք, դ — ր, ը հանդիպին, ը հնչումը ընդհանրապէս բառէն առաջ կը լսուի, ինչպէս. սկիզբ կը հնչուի ըսկիզբ, նոյնպէս զգայուն, սմանչանալ, շպար, գբաղիլ, սփոփել, սթափիլ, շտեմարան, ստորագրել։ Զարտուղի են քանի մը բառեր միայն, ինչպէս սփոռել, սպրդել, սկրդել, շփոթ։

48. Ուրիշ բաղաձայններու առջեւ, շ, չ, ս կը կարդացուին շը, չը, սը, ինչպէս զրոյց, շղթայ, սխալ։ Զարտուղի են զմայլիլ, զմեղին, և կարգ մը օտար բառեր, ինչպէս. Զմիւռնիա, Սշաւ։ Զարտուղի են նաև զմեզ, զմեզ, զմեզ հայցականները։

49. Երբ շ, չ, ս գիրերով սկսող բառերուն սկիզբը նը կամ դ՝ մասնիկը հանդիպի, միշտ ը ին ծնունդը կը յապաւուի. կը սփոփե, պէտք է կարդալ կըսփոփե, և ոչ նը ըսփոփե։ Մի՛ սպաններ, պէտք է կարդալ մի՛սպաններ, և ոչ դ՝ ըսպաններ։

50. Բառին սկիզբը կամ մէջտեղը, երբ երեք կամ աւելի բաղաձայններ կից են իրարու, ընդհանրապէս սովորութեամբ միայն կրնանք ճշդել ը ին հնչումը, ինչպէս. կցիտուր պէտք է հնչել կըցիտուր, թզմտուր՝ թըզմտուր, պարտկել՝ պարտըկել, պտտիլ՝ պըտըտիլ, փթթիլ՝ փըթթիլ, ծակծկել՝ ծակծըկել, ճշգրիտ՝ ճըշգրիտ, ճշգրտել՝ ճըշգըրտել, և.ն։

51. Բառի մը վերջը, երբ երկու կամ երեք բաղաձայններ իրարու քով գան, ընդհանրապէս ը հնչումը

չի լսուիր բնաւ այդ բաղաձայններուն միջև, ինչպէս. պատրաստ, ղանջլ, կուրծք, հրայրք, փառք, և.ն։

52. «Ց» ԳԻՐԸ. — Ց գիրը անձայն կը մնայ մէկէ աւելի վանկ ունեցող բառերէն վերջը. վկայ, դշխոյ, խահանայ։ Իսկ կէս է ի ձայն կը հանէ միավանկ բառերուն և իրենց բարդերուն վերջը. հայ, բայ, մակբայ, Ռուսահայ։ Բացառիկ են Նոյ յատուկ անունը, և շայ, ցայ, զայ, կայ միավանկ բայերը, որոնց վերջին յ գիրը անձայն է։

53. Ց գիրը բառերուն մէջտեղը կէս է ի ձայն կը հանէ, ինչպէս. ծայր, բոյս, կոյր։

54. Ց գիրը բառերու սկիզբը հ ի պէս կ՝արտասանուի. յատուկ, յորդ։ Երբ այս բառերուն վերջը ուրիշ բառ կամ մասնիկ մը աւելցնելով զանոնք բարդենք կամ ածանցենք, յ գիրը հ ի հնչումը կը պահէ. անյատակ, մշտայորդ։

55. «Ո» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ո Ձայնաւորը բառերուն սկիզբը կը հնչուի օ երբ վ բաղաձայնէն անմիջապէս առաջ դրուած է, ինչպէս ովկիանոս, ովսաննա, և վ բոլոր միւս բաղաձայններէն առաջ, ինչպէս ոստանիկ, որկոր։ Նոյնպէս օ կը հնչուի բառերուն մէջտեղը, ինչպէս մթնոլորտ, ծործոր։

56. Ո երբ յ գրէն առաջ դրուած է, և անմիջապէս ետքը բաղաձայն գիր կու գայ, բառին թէ՛ սկիզբը և թէ՛ մէջտեղը, կը հնչուի ու. ոյժ (ույժ), բոյր (բույր)։ Իսկ բառերուն վերջը կը հնչուի միշտ օ, ինչպէս յետոյ, բրածոյ, և.ն։

57. «Ի» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ի Ձայնաւորը երբ իրմէ առաջ ա կամ է ունի, կը կազմէ այ կամ ե երկրաբառները. ցաւ, չաւ, սեւ, բեւեռ։

58. Ի ձայնաւորը, երբ իրմէ առաջ է ունի և իրմէ ետքը բաղաձայն մը, կը կազմէ բաղադրեալ ձայ-

նաւոր մը, որ կը հնչուի է— կամ է—. բարութիւն, հիւր: Իսկ երբ է—էն եաքը ձայնաւոր մը կու գայ, կամ է—ը բառին վերջն է, կը հնչուի էվ. հիւանդ, անիւ: Նոր օտար բառերուն մէջ է— միշտ բաղադրեալ ձայնաւորի դեր ունի, ինչպէս. Էօտեն-Սիւ, Ռիւի-Պլաս. իսկ էվ հընչումը միշտ է և վ տառերով կ'արտայայտուի, ինչպէս Իվան, Լա Ժիւիվ:

59. Երբ բառ մը է— կը վերջանայ, ինչպէս արծիւ, էվ հնչումը կը պահէ թէ՛ հոլովման մէջ և թէ՛ ուրիշ կամ դիմորոշ յօդ առած ատեն, ինչպէս արծիւի, արծիւով, արծիւը, արծիւս, արծիւդ:

60. Ի ձայնաւորը երբ ·ի հետ կազմէ ··— երկբարբառը, այս վերջինը իր ձայնը կը պահէ, եթէ իրմէ եաքը բաղաձայն գայ. փուշ, խաղցրութիւն:

61. Իսկ երբ ··— ի առջև ձայնաւոր գայ, կը կազմուին ···, ··է, ··է, ··է, ···, ····, և՛ն. երկբարբառները, որոնց մէջ ··— ը վ կը հնչուի. պատուար (պատվար), ատուեր (ըստվեր), նուեր (նըվեր), ասուի (ասվի), աղուոր (աղվոր), և՛ն:

62. Բացառաբար ··— վերջացող բառերուն հոլովման մէջ ··— ին յաջորդող ձայնաւորները երբեմն անջատ կերպով կը հնչուին, ինչպէս կատու-ի, դասատու-ի, տիրադու-ի. նոյնպէս ··— վերջացող բայերուն սահմանական և ստորադասական ներկային մէջ ··— ը է՛ն անջատ կերպով կը հնչուի, առանց երկբարբառ կազմելու. կը թողուի կը հնչուի կը թողուի, կը զբօսնուի՝ կը զբօսնուի, և՛ն:

63. Ի գրին վ ի ձայն ունենալը որոշելու համար, հին առոգանութիւնը (՛) նշանը կը գործածէր, որ հիմայ ջնջուած է, և որ սապէս կը նշանակուէր. ատո՛ւեր, ատո՛ւար:

64. Օտար բառերու մէջ, ··— միշտ կը պահէ իր

հնչումը, ձայնաւորներուն առջև. Սամու-էլ, Լու-ի, ալեղու-իա, և՛ն. բացառիկ են քանի մը բառեր, ինչպէս պուէս, Շուէս, զորս պէտք է կարդալ պըվէս, Շըվէս:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԲԱՂԱԲԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Բաղաքավարութիւնը փափուկ զգացման մը և հանրային բարեսիրութեան մը արտայայտութիւնն է, որ մեր առաքինութեանց յարգը կ'աւելցնէ, այնպիսի կերպ մը տալով մեր գործերուն ու խօսքերուն, որ ոչ ոք վիրաւորուի իր զգացմանց և իմացականութեան մէջ: Բաղաքավարութիւնը հաճելի կ'ընէ ընկերական կեանքը, իրր արուեստ մը որ կը համաձայնեցնէ ինչ որ կը պարտինք մեր անձին: Իր ազդեցութիւնը այնքան մեծ է, իրր կապ ընկերութեան, որ երեւելի փիլիսոփաներ անարժան չհամարեցին իրենց անով զբաղիլ: Ասոնք կը հաստատեն թէ առանց քաղաքավարութեան, մարդիկ միայն կուուելու համար պիտի հաւաքուէին: Պէտք է ուրեմն կամ առանձին ապրիլ կամ քաղաքավար ըլլալ:

Բաղաքավարութիւնը այն է բարութեան համար, ինչ որ շնորհքը դէմքին. գթութեան քաղցր պատկերն է: Անկիրթ մարդոց վրայ առաքինութիւնը թանկագին քար մըն է, որ դէշ տեղաւորուած ըլլալով իր փայլին մեծ մասը կը կորսնցնէ: Բաղաքավար կերպերը մարդուս յատկութեանց արժէքը կ'աւելցնեն և հաճելի կ'ընեն զանոնք: Վերջապէս քաղաքավարութիւնը քաղաքակիրթ մարդուն կնիքը, առաքինութեան համեստութիւնը և պարկեշտութեան փայլն է: Ընկերական դաստիարակութեան անհրաժեշտ տարրերէն մէկն է. ամէն

ժամանակներու մէջ օգնած է զինքը կապարելագործով անհատներու և ժողովուրդներու հաշակաւոր ըլլալուն։

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ[1]

9. Զրուցագրել այս հատուածը։

10. Մէյ մէկ խօսք շինել հանրային, ազդեցութիւն, իմացականութիւն, խղճամտութիւն, կատարելագործել, անհաս, հռչակաւոր բառերով։

11. Լուծել բերանացի այս հատուածին առաջին երեք նախադասութիւնները։

12. Հետեւեալ բառերուն մէջ դնել ը երբ հոն ուր կը հնչուին.

Զգեստել, զմելին, զմռսել, զմրուխտ, զգօն, զկեռ, զգայել, զրոյց, զրահ, զզուիլ, շիմանալ, սմբակ, շպարել, սպայ, սպանդ, սպրկիկ, ստգիտ, ստորին, ստուար, սլաք, սխալ, սՁաՓիլ, ստրջանք, զրկանք, սղոց, շռայլ։

13. Գտնել տասը միավանկ բառ, որոնց մէջ ը գիրը հ հնչուի։

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԸ

Տրտմած մարդ մը, ամառուան մէջ օր մը, երկիր կը նայէր ու կ'ըսէր. «Միրանագե՛ղ ամպեր, որ գօտիի

(1) Տոքթոր Նահապետ Ռուսինեան, բժիշկ Բարիզի Համալսարանին, Ֆ.Թ. գարու հայ գրագէտներուն մէջ ուշագրաւ դէմքն է։ 1819ին ծնած է Գայսէրիի Եվքերէ գիւղը։ Ունի կարեւոր հրատարակութիւններ, որոնց մէջ նշանաւոր են 1854ի և 1872ի Տարեցոյցները, Ուղղախօսութիւնը, Փիլիսոփայութեան դասագիրք մը, որ Ֆրանսերէն գրուած և հայերէնի թարգմանուած է, Վիքթոր Հիւկոյի Ռիւյ Պլասին ոտանաւոր թարգմանութիւնը, և այլն։ Մեռած է 1870ին կ. Պոլսոյ մէջ։

պէս արտեւանուներու շուրջը կը փաթթուիք. օձապտոյտ լեռներ ուր ծործորները կը սողսկին. զովուկ առուակներով ակօսուած ծործորներ. հովանուտ ծառերով ավնածիր առուակներ. թռչուններով ու ծաղիկներով լեցուն ծառեր. ծաղիկներ պարուրուած շղարշներովը ցօղերուն, զորս կը թօթուէք ձեր քոյրերուն՝ մարմանդին ծաղիկներուն վրայ. տունկեր որ ձեր պակներովը երկիրը կը համաստեղէք. ուրախ երկիր զոր կը յուզէ ուրախ ովկիանոսին զուարթութիւնը, քու տիզանի ճակտիդ վրայ ցրցքնած իր շողշողուն վարսերով. «Ինչու ես մինակ կարենամ մութ մնալ արեւուն լոյսին մէջ։»

Բայց երբ ամառուան օրերը անցան, երկինք նաստեցաւ ու ժպտեցաւ վերջապէս։ Ինք իրեն պատասխաներ էր. «Ով ամպեր որ պատանքի պէս կը ծանրանաք լեռներուն գագաթին վրայ. լեռներ որ կարծես կ'քեր էք, մահամերձ ու մթագնած, ծործորներուն վրայ. ծործորներ ուր հեղեղները կը հեծկլտան. մօրուտ հեղեղներ ուր կը թաւալին կոտրուած ոստեր. ոստաբեկ ծառեր, որ ցնորածի պէս գլուխնիդ կը ցնցէք ձեր բեկորներուն վերեւ, որոնք անէնին դիւրաբեկ բոյսերուն հետ խառնուած են հիմայ. թարչամած տունկեր ինկած պառկած երկրի վրայ, և դուն, երկիր, որ ցաւէդ կը ճչես այն երկաթէ մուրճին տակ որով ովկիանոսը կը ծեծէ զքեզ, — վասն զի ես միայն կրնամ փայլիլ առանց արեւուն լոյսին։»

ԷԼԻԶԱՊԷԹ ՊԱՐԷԹ ՊՐԱՈՒՆԻՆԳ[1]

14. Օրինակել այս հատուածը, հարկ եղած առոգանութեան նշանները դնելով բառերուն վրայ։

15. Գաց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս հատուածը։

16. Բացատրել արտեւան, օձապտոյտ, ծործոր, ակօսուած, մարմանդ, համաստեղել, տիզան, կիր, մօրուտ, ոստաբեկ բառերը։

---

(1) Էլիզապէթ Պրաունինկ Անգլիոյ ամէնէն ճանաչուած բանաստեղծուհին է։ Ծնած է 1809ին և մեռած 1861ին։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

65. Ուղղագրութիւն կը կոչուի բառերը անսխալ գրելու կանոնը։

66. Լեզուի մը ուղղագրութիւնը սորվելու համար՝ քերականական օրէնքներու ուսումնասիրութիւնը կարեւոր է. սակայն բառերու ուղղագրութեան համար չի բաւեր միայն գիտնալ այդ օրէնքները, այլ հարկ է անոնց իւրաքանչիւրին ինչ գիրերէ բաղկացած ըլլալը սորվիլ։

67. Մեր լեզուին մէջ, գիւրին է քերականական օրէնքներու վրայ հիմնուած ուղղագրութիւնը, սակայն դժուար է բառերու ուղղագրութիւնը, որովհետեւ ունինք միեւնոյն կերպով հնչուող հետեւեալ տառերը. Ը, Ր — Բ, Ֆ — Փ, Տ — Թ, Է — Ե, Ջ — Յ, Ց — Վ, Ռ — Յ, Հ։ Թէեւ այս կրկին տառերը իրենց յատուկ հնչումները ունեցած են ժամանակաւ, սակայն հիմայ առանց հնչումը նոյնն է Կ. Պոլսոյ դաւառաբարբառին մէջ, եւ այդ է պատճառը որ բոլոր բառերուն ուղղագրութիւնը պէտք է զատ զատ սորվիլ։

68. Կան սակայն քանի մը ընդհանուր սկզբունքներ, որոնք կը նպաստեն բառերու ուղղագրութիւնը դիւրացնելու։

69. Առանց ձայնաւոր գրի բառ չի կազմուիր։ Սխալ է ուրեմն գրել մարդ մն է, այլ պէտք է գրել մարդ մը է։

70. Հայ լեզուի արմատ բառերուն մէջ կրկնուած ձայնաւոր չկայ։ Գալով բաղաձայններուն, քանի մը

արմատ բառերու մէջ միայն կը հանդիպինք անոնց կրկնութեան, ինչպէս. ձմի, դդում, տարր, թթու, եւայլն։

71. «Ա» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ա ձայնաւորը բառին վերջը առանձին չի մնար, այլ յ կ'առնէ. պարուրայ, ընծայ, ակռայ, կ'երթայ։ Բացառիկ են. 1. Ապա, սա, ահա, հապա, ասիկա, ասիկա, անիկա։ 2. Օտար լեզուէ առնուած բառերը. ղուրիա, պանիա, ակադեմիա, եւն։ 3. Յատուկ անունները. Անանա, Սահարա, եւն.։ 4. Բայերուն հրամայականները. ղողա՛, կարդա՛, եւն.։

72. Ա. ձայնաւորին — էն զատ ձայնաւոր գիր չի յաջորդեր, եւ ամէն անգամ որ — ը — ին յաջորդէ, Ը ի ձայն կը հանէ, ու բաղաձայնի ոյժ ունի, ինչպէս. բա—ական (բա-Ը-ական), եւն.։ Իսկ յ բաղաձայնը, երբ — ին յաջորդէ, Ե ի ոյժ կ'ունենայ, ինչպէս. ծառայական (ծառա-Ե-ական), մեքենայաբար (մեքենա-Ե-բար), եւն.։

73. «Ե» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ե ձայնաւորը բառին վերջը չի մնար երբեք. չ'ըսուիր կը տեսնէ, այլ կը տեսնէ. այսպէս՝ բազէ, բա՛բէ, ոստրէ, խօսէ՛, եւայլն։

74. Երբ բառի մը մէջ վերջընթեր գրէն առաջ է ձայնը հնչուի, միշտ Ե կը դրուի, եւ երբեք է, ինչպէս բերան, եկեղեցի, մեղեղի, բացի բարդուած եւ հոլովուած այն բառերէն, որոնց մէջ է կայ արդէն եւ չի փոխուիր. օրենսդիր, վրէժխնդիր, ամէնեան։

75. Ե գրին կը յաջորդեն ձայնաւոր տառերէն՝ — է — միայն. որդէ—կ, արէ—. ԺԳ. դարէն յետոյ, Ե էն եռքը ի ալ սկսած է գործածուիլ, քանի մը բառերու մէջ, — ի տեղ, ինչպէս. Եթը (Է-թն), արդէք (արդէ-ք)։

76. «Զ» եւ «Ս» ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ. — Դիտուած է որ Շ ին կը յաջորդեն ընդհանրապէս միջակ բաղաձայնները, այսինքն Բ, Գ, Դ, եւն. մինչդեռ — ին կը յաջորդեն թաւերը, այսինքն Ֆ, Փ, Ք, եւն. զբաղիլ, զգոյշ, ազգել, սգոգել, սփանչանալ, սքաջիլ։

77. «Ը» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ը ձայնաւորը բառերուն մէջտեղը, երկու բաղաձայնի միջեւ, կը հնչուի, բայց չի գրուիր. սակայն բացառաբար կը գրուի հետեւեալ պարագաներուն մէջ.

1. Տողադարձի առեն, ինչպէս. մը-խիթարեղ, տարտը-ղեղ:

2. Ոտանաւորի մէջ, վանկի մը գոյութիւնը զգալի ընելու համար.

Ու դեռ ոչ ոք զայն վշնասուած կը կարծէ,
Այդ անօթին մի՛ դէպտիք գոք, կոտրած է,

3. Բարդութեանց մէջ, ինչպէս, տասնը-մեկ, հա-տը-ևտիր:

4. Ժամանակ ցուցնող կարգ մը բառերու բացառականին մէջ, ինչպէս. երեկոյ-ևեկ, հիսնակոյ-ևեկ, եւայլն:

5. Մը-ևն, անցը-ևեղ, հոտուը-տալ, կոուը-տիլ, տը-ւյուրիւն, և առնց նման կարգ մը բառերու մէջ:

78. «Ս» ԲԱՂԱՁԱՅՆԸ. — Ս բաղաձայնին կը յաջորդէ միշտ ա և երբեք ե. ասա, ղասա, բասա:

79. «Ց» ԳԻՐԸ. — Ց գրեց առաջ միայն ա և ո կու գայ, և կը կազմէ ա, ո երկբարբառները: Բացառիկ են մէջ մը, մէջ մեկ, էյնաղ, Էյ և օտար բառերը՝ թէյ, պէյ, եւայլն:

80. «Ն» ԲԱՂԱՁԱՅՆԸ. — Ն գիրը երբեմն տի կը փոխուի Ք, Ղ, Ֆ բաղաձայններուն առջև, ինչպէս. ամբիծ (անբիծ), ամպարիշտ (անպարիշտ), ամփոփ (ամ-փոփ), եւայլն:

81. «Շ» ԲԱՂԱՁԱՅՆԸ. — Շ բաղաձայնին կը յաջորդէ գրեթէ միշտ ա և ո՛չ ե. վիշտ, հաշտ, դաշտ:

82. «Ո» ՁԱՅՆԱՒՈՐԸ. — Ո ձայնաւորով բառ չի վերջանար, այլ -ին քով ՝ կը գրուի միշտ, ինչպէս. բրածոյ, մեծարոյ, տպածոյ, եւայլն:

83. Ո ձայնաւորէն ետքը ձայնաւոր տառերէն միայն - կրնայ գալ, և կը կազմէ -- երկբարբառը:

84. «Զ» եւ «Ջ» ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ. — Դիտուած է որ ղ և ջ նայ տառերէն վերջը միշտ Ջ կու գայ. աղ-ջիկ, աղջամուղջ, գաղջ, գեղջուկ, զղջում, եղջիւր, շեղջ, ողջ, ջղջիկ, եւայլն. ֆուրջ, կաւուրջ, մրջիւն, ղուրջ, ստրջանիֆ, երջանիկ, որջ, վերջ, շուրջ, եւայլն: Բացառիկ են միայն զեղչ, մուրչ և խաչարչուտ բառերը որոնք չով կը գրուին:

85. «Ռ» եւ «Ր» ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ. — Ռ և ր բաղաձայններով սկսող հայ բառ գրեթէ չկայ: Փոխանակ ռ-ի և ր-ի, հռ- և հր-ով կը սկսին բառերը, ինչպէս. հռ-ևչիւն, հրապարակ, հրապուրիչ, հրաւեր, եւայլն:

86. «Ի» եւ «Վ» ԳԻՐԵՐԸ. — Ի գրէն առաջ միայն ա, ե, է, ո կրնան գալ, ինչպէս. գ-ուան, տեր-ե, հա-զիւ, գնչ-ուն, եւն: Բացառիկ են տը-ւյուրիւն բառը և է վերջացող բառերուն սեռականները. հոգ-ոյ, տաբ-ոյ: Նոյնպէս ոտանաւորի և տողադարձի առեն -էն առաջ ը կրնայ գալ, և կարելի է գրել զը-ւարթ, նը-ւագ, եւայլն:

87. Ի-ի տեղ Վ կը գործածուի բառերուն սկիզբը վ-ի ձայնը տալու համար, ամէն գրի քով, ինչպէս. վրեժխնդիր, վարդագոյն, վկայ, եւայլն:

88. Բառերուն մէջտեղը վ-ի ձայնը գրեթէ միշտ ու տառով կը նշանակուի, ինչպէս. նա-ուդ, հա-ևիլ, տե-ական, եւայլն:

89. Բայց երբ վ-ի հնչումէն առաջ ո ձայնաւորը գայ, այն առեն վ կը գործածուի. ժողովուրդ, խոր-վեղ, խոստ-վանիլ, գ-վեաս, ս-վորոյթ: Բացառիկ են.

1. Ժողվեղ (որ ժողովեղի կրճատումն է), սորվիլ (որ սովորիլի կրճատումն է), թօրվեղ (որ թօր-ֆեղի կրճատումն է):

2. Այն բառերը որոնք վ-ով սկսած բառով մը կ'ա-

ծանցուին կամ կը բարդուին. Ռվաւեր, Հոֆեվարք, ղօ-ջուվար։

90. Վէվի հնչումը բառերուն վերջը միշտ -ով կը նշանակուի, բայ ի այն պարագայէն, ուր վէն առաջ ձայնաւորը գտնուի, ինչպէս. գոր-ով, ձայն-ով, բ-ով, երբաղ-ով։

91. Նոր օտար բառերու մէջ, հակառակ հայ ուղղագրութեան օրէնքին, հիմայ սովորութիւն եղած է միշտ վ գործածել, ինչպէս. Թրանվաալ, Սէղվիօ Բէղլիֆօ, Սրավրօրղ, և այլն։

92. «Օ» ՁԱՅՆԱՒՈՐ. — Օ էն եռաբը ձայնաւոր գիր չի՛ գար և օ ձայնաւորով բառ չի վերջանար հայ լեզուի մէջ։ Առոր պատճառը այն է որ օ ձայնաւորը ԺԱ. դարէն եռաբը միայն սկսաւ գործածուիլ — երկրարբառին տեղ, ամէն անգամ որ —ը բառին վերջը չէր գտնուեր կամ իրմէ վերջը ձայնաւոր գիր չէր գար, ինչպէս. —r-or, —գուս-օգուս, —rնեաղ-օrնեաղ, Ա—գոստոս-Օգոստոս։ —Օ էն եռաբը չի կրնար գալ նաև յ տառը։

93. Այն օտար բառերը որոնք օ կը վերջանան, հոլովման մէջ ալ ոչ ձայնաւոր կրնան առնել իրենցմէ եռաբը և ոչ յ, այլ օն կը փոխուի ոյի. Հիվօ չ'ըլլար Հիվոէ կամ Հիվոի, այլ Հիվոյէ, Հիվոյի, և այլն։

94. Բացառաբար օ ձայնաւորէն վերջը յ կը գործածուի եթէ բաղադրեալ ձայնաւորով վերջացող օտար բառերու հոլովման մէջ, և կը գրուի էօյէ, էօյէ, էօյով, ինչպէս. Ռիշիէօ, Ռիշիէօյի, Ռիշիէօյէ, Ռիշիէօյով։

95. Հայ ուղղագրութեան օրէնքներուն ուսումնասիրութեամբ կը տեսնենք թէ ձայնաւորներէն ոմանք իրարու քով չեն գար երբեք հայերէնի մէջ, ինչպէս. —ա, —է, —ի, —ո, —օ, —ե, —է, —ի, —ո, օե, օի, օե, օո, և այլն։ Այս ձեւերուն տեղ կը գործածուի այե (այեր), այէ (Իտալիայէ), այի (կարդայի), այո (այո՛), ոյե (երեկոյեան),

ոյի (բրածոյի), ոյէ (Պorsոյէ), ոյո (հաւաքածոյով), և այլն։

96. Նոյնպէս իրարու քով չեն գար հայ բառերու մէջ էա, էյ, էյ, օա, և այլն։ Սակայն կարգ մը օտար բառերու մէջ ստիպուած ենք վերոյիշեալ ձեւերը գործածել, ինչպէս. Եա-նիկ, Մասէյեան, Ռէյ-ի Պրաս, Պօա։

97. ԼԾՈՐԴ ՏԱՌԵՐ. — Լծորդ կը կոչուին այն տառերը որոնք իրարու տեղ կրնան գործածուիլ, ինչպէս յ և ձ. գձուձ և գծուծ։

98. Լ և ղ տառերը մանաւանդ յաճախ իրարու տեղ գործածուած են հին օտար անուններու մէջ. Պղատոն և Պլատոն, Հերակլ և Հերակղ, Աղեքսանդր և Ալեքսանդր։

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

99. Ուղղագրական նշաններն են ապաթարց (՛) և միութեան գիծ (–)։

100. ԱՊԱԹԱՐՑ. — Ապաթարցը կրճատուած ձայնաւորի մը տեղ կը դրուի հետեւեալ պարագաներուն մէջ.

1. Երբ սահմանական ներկայ և անկատար կազմող կը մասնիկը ձայնաւորով մը սկսող բայի մը հանդիպի. կ'ուզեմ, կ'երգեմ։

2. Երբ բացառական բայի մը սահմանական ներկայ երրորդ դէմքին չէն ձայնաւորով սկսող բայի մը հանդիպի. չ'ուզեր, չ'երգեր։

3. Տաղաչափութեան մէջ՝ կրնայ գործածուիլ ուրիշ առթիւ ալ, ինչպէս. մ'ալ փոխանակ մըն ալ, մ'ուտեր փոխանակ մի՛ ուտերի։

101. ՄԻԱՑՄԱՆ ԳԻԾԸ. — Միացման գիծը կը գործածուի դլխաւորաբար.

1. Միացնելու համար երկու բառեր. Հայ-Հոռոմ, Հնդիկ-գերմանական։

2. Երկու թուականի միջև մինչեւ նախադրութեան տեղ, ինչպէս. Կ. Պոլսոյ առաջին հայ Պատրիարքը, Յովակիմ, պաշտօնավարեց 1461ին 1478. իրեն յաջորդեցին Նիկողայոս (1478-1489), Կարապետ (1489-1509), եւայլն:

ԳԼԽԱԳՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

102. Գլխագիր կը դրուի հետեւեալ պարագաներուն մէջ.

1. Գրուածքի մը սկիզբը. կեանքը պարտականութեանց շարք մըն է:

2. Վերջակէտէ մը վերջը. Հաւատքը մարդուս ամենին մեծ սիրելին է: Երջանիկ են անոնք որ հաւատքով կ'ապրին:

3. Ոտանաւորներու մէջ ամէն տողի սկիզբը.

Թէ երջանիկ ըլլալ կ'ուզես,
Երբեք բաղձանք մ'ունենար.
Կեանքը կարճ է. ինչո՞ւ յուզես
Անոր ալքերն անդադար,

4. Միջակէտէ մը վերջը, երբ ուրիշին խօսքերը կը յիշենք կամ զերբէ մը վկայութիւն կը բերենք ընդհանրապէս չակերտով. Մայրս կ'ըսէր ինծի. « Սէնին բան զոնէ՝ ընտանիքիդ երջանկութեան, քաց ի պատիւդ: »

5. Գրական որ և է երկի մը (վէպ, քերթուած, եւն.), երաժշտական հեղինակութեան մը, նկարի մը, արձանի մը, նշանաւոր շէնքի մը, յիշատակարանի մը անունը, ինչպէս. Պարոնեանի Թուրքը (շրագիր), Տիկին Տիւսաբի Վրժուհին (վէպ), Պետրոս Դուրեանի Լեռները (քերթուած), Պէրլինի Քուշէնը (դպշերգ), Սիլվազովսքիի Քրուէյնը Սէ Ժուան Էլէրտը (նկար), Բօղ Տիւպուայի Գրուէրը (արձան), Դուռմ-Գաբուի Մայր եկեղեցին

(շենք), Բարիզի Յաղթական կամարը (յիշատակարան):

6. Ատուած բառը և անոր հոմանիշները, ինչպէս. Արարիչ, Նախախնամութիւն, Տէր, Սմենակարող, եւն:

7. Համաստեղութեանց, աստղերու և մոլորակներու անունները, ինչպէս. Ցուլ, Կարապ, Վիշապ, Շնիկ, Փայլածու:

8. Քլիւպի մը, ընկերութեան մը, շոգենաւի մը, եւն. անունը, ինչպէս. Բերայի Ա-է-ոբ-կան ելէ-ոը, Ի-ենիճ ապահովագրական ընկերութիւնը, Թէկ-ը շոգենաւը, եւայլն:

9. Անձնաւորուած վերացական անունները, ինչպէս Արդարութիւնը, Նախանձը, եւայլն:

10. Դիցաբանական անուն դարձած հասարակ գոյականները, ինչպէս. Երեք Շնորհիները, Իսը Մուսաները, եւայլն:

11. Յատուկ անունի մը անբաժան կերպով միացած ածականները, ինչպէս. Սեւ Ծով, Յովսէփ Գեղեցիկ, Դաւիթ Անկաղդ:

12. Բոլոր յատուկ անունները, ինչպէս.

Ա. Դիցաբանական աստուածութեանց անունները. Նաեմ, Արամազդ, Արիմն, Ոսիրիս, եւայլն:

Բ. Անձերու անունները. Եղիշէ, Կղեոպատրա, Արիստոտել:

Գ. Ժողովուրդներու անունները երբ իրբ գոյական գործածուին. Հայ, Յոյն, Ֆրանսացի:

Դ. Աշխարհագրական անունները (երկիր, քաղաք, ծով, գետ, լեռ, եւն.). Եւրոպա, Կ. Պոլիս, Մարմարա, եւայլն:

103. Պէտք չէ գլխագիր գործածել.

1. Երբ ժողովուրդի մը անունը իրբ ածական գործածուի. հայ բանաստեղծ մը, յոյն կին մը, ֆրանսացի դերձակ մը:

2. Երբ յատուկ անունէ մը ածական մը կը չինուի. եւրոպական խաղաքարտութիւն, ամերիկեան երկաթուղիներ:

3. Զանազան կրօնքներու կամ աղանդներու անուններ, ինչպէս. իսլամութիւն, պուտտայականութիւն, արեւապաշտութիւն, հոռոմեականութիւն, բողոքականութիւն, եւայլն:

4. Դիւցազնութեան մէջ, ջուրերու և անտառներու աստուածութիւնները. նայեադներ, դրեադներ, փաւոնեաներ, այծամարդեր:

5. Ամիսներու և օրերու անուններ. յունուար, փետրուար, երկուշաբթի, երեքշաբթի, եւայլն:

6. Արեւ, շուսին, երկիր երբ իրը հասարակ անուն գործածուին. արեւը մարը մտաւ, շուսնի ղոյսին, երկրիս բնակիչները:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՔԱՐԱՑՈՒՄ

Եթէ ջուրին մէջ կաւոր մը աղ կամ պղտոր ձգենք, կ'անթափանցայ. բայց եւաքը, եթէ արեւը դնելով թող տանք որ ջուրը ցնդի, հալած մարմինը վերատին երեւան կ'ելլէ. ասկէ կ'իմանանք որ ջուրին մէջ հալելով անտեսանելի մարմին մը կրնայ վերատին երեւան ելլել:

Ասանկ ալ ջուրեր կան, որոնց կազմութեան մէջ կը գտնուին կիր, ածխային թթու, եւայլն, որոնք երկրիս ներսը գտնուած ատեններն՝ հալած վիճակի մէջ են. իսկ երբ այդ ջուրերը սկսին դուրս բղխիլ և օդին ներկայանալ՝ ածխային թթուին մէկ մասը օդը տեսնելով կը ցնդի, և կիրը ջուրին յատակը կ'իջնէ, ու հոն կը մնայ

կարծրանալով: Եթէ բղխած ջուրը վազուկ առուակ մը կամ գետ մըն է, ջուրին մէջ հալելու և վերատին երեւան ելլելու կարող նիւթերը ճամբուն վրայ կամայ կամայ կը քարանան, և Անտիպարոսի, Ատէլսպէրկի ու Փամփուք Գալէսիի պէս շատ մը քարանձաւներ կը կազմեն: Սակայն այս դիւրին օրինակով կրնանք հասկնալ թէ քարացումը ինչպէս կ'ըլլայ:

Տեսակ մը մարնա կայ, որ ջուրին մէջ եղած ատեն կակուղ է, բայց երբ ջուրը չոգիանայ, ինքը այնքան կարծր քար մը կը դառնայ, որ մուրճով անգամ չի կոտրիր:

Գայլախաղ, ածուխ, եւն. պարունակող ջուրերը շատ անգամ կը պատահի որ երկաթախառն ջուրերէ և աւազի շարքերէ անցնելով՝ աւազի հատերը իրարու կը կպցնեն, և ասոնք բոլոր բոլանդակ քար կը կազմին, երբ իրենց ջուրերը ցնդին:

Երբեմն կը պատահի որ տերեւներ, տունկեր և մինչեւ անգամ ձուկեր ջուրին մէջ եղած ատեններն կակուղ խաւերու կը հանդիպին, և ջուրը ցնդելով երբ խաւը կը սկսի կարծրանալ՝ իրեն հետ գտնուող ամէն բան իր մէջը կը մնայ. եթէ հոն մնացած մարմինները դիմացկուն մարմիններ չեն, խոնաւութենէ կը քայքայուին ու կը փտին. սակայն իրենց պատկերը քարին վրայ կը դրոշմուի: Այս պատճառով է որ ձուկերու քարացման պատկերներ շատ կան քարերու վրայ:

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ.(1)

17 Ուղղագրութեան օրէնքներու համար մասնաւոր սրբագրել հետեւեալ խօսքերուն մէջի տառասխալները

Երբ գործողութիւնը խորհրդածութենէն առաջ անցնի, զղջումը կը հետեւի անոր։ — Առտուն ընելիք բարիքդ իրիկուան կամ ուղղան մի՛ ձգեր։ — Իրաւունք ունենալը չի բաւեր, պետք է մարդ իր գաղափարները պաշտպանե խէլացութեամբ և արժանապատուութեամբ. և ոչ թե անմիտ խօսքերով։ — Բարչը տէսակ մը սափոր է։ — Խէլացի մարդը միշտ խէն-

---

(1) Իզմիրցի հայ գիտուն որ թողած է գիտական աշխատասիրութիւններ. մեռած է 1898ին։

դէն կը վախնա։ — Չկա աւելի անհաճոյ բան մը որքան դաժան կերպարանք մը։ — Ցուն դարձա։ — Բախդ չունիմ։ — Գրականութեամբ կը զփաղիմ և անով կը սրոփուիմ։

ՁԿՆՈՐՍԸ

Կոհակը կը մրմնջէր, կոհակը կ'ուռէր, ձկնորս մը նստեր էր ծովափը. հանդարտ՝ կարթին կը նայէր, մինչեւ սրտին խորը զովութեամբ կաղդուրուած։ Եւ մինչ նստեր՝ կը դիտէր, ալիքը բարձրացաւ ու ճեղքուեցաւ, և ծփացիկ կոհակին ալքերէն ջրաթաթաւ պարիկ մը դուրս ելաւ աղմուկով։

Եւ երգեց անոր ու ըսաւ. «Ինչո՞ւ մարդկային խոսքամանկութիւններով ու հնարքներով ձուկերս վեր կը քաշես դէպ ի մահաղդեցիկ ջերմութիւնը։ Ո՜հ, եթէ գիտնայիր թէ փոքրիկ ձուկը ինչ հանգիստ է կոհակներուն խորքին մէջ, դուն ալ հոն պիտի իջնէիր, և հանգիստ պիտի ըլլայիր։

«Ձե՞ս տեսներ չքնաղ արեւը, լուսինը որ ծովուն մէջ կու գան զովանալ։ Իրենց դէմքը ալիքներուն վէտ-վէտումին մէջ կրկնապէս չի՞ գեղեցկանար։ Դուն ալ չե՞ս հմայուիր սա խորունկ երկինքէն, սա նամէտ և շողշողուն կապոյտէն. չե՞ս հմայուիր նոյն իսկ քու պատկերդ որ կը ցոլանայ յաւերժական ցօղին մէջ։»

Կոհակը կը մրմնջէր, կոհակը կ'ուռէր, կը թրջէր անոր բոպիկ ոտքը, և սիրտն ալ լեցուեցաւ ըղձանքներով։ Եւ պարիկը խօսեցաւ անոր, երգեց անոր. ա՛լ մարդուն գործը լմնցեր էր։ Քիչ մը ծովուն պարիկը քաշեց զայն, քիչ մըն ալ ան ձգեց ինքզինքը, և ա՛լ երբեք երեւան չելաւ ձկնորսը։

ԴԷՕԹԷ(¹)

(¹) Գերմանացի մեծ բանաստեղծ, խորհող, գիտուն և արուեստագէտ. ծնած է Ֆրանկֆորթի մէջ 1749ին, և մեռած 1832ին։

18. Գոց սորվիլ այս հատուածը, և բարձրաձայն արտասանել զայն։

19. Լուծել բերանացի այս հատուածին վերջին վեց տողերը։

20. Գլխագիր դնել հետեւեալ խօսքերուն մէջ հարկ եղած տեղերը։

ԺԸ. դարուն մէջ պոլսեցի հայ աղջիկ մը՝ մարիամ քարաքաշեան գրած է ակն հոգւոյ անուն գիրք մը, որ տպուած է վենետիկ։—քսանըհինգ տարի առաջ օրիորդ մենիկ (տիկին Ռազուհի մելիք ազարեանց) գրած է զարեանի մի ասուպ անուն նորավէպ մը, որ հրատարակուած է Իզմիր։—օրիորդ կեսարացեան հրատարակած է կիրառ անուն Ռերթ մը։ —տիկին տասիէ Ֆրանսացի գրագիտուհին Ռարգմանած է հոմերոսը իր լեզուին։ — տիկին տը մէնՔընոն՝ ֆրանսացի լուդովիկոս ԺԴ.ի զաւակները դաստիարակած է։ — սէկիւր ֆրանսացի կոմսուհին տղոց յարմար վիպակներ գրած է։ — էլիզաբէթ պարէթ պրաունինկ ԺԹ. դարուն մէջ անգլիոյ նշանաւորագոյն բանաստեղծուհին եղած է։ — տիկին տը սէվինեէի նամակները մայրական սիրոյ հրաշակերտներ են։

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

104. ՀԻՆ ՕՏԱՐ ԱՆՈՒՆՆԵՐ. — *Այն յատուկ անունները, որոնք կը վերաբերին հին ազգերու, հայերէնի վերածուած են եւ կը վերածուին ըստ այն հնչմանց զոր հայ տառերը ունէին երբեմն։ Այդ տառադարձուԹեան սկզբունքները ճշդելու համար կը դնենք հետեւեալ ցուցակը, հիմ ունենալով մեզի լատինական տառերը, և տառադարձուած անուններուն քով կը նշանակենք գրաբարէն ձեւերը, որոնք լատիներէնէ առելի ծանօթ են հայ ուսանողներուն.*

Լատին տառ	Հայ տառ	Հայերէն	Գրաբարէն
a	*ա*	Արիստոփան	Aristophane
b	*բ*	Բագոս	Bacchus
c, k, q	*կ*	Կատոն	Caton
d	*դ*	Դամոկլիս	Damoclès
e	*է կամ է*	Մէրոպէ	Mérope
f	*փ*	Ափրիկէ	Afrique
g	*գ*	Գողգոթա	Golgotha
h	*հ*	Հիպպոկրաս	Hippocrate
i	*ի*	Իսրայէլ	Israël
j	*յ*	Յուդիթ	Judith
l	*լ կամ ղ*	Ալեքսանդր, Պլատոն	Alexandre, Platon
m	*մ*	Մենելաս	Ménélas
n	*ն*	Նումա	Numa

o	*ո կամ ոյ*	Ոսիրիս, Են-էֆ	Osiris, Enoch
p	*պ*	Պենելոպէ	Pénélope
r	*ր կամ ռ*	Արկադիա, Ռափայէլ	Arcadie, Raphaël
s	*ս*	Յասոն	Jason
t	*տ*	Տիտոս	Titus
u	*ու*	Պլուտոն	Pluton
v	*ւ կամ վ*	Վեսթա, Դաւիթ	Vesta, David
x	*քս*	Քսերքսես	Xerxès
y	*իւ կամ ի*	Կիւրոս, Սփինքս	Cyrus, Sphinx
z	*զ*	Զենոն	Zénon
ch	*ք*	Քրիստոս	Christ
ph	*փ*	Սոֆոկլէս	Sophocle
th	*թ*	Թալէս	Thalès
au	*աւ, ոյ կամ օ*	Կաւկաս, Կովկաս, Պօղոս	Caucase, Paul
eu	*եւ*	Եւրոպա	Europe
aï	*այէ կամ այէ*	Իսրայէլ	Israël
aü	*աւու*	Սաւուղ	Saül
aï	*այի*	Թեբայիդ	Thébaïde
oa	*ովա*	Յովակիմ	Joachim[1]

104. L *տառը թէ՛ ղով եւ ղով կը տառադարձուի, և գրաբարներուն ճաշակին համեմատ երկուքն ալ գործածուած են. Ալեքսանդր և Ալեքսանդր։*

105. S *տառը ընդհանրապէս ս-ի կը վերածուի, ինչպէս Սկիպիոն, Scipion, Սրապոն, Strapon. սակայն ֆ, գ, դ, ֆ և ն տառերէն առաջ շ-ի կը փոխուի, ինչպէս. Զմիւռնիա, Smyrne, եւայլն։*

106. V *տառը բառերուն սկիզբը միշտ վ-ի, և*

---

[1] Նոյնպէս ao կ'ըլլայ -յո կամ -ոյ, ae է կամ է. oe է- կամ է, oë -էէ. եւայլն.

մէջտեղը կամ վերջը -ի կը փոխուի, ինչպէս Վատիկան, Vatican, Բատաւ-իա, Batavia. բայց երբ բառերուն մէջտեղ v գայ « ձայնաւորէն եւաքը միշտ վ կը գրուի, -- երկրաբբառին հետ չշփոթելու համար. Ովիդիոս, Ovide:

107. R գիրը բառերուն սկիզբը Ռ-ի կը փոխուի, ինչպէս. Ռաֆայէլ, Raphaël, և բառերուն մէջտեղն ու վերջը ր-ի կը փոխուի ընդհանրապէս, ինչպէս. Սոկրատ, Socrate, Պիւթագոր, Pytagore: Իսկ ն տառէն առաջ՝ միշտ -ի կը փոխուի. Կոռ-նեղիոս, Cornelius, Բառ-նաբաս, Barnabé:

108. Շատ անգամ բառերուն սկիզբը -էն առաջ հ կը գրուի. Հռոմ, Rome:

109. Սովորութիւն եղած է շատ տեղ ն տառը զեղչել տառադարձութեան մէջ. Կոնստանդնուպոլիս, Constantinople, Ադրիանուպոլիս, Andrinople, Վաղէս, Valens:

110. Us և um լատին վերջաւորութիւնները ընդհանրապէս յունական ձեւով կը գրուին -ոս և -ն. Արգոս, Argus. Ֆրանսերէնի մէջ յաճախ այդ վերջաւորութիւնները կը ջնջուին, իսկ հայերէնի մէջ քիչ անգամ. հերետիկոս, hérétique:

111. Պէտք է դիտել թէ հին յատուկ անուանները հայերէնի վերածուած են ընդհանրապէս հեռաւորութեամբ յոյն, լատին կամ ասորի ձեւերուն, որոնցմէ կը տարբերին երբեմն ֆրանսական ձեւերը:

112. ՆՈՐ ՕՏԱՐ ԱՆՈՒՆՆԵՐ. — Բոլոր այն օտար յատուկ անունները, որոնք կը վերաբերին նոր ազգերու, հայերէնի մէջ կը գրուին հայ տառերու արդի հնչմանց և իւրաքանչիւր ազգի բնիկ արտասանութեան համաձայն, ինչպէս. Նիու-Եորք (New York), Մանչեսթըր (Manchester), Պոռսօ (Bordeaux), Պոքաչչիօ (Boccaccio): Այս սովորութիւնը մուտ գտած է վերջին ատենները թէ՛ աշխարհաբար և թէ՛ գրաբար գրուածքներու մէջ, թէև կարգ մը նոր անուններ ալ հին անուններու տառադարձութեամբ կը գործածուին յաճախ, ինչպէս. Միլտոն, փոխանակ՝ Միլթընի (Milton), Նեւտոն, փոխանակ՝ Նիւթընի (Newton), Կոպերնիկոս, փոխանակ՝ Քօքէռնիքի (Copernic), և այլն:

113. Օտար հնչումները հաւատարմօրէն արտայայտելու համար, զանազանութիւն չի դրուիր հիմայ բ եւ փ, դ եւ թ, գ եւ ք, ց եւ ձ, չ եւ ջ, ո եւ օ, է եւ ե տառերուն միջեւ, ու անոնք հաւասարապէս կրնան գործածուիլ. սակայն աւելի յաճախ կը գործածուին բ, թ, ք, ց, չ, օ, է:

ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

114. ՀԻՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԲԱՌԵՐ. — Ցուցարէնի յատուկ կարգ մը հասարակ անուններ ալ յատուկ անուններու տառադարձութեան սկզբունքներուն համաձայն հայերէնի վերածուելով գործածուած են մեր լեզուին մէջ, ինչպէս. կաղանար, փոս, մեղեդի, փիլիսոփայ, և այլն: Իսկ շատ մը պարսկերէն, արաբերէն, ասորերէն բառեր ալ հայացած են զանազան տառերու փոփոխմամբ, ինչպէս. աբեղայ, գուբ, թարգման, ղուսայ, կաստ, և այլն (ասորերէնէ), ազատ, թակիայ, պաստիճան, և այլն (արաբերէնէ), հազար, պաստուհան, դահիճ, շտապ, և այլն (պարսկերէնէ):

115. ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԲԱՌԵՐ.—Նոր լեզուներու յատուկ (ֆրանսերէն, անգլիերէն, և այլն) հասարակ անունները հայերէնի մէջ կը գրուին ընդհանրապէս ճի՛շտ այնպէս ինչպէս կը հնչուին այդ լեզուներուն մէջ. ալֆոլ, ողտեկիոր, պիֆթեք, ֆոսֆ, խազիլիս, իսառն, հայ-ղայֆ, և այլն:

ՀՐԱՀԱՆԳԵՐ

ՊՂԱՏՈՆ

Պղատոն յոյն փիլիսոփայ մըն էր, որ ծաղկեցաւ Աթէնքի մէջ Քրիստոսէ 430 տարի առաջ։ Ութը տարի Սոկրատի աշակերտակէ եաքը, անոր մահէն յետոյ թողուց Աթէնքը, եւ շրջեցաւ Արեւելք ու Եգիպտոս, ուր կրօնական եւ պիտական վարդապետութեանց միջամտեց։ Դարձին՝ բնակեցաւ Սիրակուսա, երկու Դիոնեսիոսներուն ապարանքը, որոնցմէ նախ սիրուեցաւ, ու յետոյ հալածուեցաւ։ Պղատոն օրէնք տուաւ Կրետացւոց եւ Թրակացւոց, ու մեռաւ գրեթէ ութսուն տարեկան, մեծարուելով բոլոր լուսաւորեալ աշխարհէն։ Պղատոն Աթէնքի մէջ՝ Ակադեմոսի պարտէզը դաս կուտար, որով իր դպրոցը Ակադեմիա կոչուեցաւ։ Պղատոնի վերապրեալ չատ մը գրուածներ կան, որոնց գլխաւորներէն է Սոկրատայ ջատագովութիւն կոչուած գիրքը, խօսակցութեան կամ արամախօսութեան ձեւով գրուած։

ՄԱՏԹԷՈՍ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ (1)

21. Գրուցագրել այս հատուածը, յետոյ բերանացի ըսել թէ անոր մէջ գտնուած յատուկ անուններուն գիրերը լատինական որ տառերուն կը համապատասխանեն.

22. Հետեւեալ ֆրանսերէն յատուկ անուններուն հայերէնները նշանակել տառադարձութեամբ.

Mentor, Atlas, Nestor, Memphis, Péloponèse, Hector, Patrocle, Lacédémone, Agamemnon, Crète, Priam, Cupiton, Pandore, Triton, Amphitrite, Thétis, Narcisse, Adonis, Iris, Cadmus, Phiioctète, Pan, Castor, Hippolyte, Danube, Cicéron, Brutus, Daphnis, Melpomène, Philémon, Marcellus.

---

(1) Մատթէոս Գարագաշեան՝ ծանօթ հայագէտ և քերական, սոկեդարեան գրաբար հայերէնով թարգմանած է Լաֆօնթէնի Առակները, և ուրիշ գործեր, ինչպէս նաև հեղինակած կարեւոր դասագիրքեր։ Ծնած է 1818ին։

Օրինակ. — Mentor, *Մենտոր։*

23. Հետեւեալ յատուկ անուններուն հայերէնները նշանակել ռա աւելցնելով.

Thésée, Olympe, Orphée, Egypte, Chypre, Morphée, Tartare, Saturne, Tantale, Esope, Paul, Quintilien, Sisyphe, Dédale.

Օրինակ. — Thésée, *Թեսէ-։*

24. Հետեւեալ յատուկ անուններուն հայերէնները նշանակել իրենց վերջի e ն *ա* ի փոխելով.

Hellade, Phèdre, Italie, Asie, Cythère.

Օրինակ. — Hellade, *Հելլադ-։*

25. Հետեւեալ յատուկ անուններուն հայերէնները նշանակել իրենց վերջի e ն *ես* ի փոխելով.

Achille, Eschyle, Archimède, Démosthène, Diogène, Diomède, Euripide.

Օրինակ. — Achille, *Աքիլլէ-։*

26. Հայ տառերով գրել հետեւեալ նոր յատուկ անունները, և բացատրել անոնց ով կամ ինչ ըլլալը.

Béranger, Beethoven, Franklin, Gambetta, Lohengrin, Massillon, Garibaldi, Cervantès, Fénelon, Rossini, La Rochefoucauld, Molière, Machiavel, Leibniz, Kant, Gibbon, Boileau, Racine, Bonifacio, Sadi Carnot, André Chénier, Cuvier, Beaconsfield, Faust, Lamennais, Cook, Eugène Delacroix, François Coppée, Sarah Bernardth, Le Sage, Goethe, Irkoutsk, Stockholm, Sandwich, Tolstoï, Adam Smith, Georges Sand, Cambridge, Camoëns, Walter Scott, Wagner, Kamtchatka.

Օրինակ. — Béranger, *Պէրանժէ, ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ, ծնած է 1780ին և մեռած 1857ին։*

27. Հետեւեալ ֆրանսերէն հասարակ անունները, որոնք յունարէնէ առնուած են, վերածել հայերէնի՝ տառադարձութեամբ.

Citron, sybille, méthode, barbare, hérétique, jacinthe, sphinx, zénith, oasis.

Օրինակ. — Citron, կիտրոն։

28. Նոր օտար լեզուներու վերաբերող հետեւեալ հասարակ անունները գրել հայ տառերով.

Omnibus, tunnel, landau, album, macaroni, confetti, gondole, guitare, club, wagon, whist, ananas, quinine, quinquina, tapioca.

Օրինակ. — Omnibus, օմնիպուս։

ՄԱՆԻՇԱԿԻՆ ԻՂՁԸ

Ծաղիկներու դըշխոն՝ փլոր
Երբ մանիշակն յօրինեց
Թիթեռնիկին թեւաւոր
Նուրբ իրանէն լուսայեղց,
Եւ դըրաւ բոյր խընկահոտ
Անոր ծոցին մէջ բեհեզ,
Հարցուց ծաղկին ամըչկոտ.
«Դեռ ի՞նչ կ'ուզես որ տամ քեզ.
«Ծամեր ծաւի, փուշեր սուր,
«Ըսէ, աղջիկս իմ փափուկ,
«—Ի՞նչ մը տերև ինձի տուր
«Որ զիս պահէ միշտ ծածուկ»

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

29. Գոց սորվիլ և արտասանել այս ոտանաւորը։

ՃԱՆՃԱՀԱՒԸ

Շնչաւոր էակներուն մէջ՝ ամէնէն վայելչաձեւը եւ ամէնէն գունափայլն է ճանճահաւը։ Մարգկային արուեստով յղկուած քարերն ու մետաղները չեն կրնար համեմատուիլ բնութեան այս գոհարին հետ։ Բնութիւնը թռչուններու կարգին մէջ՝ մեծութեան մասին ամէնէն յետին աստիճանին վրայ դրեր է զայն։ Իր հրաշակերտն

է ճանճահաւը, որուն վրայ միացուցեր է բոլոր այն ձիրքերը, որոնցմէ մէյ մէկ մաս միայն բաշխած է ուրիշ թռչուններու. թեթեւութիւն, արագաշարժութիւն, արագամտութիւն, շնորհք եւ պերճանք, ասոնք ամէնքն ալ տուած է իր փոքրիկ սիրականին։ Զմրուխտը, սուտակը, տպազիոնը կը շողան անոր հանդերձներուն վրայ, զորս երբեք չ'աղտոտեր գետնի փոշիէն, եւ իր օդասլացիկ կեանքին մէջ՝ հաղիւ երբեմն կը դպչի մարմանդներուն. միշտ եթերին մէջ կ'ապրի ծաղկէ ծաղիկ սլանալով, եւ անոնց թարմութիւնը ունի, ինչպէս ունի անոնց ցոլքը. անոնց նեկտարովը կը սնանի, եւ կը բնակի այն կլիմաներուն տակ, ուր ծաղիկները միտեանորոգ կը փթթին։

Նոր Աշխարհի ամէնէն ջերմիկ երկիրներուն մէջ կը գտնուին ամէն տեսակ ճանճահաւեր։ Բաւական բազմաթիւ են, եւ կարծես ամէնքն ալ երկու արեւադարձներուն միջեւ քաշուած են, վասն զի ամառը բարեխառն գօտիներու տակ ճամբորդողները շատ քիչ կը կեանան. կարծես արեւուն ետեւէն կը պտտին. անոր հետ կը յառաջանան, անոր հետ կը նահանջեն, ու զեփիւռին թեւերուն վրայ կը թռչին յարափթիթ գարունի մը ետեւէն վազելով։

Իրենց կուռցը նուրբ ասեղ մըն է, եւ լեզունին՝ փափուկ գերձան մը. իրենց սեւ աչուկները երկու փայլուն կէտերու կը նմանին. թեւերնուն փետուրը այնքան կակուղ, այնքան բարակ է որ, թափանցիկ երեւոյթ մը կու տայ իրենց։ Այնքան կարճ ու պտտիկ է տոտիկնին որ հաղիւ կը տեսնուի. շատ քիչ կը գործածեն զանոնք. միայն գիշերները կը թառին, իսկ ցորեկը օդին մէջ կը սաւառնին։ Իրենց պացքը անդադրում, բզզուն եւ արագ է. իրենց թեւաթափումը թռչունին թեւածման չափ սաստիկ է, եւ երբ օդին մէջ կենան, ոչ միայն անշարժ՝ այլ եւ կատարելապէս անդրդի կ'երեւան։ Մէկ քանի բոպէ կանգ կ'առնեն ծաղիկի մը առջեւ, յետոյ, նեաթ պէս կը նեռուին ուրիշի մը մօտենալու համար։

Այս փոքրիկ թռչունները արտակարգ կերպով եռանդոտ՝ քաջասիրտ՝ կամ լաւ եւս, յանդուգն են. իրենցմէ քսան անգամ մեծ թռչուններ կը հալածեն կա-

տալութեամբ, անոնց մարմնին կը փակչին, ու հետերնին կը թռչին, ճամբան՝ չարունակ կառուցի հարուածներ տալով անոնց մինչեւ որ պզտիկ զայրոյթնին յագենայ։ Երբեմն ալ իրենց մէջ սաստիկ կռիւներ կ'ընեն։ Անհամբերութիւնը իրենց հոգին է կարծես. եթէ ծաղիկի մը մօտենալով՝ տեսնեն որ խամրած է, չտալով անոր թերթերը մէկիկ մէկիկ կը փետտեն կը նետեն, ինչ որ իրենց զայրոյթը ցոյց կու տայ։ Երգել չեն գիտեր, միայն փոքրիկ ճիչ մը ունին սռէ՛ք, սռէ՛ք, զոր կ'արձակեն յաճախ եռուէ եռու, պուրակին մէջ, արշալոյսէն սկսեալ մինչեւ որ արեւը ճառագայթները սիրէ. յետոյ ամէնքը մէկէն կը թռչին, կը ցրուին դաշտերուն մէջ։

ՊԻՖՕՆ (1)

29. Այս հատուածին հետեւեալ բառերը գործածել մէյ մէկ նախադասութեան մէջ.

Գունափայլ, յղկուած, հրաշակերտ, պերճանք, սուտակ, օղասլացիկ, մարմանդ, եռեր, սլանալ, ցոլք, արեւադարձ, սաւառնիլ, Ծեւաբախում, հալածել։

30. Համառօտելով գրել այս հատուածը։

(1) Պիւֆոն, նշանաւոր բնապատում, որ նաև ամէնէն մեծ գրագէտներէն մէկն է Ֆրանսայի, ծնած է 1707ին և մեռած 1788ին։ Գրած է Զորմոցանիներու բնական պատմութիւնը։

ՏՐՈՇՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

116. Գրելու եւ կարդալու ատեն բառերը եւ խօսքերը իրարմէ զատելը տրոհութիւն կը կոչուի։ Տրոհութիւնը երկուքի կը բաժնուի. տողադարձ եւ կեսադրութիւն։

ՏՈՂԱԴԱՐՁ

117. Բառի մը մէկ մասը տողին ծայրը թողլով՝ միւս մասը յաջորդ տողը անցընելու կանոնը կը կոչուի տողադարձի կանոն։

118. Բառի մը մէկ մասը մէկ տողէն միւսը փոխադրելու ատեն՝ տողին վերջը ենթադրեալ նշանը կը դրուի, որ հետեւեալ ձեւը ունի (-)։

119. Տողադարձի, ինչպէս հեղուսի համար, հարկ է բառը վանկ վանկ բաժնել. ա-ղողջ, ան-տա-ռա-կոյս։

120. Միավանկ բառերը չեն բաժնուիր, ինչպէս. հաց, ջուր, կազմ, կողմ, պարտք։

121. Բազմավանկ բառերու մէջ, երբ երկու ձայնաւորի միջեւ մէկ բաղաձայն գիր կայ, բաղաձայնը յաջորդ վանկին կ'անցնի, ինչպէս. բա-րի, ա-նոյշ։

122. Երբ երկու ձայնաւորի միջեւ երկու կամ աւելի բաղաձայն գիր կայ, ընդհանրապէս վերջինը յաջորդ ձայնաւորին կ'անցնի, ինչպէս. վար-ժուն, հանգ-ցիլ, անձ-կութիւն, շնչաս-պառ, բանաս-տեղծ, պաշտ-պան. նոյնպէս ուղ-ղոյ, հոգ-ղոյ, գին-ղոյ, որովհետեւ հոս ղ ձայնաւորը բաղաձայնի ոյժ ունի։

123. Երբ բառի մը մէջ գտնուած բաղաձայնութիւն միջեւ ը հնչումը կը լսուի, տողադարձի ատեն գիրը կը նշանակուի հոն ուր կը հնչուի. ձեռ-ը-նտ, եր-կը-ոպագու, անը-գոյշ, անպը-տուղ, անսը-տուամ, ծը-ծոյլ, սը-ուս-կեղ, մը-շ-տ-ը-նջեանաւոր:

124. Երբ վերջին բաղաձայնը նայ (ղ, ղ, ն, մ, ր, ռ) տառ է, կամ թոյլ (ջ, ս, ժ, շ) բաղաձայն է, ոմանք երկու վերջին բաղաձայնները վար կ'առնեն, ինչպէս. պա-տրանք, եր-կրորդ, մա-քրեղ, բար-ձրագոյն, ա-փսե, ար-բշիռ, եւայլն: Սակայն հիմայ ընդհանուր կանոնը կը գործադրուի սովորաբար, եւ կը գրուի պաս-ռանք, երկ-ռորդ, մաք-ռեղ, բարձ-ռագոյն, ապ-սե, արբ-շիռ, դպի-նի, ակ-ռայ, պաս-ռուակ, թարգ-ման, եւայլն:

125. Բարդ եւ ածանցեալ բառերու մէջ բացառաբար կարելի է երկու բաղաձայն վար առնել, երբ վերջին բաղաձայնը նայ է կամ թոյլ, եւ վար առնուած մասը արմատ մը կամ բառ մըն է ինքնին. մեծա-հուաշ, մարդա-բնակ, նորա-նշան, մատենա-գրեղ, նորա-հնար, ան-շնորհ, ան-բնական, եւայլն: Այս պարագային երբեք ը տառը չի գրուիր վար առնուած բաղաձայնութիւնին մէջեւ, նոյն իսկ երբ հնչուի. այսպէս, չի գրուիր գերա-կը-շիռ, աղխատա-խը-նամ, փառա-պը-սակ, եւայլն:

126. Երբ բառի մը մէջ երկբարբառներ կան, ընդհանրապէս չեն բաժնուիր, ինչպէս. պա-տ-ա-էր (եւ ո՛չ պա-տ-ա-էր), պա-տ-ա-ւոր (եւ ո՛չ պա-տ-ա-ւոր):

127. Երբ երկբարբառի մը մէջ ը ը կը հնչուի, կարելի է, տողադարձի ժամանակ, ը նշանակել, եւ երկբարբառը բաժնել. զը-ւարթ, փոխանակ զուարթի, ևը-ւիրեղ, փոխանակ նուի-ռեղի,

128. Ա, Ը, Ա, Ա-, Է-, Է- երկբարբառները կը-նան բաժնուիլ երբ Ը էն կամ -էն անմիջապէս ետքը

ձայնաւոր գայ. խահան-ը-յական, գ-ը-յական, զօր-ա-որ, թէ-ա-ւոր, ինչ-ա-ան:

129. Երբ ձայնաւորներ իրարու քով կու գան եւ երկբարբառ չեն կազմեր, կրնան բաժնուիլ. է-ութիւն, Սամու-էլ:

130. Տողադարձի ատեն կարելի է միակ գիր մը վերի տողին ծայրը ձգել, երբ ձայնաւոր է. Ի-տալացի, է-ապէս: Իսկ անսովոր է միակ ձայնաւոր մը վարի տողը անցընել. տեսնէ-ի, Ռուսանի-ա:

131. Երբ տողին վերջը մնակ մնացած գիրը բաղաձայն է, պէտք է ը դնել սկիզբը կամ վերջը հնչումին համեմատ, այսպէս. ը-զ-մայիլ, ը-շ-տապ, կամ սը-տախօս, շը-ղ-թայ:

132. Կարելի չէ նաեւ տողին վերջը ձգել ապաթարց մը, ինչպէս. չ'-երթար, կ'-ուտէ:

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

133. Կետադրութիւնը կը սորվեցնէ գործածութիւնը այն զանազան նշաններուն, որոնք պարբերութիւնները, նախադասութիւնները եւ նախադասութեան մասերը իրարմէ կը բաժնեն:

134. Կետադրութեան գլխաւոր նշաններն են.

Բութ	(՝)	Կախման կէտեր	(. . .)
Ստորակէտ	(,)	Փակագիծ	(( ))
Միջակէտ	(.)	Զակերտ	(« »)
Վերջակէտ	(։)	Անջատման գիծ	(—)

135. ԲՈՒԹ. — Բութը բառի մը վերջը՝ վերի կողմը կը դրուի, ամէն անգամ որ հարկ ըլլայ այդ բառին վրայ շատ քիչ միջոց մը կանգ առնել: Բութի գործածութեան գլխաւոր պարագաները հետեւեալներն են.

1. Բացայայտիչը բացայայտեալէն երբեմն բութով կը զատուի. Պաղատու Ս. Հրեշտակապետ եկեղեցին առաջին անգամ շինեցին, 1630ին, երկու հայ ճարտարապետներ՝ Մուսա եւ Խաչեր:

2. Ձեղչուած կամ զօրութեամբ իմացուած բառի մը կամ նախադասութեան մը տեղ բութ կը դրուի միշտ. Ստեփան Փափազեան գրած է Պիզանեան ամիրայի եւ Ս.Նդրեաս վարժապետի կենսագրութիւնները, եւ Տոքթոր Թորգոմեան՝ շատ մը հայ բժիշկներու կենսագրութիւններ:

3. Միջանկեալ նախադասութիւնները երբեմն բութով կը բաժնուին. ձկնորս մը՝ ծովեզերքը կեցած՝ իր ուղիանը կը նետէ:

136. ՍՏՈՐԱԿԷՏ. — Ստորակէտը բառի մը վերջը կը դրուի ամէն անգամ որ պէտք ըլլայ բութէն քիչ մը աւելի կանգ առնել: Ստորակէտի գործածութեան պարագաները հետեւեալներն են.

1. Իրարմէ կը բաժնէ կարճ նախադասութիւններ, որոնք վիրար կ'ամբողջացնեն. հովը կը սուլէ, երկինքը կ'որոտայ, եւ ծովը հետուն կը մռնչէ:

2. Միեւնոյն նախադասութեան մէջ կը բաժնէ հնթականները, ածականները, բայերը, ենթդիրները, եւն. Ղազար Փարպեցի, Ս.Նանիա Շիրակացի, Գրիգոր Նարեկացի հայ մատենագիրներ են: — Պարոնեան սրամիտ, զուարճախօս, հեգնոտ, խնամասէր գրագէտ մը եղած է: — Եկեղեցիին կ'երգէ, կը խաղայ, ջուր կը բաշէ եւ մեռեալ կը ձեւանայ: — Լուսակին կը գտնուի Մեսխիկայի, Պրազիլիոյ, Գալիֆորնիոյ եւ Ուրայ դեղերուն մէջ:

3. Կը բաժնէ միջանկեալ նախադասութիւնները. կեանքը, կ'ըսէ Սոկրատ, պէտք է ըլլայ յարատեւ խորհրդածութիւն մը մահուան վրայ:

4. Կը բաժնէ կոչականները, ըլլան միջանկեալ կամ ոչ. Տղա՛ս, ուղիղ ճանբին գնա: Հեռացի՛ր, զատա՛կս, ջարերեն:

137. Երբ երկու բառեր կամ շատ պզտիկ նախադասութիւններ միացած են չաղկապով մը, երբեք ստորակէտ չեն առներ. Կոնկեանին Լ հարսնուկը ծաղիկներ են: Ցաւմիկը դեղին է՝ ճերմակ կ'ըլլայ: Սունկը ԸՆԷ՝ բոյս է ԸՆԷ՝ կենդանի: Աղբիւրը կը խոխոջէ՝ ջրվիժը կը շառաչէ:

138. Իսկ երբ երկու երկար նախադասութիւններ միացած են չաղկապով մը, միշտ ստորով կը բաժնուին. Շատ խնայողութիւնը աղքատութեան մէջ առաքինութիւն է, Լ հարստութեան մէջ մոլութիւն:

139. ՄԻՋԱՆԿԷՏ. — Միջակէտը, որ կը կոչուի նաեւ կէտ, կը գործածուի.

1. Ամբողջ խօսքի մը գլխաւոր նախադասութիւնները իրարմէ զատելու համար. Նեղոս գետը Եգիպտոսին կ'անցնի. զայն կը բեղմնաւորէ պարբերաբար ողողելով:

2. Տեղէ մը բերուած վկայութիւնէ մը կամ ուրիշի մը խօսքերը յիշելէ առաջ. Մառմոնքեղ կ'ըսէ. Տիտարները մարդկային սեռին փչուտներն են:

3. Համառօտագրութեան (¹) առին. Կ. Պոլիս, Ազգ. Հիւանդանոց, Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

140. ՎԵՐՋԱԿԷՏ. — Վերջակէտ կը դրուի ամբողջ եւ լրացած խօսքէ մը վերջը. Գետերը գնպուն ճանբաներ են:

141. ԿԱԽՄԱՆ ԿԷՏ. — Կախման կէտ կը դրուի.

1. Դիտմամբ կէս ձգուած կամ ընդմիջուած խօսքէ մը վերջը. Մի՛ մոռնար թէ հոս բարեկամդ եղած եմ եւ թէ . . . :

(¹) Համառօտագրութեան նշաններն էին երբեմն՝ երկարակ (″), ինչպէս. Ցոմի՝ Գրիգորեան. Լ պատիւ (¯), ինչպէս. Ա՛ծ, Ցա, Լայն: Այս նշանները հիմայ գրեթէ բնաւ չեն գործածուիր.

2. Գրուածքէ մը բերուած վկայութեան մը մէջ՝ զեղչուած բառերու տեղ. Պիւքօն կարապը նկարագրելով, կ'ըսէ. «Կարապը հաճոյ է ամէն աչքի. . . . կը սիրուի, կը գովուի, հիացում կ'ազդէ . . . . բոլորածիր ձեւեր, շնորհալի պարոյր, պերճ եւ մաքուր սպիտակութիւն, . . . կարապին վրայ ամէն բան կը շնչէ հեշտութիւն եւ հնայք:»

3. Խօսքի մը մէջ անակնկալ մը պատճառելու համար. Հռոմայեցի ժողովուրդը կրկէսին մէջ ժողոված կը սպասէր որ գայլ մը կամ առիւծ մը դուրս եկէ. բայց երեւակայեցէք ամէնուն զարմանքը երբ տեսան . . . գառնուկ մը:

4. Խօսքի մը վերջը սարակոյս, վարանում, եւն. յայտնելու համար. Չեմ գիտեր թէ պիտի յաջողի՞ իր բնութեանց մէջ . . . :

142 ՓԱԿԱԳԻԾ. — Փակագիծը նախադասութեան մը կամ բառի մը երկու կողմը կը գրուի, երբ այդ նախադասութիւնը կամ բառը պարբերութեան մէջ անջատ իմաստ մը ունի. Անիրաւ խօսքի մը առջեւ ղեղը վատութիւն է (եթէ սակայն հաւէր չէ մարդ): Կրկին փակագիծ ([ ]) կը գործածուի երբ արդէն փակագծի մէջ գտնուող նախադասութեան մը մէջ ուրիշ փակագծի պէտք ըլլայ. Հեռնան Կուշմիթ (1887 փետրուար 15ին [Ն. Տ. 2 մարտ] մեռած) գերման գիտուն մըն է որ զբաղած է հայ հնախօսութեամբ:

143. ՉԱԿԵՐՏ. — Չակերտը կը գրուի.

1. Առաջ բերուած խօսքի մը սկիզբը եւ վերջը. Տըլիլ կ'ըսէ. «Ամէն տարիք իր հաճոյքը, իր հրապոյրը ունի:»

5. Երբեմն կը գրուի նաեւ առաջ բերուած խօսքին իւրաքանչիւր տողին սկիզբը. Ժան Էֆտա Փրանսացի քերթողը գրած է հետեւեալ տողերը.

«Եթէ չըղար տերեւն աղուոր թուրի ծառին,
«Շերամն ինչպէս պիտի գործեր մեսաֆս ոսկին
«Բրժոնիերուն: — Թէ չունենար հրմուանք ու սեր,
«Քերթողն իրեն երգերն ինչպէս պիտի հիւսեր:»

144. ԱՆՁԱՏՄԱՆ ԳԻԾ. — Անջատման գիծը կը գործածուի գլխաւորաբար հետեւեալ պարագաներուն.

1. Խօսակցութեան մէջ ըսաւ, պատասխանեց, յարեց բառերուն տեղ, ինչպէս.

— Ան որ խօսիլ չի գիտեր՝ ինչ պէտք է ընէ:

— Պետք է լռէ:

2. Միջանկեալ նախադասութենէ մը առաջ եւ ետքը, երկու սորմներու հետ. Քրիստափոր Գոլումպոս աղքատ մեռաւ, — ինքը որ Ամերիկան գտեր էր, — շղթայած անոնցմէ զորս ինքի հարստացուց:

3. Կարգ մը նախադասութիւններէ առաջ, երբ անոնք գրուած են իբր խօսքի յաւելուած մը. Լաւուագիտ հաստատեց թէ արտանանը ածուխ է, — գաղափար մը զոր Նիւթրնն յայտնած էր արդէն:

145. ՄԱԿԱԿԷՏ. — Մակակէտը կը գործածուէր ժամանակաւ ի նախդիրէն առաջ, ինչպէս. զան 'ի վեր, որովհետեւ ի նախդիրը իրեն հետեւող բառին կից կը գրուէր: Հիմայ մակակէտը գրեթէ բոլորովին գործածութենէ դադրած է:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՄՈՄԸ

Տիրամօր անոյշ ու շընորհալի,
Ներող նայուածքով պատկերին առջեւ,
Նիհար, սնարիւն մոմը կը հալի
Իր լոյսէ հոգին ըսպառի մինչեւ։

Այս վրտիտ մոմի վառող լեզուակէն
Գոհ է Յիսուսի մայրիկն երկնային,
Ու տեսէ՛ք սեփ սև լաչակին տակէն՝
Իր մեղր աչուկներն աղուոր կը նային։

Մոմը կը հալի, ու կը սպառի ալ.
Հոն է իր հաճոյքն ու իր արժանիք.
Պաշտամունքի մէջ լուռ ոչընչանալ,
Հատնումով արդիւն, անով երջանիկ։

ԱՐՏԱՇԷՍ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (1)

31. Արձակի վերածել այս ոտանաւորը։

32. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

33. Տողադարձի օրէնքներուն համեմատ բաժնել հետեւեալ բառերուն վանկերը.

Հրուանդան, ծաղկանկար, զարգմանակ, ստուգիւն, հիւծախտ, անհրաժեշտ, ափափայ, Քանձրամիտ, մեղրածոր, աներկիւղ, մինշաղ, անսուաղ, զուգընթաց, բաւական, զգայնիկ, շպարել, սկսնակ, ցնծութիւն, շափիղայ, պատսպարել, զանգուած, ձեւաւոր, ձուաձև, ասուեղէն, քաղցրանշոյլ, բազմաստեղ, լուսատարր, բարեկրօն, սրտագրաւ, Քղքաղրամ։

34. Բացատրել բերանացի այս բառերուն նշանակութիւնը։

ՎԵՐՋԱԼՈՑՍԸ ԲԻԲԱՐՏԻՈՅ ՄԷՋ

Սէն վալէրիի նաւամատոյցը սքանչելի էր վերջալոյսի ատեն հեռուէն կը նշմարուէին քրօղրուայի աւազակոյտերը եւ սպիտակաթոյր ամպի պէս փրթած ու քայքայուած հին աշտարակները

Առաջին կարգին վրայ աջ կողմս կայմերու եւ պարաններու սեւ անել ցանցը կը տեսնէի լուսինը որ երէկ արեւէն ժամ մը առաջ մարը կը մտնէր հիմայ կամաց կամաց կիջնէր դէպ ի ծով երկինքը ճերմակ էր երկիրը թուխ եւ լուսինէն բեկորներ կոհակ կոհակ կոստոստէին ինչպէս ոսկի գնտակներ ձեռնածուի մը ձեռքին մէջ

Քառորդ մը առաջ ճամբայ ելայ դէպ ի ապվիլ միշտ սիրած եմ վերջալոյսի ատեն ճամբորդելը այդ պահուն բնութիւնը կը ձեւազեղծի ու ցնորական երեւոյթ մը կը ստանայ առուները լուսավառ աչքեր ունին կարծես կրնձնիները չարաչուք կիսադէմքեր ունին կամ քան քան խնդալէն կը մարին կիյնան դաշտը մութ խոշոր գիծ մը կը դառնայ ուր լուսինը կը խորասուզի մէկ ծայրէն ու տակաւ կանհետի օրանները խուրձերը կանգուն արտերուն մէջ ճամբուն եզերքը հոն խմբուած ուրուականներու աղեցութիւնը կընեն վրաց որոնք ցած ձայնով կը խօսակցին մերթ ընդ մերթ ոչխարներու երամակի մը կը հանդիպիս որոնց հովիւը փոսի մը անկիւնը չիփ չիտակ կայնած տարօրինակ կերպով մը կը նայի քեզի կառքը ցած ձայնով կը տրտնջայ ճամբուն խոնջէնքէն պտուտակները անիւը ձիալուծերը ամէնքը մէյ մէկ տակր հեծկլտուք կարձակեն սուր կամ ծանր երբեմն կը լսուի հեռուէն կանոնաւորապէս չարժող ճութ մը բոժոժներու ճնկլտուքը որ հետզհետէ կաւելնայ յետոյ կը պակսի ու կը մարի ուրիշ կառք մն է որ հեռաւոր ճամբէ մը կանցնի ուր կերթայ ուրկէ կու գայ ամէն բան գիշերուան մէջ կը թաղուի համաստեղութեանց լոյսովը որոնք հարիւրաւոր չքեղ պատկերներ կը գծագրեն երկինքին երեսը կը տեսնես շուրջդ դէմքեր որ կը քնանան եւ կառքը երազներով լեփ լեցուն կերթայ քեզի։

ՎԻԿԹՈՐ ՀԻՒԳՕ (1)

35. Ջրուցագրել այս հատուածը, ու կետադրութեան, առոգանութեան, ուղղագրութեան նշաններ և գլխագիրներ դնել հարկ եղած տեղերը։

---

(1) Արտաշէս Ցարութիւնեան, Մալկարացի երիտասարդ բանաստեղծ, հրատարակած է քերթուածներ և արձակ հատուածներ հայ պարբերականներու մէջ։

(1) Վիքթոր Հիւգօ, ԺԹ դարու Ֆրանսացի ամէնէն նշանաւոր բանաստեղծը, ծնած է 1802ին Պրզանսոնի մէջ և մեռած 1885ին Բարիզ։ Թաղուած է Բարիզի Բանթէոնին մէջ։ Շատ մը քերթուածներ, վէպեր, թատերախաղեր գրած է։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

146. Բառերը կ'ըլլան արմատ, բարդ եւ ածանցեալ :

147. ԱՐՄԱՏ ԲԱՌԵՐ. — Արմատ կամ պարզ կ'ըսուին բառերը իրենց նախնական ձեւին մէջ, առանց ուրիշներու մասնիկ մը կամ բառ մը իրենց յաւելուած : Արմատ բառեր են կեանք, մահ, ղոյս :

148. Կան արմատներ, որոնք թէ՛ գրաբարի եւ թէ՛ աշխարհաբարի մէջ միեւնոյն չեն գործածուիր, այլ ածանցմանց եւ բարդութեանց մէջ երեւան կու գան. տանջ (տ-ոնջանք, մտատ-ոնջ, տ-ոնջել). զբաղ (զբ-աղանք, զբաղում, զբ-աղիլ). պարիշտ (արկ-բէշտ, արկ-բշտանալ, արկ-բշտութիւն). մեղ (մեղք, չմեղանք, մեղքնալ, մեղաւոր, անմեղ, մեղասակից) :

149. Կան արմատներ, որոնք իրր անջատ բառ չեն գործածուիր գրաբարի մէջ, այլ աշխարհաբարի մէջ կը գործածուին. շարժ (շրժիլ, շրժուն, շրժում, դիրաշրժ), սաստակ (սոսկում, սոսկել), ծեծ (քրաձեծ, ծեծել, ծեծկտուք) :

150. Կան արմատներ ալ որոնք իրր անջատ բառ չեն գործածուիր աշխարհաբարի մէջ, այլ գրաբարի մէջ կը գործածուին. ընդ (ընդասուն, ընդելուզել, ընդհատել), ձեռն (յեռնտու, յեռնասուն, յեռնարկ, յեռնածու), ոտն (ոտնոյալ, ոտնակոխ, ոտնաւոր) :

151. ԲԱՑԱՐՄԱՏ. — Բայարմատ կը կոչուին բայերուն արմատները. սիրելին բայարմատն է սեր, զբաղիլին՝ զբաղ, շարժիլին՝ շարժ :

152. ԲԱՑԱՆՈՒՆ. — Բայարմատը պէտք չէ շփոթել բայանունին հետ, որ բայէ չինուած գոյական մըն է. Մտնել—մուտք, խաղել—խաղուածք, փախչիլ—փախուստ, ինանել—ինանութիւն, մտմտալ—մտմտուք, աղաչել—աղաչանք, ուսնիլ—ուսում, ընթանալ—ընթացք, ուսել—ուսեալք :

153. Սակայն շատ անգամ բայարմատը բայանուն է միանգամայն. գիտ, դող, վախ, ծիծաղ, ծեծ, զարկ, կեր-խում, երթ-եկ, առ-տուր :

154. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ. — Բարդ կ'ըսուին այն բառերը, որոնք երկու կամ աւելի բառերէ կազմուած են. վրէժխնդիր, թերահաւատ, միաբանութիւն :

155. ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ. — Ածանցեալ կ'ըսուին այն բառերը, որոնց սկիզբը կամ վերջը մասնիկ մը աւելցած է. անարդ, գգեստ, բար-ութիւն, ցնծութիւն, ղուսաբեր :

156. ԱԾԱՆՑԵԱԼ-ԲԱՐԴ ԲԱՌԵՐ.—Ածանցեալ-բարդ կ'ըսուին այն բառերը, որոնց մէջ թէ՛ ածանցում եւ թէ՛ բարդութիւն կայ. վրէժխնդրական, թերահաւատութիւն, աւանդատգեստ :

ԿՈՐՈՒՍՄԱՆ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՆՈՆ

157. ԿՈՐՈՒՍՄԱՆ ԿԱՆՈՆ. — Երբ արմատ բառի մը վերջին վանկին մէջ է կամ ա-գտնուի բաղաձայնէ մը առաջ, բարդութեան կամ ածանցման ատեն՝ է եւ ա-գիրերը ընդհանրապէս կը կորսուին. գէտ—գտել, բժէշկ—բժշկել, ժէր—ժրագոյն, սէրտ—սրտոն, մէս—մասկեր, կրկէն—կրկնութիւն, տիս-ր—տիրութիւն, սա-ր—սրամիտ, հա-ր—հրեղեն, մա-ր—մրոտել, սա-գ—սգալ : Բացառիկ են հետեւեալները.

1. Հէմ(ն) եւ ուս-մ(ն) բառերէն ածանցուածները կամ բարդուածները. հիմնական, ուս-մնասէր, եւայլն :

2. Հինգ բառէն ածանցուած կամ բարդուած բառերուն մեծ մասը. հինգերորդ, հինգամեայ, հինգպատիկ, եւլն։

3. Ի եւ -- ձայնաւորով սկսած միավանկներէն ոմանք անփոփոխ կը պահեն է եւ -- գիրերը. էր—էրական, էժ—էժարարոյ, էղ—էղիկ, էնք(ն)—էնքնահաւան, էսկ—էսկատիպ: Ո-ղջ—-ղջասպան, --շ—-շիմ, --ղ—--ղեանի, --խս—--խսաւոր, --ռ—--ռեանի, --ս—--սնոց: Կան այս կարգի բառեր ալ, որոնց է կամ -- գիրերը ի կը փոխուին. էնչք—ընչաւոր, էղձ—ըղձակաք, էնձ—ընձուղջ: Ո-ինչք—ընչացք, --նդ—ընդեղեն:

4. Կան քանի մը ուրիշ բարդեր, որոնց մէջ է եւ -- անջինջ մնացած են բացառաբար. ժէրայր, շ--ջանակի, բուր--մնաւոր, գ--նդագունդ, յուզ--մնաղից, եւ արդի լեզուին մէջ անգործածելի ուրիշ քանի մը բառեր։

158. Երբ բառի մը վերջին վանկը -, է եւ ո կը պարունակէ, անփոփոխ կը մնայ գրաբարի մէջ. բ-ան—բ-անաւոր, մ-ոդ—մ-ոդաստաց, գեր—գերազանց, գեղ—գեղեցիկ, ժողով—ժողովական, սով-որ—սով-որոյթ: Սակայն աշխարհաբարի յատուկ բարդութեանց եւ ածանցմանց մէջ, ընդհանրապէս -, է եւ ո գիրերն ալ կը կորսուին. պաս-ո—պասոնել, յաս-ակ—ասկել, պակ-ա—պակսիլ, շաղ-ակ—շաղկել, փաթ-թ—փաթթել, պար-պ—պարպել, փէր-թ—փրթիլ, աւեր—աւրել, աւեղ—աղել, կոս-ր—կոսրել, սով-ր—սորվիլ, ժող-ով—ժողվել:

159. ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՆՈՆ. — Երբ արմատ բառի մը վերջին վանկին մէջ՝ է, է-, -ց գանուին բաղաձայնէ մը առաջ, բարդութեան կամ ածանցման ատեն հետեւեալ փոփոխութիւնները կը կրեն ընդհանրապէս. 1. Է կը փոխուի էի. գեր—գերուկ, դեմ—դէմացկուն։ 2. Ե- կը փոխուի Է է. մենակե-ց—մենակեցութիւն, անկե-ղ—անկեղանոց: 3. Ոյ կը փոխուի -ի. բ-ոյս—բ-ասաբան, կ-ոյս—կ-ասասան:

160. Երբ բառի մը վերջը է- կամ է-ց գանուի, բարդութեան կամ ածանցման ատեն՝ հետեւեալ փոփոխութիւնները կը կրէ. 1. Ի- կը փոխուի -ի. արծի—-արծ--ենի, կռի—-կռ--ատար, հազի—-հազ--ագիտ: 2. Ե-ց կը փոխուի է է. քրիստոնե-ց—քրիստոնէական, պաշտօնե-ց—պաշտօնէութիւն:

161. Բարդութեան եւ ածանցման ժամանակ + տառը դուրս կը ձգուի յօդակապէն առաջ եւ բառին վերջը, երբ արմատական չէ. մեղ+—մեղաւոր—անմեղ, փառ+—փառաւոր—անափառ: Իսկ անջինջ կը մնայ երբ արմատական է. քաղա+—քաղա+ացի—մայրաքաղա+, թո+—թո+ախս—ցիաթո+:

162. Բացառիկ են՝ աշխարհաբարի յատուկ հան+—հան+ային, խեղ+—անխեղ+, շնորհ+—անշնորհ+, աչ+—ծակաչ+ բառերը, որոնց մէջ թէեւ + գիրը արմատական չէ, սակայն անջինջ կը մնայ։

163. ՑՕԴԱԿԱՊ. — Ցօդակապ կ'ըսուի -- ձայնաւորը, որ ածանցման եւ բարդութեան մէջ՝ բառ մը կը կապէ ուրիշ բառի կամ մասնիկի մը, երբ այդ բառը կամ մասնիկը բաղաձայնով սկսած է. ղուս-որ, աստուած-վախ:

164. Իսկ երբ այդ բառը կամ մասնիկը ձայնաւորով սկսի, յօդակապ չի դրուիր. թոչնորս, թոչուն:

165. Կան կարգ մը բարդ եւ ածանցեալ բառեր, որոնց վերջին բառը բաղաձայնով կը սկսի թէեւ, սակայն որոնց մէջ -- յօդակապը չի գործածուիր բացառաբար. ջրհոր, հրթիռ, ասեղնոց, եւայլն։

166. Քանի մը բառերու մէջ սովորութիւն եղած է -ի տեղ է յօդակապ գործածել. ծաղկէփունջ, հաշուէտուն, հարսնէւոր:

167. Բարդութեան եւ ածանցման մէջ, երբ առաջին բառը է գրով կ'աւարտի, եւ երկրորդ բառը բա-

ղաձայնով կը սկսի, է՝ն է՝ի կը փոխուի, եւ ա յօդակապը չի դրուիր. շոգէ—շոգենաւ, փոխանակ շոգէ-նաւի, տարէ—տարեկից, փոխանակ տարէ-կիցի, կղզէ—կղզեցի, փոխանակ կղզէ-ցիի։

168. Երբ առաջին բառը միավանկ է՝ եւ է՝ կը վերջանայ, է՝ գիրը եւ ա յօդակապը կը մնան միշտ. ձէ—ձէ-ւոր, մէ—մէ-ւոր, թէ—թէ-պարս։

169. Քանի մը պարագաներու մէջ է՝ն բոլորովին կը կորսուի, ինչպէս. եկեղեցէ—եկեղեց-սեր։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Խոնարհը իր գիտութեան, խոհեմութեան, յաջողութեան եւ ուրիշ յատկութեանց վրայ չի պարծիր, ու երբ ուրիշները կը գովեն զինքը, բնաւ չի բարձրամիտիր, այլ իր պակասութիւնները միտքը բերելով՝ ինքզինքը անարժան կը համարի այն գովեստին. իսկ հպարտը իր մտքին մէջ ինքզինքը գովութեան արժանի կը նկատէ, եւ ուրիշները անարդ եւ նուաստ կը համարի։ Խոնարհը երբ դժուար գործի մը ձեռք զարնելու ըլլայ, իմաստուն եւ փորձառու մարդոց խորհուրդ կը հարցնէ, եւ ուրիշէ խրատ առնել ամօթ չի նկատեր. իսկ հպարտը այնպէս կը կարծէ թէ իրմէ խելացի մարդ չի գտնուիր աշխարհիս վրայ, ուստի մէկու մը հետ խորհրդակցութիւն չ՝ըներ։ Խոնարհը ինքզինքը պակասաւոր կը ճանչնայ, եւ իր բարքն ու վարմունքը օր ըստ օրէ կը չափէ, իսկ հպարտը իր պակասութիւնները բնաւ չի տեսներ։ Իր մոլորութիւնները սովորութիւն կը դառնան, եւ ինք միշտ խակ ու անուղղայ կը մնայ։ Խոնարհը եթէ պատուոյ արժանի բան մը ընէ, չի նայիր որ հասարակութիւնը զինքը պատուէ։ Իսկ հպարտը թէեւ հանրութեան օգուտ մը չընէ, միշտ իր անձին համար պատիւ ու մեծարանք կը

խնդրէ, վասն զի այնպէս կը կարծէ թէ ամէն մարդ պարտական է՝ զինքը պատուելու։

Բայց որչափ հպարտը պատուուիլ կ՝ուզէ, պատիւն ալ այնքան հեռու կը փախչի իրմէ։ Իսկ խոնարհը որչափ պատիւ չի փնտռեր, այնչափ աւելի պատիւ կը գտնէ։

ԳՐԻԳՈՐ ՓԷՇԻՄԱԼՃԵԱՆ (¹)

36. Զրուցագրել այս հատուածը։

37. Բացատրել այս հատուածին մէջ գտնուած հետեւեալ բառդ կամ ածանցեալ բառերը, և մէյ մէկ խօսք շինել անոնցմով.

Խոհեմութիւն, փորձառու, յատկութիւն, անարդ, բարձրամտիլ, մոլորութիւն, խակ, հանրութիւն, անուղղայ, պակասաւոր։

38. Որոշել հետեւեալ բառդ կամ ածանցեալ բառերը, և գտնել՝ անոնց մէջ կորսուած կամ փոխուած ձայնաւորները.

Սրատես, վրիժառու, թիկնաթոռ, մանեկաձև, թզենի, տղմուտ, ջրվէժ, խնկաման, գրաւոր, ուղղամիտ, ոսկեգէս, քրմապետ, ձկնկիթ, ծածկամիտ, սգաւոր, հրարուխ, սրտայոյզ, մարդկային, հոգեւոր, ժրագլուխ, սնապարծ, հրեղէն, գերութիւն, կանխադատ, դիտակ, կրային, հազուագիւտ, լուսափայլ, հաշուակալ, դռնակ, ատենապետ, նռնենի, գունագեղ, մատենագիր, միգամած, վզնոց, քրքմագոյն։

39. Լուծել այս հատուածին առաջին հինգ նախադասութիւնները։

ՏԵՐԵՒՆԵՐՈՒՆ ՊԱՐԸ

Կ՝անցնին աշնան ցուրտ հովեր,
Ու կը տանին բընաւավար
Թռչունները դէպ 'այեր,
Տերեւներն ալ դէպ 'անտառ։

(¹) Գրիգոր Փէշտիմալճեան՝ նշանաւոր հայագէտ ուսուցիչ՝ ծնած է 1773ին և մեռած 1837ին Կ. Պոլսոյ մէջ։ Իր հեղինակութեանց կարեւորագոյնն է Հայկազեան լեզուի բառգիրքը։ Գրած է նաև քերթուածներ ու գասագիրքեր։

Դաղջ օրե՛ր, սի՛ւգ հեշտաբեր
Անհետացան ընդ երկար.
Պարեցէք, հէ՛ք տերեւներ,
Վալսեցէք դուք իբր յիմար։

Ճամբաներու քոմն ի վեր,
Հիւսիսէն կամ հարաւէն,
Տե՛ս, կը վալսեն տերեւներ,
Մահուան պարը կը պարեն։

Հրաւիրածին չափ տերև,
Հովը երբեք չի գտներ։
Դարձէք, դարձէք հև ի հև,
Վալսեցէք, հէ՛ք տերեւներ։

Ամէն տերև վար կ'իյնայ
Կընձնի, Քըմբի կամ կաղնի,
Եւ ամէն մարդ, ծեր, տըղայ,
Մահուան ծոցը կը Քաղուի։

Եւ երազներն աշխարհին
Երբեք երկար չեն տեւեր։
Հետեւեցէք ձեր պարին,
Վալսեցէք, հէ՛ք տերեւներ։

ԲՕԼ ԺԻՒՅԵԲՌԱ (¹)

40. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

(¹) Բօլ Ժիւյեբռա՝ Ֆրանսացի ժամանակակից բանաստեղծ։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ (Շար.)

ԲԱՐԴՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

170. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ. — Սովորաբար բարդութիւնը երկու բառով կ'ըլլայ, ինչպէս. նաւ-պետ, գր-տուն, ա-ռագ-տիպ, բայց կան բարդութիւններ ալ երեք բառով. ջր-գր-պետ, հեռ-գր-տուն, ղուս-վիմ-տիպ: Երեք բառերէ կազմուած բարդութեանց շատերը խորթ են. իսկ երեք բառէ աւելի բառերով բարդութիւնները բոլորովին հակառակ են ճաշակի, ինչպէս. ղուս-վիմ-տպ-գրեղ:

171. Բարդութեամբ կը կազմուին գոյականներ, ածականներ, մակբայներ եւ բայեր։

172. Հայերէնի մէջ բարդ բառերը առատ են, որովհետեւ հայ բառերը իրարու կցուելով կրնան միշտ նոր բարդութիւններ կազմել։ Համբակները պէտք է սակայն զգուշանան նոր բարդութիւններէ, որոնց մէջ յաջողելու համար լեզուի խորունկ հմտութիւն եւ կիրթ ճաշակ կը պահանջուի։

173. Բարդութիւնը հետեւեալ ձեւերով կ'ըլլայ.

Ա. Երկու բառ առանց յօդակապի միացած, ինչպէս. մահազդ, խնկատան, քնծիծաղ, ջրհատ:

Բ. Երկու բառ — յօդակապով միացած. ժամ-ացոյց, ղուս-փայլ, ճանճ-հատ: Այս է բարդութեան սովորական ձեւը։

Գ. Երկու բառ — կամ Ե չաղկապով միացած. ցան-տեր, վար-ցան, եղ-մտական: Այս ձեւով բարդուած բառերը շատ քիչ են։

Դ. Կան քանի մը բառեր գրաբարի ձեւով բարդուած Ը. է եւ ԸՆԴ նախդիրներով. գոյնգոյն, հետՀետ, զառէվայր, զառէվեր, գիրկընդխառն, ուսընդաւուրթ, եւայլն։

174. Կորուսման եւ փոփոխման կանոնը ընդհանրապէս կը յարգուի, երբ բարդուածի մը առաջին բառէն ետքը ձայնաւոր գիր գայ, իսկ չի յարգուիր՝ աշխարհաբարի յատուկ բարդութեանց մէջ՝ երբ բաղաձայն գայ.

Ձայնաւոր	երեց—երեցատուն
Բաղաձայն	երեց—երեցկին
Ձայնաւոր	ա--ս—ասախօս
Բաղաձայն	ա--ս—ա--ցզրուց
Ձայնաւոր	սէրս—սրտառուչ
Բաղաձայն	սէրս—սէրտնատնում։

Բացառիկ են կէսկատար, գէտնաղ, գէրնաղ, սրտնաշուք, կրծկաղ, եւայլն։

175. Երբ երկու բառ -- կամ Ա- շաղկապով կը բարդուին, կորուսման եւ փոփոխման կանոնները չեն յարգուիր. ցէր--ցան, տ--րէ-ատ, թ--ֆ--մուր։

176. Տեսնել, դնել, տալ, եւ ասոնց պէս ուրիշ քանի մը բայեր կան որոնցմով բարդութիւն կազմուած ատեն, այդ բայերուն արմատները կը գործածուին, ինչպէս. հեռատ-ես, մեղադրել, վարձադրել։

177. Բարդ բառերը կը կազմուին գլխաւորաբար.

Ա. Գոյական գոյականի հետ. Օձ-ձեւ (օձի ձեւ ունեցող), սրտ-դող (սրտի դող), այծ-մարդ (այծ եւ մարդ)։

Բ. Գոյական՝ ետքը բայարմատ. Ձկնորս (ձուկ որսացող), դեղբաի (թոյնը կարող), բանբող (աշխատանքէ դադարում), դիւահար (դեւէ բռնուած)։

Գ. Ածական՝ ետքը գոյական. Ձարսիրտ (չար սիրտ ունեցող), մանր-ղուր (մանր լուր), նոր-վէպ (նոր վէպ)։

Դ. Մակբայ՝ ետքը բայարմատ. Մշտ-հոս (միշտ հոսող), յար-տեւ (միշտ տեւող), դեռ-բողբոջ (նոր բացուող)։

Ե. Բայարմատ բայարմատի հետ. Ասուլիս (ըսել եւ լսել), եղեւէջ (ելլել եւ իջնել)։

178. ԿՐԿՆԱՒՈՐ ԲԱՌԵՐ. — Կրկնաւոր կը կոչուին այն բարդ բառերը, որոնց մէջ միեւնոյն բառը կրկնուած է. մարմրիկ, սարսուռ, կասկարմիր, ծուռումուռ։

179. Կրկնաւոր բառերը երեք տեսակ են.

Ա. Արմատ բառ մը կրկնուած իր ձեւով կամ ձայնաւորին կորուսմամբ. դողդղալ, չափչփել, ջարջարել, այպայլել, թափթփել, ծակծկել, վազվզել, մտմտալ, ծփծրփալ, պլպլալ, փսփսալ, խշխշալ, եւայլն։ Նոյնպէս սարսռալ, գրգռել, բարբառ, կարկառ, եւայլն, որովհետեւ հայ լեզուի արմատ բառերուն մէջ՝ ռ գրէն ետքը սովորաբար և բաղաձայնէն ուրիշ բաղաձայն չի գար, եւ երբ ուրիշ բաղաձայն գայ, ռ գիրը ր-ի կը փոխուի։ Բացառիկ են քանի մը ժողովրդական բառեր. վառվրռուն, տռտռալ, խռխռալ, կռկռալ, եւայլն։

Այս ձեւով կազմուած կրկնաւորներուն մէջ երբեմն -- յօդակապ կամ Ա- շաղկապ ալ կը դրուի, ինչպէս. ջար--ջար, զան--զան, այլ-այլ, եւայլն։

Բ. Բառին մէկ վանկը պզտիկ փոփոխութեամբ մը բառին սկիզբը կը դրուի եւ տեսակ մը գերադրական ածական կը կազմուի, ինչպէս. կասկարմիր, սեփսեւ, ճերմեռնակ, միսմինակ, դեղդեղին, ջոփջոր, շիփշիտակ, եւայլն։

Գ. Նոյն բառը երկրորդ անգամ կը կրկնուի նոր ձեւով, ինչպէս. ծուռ--մուռ, խաժ--մուժ, բարձր--բերձ, խորս--բորս, ծակ--ծուկ։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՄԱՑՐԵՆԻ ՍԷՐ

Մօր սէրը չի մեռնիր, կենդանի կը մնայ ան՝ զաւակին մահէն ալ, անոր ապերախտ մոռացութենէն ալ եւ քը։ Այրերուն համար հայրութիւնը կարծես դէպք մըն է. կնոջ համար մայրութիւնը կեանքն իսկ է։ Դիտէ՛ զայն, երբ իր զաւակին առաջին քայլափոխը տեսնէ, երբ լսէ անոր բերնին առաջին մրմունջը, երբ ընդունի անոր վերջին հառաչանքը։ Եթէ կ'ուզես գիտնալ թէ ի՛նչպէս կը խօսին հրեշտակները, թէ ի՛նչ անուշութիւն կայ անոնց նայուածքին մէջ, թէ ի՛նչ է անոնց անպատում զմայլանքը, լսէ՛ մօր հնարած լեզուն, տե՛ս անոր աչքին ցոլմունքը։ Երբ որդին մեռնի, հայրը կու լայ ծանրաթախիծ. այլ ժամանակը անոր այս ցաւը միւս ցաւերէն աւելի չի յարգեր։ Բայց տարիներով եւ քը, նայէ՛ մօր սիրտը՝ դեռ նոյն վէրքը արիւնահոս է։ Արարչագործութեան մէջ այն սիրոյն նմանող բան չկայ. մէկ վայրկեանի մէջ կը ծնի սուրբ, անհուն, աննուաճ։ Անոր համար ոչ զարգանալ, ոչ նուազիլ կայ՝ վասնզի այսպիսի փոփոխութիւններ անկատարութեան նշաններ են։

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ (1)

41. Կարդալ այս հատուածը բարձրաձայն, յետոյ բերանացի բացատրել։

42. Տարբեր կերպով շարադրել այս հատուածը, մէջը գտնուած բարդ և ածանցեալ բառերուն տեղ ուրիշ բառեր գործածելով, առանց իմաստը այլայլելու։

Օրինակ. — *Մօր սէրը անմահ է. կենդանի կը մնայ ան նոյն իսկ երբ զաւակը մեռնի, կամ մոռնայ իր մայրը՝ ապերախտ գտնուելով անոր։*

43. Հետեւեալ բարդ բառերը իրենց պարզ ձեւին վերածել իրարմէ զատելով.

Տնաւեր, գինեմոլ, գործակից, քնաբեր, խաշնարած, շնորհալի, լայնածաւալ, քարակոփ, գեղադէմ, ազնուատոհմ, արծաթաձիկ, խաժակն,

(1) *Թովմաս Թերզեան, ծանօթ գրագէտ և ուսուցիչ, ունի արձակ և ոտանաւոր գրուածներ։*

Թուակիր, երախտագէտ, շղթայակապ, վարդամատ, յուսախաբ, շահագրգիռ, յարաճուն, գեղաձաղիկ։

44. Բարդ գոյականներ կազմ՝ բարդութեան օրէնքներուն համեմատ հետեւեալ անուններ. առաջ կամ վերջը մէյ մէկ ուրիշ գոյական, ածական կամ բայարմատ աւելցնելով.

Սեղան, լանջք, ծով, ձիւն, գիր, լոյս, ձայն, աթոռ, կառք, այգ, ձեռք, կոշիկ, նաւ, քար, գետ, փունջ, զօրք, ռազմ, վարս, ջուր, կաթ, գունդ, շեղջ, կամար, գրիչ, գլուխ, վարդ, մանուկ, ձուկ, թռչուն, սրահ, դրամ, քսակ, խորշ, տուն, մարդ, փայտ։

Օրինակ. — *Շքասեղան, կարմրալանջ, ծովակալ։*

45. Բարդ ածականներ կազմել հետեւեալ բառերէն, առաջ կամ վերջը բայարմատներ, գոյականներ կամ ածականներ աւելցնելով.

Իղձ, չքնաղ, սիրտ, սուգ, կեանք, արիւն, նուրբ, թեթև, վրէժ, ծիծաղ, միտք, կարմիր, սարսուռ, ցուրտ, քայլ, մեղք, զուարթ, տրտում, բարձր, խոր, թանձր, անդունդ, ոլորտ, ծաղիկ, ամպ, յոլով, թուխ, կարճ, սէգ, ալիք, փոթորիկ, անուրջ, հոգի, եկեղեցի, խեցի, թի, սուր, թոյլ, շող։

Օրինակ. — *Ըղձակաթ, չքնաղագեղ, քաջասիրտ։*

6. Գտնել հինգ կրկնաւոր գոյական, հինգ կրկնաւոր ածական, հինգ կրկնաւոր բայ։

Օրինակ. — *Խորխորատ, վէտվէտուն, ծփծփալ։*

ՓՈՔՐԻԿ ՄԱՑՐԸ

Դեռ տասներկու կամ տասներեք տարեկան
Ոսկեգանգուր, ծաղկահասակ աղջիկն այն,
Որ աւելի մանուկ մըն է քան թէ կին,
Թագուհւոյ մը կերպերն ունի բընածին։

Իր աչ կողմը՝ պայծառ աչքով, ճակտով լայն
Հայրն է, կ'ուտէ, և կ'երազէ լըռելեայն.
Գիտուն մըն է, ուսեալ մարդ մը որ արդէն
Ծերացած է իր տարիքէն ու վիշտէն։

Եւ ձախ կողմը իր եղբայրն է պըտըլիկ,
Խոր տըխրութեան երեւոյթով հէք մանկիկ,
Որ Թերեւըս պատճառ եղած է մինակ
Իր ծընունդով մօրը մահուան դըժընդակ։

Կիսադէմքով երկար, հիւանդ, հէք էակ,
Մարած աչքով, մորթով մոմի պէս ճերմակ,
Զոր տեսնողը կ'ըսէ սըրտով ըզգածուած.
«Ինչու արդեօք զայն ըստեղծեր է Աստուած։»

Եւ այս տըխեղծ բոյսին վըրայ դողդոջուն,
Որ ծըլած է ցուրտ ձըմեռուան արեւուն,
Խորունկ խանդով, գորովանքով Հիրալիր
Միշտ կը հըսկէ պըզտիկ աղջիկն ուշադիր։

Եղբօրն համար տաժած սիրով գերագոյն
Ինք հոն կ'ապրի միշտ անյողդողդ, աննըկուն.
Անոր համար, և անոր մէջ, անոր շուրջ
Կը մոռնայ միշտ իր անձն անգամ անտըրտունջ։

Ու մըտքիս մէջ բիւր իսորհուրդներ կը լենան
Ընտանեկան այս պատկերին յանդիման։
«Նախախնամող Տէ՛ր, կ'ըսեմ, մա՛յր գերազօր,
Քու օրէնքներդ սքանչելի են բոլոր։»

Այդ պաշտելի էակներէն բաժնըւած
Մայրը մեկներ՝ հեռուն գացեր է անդարձ,
Բայց կը Թողուս որ դեռ մընայ անոնց քով,
Իր աղջըկան հոգւոյն մէջ միշտ ապրելով։

ԺԱՆ ՆՕՌՄԱՆ (1)

47. Գոց սորվիլ այս ոտանաւորը, և բարձրաձայն արտասանել։

48. Արձակի վերածել այս ոտանաւորը։

49. Զրուցագրել այս ոտանաւորը, և կետադրութեան նշաններ դնել։

(1) Ֆրանսացի ժամանակակից բանաստեղծ։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ (Շար.)

ԱԾԱՆՑՈՒՄ

ԿԱՆՈՆՆԵՐ

180. Ածանցում կ'ըլլայ բառի մը սկիզբը կամ վերջը մասնիկ մը աւելցնելով, ինչպէս. անկիրթ, կրթ-ութիւն։

181. Ածանցումով կը կազմուին գոյականներ, ածականներ, բայեր եւ մակբայներ. ուրախ-ութիւն, ցեզ-ուանէ, կոտրել, ազնուօրէն։

182. Կորուսման եւ փոփոխման կանոնը կը գործադրուի ածանցման մէջ. բայց փոփոխման կանոնը, մանաւանդ աշխարհաբարի յատուկ ածանցմանց մէջ, չի գործադրուիր։ Այսպէս կ'ըսուի աղէկութիւն եւ ոչ աղէկութիւն, մէկալց եւ ոչ մէկալց։

183. Երբ մասնիկը բառին սկիզբը կը դրուի, կը կոչուի նախադաս մասնիկ, երբ բառին վերջը կը դըրուի, կ'ըսուի յետադաս մասնիկ։ Կան նաեւ բայերու յատուկ մասնիկներ, որոնք բայերուն մէջտեղը կը դրուին։

ՆԱԽԱԴԱՍ ՄԱՍՆԻԿՆԵՐ

184. Նախադաս մասնիկներէն ան, ապ, ը, դ, դժ, դժ բացասականները բառի մը վրայ աւելնալով, անոր հակառակը նշանակող ածականներ՝ եւ երբեմն ալ գոյականներ, մակբայներ ու բայեր կը կազմեն.

ան. — անսիրտ, անհաւատութիւն, աներկրայ, անտեսել։
ապ. — ապուշ, ապօրինաւոր, ապերասան, ապաշնորհ։
ը. — ըսեւ, ըպիտոյ, ըսատուած։

ա՞ . — ա՞կար , ա՞գեռ , ա՞մոյն , ա՞մարդի :

ա՞ժ կամ ա՞ժ . — ա՞ժբախտ , ա՞ժգոհութիւն , ա՞ժգոյն , ա՞ժգոհ :

185. Կարգ մը ուրիշ նախադաս մասնիկներ ալ կը ծառայեն ածականներ , ածականներ եւ բայեր կազմելու .

ա՞բա՞ (դուրս) . — ա՞բաբերել , ա՞բայայութիւն , ա՞բարել :

բ՞աղ (կից) . — բ՞աղդատել , բ՞աղխոնարհ , բ՞աղկանաչ :
բ՞ց (դուրս) .— բ՞ցատրել , բ՞ցառիկ , բ՞ցազանգութիւն :
գ՞եր (վեր) .— գ՞երբարձրել , գ՞երմարդիպային , գ՞երապատիւ :
դ՞եր (փոխանակ) . — դ՞երբայ , դ՞երանուն , դ՞երակոնս :
ե՞ն (տակը) . — ե՞նարկել , ե՞նամնայ , ե՞նարարան :
հ՞ակ (հակառակ) . — հ՞ակոտնեայ , հ՞ակազդել , հ՞ակակշիռ :
հ՞ամ կամ հ՞ամ (նոյն , կից) . — հ՞ամարիտ , հ՞ամաձայն , հ՞ամանիշ , հ՞ամանուն :
մ՞ակ (վրայ) . — մ՞ակբայ , մ՞ակաբոյժ , մ՞ակագրել :
յ՞ետ (կից) . — յ՞ետաբերութիւն , յ՞ետահիւսել , յ՞ետակից :
ն՞եր (ներս) . — ն՞երշնչում , ն՞երածել , ն՞երկուռ :
շ՞աղ կամ շ՞ուր (կից) . — շ՞աղկապ , շ՞ուրնակել , շ՞ուրամանել :

պ՞ուր (չուրջ) .— պ՞ուրազայ , պ՞ուրնակել , պ՞ուրածածուկ :
տ՞ակ (տակը) . — տ՞ակբագրել , տ՞ակերկրեայ , տ՞ակրոս :
վ՞եր (նորէն) . — վ՞երսկսիլ , վ՞երադարձ , վ՞երանուն :
փ՞ոխ (հեռու) .— փ՞ոխրինակ , փ՞ոխածամել , փ՞ոխանմերժել :

ՅԵՏԱԴԱՍ ՄԱՍՆԻԿՆԵՐ

186. Յետադաս մասնիկները կը ծառայեն գոյականներ , ածականներ , մակբայներ կազմելու :

187. ԳՈՅԱԿԱՆՆԵՐ . — Հետեւեալ յետադաս մասնիկներով կը կազմուին գրեթէ միշտ գործողութեան կամ վիճակի գաղափար տուող գոյականներ .

ա՞ծ . — կոտորա՞ծ , կասարա՞ծ :
ա՞ն+ . — զարմա՞ն+ , տանջա՞ն+ :
ե՞ա՞ . — գոլե՞ա՞ , պահե՞ա՞ :
է+ . — տիրհնէ+ , ուրորէ+ , ջրորհնէ+ :
ի՞ն+ . — նախատի՞ն+ , ֆծի՞ն+ , ֆրտի՞ն+ :
ի՞ն . — հնչի՞ն , սասափի՞ն , թնդի՞ն :
ի+ . — չարի+ , կեղծի+ , կարծի+ :
ոյ՞ն . — աղեւոյ՞ն , հացկերոյ՞ն :
ոց . — շշնկոց , խշրտոց :
ո՞ա՞ծ կամ ո՞ա՞ծ+ . — դիպո՞ա՞ծ , քաղո՞ա՞ծ+ , նայո՞ա՞ծ+ :
ո՞ւկ . — տաղտո՞ւկ , թաղո՞ւկ , դաղո՞ւկ :
ո՞ւ+ . — աչքկապո՞ւ+ , կարկտո՞ւ+ , արտնաշո՞ւ+ :
ո՞ւթիւն . — ֆնեւո՞ւթիւն , ծերո՞ւթիւն , հեգնո՞ւթիւն : Այս մասնիկը կազմուած է ոյ՞ն եւ ի՞ն մասնիկներէն . ձանձրանալ , ձանձրոյ՞ն , ձանձրո՞ւթիւն :
ո՞ւմ . — ուռո՞ւմ , հաղաշո՞ւմ , զեղծո՞ւմ :
ո՞ւղ . — ծնո՞ւղ , սնո՞ւղ :
ո՞ւպ . — գաղո՞ւպ , փախո՞ւպ , կորո՞ւպ :
ո՞ւրդ . — խառնո՞ւրդ , խորհո՞ւրդ , յաղո՞ւրդ :

188. Հետեւեալ մասնիկներով գործողութիւն մը կատարողի գաղափար տուող գոյականներ կը կազմուին.

ա՞ն . — իշխա՞ն , ծորա՞ն , խուժա՞ն :
ե՞այ . — պաշտօնե՞այ , ֆրխտնե՞այ :
էլ . — ոսկերի՞լ , սափրի՞լ , զծագրի՞լ :
ա՞կ կամ նա՞կ . — խօսնա՞կ , սկսնա՞կ , սուզա՞կ :
ո՞ւրդ . — ճամբո՞ւրդ , նաւո՞ւրդ , շուղո՞ւրդ :
ո՞ն . — զեռո՞ն , սողո՞ն , թռչո՞ն :
պա՞ն . — դռնապա՞ն , բարապա՞ն , այգեպա՞ն :

189. Հետեւեալ մասնիկները տեղի գաղափար տուող գոյականներ կը կազմեն .

ի՞ . — Արաբի՞ , Անգլի՞ , Զուիցերի՞ :

նոց. — հաւնոց, հիւանդանոց, յիւսարանոց։
ոց. — վարժոց, ծաղկոց, մատեանոց։
ապան. — Պարսկապան, վարդապան, բուրապան։
բան. — ննջարան, պահարան, աղօթարան։

190. Հետեւեալ մասնիկներով ծագումի գաղափար ստեղ գոյականներ կը կազմուին.

ցէ. — Պղնեցէ, Ծրանուացէ, ղեռնցէ։
էկ. — Հնդէկ, ռամէկ, ոսանէկ։
ական. — ազնուական, աւտական, գիւղական։

191. Հետեւեալ մասնիկներով ընդհանրապէս գործողութեան մը արդիւնքի գաղափար ստեղ գոյականներ կը կազմուին.

ում. — մանրում, տաշում, խակում։
ոյց. — սառոյց, հանգոյց, այցոյց։

192. Հետեւեալ մասնիկներով գործիքի գաղափար ստեղ գոյականներ կը կազմուին.

ոց. — աղոց, խշոց, խարտոց։
էջ. — գրէջ, ծեփէջ, մանէջ։
ակ. — դիտակ, շչակ, տապակ։
ան. — խոքան, հնձան, զլան։

193. Հետեւեալ մասնիկներով իգականի գաղափար ստեղ յատուկ եւ հասարակ գոյականներ կը կազմուին.

ուհի. — իշխանուհի, վարժուհի, դիցուհի։
անոյշ. — դիցանոյշ, Սիրանոյշ, Հրանոյշ։
դուխտ. — Շահանդուխտ, Սանդուխտ, Զարմանդուխտ։

194. Հետեւեալ մասնիկներով փոքրութեան կամ փաղաքշանքի գաղափար ստեղ գոյականներ կը կազմուին.

ակ. — նաւակ, դիակ, շուանակ։

էկ կամ էակ. — տղէկ, աղէակ, որդէակ։
էկ. — թռչնէկ, թաթէկ, մայրէկ։
ուկ. — գառնուկ, հարսնուկ, վարդուկ։

195. Հետեւեալ մասնիկները իրենց քով նշանակուած գաղափարները արտայայտող գոյականներ կը կազմեն.

է+ (բանի մը սահմանուածի գաղափար). — խաղաղէ+, հագնեղէ+, ուտեղէ+։
ակ (նախատական գաղափար). — խնասակ, հեսեակ, գրչակ։
եղէն (հաւաքական գաղափար). — մսեղէն, կաւեղէն, ջրեղէն։
ենի (ստանի, ծառի գաղափար). — մորենի, խրնձորենի, նռնենի։
ենի (մորթի գաղափար). — առիւծենի, այծենի, արջենի։
է (ծառի գաղափար). — կաղնի, թմբի, դեղձի։
կան (գործողութիւն մը կատարողի գաղափար). — գուժկան, շալկան, վարձկան։
նոց (արժէքի կամ չափի գաղափար). — հինգնոց, դրամնոց, վարնոց։
ոց (այլ եւ այլ գաղափար). — ժամոց, ճերմկոց, դեղնոց։
ղէ+ (վարձքի գաղափար). — աւուրղէ+, կաղանդղէ+։
ց- (վիճակի մը սահմանուածի գաղափար). — փեսացու-, տիրացու-։
ուր կամ ուր (ունեցողի գաղափար). — տնուր, զինուր, գիտուր։

196. ԱԾԱԿԱՆՆԵՐ. — Հետեւեալ մասնիկներով ծագումի եւ վերաբերութեան գաղափար արտայայտող ածականներ կը կազմուին.

ային. — մարդկային, դաշտային, հարաւային։
եան. — արեւմտեան, ձախակողմեան։

Ե՜յ. — առորե՜յ, առժամե՜յ, եռամսե՜յ։

ա՛ն. — գաւառա՛ն, հաւանա՛ն, վաւերա՛ն։

ԷՆԷ. — հայրենէ, վայրենէ, մայրենէ։

՜ՐԸ. — հոգե՜ր, մտա՜ր։

ՅԷ. — Վանյէ, տեղայէ, կանայէ։

197. Հետեւեալ մասնիկներով կը կազմուին ուներցողի գաղափար արտայայտող ածականներ.

ՈՒԷ. — գեղուէ, լեզուէ, խելուէ։

ա՜Է՜. — հոտա՜է՜, ընչա՜է՜, ծաղկա՜է՜։

ԷՂ. — համէղ, ուժէղ, ընչէղ։

Է. — մոլէ, աղէ, երկայրէ։

Կ՜Ի՜. — ամչկի՜, վախկի՜, մոռացկի՜։

՜Ի՜. — աղտի՜, բորի՜, նախանձի՜։

՜՜Ի՜. — հր՜՜ի՜, տղմ՜՜ի՜, վիմ՜՜ի՜։

ՅԷ. — մտայէ, խելայէ։

՜՜Ր. — աղե՜՜ր, փառա՜՜ր, ուսե՜՜ր։

198. Հետեւեալ մասնիկներով պարծողի գաղափար արտայայտող ածականներ կը կազմուին.

ՄԱՆ. — խամա՛ն, ածա՛ն, խաժա՛ն։

ԷՂ. — հրապուրէղ, ամոքէղ, թեղադրէղ։

ՈՂ. — ջարջարո՛ղ, հաչո՛ղ, յաց՛ղ։

ՐԴ. — յաջ՛ՐԴ, նախ՛ՐԴ, ձախ՛ՐԴ։

՜՜. — ազդ՜՜, հաս՜՜, ահարկ՜՜։

՜Ի՜. — պարծո՜՜ի՜, յեղյեղո՜՜ի՜։

՜՜Ն. — ժպտա՜՜ն, փայլո՜՜ն, շարժո՜՜ն։

199. Հետեւեալ մասնիկները իրենց քով նշանակուած գաղափարները արտայայտող ածականներ կը կազմեն.

ԷՂԷՆ, Է (նիւթին տեսակը ցոյց տուող գաղափար). — ղուսէղէն, նիւթէղէն, արծաթէ, մետաղէ։

ՈՒԴ (նախատական գուլափար). — սնուդ, օտարուդ, հնուդ։

ԷՈՅՆ (բաղդատական գաղափար). — մեծագէոյն, հզօրագէոյն։

ԷԿ (առաւելութեան գաղափար). — ծանրէկ, մանրէկ, խոշորէկ։

՜՜Ի՜ (գրկումի գաղափար). — գունա՜՜ի՜, ֆնա՜՜ի՜, ծայրա՜՜ի՜։

ԷԷՆ (սատկութեան գաղափար). — ուժգէն, շալագէն։

ԷԿ, ՜՜Կ (նուազական կամ փաղաքշական գաղափար). — փափկէկ, հեզէկ, աղուորէկ, տաք՜՜կ, գիր՜՜կ։

200. Հետեւեալ մասնիկներով այլ եւ այլ գաղափարներ արտայայտող կարգ մը ածականներ կը կազմուին.

՜Կ. — խառնո՜կ, յաջողո՜կ։

ԵԼԷ կամ ՈԼԷ. — կասկածելէ, ծիծաղելէ, խղճալէ, ցաւալէ։

ԷՆ. — ներէն, խորէն, մթէն։

Ժ՜՜. — շինժ՜՜, պահիժ՜՜, թափիժ՜՜։

201. ՄԱԿԲԱՑՆԵՐ. — Հետեւեալները մակբայներ կազմող գլխաւոր մասնիկներն են.

՜ՎԷՆ. — գլխո՜վէն, բոլորո՜վէն, խմբո՜վէն։

՜ՊԷ՜. — մեծապէ՜, այլապէ՜, փառաւորապէ՜։

Ք՜Ր. — խոնարհաբա՜ր, դիւցազնաբա՜ր, ձրիաբա՜ր։

ԿԷ. — փոփոխակէ, որոշակէ, յանկարծակէ։

ՐԷՆ. — արաբերէն, յունաբէն, ֆրանսերէն։

ՕՐԷՆ. — ազնուօրէն, թեթեւօրէն, շրջօրէն։

՜ՆՑ. — առտուա՜՜նց, հեռուա՜՜նց, մեկա՜՜նց։

ԲԱՅԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՄԱՍՆԻԿՆԵՐ

202. Կան նաեւ կարգ մը մասնիկներ որոնք, բայերուն մէջ մանելով, պարծաբութեան մը կրկնուիլը կամ տեւելը ցոյց կու տան, եւ հետեւեալներն են.

Ի՜. — կտրել—կտրի՜՜ել, կոտրել—կոտրի՜՜ել, թոչիլ—թոչի՜՜իլ։

Կ՜՜Ի՜, ՜՜, ՜՜Ի՜, ՜՜ԸՐՈՒ՜. — կոխել—կոխկո՜՜տել, փետտել—

փեռ-տել, ցատկել—ցատկ-ռել, կանչել—կանչ-ը-ռել:

ՀՌ, ՌԿ. — աւրել—աւրշ-ռկել, խառնել—խառնշ-ռկել, գլորել—գլոր-ռկել:

ԸՌ. — պահուիլ—պահուշ-ռիլ, կռուիլ—կռուշ-ռիլ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ասեղը մեծ դեր կը կատարէ կնոջ կեանքին մէջ. գրեթէ անոր սեփական տարրն է։ Ասեղին շնորհիւ, աղքատ աղջիկ մը՝ գործաւորուհի մը՝ կրնայ պատուաւոր ապրուստ հայթայթել, եւ տանտիկին մը՝ կարեւոր խնայողութիւններ ընել։ Հարուստ կամ իշխանազուն տիկիններու եւ օրիորդներու համար ալ քաղցր զբաղում մըն է ասեղը. ոչ միայն դատարկակեցութեան ձանձրոյթէն կ'ազատէ զանոնք, այլ եւ ասիթ կ'ընծայէ անոնց՝ իրենց ձեռքի վատակով աղքատներ մխիթարելու։ Ասեղը ամէն ժամանակ կիներու գլխաւոր զբաղումը եղած է։ Վաղեմի քաղաքակրթուած ազգերու, մասնաւորապէս Յունաց եւ Հռոմայեցւոց տիկինները իրենց հագուստները իրենք կը կարէին, նոյնպէս իրենց ամուսիններուն ու զաւակներուն հանդերձները։ Մեծն Ալեքսանդր պարծանքով ցոյց կուտար իր հանդերձները, զորս իր քոյրերը կը կարէին։ Օգոստոս կայսրը իր կնոջ եւ աղջիկներուն կարած հանդերձները միայն կը հագնէր։ Մարի-Անթուանէթ՝ բանտարկութեան միջոցին՝ իր զգեստները ինք կը կարկտէր, եւ որչափ կ'օրհնէր ինքզինքը, որ իր աղջիկութեան ժամանակ չէր արհամարհած ասեղնագործական աշխատութիւնները։

ԿԱՐԱՊԵՏ ԻԹԻՒՃԵԱՆ [1]

---

[1] Կարապետ Իւթիւճեան 1852 է 1884 խմբագիրը եղած է Մասիսի, որուն արտօնատէրն է։ Ունի բազմաթիւ թարգմանութիւններ։ Ծնած է 1823ին։

50. Զրուցագրել այս հատուածը, և դնել կետադրութեան նշանները։

51. Նախադաս մասնիկներով ածանցել հետեւեալ բառերը.

Զայն, տպել, հրաշք, ճառել, լսարան, կամք, կարգ, հիւսակ, անուն, դաշնակ, շնչել, սքօղել, գիր, ուրանալ, բացում, դէպք, բաղադրել, բիծ, մեղք, քահանայ, հասուն, պատեհ, հաւասար, ածել, գեղ, երշանիկ, փոյթ, խմբել, կազմութիւն, արձակ, սահման, կեդրոն, հոչակ, պատկեր, նեխել, սեռ, ճարակ, ընկեցիկ, բաժանում։

52. Յետադաս մասնիկներով, գործողութեան կամ վիճակի գաղափար արտայայտող ածանցեալ գոյականներ շինել հետեւեալ բառերով.

Բարի, շկահել, խարշափել, սովորիլ, պարծիլ, քայլ, ապրիլ, խնդալ, տաղտկանալ, ծիր, մտմտալ, բամբասել, ազաչել, կործանել, կարդալ, զարդ, իրձ, հարկ, հարս, արձակ, Ջշնամանել, գաղտնի, ցուցնել, դղրդել, մռունչ, երեւալ, զայրանալ, լալ, հաւաստել, սպառնալ, ուտել, սիրել, Ջաքչիլ, ժողով, դաշն, հիմնարկել, զանգել։

53. Յետադաս մասնիկներով, գործողութիւն մը կատարողի գաղափար արտայայտող ածանցեալ գոյականներ շինել հետեւեալ բառերով.

Ստեղծել, դրժել, հասնիլ, կառք, ժառանգել, պահել, գինի, անցնիլ, փրկել, խթել, կցել, սայլ, դիտել, կոչել, հոսիլ, հետեւիլ, սուլել, կշիռ, քննել, գնել, բրել, նկար։

54. Տեղի եւ ծագումի գաղափար արտայայտող գոյականներ կազմել իա, նց, ոց, ատան, ական, ցի, իկ յետադաս մասնիկներով։

55. Գործողութեան մը արդիւնքի եւ գործիքի գաղափար արտայայտող գոյականներ կազմել յետադաս մասնիկներով հետեւեալ բառերէն.

Մանր, սոյլ, կարկտել, տաշել, կռել, ջնջել, զեկուցանել, կապել, խարել, ծծել։

56 Իգականի կամ փոքրութեան գաղափար արտայայտող գոյականներ կազմել ուհի, դուխտ, ակ, եկ, եակ, իկ, ուկ մասնիկներով։

57. Ակ, եղէն, ենի, ի, կան, նց, ուց, չէք, ցու, ուոր, ւոր, յետադաս մասնիկներով գոյականներ կազմել հետեւեալ բառերէն, եւ անոնց նշանակութիւնը բացատրել.

Դեղձ, կարող, հարս, մատն, արջ, տանձ, վիզ, բուրդ, բանիլ,

վարձել, ապուր, հող, տասը, գեղին, դատ, ուլ, ոսկի, Քև, գրիչ, խումբ, արծաթ, շինող, գէս, զոգ, ղլուշ, Քշուառ, նեղ, սպիտակ։

58. Յետադաս մասնիկներով ծագումի եւ վերաբերութեան գաղափար արտայայտող ածականներ կազմել հետեւեալ բառերէն.

Աստուած, հոգի, քաղաք, լեռ, Անգլիա, ամիս, հիւսիս, արեւելք, գաւառ, բեւեռ, Իսրայէլ, հրէշ, մարդ, մարմին, երկինք, մեղք, դուռ, ԱՔԷՆՔ, այր, գիւղ, տարի, որդի, եՔեր, աւիշ, յաւերժ, Քաղ, հանք, միջնարար, նիզակ։

59. Յետադաս մասնիկներով ունեցողի գաղափար արտայայտող ածականներ կազմել հետեւեալ բառերէն.

Կասկած, տիրմ, բան, խանձ, շիկնիլ, մացառ, աչառել, պարտք, զօշոտել, Քօն, եղեռն, հիւՔ, երկնչիլ, աւազ, ընտանիք, կորով, խախտել, դար, լանջք, բուրում, մօրուք, դալար, ոսկոր, տուն, առաքինութիւն, սաղարդ, պէտք, եռանգ, նշան, ծառ, ճարպ, կենդանութիւն, սէգ, վարս, մատ, ծորել, հուր, աչք, վէտ, խոտ, բար։

60. Յետադաս մասնիկներով գործողի գաղափար արտայայտող ածականներ կազմել հետեւեալ բառերէն.

Գործ, բնակիլ, ժառանգել, աւեր, վազել, պատմել, ակնառել, գիտնալ, ողբերգ, նստիլ, սէր, ակնածել, օրօրել, ձեռնածութիւն, հիմնարկել, վէտվէտիլ, հաւաքել, հոսիլ, խնկարկել, ճամբայ, ճռուողել, երկրպագել, զեռալ, աւելածութիւն, միջին, նաւ, շողշողել, սպասարկել, առաջին, զգալ, հոգածութիւն։

61. Եղեն, է, էլի, ալի, աս, գին, իկ, ուկ յետադաս մասնիկներով ածականներ կազմել։

62. Ակ, ի, ին, ծու, գոյն յետադաս մասնիկներով ածականներ կազմել։

63. Բայերու յատուկ մասնիկներով ածանցել հետեւեալ բայերը.

Բաշել, ճանկել, փակչիլ, կանչել, պաղիլ, երերալ, կզուիլ, կպչիլ, խօսիլ, պատռել, սեղմել, փլչիլ, քակել, փախչիլ։

64. Յետադաս մասնիկներով մակբայներ կազմել հետեւեալ բառերէն.

Շքեղ, կողմ, մայր, ամբողջ, ուզիղ, սիրտ, բարեկամ, գերազանց, հիմ, Գերմանիա, տէր, վստահ, կամք, մատ, ապահով, վատ, ուժգին, երես, համառօտ, տպայ, կարեկից, Եբրայեցի, առատ, քաջ, ճշմարիտ, անցք, գիշեր, շեշտ, կրկին, ազգ, Անգլիա, բարոյական։

ՇՈՒՇԱՆԸ ԵՒ ԿԱԹԻԼԸ

Ոսկի, կապոյտ երկինքին ջերմ ցոլքին տակ,
Ամէն ծաղիկ երբ կը Քոռմի զբլխահակ.
Ինչու արդեօք շըքեղ ճերմակ, ով շուշան,
Կը պահես դուն ճակատ մ՚աղուոր, չինչ ա՚դբան։
—Չի ծոցիս մէջ շիՔ մը ցող՝
Զոր կը հեղու հոն արշալոյսը լացող,
Կը պահէ միշտ զովութիւն մը անուշիկ։
Այսպէս, Ներման ձիւն շուշանին, Քաղցր աղջիկ,
Կը փողփոդէ քուկին ճակատդ ալ կոյսի.
Չի սըրտիդ մէջ անմեղութիւն կը հոսի։

ԱՆԱԹՈԼ ՏԸ ՍԻԿԱՐՈ (1)

65. Գոց սորվիլ եւ արտասանել այս հատուածը։

---

(1) Ֆրանսացի ժամանակակից գրագէտ։

ՆՄԱՆԱՁԱՅՆ, ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԵՒ ԲԱԶՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

ԿԱՆՈՆՆԵՐ

203. ՆՄԱՆԱՁԱՅՆ ԲԱՌԵՐ. — Նմանաձայն կ'ըսուին այն բառերը, որոնք տարբեր իմաստ, տարբեր ուղղագրութիւն ունին, բայց միեւնոյն կերպով կը հնչուին, ինչպէս.

Բակ (գաւիթ կամ արեւու լուսնի շրջանակ)	Փակ (գոց)
Բաւս (երջանկութիւն)	Փաւս (ապացոյց)
Բոր (հիւանդութիւն)	Փոր (որովայն)
Բոյթ (մեծ մատ)	Փոյթ (հոգ, ջանք)
Բուս (անասունի մնունդ)	Փուս (փոտած)
Գայլ (անասուն)	Բայլ (ոտքի շարժում)
Գամել (բեւեռել)	Բամել (ջուրը առնել)
Գերել (գերի ընել)	Բերել (մորթը չփել)
Գող (աւազակ)	Քող (լաչակ)
Դաւ (գաւաճանութիւն)	Թաւ (խիտ)
Դող (գոլալ)	Թո՛ղ (թողուլ բային հրամայական)
Դոյլ (ջուրի աման)	Թոյլ (դանդաղ, թո՛ղ)
Դուռ (տան, սենեակի փակոց)	Թուռ (մեծ պատառ)
Դեր (գերասանի մը կատարելիք պաշտօնը)	Թեր (կողմ)
Դեմ (հակառակ)	Թեմ (եպիսկոպոսական վիճակ)
Դիր (գիրքին)	Թիր (սխալ)
Դեւ (սատանայ)	Թեւ (բազուկ)
Դաղուկ (գեղնութիւն)	Թաղուկ (խելքի պտոյտ)

Դիակ (մեռած կենդանիի մարմին)	Թիակ (նաւու թի)
Կար (կարողութիւն)	Կար (կարելու գործողութիւն)
Հանքոյր (պագ, հանդարտ)	Ցանքոյր, (անուշապիր)
Հանիմ (մեծաղ պարունակող ստորերկրեայ վայր)	Ցանգ (ծայր, ոսանաւորի վերջաւորութիւն)
Հարկ (պէտք)	Ցարկ (դասիկոն)
Հարթ (չիսակ)	Ցարդ (չոր խոտ)
Հանր (անիսօն)	Ցանր (կամաց)
Հոյլ (երամ)	Ցոյլ (ծայլ)
Հոռի (Հայոց երկրորդ ամիսը)	Ցոռի (գէշ)
Հոս (բոյթ)	Հos (երամակ)
Հոյզ (ծառերէն վազած խէժ)	Ցոյզ (յուզում)
Ճիգ (ջանք, յոգնութիւն)	Ճիմ (ժամկներու շղթք)
Ցեղուլ (կոթնիլ)	Հեղուլ (հիւսել)

204. ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ. — Հոմանիշ կ'ըսուին այն բառերը, որոնք միեւնոյն գաղափարը կը ներկայացնեն, իմաստի երանգներով միայն տարբերելով քիչ շատ իրարմէ, ինչպէս.

Աղիմ, կոհակ, վհս, ծուփ, ծփանք:

Անցաւ, մայրաւոր, պուրակ, թաւուս:

Ագահ, ժլատ, կծծի, ոիշտ, կցիր, ճղճիմ:

Աւարել, թալել, յափշտակել, կողոպտել, գերփել, կապտել, շորթել, գողնալ, խլել, կորզել:

Գրաչ, մեղրնաչ, կարեկցիլ, արգահատիլ, ցաւիլ, ցաւակցիլ, վշտակցիլ:

Թովել, դիւթել, հմայել, հրապուրել, զգլխել, կախարդել, խայծել, կարթել:

Հարուստ, փարթամ, ճոխ, մեծատուն, ընչեղ:

Ծոյլ, յոյլ, պղերգ, դանդաղ, հեղգ, ղորտ, թոյլ:

Կաթիլ, շիթ, ցօղ, կայլակ, շաղ, կաթ, պուտ:

Կապոյտ, ղուրբ, թիլ, սանագուն, ծաւի, խաժ, պղուզ, շափիւղայ:

Կարմիր, հիր, ծիրանի, շառագոյն, բոսոր, շեկ:

Զոր, հովիտ, ծործոր, եմակ, ծմակ:

Կողով, սակառ, սիրիդ, տառաղան, կայթ, կթոց, զամբիւղ:

Ցաւ, թախիծ, վիշտ, մորմոք, կսկիծ, տառապանք, տուայտանք, տաղտապանք, ղկանք, ջարշարանք, տանջանք:

Ցուպ, գաւազան, մականի, ճոկան, ձաղկ, թիր:

Խումբ, ջոկաս, գունդ, վաշտ, խուժան, ամբոխ, պար, տարմ, հոյլ, բոյլ, հոս, երամակ, վոհմակ, նախիր, ջղիր, պառակ, ջոկ, ճահուկ, հօրան, վտառ, դասակ:

Մոնչել, գոչել, գոռալ, խանչել, կանչել, կոչել, հոնչալ, ոռնալ, խորդալ, բառաչել, պոռչալ, պոռալ, պոռոչել, բլչել:

Պայծառ, յստակ, ջինջ, ակամակիտ, անապակ, մաքուր:

Տնակ, խրճիթ, հիւղ, խղիկ, վանիկ:

Վերջ, վախճան, ամբոկ, ղրում, կատարած, յանգ:

Մառ, մառախուղ, մշուշ, մեգ, մուայլ:

205. ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ. — Հականիշ կ'ըսուին այն բառերը, որոնք իրարու հակառակ նշանակութիւն ունին.

Տաք—ցուրտ, մեծ—պզտիկ, սուր—բութ, աղուոր—տգեղ, բարակ—հաստ, ղոյս—մութ, շիտակ—ծուռ, արագ—յարմար, խիտ—ցանցառ, թեթեւ—ծանր, երկայն—կարճ, ցորեկ—գիշեր, մանկութիւն—ծերութիւն, առտու—իրիկուն, հրճուանք—վիշտ, պարզութիւն—պատուճանք, գիրութիւն—նիհարութիւն, լիճ—կղզի, ղեռ—անդունդ, ծով—ցամաք:

206. Առանցքէ մաս մը՝ ալ ռ, ղ, ր, ք մասնիկներով կը կազմուին.

Հանգիստ—ռհանգիստ, օրինաւոր—ղօրինաւոր, գիտութիւն—ղգիտութիւն, պատեհ—ք՝պատեհ, գունաւոր—ղգոյն:

207. ԲԱԶՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ. — Բազմանիշ կը կոչենք այն բառերը, որոնք մէկէ աւելի իմաստ ունին.

Այս (չար ոգի, ասիկա), բեռեռ (աչխարհի ծայրը, գամ), բարակ (նուրբ, որոյ չուն), դար (հարիւր տարի, զաբիվայր), խոհ (մտածում, կերակուր), ժամ (եկեղեցի, ժամանակի միջոց), կաղ (ցորենի կալ, արեւու կամ լուսնի շրջանակ), կաք (մենդարար հեղուկ, կաթիլ), կոյս (աղջիկ, կուլմ), կուշտ (յագեցած, կուղ), հաւ (մեծ հայր, անասուն), մայր (ծնող, թեզոշ), մորի (գազանի բոյն, մորմենիի ծառ), ոչ (միաք, անապան), պար (խումբ, ոսքի խաղ). պուտ (վարի խաչխաչ, կաթիլ), ցանկ (ցուցակ, ճիւղերով չմնուած պատ), ղոտ (ծոյլ, անգլիացի ազնուական), մարտ (գարնան ամիս, պատերազմ), հազար (տասը անգամ հարիւր, բոյս), ստոր (վար, ստորակէտ), գեշ (յոռի, գիակ):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՃԻՏԻՆ ՊԱՐՏՔԸ

Սեւ կաչիէ մեծկակ պայուսակ մըն էր զոր առտու իրիկուն իր ձեռքը բռնած կ'երթար փողոցներէն։ Իր կեանքին անբաժան ընկերն էր այս տակուն կաչիէ պարկը, որով ամէն իրիկուն իր տան պիտոյքը, հացն ու միսը կը տանէր, կամ պտուղը իր երկու փոքրիկ զաւակներուն, որոնք դրան առջեւէն՝ այս խոստմնալից ու խոստմնապահ պայուսակին չարչը կը բոլորուէին։ Այս մարդուն բոլոր յոգնաջան վաստակն ու քրտնաթոր գոր-

ծունէութիւնը անոր մէջ էր, դանայեան տակառ զոր կը լեցնէր շարունակ երեսուն տարիներէ ի վեր առանց յաղողելու։ Իր կեանքի պայքարը հոն էր ամբողջ. ապրուստի խնդիր, օրական հացի խնդիր, որուն արհաւիրքովը լի էր միշտ այդ կայտէ պահարանը իր մշանջենական պարապութեամբ։ Իր ուրախութիւնները եւ ցաւերն ալ հոն էին, իր յիշատակներն ալ։ Աղէկ օրեր ու գէշ օրեր ունէր այդ տոպրակը, տէրոջը պէս ճակատագիր մը յարափոփոխ, եւ անոր պէս հոգի մըն ալ ունէր կարծես։ Ո՞վ էր տէրը այս երկուքին մէջ. երեսուն տարի վերջը, երբ ձախորդութիւնը իր երկաթէ շրջապատոյտ օղակներով զինքը կը պաշարէր, այս մարդը կը հասկընար որ այդ անդգայ տոպրակը իրեն տէրը եղած էր միշտ։

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ (1)

66. Զրուցագրել այս հատուածը, և կեսադրութեան նշաններ դնել։

67. Գտնել այս հատուածին մէջ գործածուած հետեւեալ բառերուն հոմանիշները, ու անոնցմով նորէն շարադրել զայն.

Կաշի, պայուսակ, անբաժան, տոկուն, պարկ, յոգնաչան, պայքար, արհաւիրք, պարապութիւն, ուրախութիւն, ցաւ, օրական, աղէկ, գէշ, ճակատագիր, յարափոփոխ, շրջապատոյտ, անզգայ։

68. Գտնել տասը *նմանաձայն* բառեր, և գործածել զանոնք զոյգ զոյգ միեւնոյն իսկքին մէջ։

Օրինակ. — *Բակին դուռները փակ էին։*
Թոյլ տուէ՛ք որ դոյլերս լեցնեմ։

69. Գտնել հետեւեալ բառերուն հոմանիշները և բացատրել զանոնք.

Դայլայլիկ, ջրվէժ, ուղէշ, խիստ, զրոյց, գոեհ, վանել, աւերակ, ժայռ, խարշ, ձաղկել, ագի, ճեպել, վաշտ, մագիլ, մալել, շիրիմ, մահիճ, շքեղ, ոսոխ, մոխիր, մորոս, մոցել, կտրիճ, զառիթափ, զառամ, կարկամիլ, կարկաչ, կայթել, կափուլ, մրափել, սար, բուտ, աւար, արփի, յեղուզակ, դարպաս, հնոց, ձորձ, վարմ։

(1) Գրիգոր Զօհրապ, ծանօթ գրագէտ և փաստաբան, ծնած 1860ին, հրատարակած է Նորավէպեր և յօդուածներ հայ պարբերականներու մէջ։

70. Գտնել հետեւեալ բառերուն *հականիշները*, կամ անոնց իմաստը հակառակ դարձնել *ան, ապ, ս, ոժ, դժ* մասնիկներով.

Սեթեւեթ, լայն, դանդաղ, սրամիտ, փութկոտ, աւերակ, խաղաղ, աղտոտ, քաջ, ժլատ, լռութիւն, մերժում, ընդլայնում, հեռաւոր, զգայուն, մարմնեղ, եղեռնաւոր, մօրուանի, պատուաւոր, անուշահոտ, շահեկան, պատշաճ, կշտամբանք, պարզութիւն, բեղմնաւոր, պարարտ, խաւար, հալած, պայծառ, ճկուն, անոթի, տեսական, հարթ, ժուժկալ, հլու, ձեռնհաս, լուրջ, հպարտ, հսկայ, փոթորիկ, զթութիւն։

71. Մէյ մէկ նախադասութեան մէջ գործածել հետեւեալ բազմանիշ բառերը իրենց կրկին նշանակութիւններովը զատ զատ.

Մայր, կուշտ, ցանկ, բարակ, մորի, դար, հաւ, ժամ, բեւեռ, կալ, ուշ, պուտ։

Օրինակ. — *Մեր տան վայրայաւելին մէջ բազմաթիւ հաւեր կան։*
Մեր ծերունի հաւը սիրուն պատմութիւններ կը պատմէ իր թոռներուն։

ԼՈՒՍՆԻ ԼՈՑՍՈՎ

Ծովն է խաղաղ, գորշ անսահման
Հոն հիւ կու գայ աչքս հազիւ.
Ըսկիզբ չունի, ոչ ալ վախճան,
Ոչ գիշեր է, ոչ ալ տիւ,

Ըսկայ ալիք, ծուփք փըրփրածայր,
Շող չըկայ խորն եթերին.
Ոչինչ մարած՝ ոչինչ է վառ.
Օդը՝ լոյս չէ, ոչ մըթին։

Ջրհաւ, որոր ճիչերով բիրտ
Ալկիոններ խոյս կու տան.
Այս մենութեանց մէջ անխըլիրտ՝
Խոր ճանձրոյթ մը կու գայ ման։

Ըսկայ շունչ մը, շըշունչ մը խուն։
Կողն իր փայլուն՝ պղինձէ՝
Հազիւ նաւը յոյլ, օրօրուն՝
Թուխ ջուրէն դուրս կը ցըցէ։

Արեւելքէն լոյս մը պայծառ,
Մոխրի նըման հոլաՁև,
Հորիզոնէն կը ձիւնէ վար
Ծոպերով նուրբ ու ՁեՁև։

Ու կը լողայ, կ'անձրեւէ ցող,
Բոցբոցելով զերդ ծաղիկ.
Կը պըտուտկի սըփռած զերդ բոզ
Մէգն իր բարակ Ձափանցիկ։

Տըժգոյն բոց մը կը ցայտէ վեր
Կ'ակօսէ ծովը սարսուռ
Երկինքին մէջ մարգարտայեռ
Լուսինն յուշիկ կու գայ ժուռ։

Լ. ՔՈՆԹ. ՏԸ ԼԻԼ. (1)

72. Գոց սորվիլ այս ոտանաւորը, և բարձրաձայն արտասանել։

73. Մէյ մէկ նախադասութեան մէջ գործածել հետեւեալ բառերը.

Հիւ զալ, բիրտ, անխլիրտ, հոլաՁև, ծոպ, պտուտկիլ, մէգ, ցայտել, մարգարտայեռ, ժուռ գալ։

(1) Լ. Քոնթ տը Լիլ՝ ժամանակակից Ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ։

ԱՆՈՒՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ

ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՒ ԹԻՒԸ

ԿԱՆՈՆՆԵՐ

208. Անունը բառ մըն է, որ անձ, անասուն կամ իր կը ցուցնէ. Գրիգոր, մարդ, ձի, քար։ Անունը կը կոչուի նաեւ գոյական։

209. ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ. — Երկու տեսակ անուն կայ, հասարակ եւ յատուկ։

210. Հասարակ է այն անունը որ կը յարմարի միեւնոյն տեսակէ ամէն անձի, անասունի եւ իրի. Գիւղացի, կատու, գետ։

211. Յատուկ անունը անձի մը, անասունի մը կամ իրի մը մասնաւոր անունն է. Պետրոս, Թոլի, Էրզրում։ Յատուկ անուններէն ոմանք կրնան մէկէ աւելի էակի պատկանիլ, ինչպէս. Պետրոս, Քրանսացի։ Պետրոս յատուկ անուն է, որովհետեւ ամէն մարդ Պետրոս չի կոչուիր։ Քրանսացի յատուկ անուն է, որովհետեւ աշխարհի բոլոր ժողովուրդները Քրանսացի չեն կոչուիր։

212. Նիւթական կ'ըսուին այն անունները, զորս կրնանք տեսնել եւ չօշափել. արեւ, հաց։

213. Վերացական կ'ըսուին այն անունները, որոնք կը ներկայացնեն այնպիսի գաղափարներ, զորս մտքով միայն կրնանք ըմբռնել, եւ որոնք ընդհանրապէս յատկութիւն կամ գործողութիւն ցոյց կուտան. կամք, խղճմտութիւն, գաղուստ։

214. Հաւաքական կը կոչուին այն անունները՝ որոնք անձերու, անասուններու կամ իրերու հաւաքոյթ մը կը ներկայացնեն. խուժան, հօս, բազմութիւն:

215. ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԹԻՒԸ. — Թիւը անուններուն այն յատկութիւնն է, որով ցոյց կը տրուի առարկայի մը մէկ կամ մէկէ աւելի ըլլալը:

216. Թիւը երկուք է. եզակի եւ յոգնակի:

217. Անուն մը եզակի է, երբ ցոյց կու տայ մէկ առարկայ միայն. մանկիկ, կատու, տուն:

218. Անուն մը յոգնակի է, երբ ցոյց կու տայ մէկէ աւելի առարկայ. մանկիկներ, կատուներ, տուներ:

219. Հետեւեալ անունները ընդհանրապէս եզակի կը գործածուին.

1. Մեսալի անուններ. արծաթ, պղինձ:

2. Վերացական անուններ. պարկեշտութիւն, ազնիւթիւն:

3. Գիտութեան եւ արուեստի անուններ. աստղագիտութիւն, նկարչութիւն:

4. Գոյականաբար գործածուած ածականներ. գեղեցիկը, ճշմարիտը:

5. Գոյականաբար գործածուած անեղեն այթներ. ուտելը, խմելը:

220. Յատուկ անունները, որոնք ընդհանրապէս եզակի են, կրնան յոգնակի ալ գործածուիլ. Երկու Կոնֆուտները գրած են շատ մը վէպեր:

221. Միավանկ բառերը էր մասնիկով յոգնակի կ'ըլլան. թուղթէր, տառէր, խօսքէր:

222. Յոգնակիի կազմութեան մէջ՝ կորուստի եւ փոփոխման կանոնը նկատողութեան չ'առնուիր. Այսպէս, պէտք է գրել. կիներ, գիրքեր, տուներ, տէրեր; թէներ, գիրեր:

223. Բացառիկ են թոռ, եզ, գառ, դուռ, մաս, ղեռ, բեռ բառերը, որոնք երէն առաջ Ն մը կ'առնեն յոգնակիի մէջ. թոռներ, եզներ, գառներ, եւայլն: Այս բացառութեանց պատճառը այն է որ այդ բառերը գրաբարի մէջ միշտ Ն-ով գործածուած են, ինչպէս. թոռն, եզն, գառն, եւայլն:

224. Մէկ ու կէս վանկ ունեցող բառերը էր-ով յոգնակի կ'ըլլան, երբ կէս վանկը բառին վերջն է. արկղ - արկղէր, սանտր—սանտրէր: Այս կարգի բառերը միշտ նայ տառերով կը վերջանան:

225. Մէկուկէս վանկ ունեցող բառերը Ներ-ով յոգնակի կ'ըլլան, երբ կէս վանկը բառին սկիզբն է. դրամ—դրամներ, մշակ—մշակներ: Այս բառերուն առաջին մասին մէջ ընդհանրապէս նայ կամ թոյլ տառեր կը գտնուին:

226. Բազմավանկ բառերը Ներ-ով յոգնակի կ'ըլլան. երկիրներ, բերաններ, պաշտօնեաներ:

227. Կարգ մը ի-ով վերջացող բառեր, որոնք գրաբարի մէջ անեղական են, աշխարհաբարի մէջ իբր եզակի կը գործածուին, եւ էր-ով կամ Ներ-ով յոքնակի կ'ըլլան. դիրք—դիրքեր, կրօնք—կրօնքներ, ընտանիք—ընտանիքներ, եւայլն:

Ծնողք եւ նախնիք բառերը, որոնք յոքնակի իմաստ ունին, կրկին յոքնակի կ'ըլլան հետեւեալ ձեւով. ծնողքներ, նախնիքներ: Կ'ըսենք. Գրիգորին ծնողքը, եւ Գրիգորին ու Յովհաննէսին ծնողքները. Ֆրանսացւոց նախնիքը, եւ Ֆրանսացւոց ու Իտալացւոց նախնիքները:

228. Երբ անձայն յ-ով վերջացող գոյականը յոքնակի ըլլայ, յն կը ջնջուի. քահանայ—քահանաներ, հաւատածոյ—հաւատածոներ:

229. Գրաբարի ձեւով, այսինքն ի-ով յոքնակի կրնան ըլլալ.

1. Յէ մասնիկով վերջացող յատուկ և հասարակ անունները. Կեսարացի—Կեսարացի+, քաղաքացի—քաղաքացի+ :

2. Կան մասնիկով վերջացող յատուկ և հասարակ անունները. Ղեւտական—Ղեւտական+, պահպանողական—պահպանողական+ :

3. Եան վերջացող յատուկ և հասարակ անունները. Օսմանեան—Օսմանեան+, սկեպտիկեան—սկեպտիկեան+ :

Այս բառերը ազգի մը, կրօնքի մը, ընտանիքի մը, կուսակցութեան մը կամ միջավայրի մը պատկանող մարդիկ կը ներկայացնեն ընդհանրապէս :

230. Մաս, ձեռք, ոտք, աչք, ծունկ բառերը, երբ նշանակեն մարդոց անդամները, սա ձեւով ալ յոքնակի կրնան ըլլալ. մատուրներ, ձեռուրներ, ոտուրներ, աչուրներ, ծունկուրներ :

231. Մաս կ'ըլլայ միշտ մատներ, երբ նշանակէ դաշնակի ստեղ :

232. Ոտք կ'ըլլայ միշտ ոտքեր, երբ նշանակէ ոտանաւորի չափ, սեղանի կամ ուրիշ կարասիի ոտք, կամ երկարութեան չափ :

233. Ծունկ կ'ըլլայ միշտ ծունկեր, երբ նշանակէ բոյսի մայրան :

234. Ք-ով յոքնակի կրնան ըլլալ նաեւ կարգ մը ազգերու անուններ. Ղպտիք, Հրեայք, Հելլենք, Պուլկարք, եւայլն :

235. Հետեւեալ կերպով ալ յոքնակի կրնան ըլլալ սա բառերը. տղայ—տղաք, կին—կանայք, մարդ—մարդիկ, տեղ—տեղուանք, կտոր—կտորուանք :

236. ԲԱՐԴ ԲԱՌԵՐՈՒ ՅՈՔՆԱԿԻՆ. — Երբ բարդ բառի մը վերջին բառը բաղմավանկ է, իբր բազմավանկ բառ, միշտ ՆԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ. քեռորդի—քեռորդիներ, երկբարբառ—երկբարբառներ :

237. Երբ բարդ բառին վերջին բառը միավանկ է, այն առանց երբեմն ԵՐ-ով, երբեմն ՆԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ, հետեւեալ կանոններուն համաձայն.

Ա. Երբ այս կարգի բարդ բառը մը առանց յօդակապի կամ շաղկապի միացած է, միշտ ՆԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ. բառգիրներ, ծովամիներ, քարայրներ, եւայլն :

Բ. Երբ բարդ բառին վերջին մասը բայարմատ է, միշտ ՆԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ. գրագիրներ (գիր՝ գրել բային արմատն է), հրաշակերտներ (կերտ՝ կերտել բային արմատն է), ղեկավարներ (վար՝ վարել բային արմատն է), վարուցանողներ (ցան՝ ցանել բային արմատն է) :

Գ. Երբ բարդ բառին վերջին մասը գոյական է, հարկ է զանազանել հետեւեալ պարագաները.

1. Ամէն անգամ որ բարդ բառն ալ գոյական մըն է, ԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ. հաշուեհոմներ, հնդկահաւեր, ծառատունկեր : Բացառութիւն են սիրտարագ գոյականը, որ կ'ըլլայ սիրտարագներ, եւ քան, պես, պէս, գէր գոյականներով վերջացող գոյականները որոնք ներով յոքնակի կ'ըլլան. յառաջաքաններ, վերջաքաններ, վարդապետներ, նաւապետներ, գինեպուռներ, դպրապուռներ, աղերսագիրներ, ընկալագիրներ :

2. Ամէն անգամ որ բարդ բառը ածական մըն է, որ գոյականաբար կը գործածուի, ՆԵՐ-ով յոքնակի կ'ըլլայ. քաջասիրտներ, սրտիտներ, սեւամորթներ, միավանկներ :

238 ՅՈՔՆԱԿԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — Անորոշ (այսինքն առանց յօդի) գոյական մը յոքնակիի տեղ կրնայ նաեւ եզակի գործածուիլ, մանաւանդ թուական եւ անորոշ ածականներու առջեւ, երբ խօսքին իմաստը ինքնին կը յայտնէ թէ յոքնակի է. Շատ մարդ եկաւ : Քանի հոգի կար հոն : Քանի մը տուն այրեցաւ : Զորս յէ ղծեր հին կառիին : Ծառերը ծաղկէ տուին :

239. Բայց երբ գոյականը որոշ ըլլայ, պէտք է միշտ յօդնակի դնել. Ձեր տեսած երկու տղաքը հոս են: Սա ծառին բոլոր պտուղները թափեցան: Նկարուած երկու պատկերներուն չհաւնեցայ:

240. Գոյականը թուական ածականէ մը ետքը յօդնակի կը դրուի նաեւ գաղափարին սասակութիւն տալու համար. Իր քսան հազար ոսկիները չկրցան զինքը փրկել. երկու աչքերովս տեսայ. երկու ականջներովս լսեցի:

241. Զափ եւ աստիճան ցուցնող բառերը երբեք յօդնակի չեն դրուիր թուական ածականներէն ետքը. Ուրբ փարասխ, տասը օխա, հինգ կանգուն:

242. Շատ անգամ գոյական մը յօդնակիի տեղ եզակի կը դրուի, երբ իր նախընթաց յօդնակի բառէն կամ նախադասութեան իմաստէն յայտնի է յօդնակիի իմաստ ունենալը. Ամենուն սիրտը յուզուած էր: Տղոց կամքը կոտրելու է:

243. Յօդնակի անուններու քով նմանութեան համար գործածուած գոյականները սովորաբար եզակի կը մնան. Ընկոյզի չափ կարկուտի հատիկներ տեղացին: Մարգրտի պէս ճերմակ ակռաներ ունի: Այս պարագային մէջ կարելի է սակայն յօդնակի ալ դնել. Ձիերու պէս կը վազեին:

ՀՐԱՀԱՆԳԵՐ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Մարդս կը ծնի մերկ եւ ակար, ակար, այո՛, քան շատերը կենդանիներէն, որոնք մասամբ գոգցես աւելի նպաստաւորուած են բնութենէն, որ զգեցուցած է զանոնք, եւ տուած է իւրաքանչիւրին զէնքեր անձին պաշտպանութեան համար: Փիղը ունի իր վրիժակները,

առիւծը իր ճիրանները, ցուլը իր եղջիւրները, արծիւը իր մագիլները, մեղուն իր խայթոցը, իժը իր թոյնը. բայց մարդը, ակար ֆիզիգապէս, ունի իր իմացականութիւնը, որով իրեն կը հպատակեցնէ բնութեան զօրութիւնները, կը նուաճէ հակառակամարտ ոյժերը, եւ իր մարմնոյն ակարութեան օժանդակ տալով զանոնք, կ'ապահովէ իր կեանքը, եւ կը ստեղծէ իր երջանկութիւնը: Մարդուս ամէն կարողութիւնները, ֆիզիգական թէ իմացական, տարրական վիճակի մէջ տրուած են իրեն. հարկ է որ զարգացնէ զանոնք, եւ գործածէ իր պիտոյքը գտնելու: Հարուստն ու աղքատը, գիտունը թէ տգէտը, գործաւորը թէ դրամատէրը, տէրը թէ ծառան հաւասարապէս ստիպուած են աշխատիլ. ան որ չունի՝ պէտք է որ չտի, եւ ունեցողը պէտք է ջանայ չկորսնցնել, այլ ընդհակառակը աճեցնել իր ունեցածը. եւ յետոյ ոչ ոք անկարօտ է. պէտքն ու կարօտութիւնը ամենուրեք են, աղքատութիւնը բազմաձեւ է, եւ կը բնակի այնքան հարուստին ապարանքը, որչափ աղքատին խրճիթը. սակիրով հարուստը աղքատ է իսկզբով. ուսեալը պէտք ունի դրամի. մտքով կամ ինչքով զօրաւորը՝ ակար է մարմնով, եւ կը կարօտի ֆիզիգական զօրութեան: Բնութիւնը կը պահանջէ որ ամէն ձեռքի մէջ գործիք մը ըլլայ. նաւավարը՝ իր թիակը ունենայ, մչակը՝ իր բահը, երկաթագործը՝ իր մուրճը, կօշկակարը՝ իր հերիւնը, հիւսը՝ իր ուրագը, երկրաչափն ու ճարտարապետը՝ իրենց կարկինը, մեքենագործը՝ իր մեքենան, բժիշկը՝ իր ականջափողը, նկարիչը՝ իր վրձինը, արձանագործը՝ իր գրոցը, երաժիշտը՝ իր դաշնակը, կինը՝ իր ասեղը, մատենագիրը՝ իր գրիչը: Վատ ու անարժան է անգործի ձեռքը. պէտք է որ գօսանայ ան: Մարդը արարչութեան թագաւոր կոչած են. ուրեմն գործիքն է անոր մականը:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ. (1)

---

(1) Ռ. Յ. Պէրպէրեան, ուսուցիչ և գրագէտ, հիմնադիր տնօրէն Պէրպէրեան վարժարանին, ծնած է 1851ին. Գրած է Առաջին տարեմ, Մարդիկ եւ իրք, Հայրն. Ունի բազմաթիւ արձակ և ոտանաւոր գրքոյկներ հայ հանդէսներու և թերթերու մէջ.

74. Զրուցագրել այս հատուածը։

75. Բացատրել այս հատուածին մէջ գործածուած հետեւեալ բառերը.

Նպաստաւորուիլ· վրիժակ, մագիլ, խայթոց, բան, մուրճ, հերիւն, ուրագ, կարկին, ականջափող, գրոց, գօսանալ, մական։

76. Լուծել բերանացի այս հատուածին առաջին պարբերութիւնը։

77. Յոքնակի ընել այս հատուածին մէջ գտնուած բարդ բառերը։

78. Յոքնակի ընել հետեւեալ բարդ բառերը.

Ծովեզր, երէցկին, հիւսիսայդ, զառիթափ, կրծկալ, գրքակալ, աստուածավախ, շոգեշարժ, շատախօս, տուրևառ, ասուլիս, եղեւէջ, երթեւեկ, կերուխում, գրածախ, թնդանօթաձիգ, ազգատոհմ, ծովարոյս, թատերաբեմ, ծառուղի, կռիսմարտ, յօդացաւ, մարտանաւ, արժեթուղթ, հօրաքոյր, աղօթագիրք, գաղթավայր, ածխահանք, անուղղող, ծեծուփետ, վանահայր, նորավէպ, գանգրահեր, վատասիրտ, միավանկ, ծրագիր, լրագիր, սղագիր, նկարագիր, ձայնագիր, կռատուն, նաւապետ, սառնատուն, աւազակապետ, լեռնաբոյս, բթամատ, յօդակապ, բաժնետոմս, պատուատոմս, այցաքարտ, խաւաքարտ, մեծամիտ, խանութպան, գեղագէտ, ճարտարապետ, գլխարկ, գիշերազգեստ, կաթնտու, մարդատեաց, կռառխումբ, նաւարշաւ, հեծելանիւ։

79. Գտնել հինգ մեսագի, հինգ գիտութեան, հինգ արհեստի անուն և մէյ մէկ խօսք շինել անոնցմով։

80. *Մաս, ոտ* և *ծունկ* բառերը իրենց տարբեր նշանակութիւններով գործածել մէյ մէկ նախադասութեան մէջ։

81. Ամբողջացնել հետեւեալ խօսքերը մէյ մէկ յարմար բառ դնելով կէտերուն տեղ.

Այս տարի մեր վարդենիները բնաւ ... չտուին։
Մեր զրացւոյն բոլոր ... լիքը ինկան։
Օրը եօթը ... աւելի չեմ կրնար աշխատիլ։
Բոլոր հանդիսականները ... վեր վերցուցին։
Այս տղաքը ... պէս այտեր ունին։
Ձեր աղջիկները ... նման կ'երգեն։
Վարժարանին աշակերտները ... ստացան։
Անցեալ տարի շատ ... առի հիւանդութեանս պատճառաւ։

ԿՈՅՍԻ ՄԸ ՄԱՀԸ

Ինչպէս ոստին վըրայ վարդը մայիսի
Գեղափըթիթ թարմ ծաղկումովն իր նախկին
Եւ վառ գոյնով նախանձ կ'ազդէ երկինքին,
Երբոր արցունքն այգուն վըրան կը հոսի,

Թերթերուն մէջ՝ սէր և շնորհ կայ կոյսի,
Որ կը խընկէ ծառն ու պարտէզ բաղցրաբոյր,
Բայց ծեծուելով տապէն, թնէն անհամբոյր,
Կը թալկանայ, թերթ թերթ, կեանքը կը խուսի։

Այսպէս չըքնաղ տարիքիդ մէջ խաւարծի,
Երբոր երկինք երկիր քեզմով կը պարծի,
Մեռա՛ր, մոխիր դարձաւ քու կեանքըդ կոյսի։

Շիրմիդ վըրայ ընդունէ՛ ցաւս ու լալիք,
Բաժակ մը կաթ, լեցուն կողով մը ծաղիկ,
Որ ողջ, մեռած, միշտ վարդ ըլլաս մայիսի։

ՌՈՆՍԱՐ (1)

82. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

---

(1) Ռոնսար, հռչակաւոր բանաստեղծ Ֆրանսացի, ծնած է 1524ին, և մեռած 1585ին։

ՀՈԼՈՎՈՒՄ

ԿԱՆՈՆՆԵՐ

244. Անունի մը վերջաւորութեան փոխուելուն հոլովում կ'ըսուի :

245. Վեց հոլով կայ. Ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական :

246. Հոլովման ընդհանուր կանոնն է թէ՛ հասարակ եւ թէ՛ յատուկ անուններու համար.

	Եզակիի մէջ		Յոգնակիի մէջ	
Ուղղ.	Հայց.	Հայ	Գրիգոր	Հայեր	Գրիգորներ
Սեռ.	Տրակ.	Հայի	Գրիգորի	Հայերու	Գրիգորներու
Բաց.		Հայէ	Գրիգորէ	Հայերէ	Գրիգորներէ
Գործ.		Հայով	Գրիգորով	Հայերով	Գրիգորներով

247. Աչխարհաբարի հոլովմանց մէջ, ձայնաւորներու փոփոխման կանոնը գրեթէ միշտ չի գործադրուիր. պարտէզ, պարտէզի. վայրկեան, վայրկեանի. արշալոյս, արշալոյսի. պաշտօնեայ, պաշտօնեայի. Յովսէփ, Յովսէփի, եւայլն :

ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

248. Հասարակ անուններու եզակի հոլովման բացառութիւններն են հետեւեալները.

249. Ա. ի վերջացող գրեթէ բոլոր բազմավանկ անունները սեռականի մէջ կ'ըլլան նաեւ -այ. հոգի, հոգ-այ, հոգիէ, հոգիով. եկեղեց-այ, սիրեղ-այ, եւայլն : Կան քանի մը ի վերջացող բառեր որոնք միշտ ընդհանուր օրէնքին համեմատ կը հոլովուին ներդաշնակութեան համար, ինչպէս. մատնիէ, հայդիէ, կաղնիէ, եւայլն :

250. Տեղի բառը սեռականի մէջ կ'ըլլայ միշտ տեղոյ. տեղոյս Հայերը : Տեղի բառը ուղղականի եւ հայցականի մէջ երբեք չի գործածուիր. բացառիկ է տեղի տալ բացատրութիւնը :

251. Բ. -ռիւն վերջացող ածանցեալ անունները կ'ըլլան միշտ -ռիւն, -ռիւնի, -ռիւնէ. բարեռիւն, բարեռիւնի, բարեռիւնի, բարեռիւնէ :

252. Գ. -մ վերջացող ածանցեալ անունները կը հոլովուին նաեւ -մն, -մէ. զեղծ-մ, զեղծմն, զեղծ-մէ, զեղծմէ : Իսկ արմատականները միշտ ընդհանուր կանոնին համեմատ կ'ըլլան. դդ-մ, դդ-մէ. frf-մ, frf-մէ :

253. Դ. է- վերջացող գոյականները ընդհանուր կանոնին պէս կրնան հոլովուիլ. բացառաբար անոնց մէկ մասը կ'ըլլան նաեւ -ոյ, -ոէ, -ովէ. թէ-, թ-ոյ, թ-ոէ, թ-ովէ. այսպէս. անէ-, պատէ-, կոէ-, եւայլն. Եւ մէկ մասն ալ կ'ըլլան -ոէ, -ոէ, -ովէ. հաշէ-, հաշ-ոէ, հաշ-ոէ, հաշ-ովէ. այսպէս. արծէ-, հովէ-, եւայլն :

254. Ե. Էլ և -ել վերջացող անբերեւոյթները կ'ըլլան. Էլ-, Էլի, Էլով. -ել-, -ելի, -ելով. երգել, երգել-, երգելի, երգելով. հազ-ել, հազ-ել-, հազ-ելի, հազ-ելով :

255. Զ. Իլ վերջացող անբերեւոյթներուն է՛ն է՛ի կը փոխուի հոլովման առեն. տրտմիլ, տրտմելու, տրտմելի, տրտմելով. ղուռիլ, ղուռելու, ղուռելի, ղուռելով :

256. Է. -ել վերջացող անբերեւոյթներէն երկուքը միայն կը հոլովուին. թող-ել կ'ըլլայ թողել-, թողելի, թողելով կամ թողելով : Զբօսն-ել կ'ըլլայ զբօսնել-, զբօսնելի, զբօսնելով : Մնացեալները չեն հոլովուիր :

257. Ը. Վերջին վանկին մէջ -ուն ունեցող անունները հոլովման մէջ -ը չեն կորսնցներ. սաւ-ան, սաւ-անի, սաւ-անէ, սաւ-անով : Բացառիկ են. ճակ-ատ, ճակատի. բեր-ան, բերանի. զառ-ակ, զառակի :

258. Թ. է պարունակող միավանկ բառերը, ինչպէս վերջին վանկին մէջ է պարունակող բազմավանկ բառերը երբեմն է՛ն կը պահեն հոլովման մէջ. ձէրք, ձէրքէ. նէգ, նէգէ։ Այսպէս. խիթ, շիթ, դիրք, կիրք, կաւիճ, աւեսիս, հայրիկ, խաւիծ, ակին, գոհի, գրգիռ, կարկին, սկիզբ, դաշինք, ապառիկ, խաղալիք, ախտանիշ, և այլն։ Կան այս կարգի բառեր ալ որոնք կը կորսընցնեն է՛ն. գէրք, գրքի. սէրս, սրտի. մէջտ, մտքի։ Այսպէս. գիր, բաժին, մարմին, գեսին, ղուսին, ծաղիկ, ռամիկ, առիթ, խնդիր, երկիր, անկողին, աղախին, և այլն։

259. Սովորութեամբ է որ կը սորվուի թէ ե՛րբ է՛ն կը մնայ և ե՛րբ կը կորսուի այս կարգի բառերուն հոլովման մէջ։ Կարելի է սակայն հետեւեալ կանոնները սահմանել այդ բառերէն ոմանց համար։

260. Հոլովման մէջ է՛ն կը պահեն.

1. Այն միավանկ բառերը, որոնք ի՛ով կը սկսին. իժ, իղձ, իլ, ինձ, իր, և այլն։

2. Այն միավանկ և բազմավանկ բառերը, որոնց մէջ է՛ն միեւնոյն բաղաձայններուն միջև կը գտնուի. բիթ, ցից, շիշ, հիւսիս, մատիս, ծարիր, շաղիղ, բշիշ, փիթիթ, և այլն։

3. Այն բառերը որոնք օտար լեզուէ առնուած են. ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, զենիթ, նատիր, մետրապոլիտ, մագնիս, և այլն։

4. է+ վերջացող բառերը. աղէ+, ընտանէ+, հայրենէ+, ուսէ+, հարսնէ+, բաղնէ+, և այլն։

5. Գոյականաբար գործածուած ածականները. ուրիշ, հետաքրքիր, նորաժին, քաջասիրտ, ղուսարմիտ, անկարեկիր, և այլն։

6. Երբ բառին մէջ է՛ն առաջ — գայ. ցրուիչ, սուին, և այլն։

7. Երբ բառին մէջ է՛ն վերջը — գայ. ատիւն, գոչիւն, հերիւն, և այլն։

261. Հոլովման մէջ է՛ն կը կորսնցնեն.

1. Բոլոր այն բարդ բառերը որոնք էէր, էէ, էէց բայարմատներով վերջացած են. մատենագէր, դրօշակէր, թղթակէց։

2. է՛ մասնիկով վերջացող բառերը. ղուսաւորէ՛, հաւասարէ՛, կատարէ՛, փրկէ՛։ Այս կարգի բառերուն մէջ է՛ն անջինջ կը մնայ երբ անոր ջնջմամբ բաղաձայններու խճողումը յառաջ գայ. սատիրէ՛, գրաբնէ՛, փորագրէ՛։

262. Ժ. — պարունակող միավանկ բառերը, և վերջին վանկին մէջ — պարունակող բազմավանկ բառերը գրեթէ միշտ — ն կը պահեն հոլովման առեն. —ա, —սի. գաղ—թ, գաղ—թի։ Այսպէս. գիտուն, զուարթուն, թաւուտ, ջրմուղ, հարբուխ։ Բացառիկ են սակաւաթիւ բառեր միայն. օգ—ս, օգտի. տես—չ, տեսչի. հողագր—ր, հողագրի. զօրախ—մբ, զօրախմբի. հեծելազ—նդ, հեծելազնդի։

263. Ո՝ պարունակող միավանկ բառեր և վերջին վանկին մէջ — պարունակող կարգ մը բառեր կան, որոնք բացառիկ սեռականներ ալ ունին; և հետեւեալներն են. տուն, տան. շուն, շան. աշուն, աշնան. գարուն, գարնան. անուն, անուան. մանանուն, մանանուան. դերանուն, դերանուան. ժողովուրդ, ժողովրդեան. մանուկ, մանկան. մատուռ, մատրան. դուռ, դրան։

264. ԺԱ. Կարգ մը միավանկ բառեր կան, որոնց սեռականը — կ'ըլլայ. մարդ, մարդ—. մանչ, մանչ—. ձի, ձի—։ Այսպէս կ'ըլլան ընդհանրապէս. ծով, կով, գի, դի, թի, ուշ, հաւ, նաւ, արջ, պահ, գահ, այգ։

265. Սակայն երբ այս բառերէն բարդ բառեր կազմուին, սովորաբար ընդհանուր կանոնին համեմատ

սեռական կ'ըլլան. հիւսիսայգ, հիւսիսայգէ. շոգենաւ, շոգենաւէ. հնոդկահաւ, հնոդկահաւէ։

266. Պապ, երբ նշանակէ մեծ հայր, կ'ըլլայ պապ--, իսկ երբ նշանակէ Հռոմի քահանայապետը, կ'ըլլայ Պապէ։

267. Շահ, երբ նշանակէ վաստակ, կ'ըլլայ շահ--, իսկ երբ նշանակէ Պարսկաստանի վեհապետը, կ'ըլլայ Շահէ։

268. Դաս երբ նշանակէ դասակարգ, կ'ըլլայ դաս--, իսկ երբ նշանակէ դասախօսութիւն, եկեղեցւոյ դաս, կ'ըլլայ դասէ։

269. Մէկ թուական ածականը, երբ գոյականաբար գործածուի, սեռականի մէջ կ'ըլլայ մեկ--։

270. Արեւ կ'ըլլայ արեւ--։

271. ԺԲ. Ժամանակ ցուցնող անունները երեք դասակարգի կը բաժնուին.

1. Ամառ, ամառ---ն, ամառ--ը-ն կամ ամառէ, ամառ--վ։ Այսպէս կը հոլովուին ձմեռ, երեկ, հիմակ, ցորեկ, գիշեր։ Իրիկուն կ'ըլլայ իրիկ---ն, իրիկ--ը-ն, իրիկ--ն--վ։ Վաղը կ'ըլլայ վաղ---ն, վաղ--ը-ն, վաղ--վ։ Առտու կ'ըլլայ առտ---ն, առտ--ը-ն, առտ--ով։

2. Ամեն, ամեն---ն կամ ամենի, ամենի, ամեն--վ։ Այսպէս. ժամանակ, օր, կիս օր, օրհարսակ, եսիլիք։ Տարի կ'ըլլայ տարի կամ տար---ն կամ տար--ոյ, տարի, տարի--վ։ Տարի սեռականի մէջ կ'ըլլայ նաև տարու, երբ մարդու տարիք նշանակէ. Քսան տարու է։ Տարիի բացառականը կ'ըլլայ տարուն հեռաւեալ բացատրութեան մէջ. տարուն տարի։

3. Ժամ, ժամ---ն կամ ժամ--, ժամէ, ժամ--վ։ Այսպէս. հեղ, անգամ։ Շաբաթ կ'ըլլայ շաբթ---ն կամ շաբթ--, շաբթ--ը-ն կամ շաբաթէ, շաբաթ--վ։ Ամիս, ամս---ն կամ ամս--, ամսէ, ամս--վ։ Մահ, թէպէտ

ժամանակ ցոյց չի տար, բայց սեռականին մէջ կ'ըլլայ մահ---ն կամ մահ--։ Դար որ ժամանակ ցոյց կու տայ, չ'ըլլար դար---ն այլ դար--։

272. ԺԳ. Ազգականութեան կապ ցոյց տուող անուններն ալ երեք դասակարգի կը բաժնուին.

1. Հայր, հօր, հօրմէ, հօրմով։ Այսպէս. մայր, եղբայր, և իրենց բոլոր բարդերը. սանամայր, կնքամայր, եւայլն, նոյն իսկ երբ ազգականութեան կապ ցոյց չեն տար. վանահայր, վանամայր, շուսեղբայր, եւայլն։

2. Աղջիկ, աղջկան, աղջիկէ, աղջիկով։ Այսպէս. հարիկ, կնիկ։

3. Ներ, ներոջ, ներոջմէ, ներոջմով։ Այսպէս. աներ, տալ, տագր, քոյր, մօրաքոյր, հօրաքոյր, կեսուր, կին, ընկեր, տեր, տերտեր բառերը, որոնց վերջին երեքը ազգականութիւն ցոյց չեն տար։

273. ԺԴ. Անկանոն կերպով կը հոլովուին հետեւեալ բառերը.

274. Կայար, կայարեր, կայարէ, կայարով։

275. Ճանբայ, ճանբոյ, ճանբէ, ճանբով. այսպէս. տղայ։

276. Լեռ, լերան, լեռնէ, լեռնով. այսպէս. դուռ, թոռ որոնց սեռականն է թոռան։

277. Եզ, եզան, եզէ, եզով. այսպէս. բեռ, հիմ։

278. Զրօ, զրոյի. զրոյէ, զրոյով։

279. Սեր, սիրոյ, սերէ, սիրով։

280. Խնդիր և մարմին բառերը սեռականի և տրականի մէջ կ'ըլլան նաև խնդրոյ և մարմնոյ։

281. Հոգի գործիականի մէջ կ'ըլլայ նաև հոգւով, ինչպէս. հոգւով մարմնով, բոլոր հոգւոյս։

282. Գլուխ, երբ մարդու կամ անասունի գլուխ նշանակէ, կ'ըլլայ գլխոյ, իսկ երբ նշանակէ գրքի գլխակարգութիւն, սեռ, գագաթ կամ երբ բարդ բառ

կազմէ, կ'ըլլայ՝ գլուխի կամ գլխի, դրանագլխի, սահմանագլխի:

283. + վերջացող բառերը, ընդհանուր կանոնին հետեւելով կը հոլովուին, և կը պահեն իրենց +ն. հաւատ+, հաւատ+է, հաւատ+է, հաւատ+ով. այսպէս: կրօն+, փառ+, շինուած+, դժոխ+, աչ+, ոտ+, ձեռ+, շրջուն+, ունգուն+, հարկին+, բոլորտի+, ծնող+, նախնի+, և այլն: Այս բառերը յոքնակիի մէջ ընդհանուր կանոնին համեմատ կը հոլովուին. շրջունք՝ նէրբ՝, ծնողք՝ նէրբ՝, նախնիք՝ նէրբ՝ով, և այլն:

284. Կտրուանք, տեղուանք յոքնակիները եզակիի ձեւով կը հոլովուին և կ'ըլլան. կտրուանքէ, կտրուանքէ, կտրուանքով. տեղուանքէ, և այլն:

285. Երբ բառերը անջատ կը մնան միշտ ընդհանուր օրէնքին համեմատ կը հոլովուին, այսպէս. Զորագեանի Ընթերցաբանութեան մէջ մը: Վիքթոր Հիւկոյի Սովալիէ գրքին մէջ:

286. Հասարակ անուններու յոքնակի հոլովման բացառութիւններն են.

287. Ա. ոյ+ վերջացող յոքնակիները կը հոլովուին սապէս. խաղաքաղաքայ+, խաղաքաղաքայ՝, խաղաքաղաքայնէրբ՝ով:

288. Բ. ն՝ն+ վերջացողները կ'ըլլան. միապետան՝ն+, միապետան՝ն՝, միապետանէրբ՝, միապետանէրբ՝ով:

289. Գ. ե՝ն+ վերջացողները կ'ըլլան. ձախակողմե՝ն+, ձախակողմե՝ն՝, ձախակողմեանէրբ՝, ձախակողմեանէրբ՝ով:

290. Դ. ո՝ն՝ և ո՝մ վերջացող անունները յոքնակի սեռականի և տրականի մէջ կ'ըլլան նաև հետեւեալ կերպով. սովորո՝ն՝, ուսմա՝ն՝, և այլն:

291. Տղամ կ'ըլլայ տղոց, տղոցմէ, տղոցմով:

292. Մարդիկ կ'ըլլայ մարդոց, մարդոցմէ, մարդոցմով:

293. Կանայք սեռականի և տրականի մէջ կ'ըլլայ կանանց, ինչպէս. կանանց յատուկ պատարագ:

294. Նախնիք սեռականի և տրականի մէջ կ'ըլլայ նաև նախնեաց, ինչպէս. նախնեաց ոտամկորեն:

295. Հասարակ անուններու քանի մը յոքնակի հոլովմանց ձեւեր կան որոնք անփոփոխ կը գործածուին աչխարհաբար ալ, կարգ մը բացատրութեանց մէջ. կուսանաց վանք, Ծնունդոց գիրք, Վարք արքոց, և այլն:

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

296. Յատուկ անուններու եզակի հոլովման բացառութիւններն են.

297. Ա. ա՝ վերջացող անունները, ըլլան անձի անուն կամ աչխարհագրական անուն, ընդհանուր օրէնքին համեմատ կը հոլովուին, միայն թէ ա՝էն ետքը յ կ'առնեն. Եւրոպա՝, Եւրոպայի, Եւրոպայէ, Եւրոպայով. այսպէս. Մայա՝, Բանուա՝, Սենա՝, Սեղա՝, և այլն:

298. Բ. է՝ վերջացող անձի անուններն ալ ընդհանուր օրէնքին կը հետեւին, միայն յ կ'առնեն ա՝էն ետքը. Արամէ՝, Արամէ՝յի, Արամէ՝յէ, Արամէ՝յով:

299. Գ. է՝ վերջացող աչխարհագրական անունները հետեւեալ կերպով կը հոլովուին. Ովկիանէ՝, Ովկիանէ՝յի, Ովկիանէ՝յէ, Ովկիանէ՝յով: Սօֆէ՝ և Գօնէ՝ բացառաբար կ'ըլլան սեռականի և տրականի մէջ Սօֆէ՝յի և Գօնէ՝յի:

300. Դ. օ վերջացող անունները սապէս կը հոլովուին. Սանթիակօ, Սանթիակ՝օյի, Սանթիակ՝օյէ, Սանթիակ՝օյով:

301. Ե. պ՝էօ՝ վերջացող անունները կ'ըլլան.

Կոստանդնուպոլիս, Կոստանդնուպոլսոյ, Կոստանդնուպոլսէ, Կոստանդնուպոլսով։ Այսպէս՝ Տրիպոլիս, Ադրիանուպոլիս, և այլն։

302. Զ. Վերջին վանկին մէջ -, է, -- պարունակող յատուկ անունները այդ գիրերը չեն կորսընցներ հոլովման մէջ. Սուս-ն, Սուս-նի. Տիրսիմ, Տիրսիմի. Կ--ր, Կ--րի։

303. Աստուած երբ տիեզերքի արարիչը նշանակէ, սապէս կը հոլովուի. Աստուծոյ, Աստուծմէ, Աստուծմով։ Իսկ երբ նշանակէ չաստուած, այն առեն գլխագրով չի գրուիր, և ընդհանուր կանոնին համեմատ կը հոլովուի։

304. Աստուածածին կը հոլովուի սապէս. Աստուածածնայ, Աստուածածնէ, Աստուածածնով. այսպէս նաև Էջմիածին։ Աստուածածին երբ նշանակէ Աստուածամայր սուրբերը, այն առեն ընդհանուր օրէնքին կը հետեւի. Աստուածածինին, Աստուածածինէն, Աստուածածինով։

305. Հայ և Չին կ'ըլլան սեռականի և տրականի մէջ. Հայ--, Չին--։

306. Զատիկ հոլովման մէջ ի-ն կը կորսնցնէ, և կ'ըլլայ Զատկի, Զատկէ, Զատկով։

307. Խր--մ կ'ըլլայ Խրման, Խրումէ, Խրումով։

308. Սովորական գրաբարի ձեւով կը հոլովուին տոնական և կրօնական անունները. Սահակայ և Մեսրոպայ սօնը, Մծբնայ Հայրապետը, Յովհաննու Կարապետին, Սրմաշու վանքը, և այլն։

309. Յատուկ անուններու յոգնակի հոլովման բացառութիւններն են.

310. Ա. ոյ+ վերջացողները կ'ըլլան. Էրզրումցի+, Էրզրումցոյ, Էրզրումցիներէ, Էրզրումցիներով։

311. Բ. կան+ վերջացողները կ'ըլլան. Հռոմեական+, Հռոմեականաց, Հռոմեականներէ, Հռոմեականներով։

312. Գ. ական+ վերջացող յոգնակիները կ'ըլլան. Յակոբեան+, Յակոբեանց, Յակոբեաններէ, Յակոբեաններով։

313. Գրաբարի ձեւով յոգնակի եղող ազգերու անունները կ'ըլլան՝ սեռականի և տրականի մէջ. Հայք, Հայոց. Յոյնք, Յունաց. Հրեայք, Հրէից. Հեղինք, Հեղենաց. Պարսիկք, Պարսկաց. Պարսք, Պարսից. Մարք, Մարաց. Վիրք, Վրաց. Հնդիկք, Հնդկաց. Պուլկարք, Պուլկարաց. Ռուսք, Ռուսաց. Աղուանք, Աղուանից, և այլն։ Բոլոր այս անունները հայկականի, բացառականի և գործիականի մէջ ընդհանուր օրէնքին կը հետեւին։

314. Օտար յատուկ անուններու եզակի և յոգնակի հոլովման գրաբար ձեւեր կան, որոնք աշխարհաբարի մէջ ալ նոյնութեամբ կը գործածուին. Սգախոցով, Կապէց ծով, և այլն։

ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ

	Եզակի	Յոքնակի	Եզակի	Յոքնակի
Ո. Հ.	Դաշտ	Դաշտեր	Պատկեր	Պատկերներ
Ս. Տ.	Դաշտի	Դաշտերու	Պատկերի	Պատկերներու
Բ.	Դաշտէ	Դաշտերէ	Պատկերէ	Պատկերներէ
Գ.	Դաշտով	Դաշտերով	Պատկերով	Պատկերներով

ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ի վերջացող բառեր

	Եզ.
Ո. Հ.	Եկեղեցի
Ս. Տ.	Եկեղեցւոյ
Բ.	Եկեղեցիէ
Գ.	Եկեղեցիով

Այսպէս. հոգի, գինի, կղզի, շոգի, և այլն։ «Դաշտ»ին պէս մատնի, հայլի, կաղնի, և ն։

Բ.

ութիւն վերջացող բառեր

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Աշխատութիւն	Աշխատութիւններ
Ս. Տ.	Աշխատութեան	Աշխատութեանց
Բ.	Աշխատութենէ	Աշխատութիւններէ
Գ.	Աշխատութեամբ	Աշխատութիւններով

Այսպէս. ծուլութիւն, ուրախութիւն, և ն։

Գ.

ում վերջացող բառեր

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Խոստում	Խոստումներ
Ս. Տ.	Խոստման	Խոստմանց
Բ.	Խոստումէ	Խոստումներէ
Գ.	Խոստմամբ	Խոստումներով

Այսպէս. հիացում, յուզում, ուսում, և ն։ «Դաշտ»ին պէս. քրքում, դղում։

Դ.

իւ վերջացող բառեր

	Եզ.	Եզ.
	Թիւ	Հաշիւ
	Թուոյ	Հաշուի
	Թուէ	Հաշուէ
	Թուով	Հաշուով

«Թիւ»ին պէս. անիւ, պատիւ, կռիւ, և ն։ «Հաշիւ»ին պէս. հովիւ, արծիւ, և այլն։

Ե.

ել և ալ վերջացող աներեւոյթներ

	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Երգել	Հազալ
Ս. Տ.	Երգելու	Հազալու
Բ.	Երգելէ	Հազալէ
Գ.	Երգելով	Հազալով

Այսպէս. սիրել, կրել, խաղալ, սողալ, և այլն։

Զ.

իլ վերջացող աներեւոյթներ

	Եզ.	Եզ.
	Խօսիլ	Լսուիլ
	Խօսելու	Լսուելու
	Խօսելէ	Լսուելէ
	Խօսելով	Լսուելով

Այսպէս. նայիլ, Քառիլ, տպուիլ, և այլն։

Է.

ուլ վերջացող աներեւոյթներ

	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Թողուլ	Զբօսնուլ
Ս. Տ.	Թողելու	Զբօսնելու
Բ.	Թողելէ	Զբօսնելէ
Գ.	Թողլով կամ Թողելով	Զբօսնելով

Ը.

Վերջին վանկին մէջ ա պարունակող երկու բառեր

	Եզ.
	Բերան
	Բերնի
	Բերնէ
	Բերնով

Այսպէս. ճակատ, զաւակ։

Թ.

Վերջին վանկին մէջ ի պարունակող բառեր

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Գիրք	Գիրքեր
Ս. Տ.	Գրքի	Գիրքերու
Բ.	Գրքէ	Գիրքերէ
Գ.	Գրքով	Գիրքերով

«Գիրք»ին պէս. միտք, սիրտ, գետին, ծաղիկ, մատենագիր, դրօշակիր, Քղքակից, փրկիչ, լուսաւորիչ, և այլն։

«Դաշտ»ին պէս. իր, իղձ, հիւսիս, մատիտ, ապրիլ, մայիս, ընտանիք, հարանիք հետաքրքիր, ուրիշ, ցրուիչ, գոչիւն, և այլն։

Ժ.

Վերջին վանկին մէջ ու պարունակող բառեր

	Եզ.	Եզ.	Յոք.	Եզ.
Ո. Հ.	Տեսուչ	Տուն	Տուներ	Աշուն
Ս. Տ.	Տեսչի	Տան	Տուներու	Աշնան
Բ.	Տեսուչէ	Տունէ	Տուներէ	Աշունէ
Գ.	Տեսուչով	Տունով	Տուներով	Աշունով

	Եզ.	Եզ.	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Անուն	Մատուռ	Ժողովուրդ	Մանուկ
Ս. Տ.	Անուան	Մատուռաց	Ժողովրդեանց	Մանկան
Բ.	Անունէ	Մատուռէ	Ժողովուրդէ	Մանուկէ
Գ.	Անունով	Մատուռով	Ժողովուրդով	Մանուկով

«Տեսուչ»ին պէս. օգուտ, հոգաբլուր, զօրախումբ, հեծելազունդ, ենս — «Տուն»ին պէս. շուն։ — «Աշուն»ին պէս. գարուն։ — «Անուն»ին պէս. մականուն, դերանուն, բայանուն։ — «Մատուռ»ին պէս. դուռ։

ԺԱ.

Կարգ մը միավանկ բառեր

	Եզ.	
Ո. Հ.	Նաւ	«Նաւ»ին պէս. մարդ, մանչ, ձի, ծով, կով, դի, դի, Քի, էշ, արջ, հաւ, պապ, գահ, պահ, այգ, շահ, եւ երբեմն ալ դաս, մահ, ժամ, հեղ, մէկ, տարի, արև։
Ս. Տ.	Նաւու	
Բ.	Նաւէ	
Գ.	Նաւով	

ԺԲ.

Ժամանակ ցուցնող բառեր

	Եզ	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Ամառ	Առտն	Ժամ
Ս. Տ.	Ամառուան	Առտնուան կամ Առտնի	Ժամուան կամ Ժամու
Բ.	Ամառուրքն կամ Ամառէ	Առտնէ	Ժամէ
Գ.	Ամառով	Առտնով	Ժամով

«Ամառ»ին պէս. ձմեռ, երէկ, հիմակ, ցորեկ, գիշեր։ Նոյնպէս. իրիկուն, վաղը, առաւօտ։

«Առտն»ին պէս. ժամանակ, օր, կէս օր, օրհարսակ, եռինք։ Նոյնպէս. տարի։

«Ժամ»ին պէս. հեղ, անգամ։ Նոյնպէս. շաբաթ, ամիս, մահ։

ԺԳ.

Ազգականութեան կապ ցուցնող բառեր

Ո. Հ.	Հայր	Աղջիկ	Ներ
Ս. Տ.	Հօր	Աղջկան	Ներոջ
Բ.	Հօրմէ	Աղջիկէ	Ներոջմէ
Գ.	Հօրմով	Աղջիկով	Ներոջմով

«Հայր»ին պէս. մայր, եղբայր, սանամայր, կնքամայր, եղբ։ Նոյնպէս. վանահայր, վանամայր, լուսեղբայր, եայլն։

«Աղջիկ»ին պէս. էրիկ, կնիկ։

«Ներ»ին պէս. աներ, տալ, քոյր, հօրաքոյր, մօրաքոյր, կեսուր, կին, տագր։ Նոյնպէս. տէր, տանտէր, տէրտէր։

ԺԴ.

Անկանոն հոլովումներ եզակիի մէջ

Ո. Հ.	Սէր	Կայսր	Գլուխ
Ս. Տ.	Սիրոյ	Կայսեր	Գլխու
Բ.	Սէրէ	Կայսրէ	Գլխէ
Գ.	Սիրով	Կայսրով	Գլխով

	Եզ.	Յոր.	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Ձամբայ	Ձամբաներ	Տղայ	Զրօ
Ս. Տ.	Ձամբու	Ձամբաներու	Տղու	Զրոյի
Բ.	Ձամբէ	Ձամբաներէ	Տղէ	Զրոյէ
Գ.	Ձամբով	Ձամբաներով	Տղով	Զրոյով

	Եզ	Յոր.	Եզ.	Յոր.	Եզ.	Յոր.
Ո. Հ.	Լեռ	Լեռներ	Թոռ	Թոռներ	Եզ	Եզեր
Ս. Տ.	Լեռան	Լեռներու	Թոռան	Թոռներու	Եզան	Եզերու
Բ.	Լեռնէ	Լեռներէ	Թոռնէ	Թոռներէ	Եզէ	Եզերէ
Գ.	Լեռնով	Լեռներով	Թոռնով	Թոռներով	Եզով	Եզերով

«Լեռ»ին պէս. դուռ։ «Եզ»ին պէս. բեռ, հիմ։

ԺԵ.

Ցիր, կանգ, եանգ վերջացող յոքնակիներ

Ո.	Քաղաքացիք	Բողոքականք	Աչակողմեանք
Հ.	Քաղաքացիներ	Բողոքականներ	Աչակողմեաններ
Ս. Տ.	Քաղաքացոց	Բողոքականաց	Աչակողմեանց
Բ.	Քաղաքացիներէ	Բողոքականներէ	Աչակողմեաններէ
Գ.	Քաղաքացիներով	Բողոքականներով	Աչակողմեաններով

ԺԶ.

Անկանոն հոլովումներ յոքնակիի մէջ

Ո.	Մարդիկ	Կանայք	Տղաք
Հ.	Մարդիկ	Կիներ	Տղաք
Ս. Տ.	Մարդոց	Կանանց	Տղոց
Բ.	Մարդոցմէ	Կանանցմէ	Տղոցմէ
Գ.	Մարդոցմով	Կանանցմով	Տղոցմով

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ

	Եզ.	Յոգ.
Ո. Հ.	Պետրոս	Պետրոսներ
Ս. Տ.	Պետրոսի	Պետրոսներու
Բ.	Պետրոսէ	Պետրոսներէ
Գ.	Պետրոսով	Պետրոսներով

ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

իա վերջացող անձի անուններ

	Եզ.
Ո. Հ.	Եւդոքսիա
Ս. Տ.	Եւդոքսիայի
Բ.	Եւդոքսիայէ
Գ.	Եւդոքսիայով

Բ.

իա վերջացող աշխարհագրական անուններ

Եզ.
Իտալիա
Իտալիոյ
Իտալիայէ
Իտալիայով

Գ.

ա վերջացող անուններ

	Եզ.	Եզ.
Ո. Հ.	Աննա	Քանատա
Ս. Տ.	Աննայի	Քանատայի
Բ.	Աննայէ	Քանատայէ
Գ.	Աննայով	Քանատայով

Դ.

օ վերջացող անուններ

Եզ.
Սանթիակօ
Սանթիակոյի
Սանթիակոյէ
Սանթիակոյով

Ե.

պոլիս վերջացող անուններ

	Եզ.
Ո. Հ.	Կոստանդնուպոլիս
Ս. Տ.	Կոստանդնուպոլսոյ
Բ.	Կոստանդնուպոլսէ
Գ.	Կոստանդնուպոլսով

Զ.

Անկանոն հոլովումներ եզակիի մէջ

Ո. Հ.	Աստուած	Աստուածածին	Էջմիածին
Ս. Տ.	Աստուծոյ	Աստուածածնայ	Էջմիածնայ
Բ.	Աստուծմէ	Աստուածածնէ	Էջմիածնէ
Գ.	Աստուծմով	Աստուածածնով	Էջմիածնով

Ո. Հ.	Հայ	Զին	Զատիկ	ԽՔում
Ս. Տ.	Հայու	Զինու	Զատկի	ԽՔման
Բ.	Հայէ	Զինէ	Զատկէ	ԽՔումէ
Գ.	Հայով	Զինով	Զատիկով	ԽՔումով

Է.

Ական, ցիք, կանք վերջացող յոքնակիներ

Ո.	Օսմանեանք	Պոլսեցիք	Հռոմէականք
Հ.	Օսմանեաններ	Պոլսեցիներ	Հռոմէականներ
Ս. Տ.	Օսմանեանց	Պոլսեցոց	Հռոմէականաց
Բ.	Օսմանեաններէ	Պոլսեցիներէ	Հռոմէականներէ
Գ.	Օսմանեաններով	Պոլսեցիներով	Հռոմէականներով

Ը.

Անկանոն հոլովումներ յոքնակիի մէջ

Ո.	Հայք	Ցոյնք	Հրեայք	Պարսիկք
Հ.	Հայեր	Ցոյներ	Հրեաներ	Պարսիկներ
Ս. Տ.	Հայոց	Ցունաց	Հրէից	Պարսկաց
Բ.	Հայերէ	Ցոյներէ	Հրեաներէ	Պարսիկներէ
Գ.	Հայերով	Ցոյներով	Հրեաներով	Պարսիկներով

Ո.	Հնդիկք	Աղուանք	Գուլկարք	Մարք
Հ.	Հնդիկներ	Աղուաններ	Գուլկարներ	Մարեր
Ս. Տ.	Հնդկաց	Աղուանից	Գուլկարաց	Մարաց
Բ.	Հնդիկներէ	Աղուաններէ	Գուլկարներէ	Մարերէ
Գ.	Հնդիկներով	Աղուաններով	Գուլկարներով	Մարերով

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՇԵՓՈՐԻԿԸ

Ժիլ Պլասի հեղինակը շատ խուլ էր, կ'ըսեն, բայց և այնպէս յետին ծայր զուարթ։ Շեփորիկ մը ունէր միշտ իր ծոցը, ու երբ լսելու պէտք զգար, զայն կը հանէր և ականջին կը տանէր։ — Այս է իմ բարերար ապաւէնս, կ'ըսէր շեփորիկը ցոյց տալով։ Երբ տեղ մը երթամ և նոր դէմքեր տեսնեմ, կարծելով որ բանիմասէր մարդիկ պիտի գտնեմ՝ շեփորիկս կը գործածեմ. երբ կը նայիմ որ յիմար են, իսկոյն շեփորիկս կը պահեմ ու կ'ըսեմ. «Պարոնե՛ր, գրաւ կը դնեմ որ իմ ուշադրութիւնս կարող չէք գրաւել»։

Արդ, կ'ուզե՞ս հանդիսատ գտնել և նպատակիդ դիմել անվրդով, Լը Սաժի ըրածը ըրէ՝ մտապէս։ Իմ մասիս՝ երբ չորս կողմս կը տեսնեմ պիծակներ որ կը ըզգան, ժժզուկներ որ կը ազգան, ժիժիներ որ կը ժժան՝ շատ մը մտքիս շեփորիկը կը խցեմ, և տրժուղ կրմուղ կը դառնամ. իսկ երբ կը նայիմ որ խելք սորվելու բան կայ, նոյն իսկ տղեկի մը կողմէ, ինչպէս կ'ըսէ Ժան Ժաք Ռուսօ, պատասխանի արժանի և բանաւոր վէճի նիւթ, և հետեւապէս լոյս կայ, իսկոյն աչքս ու ականջս կը բանամ և ուշադիր մտիկ կ'ընեմ։

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ (¹)

83. Զրուցազրել այս հատուածը, և դնել կետադրութեան նշանները։

84. Գրաւոր հոլովել այս հատուածին մէջ գտնուած բոլոր յատուկ և հասարակ անունները, օրինք լեղհանուր կանոնին տարբեր հոլովումներ ունին։

(¹) Մատթէոս Մամուրեան (1840—1901), նշանաւոր ուսուցիչ, հրապարակագիր և գրագէտ, 1871էն մինչև իր մահը խմբագրած է Արեւելեան Մամուլ հանդէսը. ունի բազմաթիւ կարեւոր հրատարակութիւններ։

85. Բերանացի հոլովել հետեւեալ բառերուն եզակին.

Թոնիր, հրթիռ, Հոռի, հունտ, ինչք, քիթ, եղունգ, Քաղիք, երդիք, կաւիճ, կորիւն, կաղին, ջաչէր, վարիչ, շամիրաբ, փուշ, սուտ, ճանճանաւ, ցեկանաւ, հօրեղբայր, խայթուածք, դաշինք։

86. Հոլովել բերանացի հետեւեալ բառերուն յոգնակին.

Դիցուհի, տեղ, պանդան, դռնապան, կովկասցի, հիւանդութիւն, սպասում, ծնողք, ընտանիք, ստոյիկեան, Ռուս, Ապուան, Կորնթացի, Հնդիկ։

87. Հետեւեալ խօսքերուն մէջ փակագիծով գրուած բառերը պէտք եղած հոլովին դարձնել.

Բարիզ պիտի երթամ Մարսիլիոյ (ճամբայ)։

Ալիմպոսի գագաթը ելլելու համար պէտք է օրերով (լեռ) կողէն վեր մագլցիլ։

Մեր մէջ շատերը (եզ) միս չեն ուտեր։

Ձեր առաջարկութիւնները (սէր) կ'ընդունէի, եթէ (մայրս) հրաման առած ըլլայի։

(Աղջիկ) մը ամէնէն գեղեցիկ ձիրքը իր անոյշ բնաւորութիւնն է։

Հռոմէական Հայերը (Պապ) հոգեւոր իշխանութեան կը հպատակին։

Ատուածաշունչը կը սկսի (Ծնունդք) գրքով։

Միաբանական առաջին ուխտը հաստատած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Իննակնեան վանքը հիմնելով, որ հիմայ (Դլակ) Ս. Կարապետ կը կոչուի։

(Մարք) ազգը Ասիոյ հին ժողովուրդներէն մէկն է։

ԳԵՂՋԿՈՒՀԻՈՅՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Լուիզ մեռաւ տասնըհինգ տարու,
Հովէն հընձբուած ծաղի՛կ Քուփերու,
Դագաղը չունէր բազմամարդ Քափոր.
Քահանայ մ'եղաւ լոկ յուղարկաւոր,
Եւ տիրացու մը մերթ՝ ձայնով տըկար,
Մահուան երգերուն պատասխան կու տար։
Չի Լուիզ խեղճ էր, և եթէ իսկ մահէն
Աղքատը զուրկ է հարուստին փառքէն։

Տոսախէ խաչ մը, ծածկոյթ մը հինուկ
Միակ զարդն եղան դագաղին անշուք։
Եւ դիաքաղն ալ՝ մարմինն աննըման
Երբ իր աւանէն տարաւ գերեզման,
Հազիւ կոչնակը՝ գիւղին տուաւ զոյժ
Թէ Քըռաւ իր կոյսն ամէնէն անոյշ։
Եւ այսպէս մեռաւ ... Քաւուտներ դալար,
Քաղցրաբոյր ձորեր, արտեր ու անտառ
Անցնելով իջաւ Քափօրն այգուն հետ
Երբ նոր կը փըթթէր Ապրիլ ծաղկաւէտ,
Եւ ձիւն ծաղիկով, արցունքներով ցող
Կ'ողողէր դագաղն որ չունէր լացող։
Սըրափուշն հագեր ճերմակ վարդ գոհար
Ամէն ոստի ծայր փունջ մը կը գողար։
Ամէն կողմ բոյր էր, գեղգեղանք անվերջ,
Ամէն մէկ Քըռչուն կ'երգէր բոյնին մէջ։

ՊՈՒԶԷՕ (¹)

88. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

(¹) Պուիզէօ, Ֆրանսացի բանաստեղծ, ծնած է 1806ին և մեռած 1858ին։

ՀՈԼՈՎՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

315. ՈՒՂՂԱԿԱՆ. — Ուղղական հոլովը կը գործածուի.

1. Իբր ենթակայ, և կը պատասխանէ ո՞վ կամ ի՞նչ բան հարցման. Հոմերոսը աղջիկան մը զարդն է:

2. Իբր ստորոգեալ, և կը պատասխանէ ի՞նչ հարցման. Այս մարդը դեռ տղայ է:

3. Իբր կոչական. Ա՜խ՝ մարդ՝ ինձի:

4. Իբր բացայայտիչ. Մամուկ դրդիչը:

5. Իբր ածականի խնդիր. Բառն ինքը շայն է. հոբէր չիս ծանր է:

316. ՀԱՅՑԱԿԱՆ. — Հայցական հոլովը կը գործածուի.

1. Իբր սեռի խնդիր, և կը պատասխանէ զո՞վ կամ ի՞նչ բանը հարցման. Բարկութիւնը դուռնէ կը բանդէ:

2. Իբր բնութեան խնդիր.

Ա. Երբ դէպ ի տեղ մը շարժում ցոյց կու տայ, և կը պատասխանէ (դէպ ի) ո՞ւր հարցման. Հայրս ամեն օր ը՜ն՜ց կ'երթայ: Մեր դրացւոյն տղան ծ՜վը ինկաւ:

Բ. Երբ տեղի մը մէջ գաղարում կը ցուցնէ, և կը պատասխանէ ո՞ւր հարցման. Ես դուռը կը կենամ: Սիրիկեի անդամները զարհուրելի գազաններ կան: Այս աղջիկը ուրբ ակնոց դրեր է: Մոդ մասնի ջրայ:

3. Իբր ստորոգեալ, երբ անուանեալ, կոչեալ, կարծեալ, ճանչնալ, ընտրեալ, կարգեալ, ընեալ, դնեալ, և այս իմաստով գործածուած ուրիշ ներգործական բայի մը ընկերացած է, և սեռի խնդիրին ինչ բլլալը կը ցուցնէ. Զքեզ տոյր անուանեցի: Զքեզ ճ՜ուդ կարծեցի: Զինքը ի՜ուղ ըրի:

317. ՍԵՌԱԿԱՆ. — Սեռական հոլովը կը գործածուի.

1. Իբր յատկացուցիչ, և կը պատասխանէ որո՞ւն կամ ի՞նչ բանի հարցմանց. Պատուհանին վարագոյրը բռնկեցաւ:

2. Իբր ածական.

Ա. Երբ կը ցուցնէ տարիք, աստիճան, արժէք. Քսան տարեկան մը: Բարձրագոյն կարգէ աշակերտներ: Հարիւր ոսկիէ մասնի մը:

Բ. Վերջ, ներս, դուրս, առաջ, առջեւ, քով, ետեւ, ետք, վեր, վար, տակ, դիմաց, վրայ, և այլն բառերուն մէջ. Վերջի տողը, Ներսի հայրիկ, Դուրսի սենեակը:

3. Իբր ածականի խնդիր. Դարբերու հաւաքիչ, Հաշիւներու յարդարիչ:

318. ՏՐԱԿԱՆ. — Տրական հոլովը կը գործածուի իբր բնութեան խնդիր, հետեւեալ կերպով.

Ա. Երբեմն չարժուած ցոյց կու տայ, և կը պատասխանէ որո՞ւ, ինչ բանի հարցմանց. Ներեցէք ինձ: Կրակէն մոտեցէք: Ս. Պարբերին խնդրագիր տուեցաւ: Լսելու եկեր էր:

Բ. Երբեմն ժամանակի գաղափար կու տայ, և կը պատասխանէ ե՞րբ հարցման. Մարդին գարունը կը սկսի: Կեսգիշերին դուրս եղաւ: Ժամը երկուին կ'արթնանամ: Այս անգամուն չյաջողեցաւ: Զիմբը տեսնելու՝ ճանչցայ: Ամառուան տաքին ճամբայ ելլելը կրնայ վնասակար ըլլալ: Այս օրին դուրս եղելու չէ: Հայոց տարին նորոգուեցաւ 552ին: Ամառ ձմեռ առտուան ժամը մէկին կ'եղեամ:

Գ. Ընել, ծախել, գնել, զարնել, նմանիլ, և այլն բայերուն քով յատուկ գործածութիւն մը ունի երբեմն. Ատոր խենդութիւն կ'ըսեն: Այս գիրքը հինգ ղրուշի գնեցի: Այդ հագուստիդ գոյնը կանանչի կը զարնէ: Սա տղան կարդալի կը նմանի:

Դ. Իբր ածականի խնդիր. Վարձքը տարեկան արժանի: Պարտականութիւն կարոս:

Ե. Կան ուրիշ պարագաներ ալ, որոնցմէ յիշենք մէկ քանի օրինակներ. Այս իրիկուն յիշեցի եմ: Աղբէն կեցեր էին: Հարիւրին հինգ տոկոս կը սանանամ:

319. ԲԱՑԱՌԱԿԱՆ. — Բացառական հոլովը կը գործածուի.

1. Իբր ածական, երբ նիւթ կամ տեսակ ցոյց կու տայ. Մանրանկար վերարկու: Բրդէ սանդուխ:

2. Իբր բնութեան խնդիր, երբ պատասխանէ որմէ՞, ինչ բանէ հարցմանց. Քաղաքէ դուրս: Կարդացած գրքէս զոհ եմ: Տունէն դուրս եղեր չեմ ուզեր: Քրիստոս Յովհաննէս Մկրտիչէն մկրտուեցաւ: Խելքէ դարեր էին: Աշխատանքէն մի՛ ձանձրանար: Պաշտօնէս հրաժարեցայ: Բրդէ-ընդէն մոլեգներ էր: Կարդալէն աչքերը տխրացան:

3. Իբր ածականի խնդիր. Ալքէ հեռու: Հոգիէդ զերծ, Մեղքէ-բան-ընդէն զուրկ:

320. Տրականի ձեւով և բացառականի իմաստով կը գործածուին երբեմն կարգ մը բառեր. Ընդդիմը ընդդէմ՝ անշարժ մնաց: Սատիկ վախէն շփոթեցաւ: Ատիկա գոռերէն չեր անցներ: Լաւագոյն է սակայն, շփոթութեան տեղի չտալու համար, բացառականի ձեւով գործածել սապէս. Ընդդիմը ընդդէմ՝ անշարժ մնաց: Վախէն շփոթեցաւ: Ատիկա գոռերէն չեր անցներ:

321. ԳՈՐԾԻԱԿԱՆ. — Գործիական հոլովը կը գործածուի.

1. Իբր բնութեան խնդիր, երբ կը պատասխանէ ինչո՞վ հարցման. Մեր կրովը յաջողեցանք: Կողքերով ժողվեցին: Դրքով յաղթեցինք:

2. Իբր գոյականի խնդիր. Աբեղով բժիշկ: Հաստատով քրիստոնեայ: Աղքատով Հայ:

3. Իբր ածականի խնդիր. Վարքերով լեցուն կողով մը: Քաջութեամբ նշանաւոր զօրավար մը:

4. Մակբայի իմաստով, երբ կը նշանակէ.

Ա. Ամբողջութիւն. Տուն-ով տեղով մեկնեցան:

Բ. Ժամանակի երկարութիւն. Ամիսներով սպասեցինք: Այս իմաստով միշտ յոգնակի կը գործածուի:

Գ. Տեղւոյ տարածութիւն. Գետին երկայնութեամբ տարածուեր էին: Ցանմի ճամբով պիտի երթանք:

Դ. Որոշ ժամանակ մը. Սողոմոնի օրով՝ ոսկին եւ արծաթը արժէք չունէին:

Ե. Ժամանակի անպատեհութիւն. Գիշերով ո՞ւր կ'երթաս. Մեծ պահք օրով հաւ կ'ուտուի՞:

5. Իբր ածական, երբ նշանակէ ունեցող. Երկու ֆէնիով (երկֆեղկ) դուռ: Զորս ոտով (չորքոտանի) անասուն: Կարճ հասակով (կարճահասակ) աղջիկ: Այսպէս ձեւացած են ուժով, գինով, հանով, խելով ածականները:

322. Հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական հոլովները կը գործածուին նաև իբր նախադրութեան խնդիր, ինչպէս. իբրեւ մարդ, ոսդիմացդ, ֆեղի հետ, ֆեղնի զաս, սրտով մօտ:

ԿՈՉԱԿԱՆ

323. Կոչական կ'ըսուի այն բառը, զոր կ'ուղղենք անձի մը կամ իրի մը, ինչպէս. Աստուած, երկի՛նք:

324. Կոչականը յատուկ հոլով մըն է, որ ուղղականի և հայցականի ձեւը ունի, կրնայ ըլլալ եզակի կամ յոգնակի, ու միշտ կը շեշտուի:

325. Կոչականը՝ առաջին վանկին վրայ կը շեշտուի խօսակցութեան մէջ, ինչպէս. Ե՛ղբայր, դուն գիտես որ հիւանդ եմ: Իսկ երբ մինակ գործածուի, մանաւանդ մէկը կանչելու համար, վերջին վանկին վրայ կը շեշտուի. Ցակո՛բ, Ցակո՛բ, հո՛ս եկուր:

326. Կոչականը չի շեշտուիր, երբ իրմէ առաջ շեշտեալ բառ մը ունի, ինչպէս. Սիրելի՛ եղբայր. Տէ՛ր Աստուած:

327. Կոչականը իր ածականին հետ, եթէ ունի, միշտ երկու ստորակէտով կը բաժնուի նախորդ ու յաջորդ բառերէն, ինչպէս. Ողորմի՛ ինձի, Տէ՛ր Աստուած, եւ մի՛ թողուր զիս:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԳԵՏԸ

Սա ահագին բարձրութենէն վար՝ ուրկէ անցնող մարդը կրիայի մը շարժող խեցիին կը նմանի, ու պարապ անդունդ մը իր լայն երախը բացած կարծես կը յօրանջէ, այս հակայ ապառաժներուն տակէն գետն է որ վար կու գայ: Ալիքները՝ տափակ, մաշած քարերուն կը զարնեն խուլ շառաչմամբ, փրփուրներ, ճերմակ պղպջակներ ցատկեցնելով: Անընակ խռպան բնութիւնը իր աւանդական հողով ու քարով նոյնը մնացեր է. ասդին անդին օձի շապիկներ թափթփած են, ու սարդի երկայն թելեր կ'երերան մեծ պարապէն դարվար: Վարը, գետը ամոյն, մառախլապատ, իր տիտան օձի հասակով պառկած՝ կ'երթայ երկայն, գլուխ կու տայ հորիզոնին վրայ, ու կը ծռի կը կորսուի: Բարձրէն անցնող թռչունները փետուրներ վար կը ձգեն, որ դարձդարձիկ ոլործուն պտոյտներով վար կ'իջնեն. կամ քարի կտոր մը յանկարծ մողէզի մը վազքէն փրթելով՝ վար կը վազէ դէպ ի գետը, վարերը, խորունկը թնդացնելով: Դէմը, հորիզոնին վրայ լեռներ կան խիտ անտառներով ծածկուած, որոնց թաւ կանանչը հոծ ստուերներու հետ կը խառնուի, ու կիսատ մթութիւն մը կու տայ: Այդ ծառերուն մէջ պատուրտած հիւղակները ճերմակ երդիքնին կը ցուցնեն ասդին անդին կիսով թաւուտի մէջ թաթխուած: Այս պակուցիչ բարձրութենէն վար, ուր մահուան անդունդը կոյր աչքով մը երկինքն ի վեր կը նայի, և ուր արեւուն լոյսը բեկբեկելով՝ ծիրանիի բալակ շառաւիղներ կը ցանցնէ, ուր

գետը իր անյատակ կոնակին վրայէն ալիքներ կը ճղէ, այս ապառաժներու բարձրութենէն մարդ մը վար ինկած է։

ՌՈՒԲԷՆ ՉԱՐԴԱՐԵԱՆ (¹)

89. Զրուցագրել այս հատուածը, և կետադրութեան նշաններ դնել։

90. Բացատրել այս հատուածին մէջ գործածուած հետեւեալ բառերը.

Թեցի, երախ, խոպան, աւանդական, գլուխ տալ, դարձդարձիկ, պակուցիչ, բեկբեկել, շառաւիղ, ճղել։

91. Ըսել թէ ինչ պաշտօնով գործածուած են ստորագծուած ուղղականները հետեւեալ խօսքերու մէջ.

Կարապը ջրային Թռչուններու ամէնէն սքանչելին է։—Շեղամարկեղը հերկելու գործիք մըն է։—Մեր մորթին վրայ փոքրիկ վտառներ կան, որոնք ծակտիկ կը կոչուին։—Օդին իշխանը, արծիւը, միշտ արեւուն կը նայի։—Ինչպէս բոցը, նոյնպէս այ հիացումը կը պակսի, երբ չ'աւելնար։—Ռիշիէօ Հենրիկոս Դ-ի բաղաքականութիւնը շարունակեց, և Լուդովիկոս ԺԴ-ին պատրաստեց։—Ոսպարտացւոց ամէնէն մեծ փառքն էր իրենց զաւակներուն ստացած վէրքերը։

92. Ըսել թէ ինչ պաշտօնով գործածուած են ստորագծուած հայցականները հետեւեալ խօսքերուն մէջ.

Ուշադրութեամբ դիտեցէ՛ք Թիթեռնիկին թեւերը, և տեսէ՛ք թէ ի՞նչ նուրբ արուեստով յօրինուած են։—Ցամաքադէպ երկրաշարժներ կը կործանեն Ամերիկայի քաղաքներ։—Եթէ կայծակը որ և է մեռաղի մը վրայէն անցնի, կը հալեցնէ զայն, և օդին մէջ կը ցնդեցնէ։—Ժ.Ը. դարուն վերջերը Յովսէփ Արղութեանց Արքեպիսկոպոսը Դրիգորուպոլիս հայաբնակ քաղաքը հիմնեց Ռուսաստանի մէջ։—Հինաւուրց քրմուհիներ եռոտանիներու վրայ նստած կը ներկայացնեն պատկերներու մէջ։—Դիշերներ կանուխ անկողին մտնել՝ և առաւուներ կանուխ ելլել՝ գլխաւոր պայմաններն են տղու մը առողջութեան։—Եթէ մեր պարտքերը հոգ մը նկատենք, դժբախտ կ'ըլլանք, իսկ եթէ ուրախութեամբ կատարենք զանոնք, ամէնուն նախանձելի կը դառնանք։—Տղաք պէտք չէ որ խնդոյք մը կարծեն կեանքը։—Կարծամիտ մարդը եթէ հարիւր անգամ ալ խարուի, նորէն փորձառու չ'ըլլար։

(¹) Ռուբէն Զարդարեան, Խարբերդցի ժամանակակից գրագէտ և ուսուցիչ, հրատարակած է յօդուածներ, հէքեաթներ և քերթուածներ Հայ Թերթերու մէջ։

93. Որոշել հետեւեալ ստորագծուած բառերուն մէջէն սեռականները և տրականները.

Լաւագոյնը յաւիտենական է։—Գրիգոր Նղեայակիր Պատրիարքը, Տրուսադէմի վանքին պարտքը վճարելու համար, վիզէն շղեայ անցուցած՝ տարիներով նպաստ հաւաքեց։—Ցուղան Ցիսուսը մատնեց երեսուն արծաթի։—Իրիկուան ճաշը պէտք է Թեթև ըլլայ դիւրաւ մարսուելու համար։—Դաբրիէլ Այվազովսքի գրագէտ եպիսկոպոսը, որ Քոհիլովի առակները Թարգմանած է, Յովհաննէս Այվազովսքի նկարչին եղբայրն է։—Որ և է գոյն մը աղէկ որոշելու համար, պէտք է արեւուն լոյսին դիտել զայն։—Այս կարգի խնդիրները մեր մէջ կարգադրենք։

94. Ըսել թէ իբր ինչ գործածուած են հետեւեալ ստորագծուած բացառականները.

Պէտք է մարդը իր գործերեն դատել, և ոչ խօսքերեն։—Ամէն երկրի մէջ՝ գրական մարդոցմէ շատերը անօթի մեռած են։—Բնականեն սև եղողը աճառով չի ներկիր։—Ես մտիկ ընելէ ձանձրացայ, ան խօսելէ չձանձրացաւ։—Ոսկիէ սիրտ մը ունի։

95. Ըսել թէ հետեւեալ նախադասութեանց մէջ իբր ինչ գործածուած են ստորագծուած գործիականները.

Ամէն մարդ իր յանցանքով դժբախտ կ'ըլլայ։—Արամազդ՝ յօնքերը պռնգելով՝ Ոլիմպոսը կը դղրդէր։—Աեւնով՝ ձիով ու նաւով կը ճամբորդեն եղեր, հիմայ շոգեկառքով, շոգենաւով, հեծելանիւով ու ինքնաշարժ կառքերով։—Հիպպոկրատ Պերիկլէսի օրով մեծ համբաւ կը վայելէր։—Տան մը մէջ, պզտիկով մեծով ամէնքն ալ պարտական են հնազանդիլ քաղաքավարութեան օրէնքներուն։—Շերամը իր բժոժը շինելու համար օրերով շարաքներով կ'աշխատի։—Կիրակի օրով չի վայլեր առուտուրի ելլել։—Դեղին փետուրներով գլխարկս անձրեւէն թրջուեցաւ։—Ծնունդով խոնարհ մարդիկ շատ անգամ մեծամեծ աստիճաններու հասած են։—Սենեակին բարձրութեամբ հայլի մը դրեր էին։—Թռչունները իրենց թեւերով կը կենան օդին մէջ։

96. Մէյ մէկ խօսք շինել հետեւեալ բառերը իբրև կոչական գործածելով.

Երկի՛նք, — ո՛վ Անտիոքենէս, — գոռո՛զ Սիկամբրոս, — ցուղա՛ն, — տղա՛ք, — Կայէ՛ն, Կայէ՛ն, — ո՛վ Երուսաղէմ։

97. Իրենց յարմար կոչականները դնել հետեւեալ պատմական խօսքերուն առջև.

Արեւս մի՛ խափաներ։ — Գիտես եղեր յաղթել։ բայց չես գիտեր յաղթանակէդ օգուտ քաղել։ — Այս գիշեր Պղուտոնի կայանը պիտի ճաշենք։ — ԵԹԷ Աղեքսանդր չըլլայի, Դիոգինէս պիտի ուզէի ըլլալ։

ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ

ԱՌԱԿ ՖԼՕՌԻԱՆԻ (1)

Թովմաս ազբար և բարեկամն իր Սահակ
Իրենց գիւղէն ելեր քաղաք կ'երթային։
Թովմաս գըտաւ ոսկիի պարկ մը մեծկակ,
Գետնէն առաւ վայրկեանին։
Ընկերն խլոյն ուրախութեամբ խանդավառ
Գոչեց. «Ի՞նչ բախտ մեզ համար։»
«—Մեզ. մի՛ ըսեր յարեց ընկերն ընչաքաղց.
«Իմս է միայն, քանի որ ես եմ գտած։»
Սահակ լըռեց, և անխօսուկ քայլ առին
Մինչև հասան խորը Թաւուտ անտառին,
Ուր պահուըտած տեսան երկու աւազակ
Հըրացանին իրենց ուղղած շիւղ շիտակ։
Թովմաս ազբար խելքը գըլխէն Թըռցուցած
Ըսաւ դողդոջ ձայնով ցած.
«Այս ի՞նչ փորձանք հասաւ մեզ։»
«—Մեզ մի՛ ըսեր, գոչեց ընկերն անողոք,
«Քեզի միայն, քանի որ գանձ չունիմ ես։»
Ու ծառերուն մէջէն փախաւ արտորնօք։
Մինչդեռ Թովմաս՝ հոն միայնակ ու անզէն՝
Ոչխարի պէս Թողուց որ զինքը խուզեն։
Եւ գողերը կողոպտեցին իր ոսկին
Իբրև պատիժ քիչ մ'առաջուան իր խօսքին։

Ցաղողութեան մէջ երբ կ'ըլլաս անձնասէր,
Դըժբաղդ օրիդ՝ մէկէն օգուտ մ'ըսպասեր։

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

98. Արձակի վերածել ընդարձակելով այս ոտանաւորը։
99. Գոց սորվիլ և արտասանել այս ոտանաւորը։

---

(1) Ֆլօռիան, Լաֆոնթէնի եւրոպ, ամէնէն նշանաւոր ֆրանսացի առակագիրն է. 1755ին ծնած է և 1794ին մեռած։

ԳՈՅԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

328. Գոյական մը գլխաւորաբար երեք կերպով կրնայ ուրիշ գոյականի մը քով իյնալ. Ա. Իբր բացայայտիչ եւ բացայայտեալ, Բ. Իբր յատկացուցիչ եւ յատկացեալ, Գ. Իբր ածական։

ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

329. Բացայայտիչ կ'ըսուի այն գոյականը, որ ուրիշ գոյականի մը ո՛վ կամ ի՞նչ ըլլալը կը բացատրէ. Ողինպոս լեռը, Ա-եոպէ+ Պատրիարքը։ Ողինպոս և Ա-եոպէ+ բացայայտիչ են։

330. Բացայայտեալ կ'ըսուի այն գոյականը, որուն ի՞նչ կամ ո՛վ ըլլալը բացայայտիչով մեկնուած է. Ողինպոս լեռ, Ատեսիի Պատրիարք։ Լեռ և Պատրիարք բացայայտեալ են։

331. Բացայայտիչը կամ բացայայտեալը ընդհանրապէս յատուկ անուն կ'ըլլայ, բայց երբեմն կրնան երկուքն ալ հասարակ անուն ըլլալ, ինչպէս. Շատ կը սիրեմ գրքոնը՝ գրքուան գեղեցիկ-գրքն եղանակը։

332. Բացայայտիչը ընդհանրապէս բացայայտեալէն առաջ կը դրուի, երբ երկուքը իրարմէ անանջատ բառեր են, այսինքն երբ բութով կամ ստորակէտով չեն զատուիր. այս պարագային բացայայտիչը ոչ յօդ կ'առնէ և ոչ կը հոլովուի. Նեղոս գետին անցանիլ, Կարմիր ծովուն եզերքը հասանիլ։

333. Իսկ երբ բացայայտիչը և բացայայտեալը իրարմէ կ'անջատուին սորակէտով կամ բութով, այն ատեն վերջը դրուածը բացայայտիչ կը նկատուի ընդհանրապէս։ Երբ ըսենք Շեխբիր՝ անգլիացի թատերգակը՝ 52 տարու մեռաւ, Անգլիացի թատերգակը բացայայտիչ է Շեխբիրին։ Իսկ երբ ըսենք. Անգլիացի թատերգակը՝ Շեխբիր՝ 52 տարու մեռաւ, Շեխբիր բացայայտիչ է Անգլիացի թատերգակին։ Այս պարագաներուն՝ թէ՛ բացայայտիչը և թէ՛ բացայայտեալը կը հոլովուին. ընդհանրապէս, ինչպէս. Տանքեի՝ իտալացի մեծ քերթողին՝ արձան մը պիտի կանգնուի կամ Իտալացի մեծ քերթողին՝ Տանքեի՝ արձան մը պիտի կանգնուի։

334. Երկար բացայայտիչները և բացայայտեալները պէտք է յարաբերականով գատել, խօսքը չերկարելու և շփոթութեանց տեղի չտալու համար։ Փոխանակ ըսելու. Մեր զուն՝ մեր հօրմեն ու մօրմեն մնացած միակ անկորուստ ժառանգութիւնը, մեր գաղափարներու անմիջական միջնորդը, պէտք է անվթար պահուի, պէտք է ըսել. Պէտք է անվթար պահուի մեր ղեզուն, որ մեր հօրմեն ու մօրմեն մնացած միակ անկորուստ ժառանգութիւնն է, Լայլն։

335. Կարելի է նաև այս պարագաներուն մէջ անջատման գիծ գործածել բացայայտիչէն առաջ և ետքը, ինչպէս. Մեր ղեզուն, — մեր հօրմեն եւ մօրմեն մնացած միակ անկորուստ ժառանգութիւնը, մեր գաղափարներու անմիջական միջնորդը, — պէտք է անվթար պահուի։

ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

336. Յատկացուցիչը անուն մըն է, որ ուրիշ անունի մը որուն ըլլալը կը ցուցնէ. Թոռին ճիւղը, Դոռէբոռն ճիւղերը։ Թոռին և Դոռէբոռն յատկացուցիչ են։

337. Յատկացեալը այն բառն է որ յատկացուցիչին կը վերաբերի. Թոռին ճիւղը, Դոռէբոռն ճիւղերը։ Ճիւղը և ճիւղերը յատկացեալ են։

338. Յատկացուցիչը կ'ըլլայ միայն սեռական հոլով, իսկ յատկացեալը ամեն հոլով կրնայ ըլլալ. Թոռին ճիւղը, Թոռին ճիւղին, Թոռին ճիւղեն, Թոռին ճիւղով։

339. Յատկացուցիչը կը պատասխանէ որո՞ւն կամ ինչ բանին հարցման։

340. Սեռական և տրական հոլովներուն ձևերը նոյն ըլլալով, պէտք է դիտել որ սեռական հոլով յատկացուցիչը միշտ գոյականի մը կը վերաբերի, ինչպէս. Թոռին ճիւղը, մինչդեռ տրական հոլովը բայի մը կը վերաբերի, ինչպէս. Թոռին հօրենը։

341. Այս կանոնին բացառութիւն չեն կազմեր հետեւեալ երկու պարագաները.

Ա. Երբ սեռական հոլովը բանի մը մէկուն վերաբերիլը կը ցուցնէ. Այս գիրքերը Բոլսոյ են։ Այս նախադասութեան մէջ՝ Բոլսոյ բառը տրական չէ, այլ սեռական, և զեղջումի մը պատճառաւ բային քով ինկած է։ Առանց զեղջումի, պիտի ըսէինք. Այս գիրքերը Բոլսոյ գիրքերն են։

Բ. Երբ սեռական հոլովը տարիք կը ցուցնէ. Քոյրս տասներկու տարեկան է։ Այս պարագային մէջ տարի ոչ թէ սեռական մը կամ տրական մը, այլ սեռականի ձեւով ածական մըն է տարիէն բառին տեղ գործածուած։

342. Աշխարհաբարի մէջ՝ յատկացուցիչը ընդհանրապէս յատկացեալէն առաջ կը դրուի. Եկեղեցւոյն զանգակը, դրան բանալին։

343. Յատկացեալը կրնայ յատկացուցիչէն առաջ դրուիլ հետեւեալ պարագաներուն մէջ.

Ա. Երբ յատկացուցիչէն վերջը յարաբերական մը կայ, և կրնայ իմաստի շփոթութիւն յառաջ գալ. կը

ճանչնայի ձեր դրացոյն աղէկը որ մեռաւ, կամ կը ճանչնայի աղէկը ձեր դրացոյն որ մեռաւ :

Բ. Ոտանաւորի մէջ յանգի կամ վանկի յարմարութեան համար .

Կընենս նըկարել լուրթը եղերին,
Թիթեռնիկները, որ կը դեգերին
Թաւուտներուն մէջ, շուրջը վարդերուն,
Զոր զոհար ցողով դեղերիններց զարուն։

Գ. Գրաբարէն առնուած բանի մը բացատրութեանց մէջ . Որդի Աստուծոյ, Սրբուհի Սրբոց, Փրկիչ աշխարհի, և այլն :

344. Երբ յատկացուցիչը որոշեալ չըլլալով առանց յօդի գործածուած է, շատ անգամ կարելի է տեղը դնել նոյն իմաստը ունեցող ածական մը, ինչպէս . Մօր սեր, մայրական սեր : Երկնից կապոյտ, երկնային կապոյտ :

ԱԾԱԿԱՆԱԲԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

345. Գոյականներ կան որոնք միանգամայն ածական են, ինչպէս . Սուտ, մուր, ծակ, շուք, ցուրտ, հանգիստ : — Ս�-ին վերջը չի զար : Ստ-ը վկայութիւն մի՛ ըներ : Մտ-ը գիշեր եր : Գիշերուան մտ-ին դուրս եկեղ : Ծակ առնելը չի լեցուիր: Անանիի ծակը պէտք է խցեր, և այլն։

346. Կան գոյականներ ալ որոնք իրենց ածական կրնան գործածուիլ ինչպէս հետեւեալ պարագաներուն մէջ .

Ա. Երբ գոյականը սաստրգելի է . Դեռ ծամ եմ : Հաղ եղայ :

Բ. Երբ բանի մը նիւթը կը ցուցնէ . Ոսկի շղթայ, աբծաթ ժամացոյց :

Գ. Երբ չափ ցոյց կու տայ . Գաւառ մը ջուր, կաթիլ մը արցունք, հինգ օր բանտարկութիւն :

Դ. Նմանութեամբ . Քար սիրտ, ծաղիկ հասակ, քամի ցող :

Ե. Փոխաբերութեամբ . Կրակոտ երիտասարդ մը, հրեշ մարդ մը, աբեր frտիկ մտած փայտահատ մը :

347. Ժամանակ ցուցնող գոյականները իրարու վրայ կ'իյնան իրենց ածական և գոյական . Երէկ գիշեր, վաղը իրիկուն, շաբաթ առտու :

348. Կան գոյականներ ալ որոնք հոլովուելով ածականի իմաստ կ'արտայայտեն, ինչպէս տեսանք հոլովներու գործածութեան առթիւ .

Ա. Սեռական հոլով . Տասը տարեկան տղայ մը, երիտասարդ կարդալ աշակերտ, ճանապարհը :

Բ. Բացառական հոլով . Փայտէ արտ, կաշիէ գօտի :

Գ. Գործիական հոլով . Երկու ձիաւոր աշտանակ, չորս ոտքով սեղան, ճերմակ պուրակ կատու, անոյշ յայնով դաշնակ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ԲՈՎ

Լայն ուղիներու բովն եղերքն ի վեր,
Թոտին մէջ ծաղիկ հեզիկ, աղուորիկ,
Ի՞նչ հոգիներ կան անոյշ, անճանաչ
Մէկ կողմ մընացած հէք մինաւորիկ,
Լայն ուղիներու բովն եղերքն ի վեր ... ։

Թոտին մէջ ծաղի՛կ հեզիկ, աղուորիկ,
Որոնց վրայ ձեռք մ'երբեք չի դողար,
Ցենչերով տրոփուն սիրտեր կան զողորիկ,
Հեշտարոյր, սակայն անիծեալ, անմեղար,
Թոտին մէջ ծաղիկ հեզիկ, աղուորիկ ... ։

Ի՞նչ հոգիներ կան անոյշ անճանաչ,
Որոնք հեծելով կ'այրին մեկուսի.
Գուն ու զորովի բո՞ղն սիրահարաւէր,
Լանջքին տակ՝ անչուք կընոջ ու կոյսի,
Ի՞նչ հոգիներ կան անոյշ, անճանաչ ... ։

Մէկ կողմ մընացած, հէ՛ք մինաւորիկ,
Երազո՛ւն աչքեր Ռուխ ու կապուտակ,
Որոնց ժըպիտին փըՌՌումն անդորրիկ
Կը խամրի մուՌին՝ խուլ ցաւերու տակ,
Մէկ կողմ մընացած հէ՛ք մինաւորիկ ... ։

Լայն ուղիներու քոմն եզերքն ի վեր
Մարդիկ անտարբեր կ'անցնին ու կ'երՌան,
Իրենց ոտքին տակ փափուկ ծաղիկներ
Ճըմլուած՝ լըռիկ մուՌին մէջ կու լան,
Լայն ուղիներու քոմն եզերքն ի վեր ... ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ (¹)

100. Զրուցագրել այս ոտանաւորը, և կետադրութեան նշաններ դնել։

101. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

102. Մէյ մէկ յարմար բացայայտիչ գտնել հետեւեալ բառերուն.

Աստեղագիտութիւն, մանտարէն, պատանդ, մագաղաթ, հանրագիտարան, օդապարիկ, Մոցարդ, Հերոդոտ, Ֆէնէլոն, Ոսկերերան, Եղիշէ, ՇաՌոպրիան, Կիկերոն, Լամարթին, Ափրիկէ, մանիշակ, Ռեղոշ, Փիտիաս, Կիյեոմ Թէլ, Իլիական, Յայսմաւուրք, Զատիկ։

Օրինակ. — *Աստեղագիտութիւն՝ աստղերու գիտութիւն։*
Մոցարդ՝ գերման երաժշտագէտ։

ՆԻԱԿԱՐԱՑԻ ՎՐԱՑ

Հուսկ ուրեմն սահանքին եղերքը հասանք, որուն ահռելի մռնչիւնները կը լսէինք։ Այս ջրվէժը կը ձեւանայ Նիակարա գետէն, որ Էրիէ լիճէն կը բղխի, և Օնտարիոյ լիճը կը թափի։ Իր ուղղահայեաց բարձրութիւնն է հարիւր քառասունչորս ոտք։ Էրիէ լիճէն մինչև ջրվէժը, գետը երթալով կը նուազի ցից դարեւանդէ

(¹) Աղեքսանդր Փանոսեան, ժամանակակից բանաստեղծ, որ հրատարակած է բազմաթիւ քերթուածներ։

մը, և գահավիժած ատեն աւելի ծով մըն է քան գետ մը, որուն հեղեղները զիրար կը մղեն երախաբաց անդունդի մը եղերքը։

Սահանքը երկու ճիւղի կը բաժնուի, և պայտի ձեւով վար կը ծռի։ Երկու հոսանքներուն մէջտեղէն կղզի մը կը յառաջանայ, տակէն փորուած, որ իր բոլոր ծառերով ալիքներուն քառսին վրայ կը կախուի։ Հարաւային կողմը, գետին զանգուածը ընդարձակ գլանի մը ձեւով կը կլորնայ, յետոյ ճիւղերէն սիւռոցի մը պէս կը տարածուի, և արեւուն գիմացը կը փայլի գունագեղ։ Արեւելեան կողմը ինկող մասը զարհուրելի սուսերի մը մէջ կ'իջնէ. կարծես ջրհեղեղին ջրեղէն սիւնն է։ Հազարաւոր ծիածաններ կը հակին ու զիրար կը խաչաձեւեն անդունդին վրայ։ Կոհակը՝ խարխլած ժայռին զարնուելով՝ փրփրոտ յորձանքներ կը ժայթքէ, որոնք մինչև անտառներէն վեր կը բարձրանան մեծ հրդեհի մը մուխերուն նման։ Թեղջներ, վայրի ընկուզենիներ, ուրուաձև կորուած խարակներ այս տեսարանը կը չքազարդեն։ Արծիւներ օդի հոսանքներէ քշուած, պտուտակելով կ'իջնեն անդունդին խորը՝ վիհին մէջէն բռնելու համար հիւսիսեղներու և արջերու ջախջախուած դիակներ։

ՇԱԹՕԳՐԻԱՆ (¹)

103. Լուծել այս հատուածը բերանացի։

104. Մէյ մէկ նախադասութիւն շինել հետեւեալ յատկացուցիչներին և յատկացեալներին.

Հովին շշունչը, կրակին ճարճատիւնը, գենքերու շիտիւնը, զրոշակին ծփումը, վտակին մրմունջը, հրացանին ճայթիւնը, կառքին գլումը, երգեհոնին խորդումը, ջուրին ճղփիւնը, կոհակներուն շառաչիւնը, տերեւներուն խարշափիւնը, մտրակին շաչիւնը, շեփորին հնչիւնը, որոտման գոռումը, ծխնիներուն ճռնչիւնը, զանգակին Ռեղիւնը, գնդակներուն շչիւնը, Ռնդանոթին բոմբիւնը։

(¹) Շաթոպրիան, երեւելի Ֆրանսացի գրագէտ, ծնած է 1768ին և մեռած 1848ին։ Գրած է բազմաթիւ նշանաւոր երկեր, որոնց գլխաւորն է Բrhisտոնkուրեան Ոգին։

105. Մեյ մեկ խօսք շինել հետեւեալ յատկացեալներէն կամ յատկացուցիչներէն.

Կատուին մլաւիւնը, ոչխարին մայիւնը, տատրակին մնչիւնը, առիւծին մռնչիւնը, շան հաչիւնը, եզան բառաչիւնը, էշուն զռնչիւնը, ձիուն վրնչիւնը, հաւուն կարկաչանքը, գորտին կռկռանքը, ագռաւին կռկչքը, խոզին խռնչիւնը, գայլին ոռնումը, օձին սուլումը, աղուէսին կաղկանձումը, ծիծեռնակին դայլայլիկը, մեղուին բզզիւնը, աքաղաղին երգը։

106. Ածականի վերածել հետեւեալ յատկացուցիչները և մեյ մեկ գոյական յատկացնել անոնց.

Դիշերուան, մարդու, մահուան, դիւցազունի, ձմեռուան, գիտունի, տղու, եղբօր, վայրենիի, սատանայի, աշխարհքի, հիւանդի, յիմարի, աղքատի, հարստիքի, հոգւոյ, դէմքի, ձեռքի, տան, նաւու, դաշտի, սուրբի, հովուի, զինուորի, քահանայի, հրեշտակի, սրտի, երազի, կեանքի, ծնունդի, իշխանի։

Օրինակ. — *Դիշերային պտոյտ, մարդկային տկարութիւն։*

107. Գոյականի մը քով իրրև ածական գործածել հետեւեալ գոյականները.

Լոյս, ձիւն, կամար, փղոսկր, վարդ, երկաթ, սափոր մը, ժամ մը, տոպրակ մը, երկու բեռ, հինգշաբթի, պտոր, տուփ մը, երկու ասեղ, երեք տող, դղում, շաքար, խաւար, արև, փոս, մարգրիտ։

ԳՈՅԱԿԱՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Վիգթորիա՝ Անգլիոյ թագուհին՝ ծնած էր 1819ին, և մեռաւ 1901ին։ — Լսէ՛, երկինք, և դուն մտիկ ըրէ՛, երկի՛ր, այն ճշմարտութիւնները զոր պիտի յայտնեմ։ — Սկեպտիկեանք կ'ուրանային այն ամէն բաները որոնց խելքերնին չէր հասներ։ — Շելլէ բանաստեղծին կինն ալ գրագէտ մըն է։ Տղան որ դպրոց կ'երթայ, կեանքի պայքարին մէջ մտած է արդէն։ — Ան որ ձեռքը գրիչ ունի, պէտք է օգտակար կերպով գործածէ զայն։ — Կան վայրկեաններ ուր կեանքը դրախտ մը կ'երեւայ մեզի։ — Զարախօս մը կը նկատեմ այն անձը, որ հաճոյքով մտիկ կ'ընէ չարախօսութիւնները։ — Ներեցէ՛ք չարերուն, վասնզի ամէնէն աւելի իրենց անձին կը վնասեն անոնք։ — Կէս օրին այցելութեան երթալը անսպասելի բան է։ — Ալֆոնս Տոտէ իր վէպերուն մէջ նմանած է Տիքընսի։ — Ժանեակով զարդարուն զգեստները փափուկ մորթով դէմքերու կը վայլեն։ — Շանթարգելով տունները կայծակէն չեն վախնար։

Վիգթորիա	յոկ. ան. եզ. ուղ. ենք. *ծնած էին։*
Անգլիոյ թագուհին	յոկ. ան. եզ. սռկն. յոկցչ. *թագուհիին* } բցյոչ. *Վիգթորիային։*
	հսրկ. ան. եզ. ուղ. յոկցչ. *Վիգթորիային։*
երկինք	հսրկ. ան. եզ. ուղ. կոչկն.։
երկիր	հսրկ. ան. եզ. ուղ. կոչկն.։
ճշմարտութիւնները	հսրկ. ան. եզ. հյց. սեռի խնդ. *մտիկ ըրէ՛ին։*
Սկեպտիկեանք	յոկ. ան. յբ. ուղ. ենք. *կ'ուրանային։*
բաները	հսրկ. ան. յբ. հյց. սեռի խնդ. *կ'ուրանային։*
խելքերնին	հսրկ. ան. յբ. ուղ. ենք. *չէր հասներ։*
Շելլէ	յոկ. ան. եզ. ուղ. բցյոչ. *բանաստեղծին։*
բանաստեղծին	հսրկ. ան. եզ. սռկն. յոկցչ. *կինին։*
կինն	հսրկ. ան. եզ. ուղ. ենք. *եղած էին։*

զրագետ	հսրկ. ան. եզ. ուղ. ստրգլի *կինին։*
Տղան	հսրկ. ան. եզ. ուղ. ենք. *մեռած է։*
դպրոց	հսրկ. ան. եզ. հյց. ընթեն. խնդ. *կ'երթային։*
կեանքի	հսրկ. ան. եզ. սռկն. յտկցչ. *պայքարին։*
պայքարին	հսրկ. ան. եզ. սռկն. խնդ. *մեջին։*
ձեռքը	հսրկ. ան. եզ. հյց. ընք. խնդ. *ունին։*
գրիչ	հսրկ. ան. եզ. հյց. սեռի խնդ. *ունին։*
կերպով	հսրկ. ան. եզ. գրծ. ընք. խնդ. *գործածէին։*
վայրկեաններ	հսրկ. ան. յք. ուղ. ենք. *կանին։*
կեանքը	հսրկ. ան. եզ. ուղ. ենք. *կ'երեւային։*
դրախտ	հսրկ. ան. եզ. ուղ. ստրգլի. *կեանքին։*
Զարախսս	հսրկ. ան. եզ. հյց. ստրգլի. *անձին։*
անձը	հսրկ. ան. եզ. հյց. սեռի խնդ. *կը նկատեմ։*
չարախսսութիւնները	հսրկ. ան. յք. հյց. սեռի խնդ. *մտիկ կ'ընեին։*
չարերուն	հսրկ. ան. յք. տրկ. ընք. խնդ. *նեռեցէ՛ին։*
անձին	հսրկ. ան. եզ. տրկ. ընք. խնդ. *կը վնասեին։*
օրին	հսրկ. ան. եզ. տրկ. ընք. խնդ. *այցելութեան*
այցելութեան	հսկ. ան. եզ. տկ. ընք. խդ. *երթային։* [*երթային։*
երթալը	հսրկ. ան. եզ. ուղ. ենք. *է։*
բան	հսրկ. ան. եզ. ուղ. ստրգլի. *երթալը։*
Ալֆոնս	յտկ. ան. եզ. ուղ. բցյտչ. *Ֆոսէին։* ենք. *նստա-*
Տօտէ	յտկ. ան. եզ. ուղ. բցյտչ. *Ալֆօնսին։* *ված է։*
վեպերուն	հսրկ. ան. յք. սռկն. խնդ. *մեջին։*
Տիքընսի	յտկ. ան եզ. տրկ. ընք. խնդ. *նստած է։*
Ժանեակով	հսրկ. ան. եզ. գրծ. խնդ. *զարդարուն։*
զգեստները	հսրկ. ան. յք. ուղ. ենք. *կը վայլեին։*
մորթով	հսրկ. ան. եզ. գրծ. խնդ. *փափուկին։*
դէմքերու	հսրկ. ան. յք. տրկ. ընք. խնդ. *կը վայլեին։*
Շանթարգելով	հսրկ. ան. եզ. գրծ. խնդ. *տունեարը։*
տուները	հսրկ. ան. յք. ուղ. ենք. *չեն վախնար։*
կայծակեն	հսրկ. ան. եզ. բցռ. ընք. խնդ. *չեն վախնար։*

ՀԱՄԱՀԱՆԳՆԵՐ

ՊԼԻՆԻՈՍ ԻՐ ՄԱՑԸԼ Կ'ԱԶԱՏԻ

Կրտսերն Պլինիոս Միսէն կը բնակէր, Վեսուվէն քիչ հեռու, այն ահռելի հրաբուխին առեն, որ իր հորեղբօր՝ Պլինիոս բնագէտին մահուան պատճառ եղաւ։ Բնակիչները՝ ահաբեկ՝ ինքզինքնին ազատելու համար, սկսան փախչիլ։ Պլինիոս, իրեն սպառնացող վտանգը մոռնալով, մայրը փնտռեց, գտաւ և ուզեց զայն ազատել։ Ի զուր խեղճ կինը կը համոզէր զայն թէ չէր կրնար իրեն հետ երթալ, ծեր ու տկար ըլլալուն պատճառաւ, թէ քիչ մը ուշանալով կրնային երկուքնին մէկտեղ մեռնիլ, թէ թերեւս փախչելու ժամանակը անցած էր արդէն՝ նոյն իսկ իրեն համար։ Պլինիոս ականջ չկախեց, և հակառակ մօրը կամքին առաւ տարաւ զայն գրկած։ Օդին մէջ կուտակուած մոխիրը իրենց վրայ կը տեղար, սև ծուխ մը երկինքը կը մթագնէր, և զարհուրելի երեւոյթ մը կու տար անոր։ Այդ հոծ աղջամուղջին մէջ գիրենք չրջապատող բոցերէն զատ՝ լոյս չէին տեսներ։ Սակայն ոչ վտանգը ոչ ցաւը չկրցան խախտել այդ բարի զաւկին հաստատամտութիւնը։ Խոնջ, ոգեսպառ, քանի մօրը կը նայէր, իր ոյժն ու կորովը կ'արծարծուէին։ Եւ պաշտպանեց զայն մինչև ետքը, սփոփեց, քաջալերեց, ու գիրկը առած քալեց մինչև որ ազատեց զայն վտանգէն։

108. Լուծել այս հատուածին գոյականները։

ՇԹԱՓԱՐԵՐԸ

Ես կը սիրեմ անձաւն, ուր ջահ
Կ'արիւնոտէ ցայգը խաւար,
Արձագանգն ալ, որ քարէ քար,
Կոծ կը հանէ ձայնէն տըկար։

Կամարէն կախ շըՔաբարեր
ՁերՔ քարացած արցունք երկար,
ՏամկումՔիւններն կը կանՔ վար
ՇերՔ շիՔ ոտքիս տակ յամրաբար։

Այդ խաւարին գոգն անՔըշոյլ,
ԱնդորրումՔիւն մը կայ Քախծոտ.
Եւ մահարոյր արցունքին մօտ՝
Որ չի ցամքիր կախուած միշտ հոտ,

Կը խորհիմ հէք հոգիներուն,
Ուր հին ցաւեր կը նիրհեն խոր.
Սառ կըտրած են արցունք բոլոր.
Բան մը կու լայ հոն ամէն օր։

ՍԻՒԼԼԻ ՐՐԻՒՏՈՄ (¹)

109. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

(¹) Սիւլլի Բրիւտոմ, ֆրանսացի ժամանակակից բանաստեղծ մըն է, ծնած 1839ին։

ՅՕԳ

ԱՍՏԻՃԱՆԵՐ

349. Յօդ կ'ըսուի այն գիրը կամ մասնիկը, որ գոյականի մը վերջը դրուելով՝ անոր նշանակութիւնը կ'որոշէ կամ ընդհանուր իմաստը մասնաւորի կը վերածէ. Ծաղիկ փրցուցի, ծաղիկը փրցուցի, ծաղիկ մը փրցուցի, ծաղիկս փրցուցի։

350. Յօդը երեք տեսակ է. Որոշիչ, անորոշ, դիմորոշ։

ՈՐՈՇԻՉ ՅՕԳ

351. Որոշիչ յօդ կ'ըսուին ԸԼԸՆ գիրերը. մարդը, մեղուն։

352. Ը կը գործածուի բառի մը վրայ, որուն վերջին գիրը բաղաձայն է. ագը, դուռը, սեղանը։

353. Ն ձայնաւորով վերջացող բառի մը վրայ Ը կը գործածուի, երբ այդ ՆԸ վ հնչուելով՝ բաղաձայն նկատուի. նաւը, թիւը, հաշիւը։

354. Ն յօդը կը գործածուի բառի մը վրայ, որուն վերջին գիրը ձայնաւոր է. ջորին, մեղուն, բազին։

355. Յ բաղաձայնով վերջացող բառերուն Յն կը ջնջուի ԼԸՆ յօդը կը դրուի, երբ Յն անձայն է. հարան, հաւասածոն։

356. Ն յօդը կը գործածուի նաև բաղաձայնով վերջացող բառերուն ծայրը, երբ էական բային սահմանական ներկան կամ անկատարը յաջորդէ անոնց, ինչ-

պէս նաև ու, աղ, իսկ, անգամ չաղկապներէն և ի վեր, ի վար նախադրութիւններէն առաջ. Իրենք տունդ էին: Դուն ամենեն հմուտ ես: Քարերն անգամ լեզու ելան: Այդ աղջիկդ աղ իրեն է: Երեսդ ի վեր ինչ կը նայիս, եայն։

357. Բայց նախորդ բառին ը յօդը դ ի չի փոխուիր եթէ ա՛ղ մակբայը յաջորդէ անոր. Խեղճ կինը՝ ձանձրացաւ: Տղաքը՝ յոգներ էին:

358. Անգամ բառն ալ երբ չաղկապ չէ, իրմէ առջի բառին ը յօդը դ ի չի փոխուիր, այլ կ'ըսուի. Այս աղջիկները՝ դեռ մը որ խաղալ սկսին, ա՛ղ վերջը չեն բերեր:

359. Ոտանաւորի մէջ դ յօդը կրնայ դրուիլ բաղաձայնով վերջացող բառերու վրայ, երբ իրենցմէ վերջը եկող բառը ի կամ յ բաղաձայնով կը սկսի, և կամ ո և է ձայնաւորով.

Խոսի՝ որորի մը ժանգոտած հաւքուն
Հանգիստեն երկար
Տեսաւ իր եղբայրն, որ շողշող փայլուն
Դաշտեն կը դառնար:

360. Անունները յօդով սապէս կը հոլովուին.

	Եզ.	Յոգ.
Ո. Հ.	Գանձը	Գանձերը
Ս. Տ.	Գանձէն	Գանձերուն
Բ.	Գանձէն	Գանձերէն
Գ.	Գանձով	Գանձերով

361. ՈՐՈՇԻՉ ՅՕԳԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — *Որոշիչ յօդին գործածութեան բոլոր պարագաները նախատեսել դժուար է. կարելի է սակայն սահմանել քանի մը գործնական կանոններ։*

362. Հասարակ անուններու եզակին. — Հասարակ անուններու եզակի ուղղականը և հայցականը

ամէն պարագայի մէջ յօդ կ'առնեն երբ որոշեալ են. Ժամերը կ'անցնին: Մեկ մոմն ղոյսը չի բաւեր: Այս գիրքը կարդացի: Մեր նոր տունը պէտք է կահել:

363. Բացառիկ են հետեւեալ պարագաները.

1. Ժամանակ ցոյց տուող բառերը, թէև որոշեալ ըլլան, առանց յօդի կը գործածուին մակբայօրէն հետեւեալ բացատրութեանց մէջ. Այսօր, այս առտու, այս գիշեր, երեկ իրիկուն, այն ատեն, գաղ անգամ, եկող տարի, ուրբաթ գիշեր, շաբաթ ցորեկ, եայն։

2. Գիրքերու անուններն և գրքի գլուխներու վերնագիրները երբեմն առանց յօդի կրնան գործածուիլ, թէև որոշեալ ըլլան. Գործնական Քերականութիւն, Միջին դարու պատմութիւն, եայն։

3. Երբ ուղղի թուումի մը առթիւ ազդուութիւն տալ նախադասութեան. Հաւեր, բադեր, սագեր լեցուն էին վայրագաւիթին մէջ: Աղաչանք, պաղատանք, արցունք օգուտ մը չբերին:

4. Կոչականի մէջ երբեք որոշիչ յօդ չի գործածուիր. Եկէ՛ք, փե՛ռ. կեցի՛ր, ո՜ւրդ։

5. Եօրը, ուրը, ինը, տարը թուական ածականները երբ գոյականաբար գործածուին, իրենց ծայրի ը յօդի տեղ կը բռնէ և դ ի կը փոխուի սահմանական ներկայէն ու անկատարէն առաջ, ինչպէս նաև ու, աղ, իսկ, անգամ չաղկապներէն առաջ. Սա երկու թիւերեն տա՛ն է ընտրածդ թէ քանը։ Եօրն աղ մեկտեղ էին:

364. Սեռական և տրական հոլովները որոշիչ յօդ կ'առնեն երբ ի, ու, ոյ կը վերջանան. Հրդեհին սաստկութիւնը: Ծովուն տարածութիւնը: Հօրը սիրոյն համար: Եկեղեցւոյն զանգակը: Աքոռին մօտեցի՛ր:

Սեռական և տրական հոլովները որոշիչ յօդ չեն առներ եթէ վերոգրեալ երեք վերջաւորութիւններէն տարբեր կերպով կը վերջաւորին, ինչպէս. ուրեան,

ման, և այլն։ Մեր տեսակցութեան ատեն։ Այս զգացման դառնութիւնը։ Այդ ուրախութեան չեի սպասեր։ Երեկ գիշերուան մութը։

365. Կան կարգ մը բառեր որոնց սեռականները իբր ածական կը գործածուին և բնաւ յօդ չեն առներ. Առջի, վերջի, ներսի, դուրսի, քովի, առջեւի, ետեւի, տակի, վրայի, մէջի, դէմի։ Այս բառերը յօդ կրնան առնել ամէն անգամ որ իրենց քովի գոյականները դնդչուին. երբ դէրքերու վրայ կը խօսինք, վրայի գիրքը ըսելու տեղ կրնանք ըսել վրայինը. նոյնպէս՝ դուրսինը, ներսինը։

366. Բացառական հոլովը՝ երբ որոշեալ է՝ միշտ յօդ կ'առնէ, ի բաց առեալ ժամանակ ցոյց տուող բառերուն յատուկ բացառականները, որոնք ընդհանրապէս առանց յօդի կը գործածուին. Այն տարուընէ ի վեր։ Զմեռուընէ մնացած։ Դալ շաբթուընէ առաջ։

367. Գործիական հոլովը որոշիչ յօդ չ'առներ. Հեւալով խալեր։ Ուրախութեամբ ընդունիլ։ Այս զգացմամբ խօսիլը դիւրին չէ։

368. Կան քանի մը բառեր, ինչպէս աշխարհ, երկինք, և այլն, որոնք առանց յօդի կը գործածուին ընդհանուր իմաստով. Աշխարհ պիտի ծափահարէ։ Երկինք ափսանտես պիտի ըլլայ։

369. Երկու, երբ յօդ առնէ, կ'ըլլայ երկուք. Երկուքը մեկին կը խօսեին։

370. Մարդ բառը առանց յօդի կը գործածուի, երբ անորոշ դերանուն է. Մարդ չ'ուզեր իր կամքին հակառակ գործեր տեսնել։ Յաջողութեան մէջ՝ պէտք չէ որ մարդ հպարտանայ։

371. Կարգ մը բաղադրեալ բայերու մէջ, բային ընկերացած գոյականը միշտ անյօդ կը մնայ. Փախուստ տալ, հանգիստ ընել, վախ տալ, վերջ տալ, պատուհաս տալ,

պերբեր արձակել, սոսկ բաժնել, խելք դնել, յեռաց տալ, յեռաց ձգել, բերան առնել, և այլն։

372. Հասարակ անուններու յոգնակին. — Աշխարհաբարի մէջ գործածուած գրաբարի ձեւով յոգնակի ուղղականները, սեռականները և տրականները երբեք յօդ չեն առներ, նոյն իսկ յատկացուցիչէ եռաքը. Այն քաղաքացիք, որոնց վրայ խօսեցանք։ Բողոքականաց ազգապետը։ Տղոց դասերը։ Կանանց իրաւունքը։

373. Ընդհանուր կանոնին համաձայն հոլովուած բառերու մէջ, ամէն հոլով յօդ կ'առնէ բաց ի գործիականէն. Անոնց սիրտերուն մէջ։ Ձեր բարիքներէն զգաստուած։ Իր առաքինութիւնները յիշելով, և այլն։

374. Գոյականաբար գործածուած բոլոր բառերը յօդ կրնան առնել, իբր եզակի կամ իբր յոգնակի։

Ածական. — Գեղեցիկը, Բարին, Ճշմարիտը բացարձակ չեն։

Դերանուն. — Պայրընի գործերուն մէջ՝ եան է որ կը տիրապետէ։

Բայ. — Խմելը եւ ծխելը վնասակար ունակութիւններ են։

Դերբայ. — Զինքը տեսնողը կը հաւանակրի իրեն։

Մակբայ. — Այո՛ն այո՛ եւ ո՛չը ո՛չ։

Շաղկապ. — Բայցերը միշտ կասկած կուտան ինծի։

Զայնարկութիւն. — Աւա՜ղ ու ո՛հը, երբ շատ կը գործածուին, մտքի տկարութիւն կը յայտնեն։

375. Ցատուկ անուններու եզակին. — Ցատուկ անունները աւելի քիչ անգամ յօդ կ'առնեն քան թէ հասարակ անունները, որովհետեւ ինքնին արդէն բաւական որոշեալ են. Մեկենաս կը քաջալերեր գրագէտները։

376. Ցատուկ անունները սովորաբար բնաւ յօդ չեն առներ ուղղականի և գործիականի մէջ. Եզնիկ հայ

մասնագիր մրն է: Գերման գրականութիւնը Կեօթեով եւ Շիլլերով կը պարծի:

377. Ցատուկ անունները միշտ յօդ կ'առնեն հայոցականի մէջ երբ սեռի խնդիր են. Անգլիացիք գրաւեցին Թրանսվաալը:

378. Սեռական, տրական, բացառական հոլովներուն մէջ յատուկ անունները շատ անգամ յօդ չեն առներ. Էտիսընի գիւտերուն թիւը կը հասնի վեց հարիւրի: Ոչ մեկ նկարիչ կը նմանի Տիտոռնեի, որ ոսքերով կը նկարեր թեւ չունենալուն համար: Լեոն Կամպեդդայի եղբը, Ֆրանսա ոչ ոք ունեցաւ որ հաւասարեր անոր պերճախօսութեան:

379. Սեռական, տրական, բացառական հոլովները միշտ յօդ կ'առնեն ընտանեկան խօսակցութեանց մէջ. Գեորգի տունը իմիենց մեծ է: Աստիներին նայէ: Ես Մարիի չեմ վախնար:

380. Աստուած բառը, երբ նշանակէ տիեզերքի Արարիչը, յօդ չ'առներ երբեք, նոյն իսկ հայոցականի մէջ. Աստուած պաշտել, Աստուծոյ կամքը, Աստուծմէ վախնալ, Աստուծոյ դիմել:

381. Երբ յատուկ անունէ մը առաջ յատկացուցիչ մը կամ ածական մը գայ, գործածական զատ ամէն հոլովի մէջ յօդ կրնայ առնել. Իսրայէլի Աստուածը, խնկաբեր Արաբիոն, ծաղիկասիրուն Փղորան, իմաստուն Աբեսաղոմ, Սինայի Մովսէսի: Այս պարագաներուն մէջ՝ երբ յատուկ անունը գրաբարի ձեւով հոլովուած է, երբեք յօդ չ'առներ. Արմաշու Աստուածածնայ պատերը: Մեծափարթամ Անգլիոյ տնտեսական վիճակը:

382. Ազգերու անունները ճիշդ հասարակ անուններու պէս յօդ կ'առնեն. Հայը, Յոյնը, Ֆրանսացոյն, եւայլն:

383. Երբեմն յատուկ անունները իրենցմէ առաջ

անբաժան ածական մը կ'ունենան որ իր վրայ կ'առնէ միշտ Ն յօդը. Մեծն Աղեքսանդրի պատերազմները, Սուրբ Սահակ: Այս պարագային յատուկ անունը երբեք յօդ չ'առներ, և չ'ըսուիր. Մեծն Աղեքսանդրին պատերազմները, Սուրբն Սահակը:

384. Երբ յատուկ անուն մը իրմէ ետքը անբաժան ածական մը ունի, այդ ածականը յօդ կ'առնէ ամէն հոլովի մէջ գործիականէ զատ. Յոր Երանելին, Յովսէփ Գեղեցիկին:

385. Ցատուկ անուններու յոգնակին. — Այս յոքնակիները ճիշդ հասարակ անուններու յոքնակիներուն կը հետեւին: Երբ ընդհանուր կանոնին համեմատ կը հոլովուին յօդ կրնան առնել. Կոնֆուտսիներու գործերը, Պուրպոնեներն եսքը: Իսկ երբ գրաբարի ձեւով կը հոլովուին յօդ չեն առներ. Էրզրումցոց կողմէ: Ակաղեմականաց ժողով: Ս. Հռիփսիմեանց վանք:

ԱՆՈՐՈՇ ՅՕԴ

386. Անորոշ յօդն է մը կամ մը:

387. Մը կը գործածուի ամէն անունի առջև անորոշ իմաստ մը տալու համար անոր, ինչպէս. Գիրք մը տուր ինծի: Կաղամար մը գնեցի: Նոր գաղափար մը պէտք է յայտնել:

388. Մը կը գործածուի էական բային սահմանական ներկային և անկատարին բոլոր դէմքերուն, և աղ չաղկապին առջև, ինչպէս. Ազնիւ անձ մը եմ դուք: Ահարկու տեսարան մը եր այն: Մեր աշխատութեան վրայ ուրիշ մը աղ աւելցաւ: Մեծ անձնաւորութիւն մը աղ կորսնցուցինք:

389. Ոտանաւորի մէջ մը-ին ը կրնայ ջնջուիլ, երբ իրմէ ետքի բառը ձայնաւորով սկսի.

Զմեռ մ'աղ անցաւ, ձրմեռ մը զբաւարթ,
Տարի մ'անքսուեր մեր կեանքին հանդարտ:

390. Անորոշ յօդը ընդհանրապէս եզակի գոյականի քով կը գործածուի, բայց կրնայ դրուիլ նաև բացառապէս.

1. Յոքնակի գոյականի մը քով. Ես հոն բաներ մը կը տեսնեմ: Սնանկ խօսքեր մը ղրեցի:

2. Մակբայաբար գործածուած ածականներու կամ գործիականներու քով. Աղեկ մը հասկնցեցի: Միջոց մը, խորհեցայ որ հաւանիմ: Այնպիսի շեշտով մը կը խօսի, որ կարծես կը հրամայէ: Այնքան մեծ ոյժով մը հրեց զիս, որ վար պիտի իյնայի:

3. Չափ կամ քանակութիւն ցոյց տուող մէկ քանի ածականներու քով. Քիչ մը շունչ առնեմ: Շատ մը պտուղ գնեցի:

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴ

391. Դիմորոշ յօդերն են ս, դ, ն կամ ը, և երեք տեսակ են.

Ա. Անձնական դիմորոշ յօդ, որ կը գործածուի իբր անձնական դերանուն. Ես՝ ստորակարգեալս, կամ պարզապէս ստորակարգեալս, մեզ՝ Հայերս, կամ Հայերս. դուք՝ Պոլսեցիք, կամ Պոլսեցիք: Իբր անձնական դիմորոշ յօդ կը գործածուին միայն ս և դ, բայց ոչ ը կամ ն:

Բ. Ցուցական դիմորոշ յօդ, որ կը գործածուի իբր ցուցական ածական. Շաբթոս մէջ (այսինքն՝ այս շաբթու մէջ), աշխարհիս վրայ (այսինքն՝ այս աշխարհի վրայ), երկրիս ամենեն մեծ շենքը, եւայլն: Իբր ցուցական դիմորոշ յօդ կը գործածուի միայն ս, բայց ոչ դ, ն կամ ը:

Գ. Ստացական դիմորոշ յօդ, որ կը գործածուի իբր ստացական ածական. Տունս, տունդ, տունը կամ այգին այսինքն՝ իմ տունս, քու տունդ, իր տունը կամ իր այգին.

392. Ի, ու, ոյ և երու չվերջացող եզակի կամ յոքնակի սեռականներն ու տրականները, ինչպէս գործիականը, որոնք որոշիչ յօդ չեն առներ, դիմորոշ յօդ կրնան առնել. Ձեռքովը գրած է (իր ձեռքով), միջամտութեանը դիմեցին (իր միջամտութեան):

393. Երբեմն դիմորոշ յօդը յատկացեալին վրայ կը դրուի փոխանակ յատկացուցիչին վրայ դրուելու. Ձեռքի գաւազան (փոխանակ՝ ձեռքիս գաւազանը): Երթալու ատենդ (փոխանակ՝ երթալուդ ատենը):

394. Յատկացուցիչները յատկացեալին դիմորոշ կամ որոշիչ յօդը իրենց վրայ կ'առնեն երբ յատկացեալը զեղչուած է. այս պարագային՝ որոշիչ կամ դիմորոշ յօդէն անմիջապէս առաջ և տարը կը մնէ. Ձեռքիս (փոխանակ ըսելու՝ ձեռքի մասնիս), ձեռքիդ, ձեռքիրը, Պետրոսիրը, այս տարուանը, մեր ձեռքիրը, ձեր ձեռքիրը, իրենց ձեռքիրը:

395. Այս ձեւը ունեցող յատկացուցիչները ուղղական նկատուելով կրնան հոլովուիլ հետեւեալ ձեւով.

Ո. Հ.	Ձեռքիներ	Ձեռքիններդ	Իրենց ձեռքիներ	Իրենց ձեռքիններդ
Ս. Տ.	Ձեռքիներուն	Ձեռքիններդուն	Իրենց ձեռքիներուն	Իրենց ձեռքիններդուն
Բ.	Ձեռքիներն	Ձեռքիններդն	Իրենց ձեռքիներն	Իրենց ձեռքիններդն
Գ	Ձեռքիներով	Ձեռքիններդով	Իրենց ձեռքիներով	Իրենց ձեռքիններդով

Այսպէս կը հոլովուի. ձեռքիս, ձեռքիսներս, մեր ձեռքիրը, մեր ձեռքիսներրը, ձեռքիդ, ձեռքիսներդ, ձեր ձեռքիրը, ձեր ձեռքիսներրը:

396. Այս ձեւերուն գործածութիւնը շատ անգամ նախադասութիւնը կը ճապաղէ, ուստի, այս պարագային, լաւագոյն է բառերը կրկնել: Փոխանակ ըսելու. Ս.գարակապեսներուն շունը մշակներուներն մեծ է, լաւագոյն է ըսել. Ս.գարակապեսներուն շունը մշակներուն շունեն մեծ է:

ՀԻՍԱՀԱՆԳՆԵՐ

ՄԵՐ ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Հանճարը ոչ ազգութիւն ունի և ոչ կրօնք, և իբրեւ ոսկի իր արժէքը կը գտնէ ամէն տեղ։ Հանճարի ծնունդ եղող բանաստեղծութիւն մը լաւ ընդունելութիւն կը գտնէ Անգլիայէն, թէպէտ անոր հեղինակը Սլաւ ըլլայ։ Իսկ մենք հանճարահանդէսի մը մէջ ցուցադրելու համար քանի՞ քերթուած ունինք։ Մենք դժբախտաբար ոսկի կ'անուանենք ինչ որ պղինձ է, և որ սակայն ոսկիի պէս կը հնչէ ժողովրդեան ականջները։ Բանաստեղծութիւնը, ոտանաւոր թէ արձակ, կամ ընտիր ըլլալու է և կամ բնաւ ըլլալու չէ։ Կը ճանչնամ երիտասարդներ, որոնք երբ մարդ մը գովել ուզեն, և դիպուածը առաքինի բառը գտնէ տողին վերջը, յիշեալ մարդը գինետունէ գինետուն կը պատցնեն և մեծ առաքինի գինեմոլ մը կը ներկայացնեն։ Ինչո՞ւ։ — Վասն զի ոտանաւորը նոյնայանգ ընելու համար՝ առաքինի մը գինիէն աւելի ի՞նչ բառ կրնայ յարմարիլ։ Բայց մարդը կեանքին մէջ գինի դրած չէ բերանը. որո՞ւ հոգ. առանց զրպարտելու ոտանաւորը գրելը դիւրի՞ն բան է։ Այսչափ չէ. սպանութեան ալ կը դիմեն. բառերուն գլխէն, մէջքէն կամ պոչէն կը կտրեն. ըսելը սեղի կը փոխուի, նուիրը՝ երբ ոտանաւորի մէջ ներկայանալ ուզէ, գլուխը կը բանայ, և ոտիր կը ներկայանայ հոն։ Աւելին կայ. երբ արեւուն ծագումը ծանուցանել ուզեն. ամէնը մէկէն վարդամատն Արշալոյսին կը դիմեն. ո՞ր մէկուն երթայ խեղճը, եթէ հազար մատ ալ ունենար՝ չէր կրնար ամէնքը գոհ ընել։ Փափկիկ, շուսիկ, արինգ, մարգագեսին, սոխակ իրարու ձեռքէ կը յափշտակուին։ Երբ բանաստեղծութեան գիրք մը կարդալ ուզես՝ կը տեսնես որ թուղթերը իրենք իրենցմէ կը դառնան. վասն զի իւրաքանչիւր էջին մէջ զեփիւռը կը փչէ. չմոռնանք ըսել որ եթէ առանց հովանոցի զանոնք կարդալու ելլես, Եգիպտացի մը կը դառնաս,

այնչափ կ'այրիս արեւէն։ Փա՛ռք տուր Աստուծոյ եթէ հոն եղած սիրգէն մսելով չհիւանդանաս։ Դեռ քանի մը շաբաթ առաջ մէկը Մասիսի մէջ ջրհեղեղ մը նկարագրած էր, ուր մազ մնացեր էր որ Նոյ նահապետն ալ խեղդուէր։

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ (¹)

110. Զրուցագրել այս հատուածը, և դնել կետադրութեան նշանները։

111. Հետեւեալ խօսքերը ուղղել փակագծի մէջ նշանակուած հոլովներուն և յօդի օրէնքներուն համեմատ.

Ինքնահաւանութիւն (ուղ.) տգիտութիւն (բաց.) կը ծնի։ — Բազրիք (ուղ.) երեք գլխաւոր մաս (բաց.) կը բաղկանայ. խոյակ (բաց.), բուն (բաց.), պատուանդան (բաց.)։ — Հնդիկ կին (յք. ուղ.) նարգելակ (սեռ.) պատեան (յոբ. սեռ.) բնաթել (բցո.) շինուած ծոպ (յք. հյց.) կը կրեն իրենց զգեստ (յոբ. սեռ.) վրայ։—Մարդ (սեռ.) արժանիք (ուղ.) իր սիրտ (սեռ.) ու միտք (սեռ.) յատկութիւն (յք. բցո.) կը չափուի։ — Լեռ (յք. սեռ.) գագաթ (սեռ.) վրայ օդ (եզ. ուղ.) միշտ մաքուր է։ — Սպարտացի (յք. ուղ.) իրենց նորածին մանուկ (յք. հյց.) Եւրոտաս (սեռ.) մէջ կը լուային։ — Արիոսթօ (սեռ.) Օրլանտօ Ֆիւրիօզօ (ուղ.) դիւցազներգական ամէնէն նշանաւոր քերթուած (յոբ. բցո.) մէկն է։—Տը Լէբէ աբբայ (ուղ.) հաստատեց խուլ-համր (յք. սեռ.) դպրոց (յք. հյց.)։ — Բէռէթ (ուղ.) շուտ շուտ կը քալէր գլուխ (հյց.) առած կաթ (սեռ.) ման (հյց.)։ — Անօթութիւն (ուղ.) աշխատասէր մարդ (սեռ.) դուռ (բցո.) կը նայի, բայց չի կրնար ներս մտնել։

(¹) Յակոբ Պարոնեան, հռչակաւոր հայ երգիծաբան, որ մեծ յաջողութեամբ խմբագրած է Եփրատ, Մեղու, Թատրոն, Տիծաղ, Խիկար Թերթերը, հրատարակած է Ազգային Զոյներ, Մեծապատիւ Մուրացկաններ, և գրած է քանի մը թատերախաղեր։ Ծնած է 1842ին և մեռած 1891ին։

ԿՈՏՐԱԾ ԱՆՕԹԸ

Մահամերձիկ աղաւնիճին Թաղարն այն
Հովահարի հարուածով մը ճաթեցաւ.
Հարուածն հազիւ դղրդաւ անոր ու անցաւ
Եւ զայն մատնող չըլսեցինք ոչ մէկ ձայն։

Բայց այդ թեթև ճանկրռտուքը ամէն օր
Խածատելով ճերմակ բիւրեղն անխընայ,
Ընթացքով մը անտես՝ սակայն աներկբայ,
Կամաց կամաց կը բոլորի շուրջն անոր։

Իր զով ջուրը կաթիլ կաթիլ տուաւ խոյս
Ըսպառեցաւ ծաղիկներուն հիւթն ու հոյզ.
Ու դեռ ոչ ոք զայն վընասուած կը կարծէ.
Այդ անօթին մի՛ դըպչիք դուք. կոտրած է։

Այսպէս ահա մեզմէ սիրուած ձեռք մ՚ըստէպ
Թեթև հրպմամբ կու տայ սըրտին երաշխէպ,
Եւ ինքն իրեն կը ճեղքըւի սիրտն իսկոյն
Կը Թառամի անոյշ ծաղիկն իր սիրոյն։

Ուրիշներուն աչքերն յաւէտ անվընաս՝
Կը զգայ ածիլն ու ցաւիլը ծածկաբար
Բացուած վէրքին, վէրքին խորունկ ու ներքին,
Ո՛հ, կոտրած է. մի՛, մի՛ դըպչիք անօթին։

ՍԻՒԼԼԻ ԲՐԻՒՏՈՄ

112. Գոց սորվիլ և արտասանել այս ոտանաւորը։

113. Արձակի վերածել այս ոտանաւորը։

114. Նշանակել այս ոտանաւորին մէջ գտնուած *որոշիչ, անորոշ* և *դիմորոշ յօդերը*։

115. Մէյ մէկ *անորոշ յօդ* դնել հետեւեալ իսօսքերուն մէջ կէտերուն տեղ.

Աշխատող մարդու ... ժամանակը միշտ կարճ կ՚երեւայ։ — Արտի տէր անձ ... կ՚ընտրէ հիւղակ ... պարկեշտ կեանքի ... հետ. անսիրտ մարդ ... ալ կը փափաքի ունենալ ապարանք ... փոյթ չէ թէ հոն իրեն հետ ապրին շատ մոլուքիւններ։ — Ի՞նչ երկայն կ՚երեւայ գիշերը քուն չունեցող անձի ... համար։ — Սոկրատ կ՚ըսէր. Թող ունենամ տնակ ... շատ ... ճշմարիտ բարեկամներով լեցուն։ — Այնպիսի կերպով ... երեսս նայեցաւ որ, վախցայ։ — Կը նախընտրեմ քիչ ... պակաս ուսում և քիչ ... աւելի համեստութիւն։ — Շատ անգամ գեղեցկութիւնը փորձանք ... է անխելք կանանց քով։ — Ներեցէք որ կարծիք ... ալ ես յայտնեմ։ — Ճշմարիտ քոյր ... եմ ես իրեն համար։ — Մայր ... եղաք դուք ինծի։ — Ցաւակնոտ աղջիկ ... չեմ կրնար սիրել, եթէ նոյն իսկ իմս ըլլայ։ — Խնամքով պատրաստուած գործ ... հանոյք կը պատճառէ ուղղամիտ մարդոց, և նախանձ կ՚ազդէ նենգամիտներուն։

ՅՕԴԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Իր տգիտութեամբ համեստ մարդ մը իր գիտութեամբ հպարտ մարդէն աղէկ է։ — Քսաներորդ դարուս չրջանը 2000ին վերջը պիտի աւարտի։ — Այս թաշկինակը դուն ա՛ռ, գրպանիդ ինձի՛ տուր։ — Մենք՝ աշակերտներս՝ որքան ալ յառաջադէմ ըլլանք, դեռ շատ անփորձ ենք։ — Քու միտքդ կրնայ զգացմանցս խորը թափանցել, բայց չի կրնար երբեք զանոնք խախտել։ — Դուք՝ պզտիկներդ՝ պէտք է աւելի մտիկ ընէք քան թէ խօսիք։ — Փոխանակ գլխարկնիս զարդարելու, գլուխնիս զարդարենք։ — Դիմացի նստարանը քուկդ է, քովինդ ալ իմս է։ — Տեղւոյս բնակիչները շատ ընթերցասէր են։ — Կեանքերնուդ մէջ մի՛ մոռնաք թէ ստախօս մարդը կրնայ շատ մը խարդախ գործեր ընել։ — Կեանքը պատրանքներու շարք մըն է։

Մարդ մը	մը	անորոշ յօդ մարդուն։
մարդէն	ն	որոշիչ յօդ։
դարուս	ս	ցուցական դիմորոշ յօդ։
2000ին	ն	որոշիչ յօդ։
վերջը	ը	որոշիչ յօդ։
թաշկինակը	ը	որոշիչ յօդ։
գրպանիդ	ն	որոշիչ յօդ։ դ ստաց. դիմորոշ յօդ։
աշակերտներս	ս	անձնական դիմորոշ յօդ։
միտքդ	դ	ստացական դիմորոշ յօդ։
զգացմանցս	ս	ստացական դիմորոշ յօդ։
խորը	ը	որոշիչ յօդ։
պզտիկներդ	դ	անձնական դիմորոշ յօդ
գլխարկնիս	ս	ստացական դիմորոշ յօդ։
գլուխնիս	ս	ստացական դիմորոշ յօդ։

նստարանը	ը	որոշիչ յօդ։
քուկդ	դ	ստացական դիմորոշ յօդ։
քովինդ	ն	որոշիչ յօդ։ դ ստաց. դիմորոշ յօդ։
իմս	ս	ստացական դիմորոշ յօդ։
Տեղւոյս	ս	ցուցական դիմորոշ յօդ։
Կեանքերնուդ	դ	ստացական դիմորոշ յօդ։
մարդը	ը	որոշիչ յօդ։
շատ մը	մը	անորոշ յօդ շատին։
կեանքը	ը	որոշիչ յօդ։
շարք մըն	մըն	անորոշ յօդ շարքին։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՄԵՂՈՒՆԵՐՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երբեմն, ամառուան աղուոր օրերուն, մեղուներու չողչողուն գումարտակներ զինուորական կարգով դուրս կ՝ելլեն բաց օդին մէջ մարտնչելու համար։ Իրենց շարժումէն առաջ կուգայ ուազմային չռինդ մը, որ չեփորին հնչման պէս կ՝ոգեւորէ մարտիկը, և կը վարէ զայն պայքարի։ Մեղուները սարսռալով կու գան տեղ մը կը հաւաքուին, և անոնցմէ իւրաքանչիւրը իր փողփողուն զէնուզարդով սպառազէն՝ երեւան կու գայ, սրելով իր արիւնռուչտ ակռան ու խայթոցը։ Տեսնելու արժանի է թէ ի՛նչ վարպետութեամբ կը գործածեն իրենց զէնքերը, ու չեփորին սարսափելի ձայնովը ի՛նչպէս կը շարժեն թեւերնին ու սրունքնին։ Մեղուները իրենց դշխոյին չուրջը հաւաքուած կը կենան, և ա՛լ անոր տաղաւարէն չեն բաժնուիր, բարձրաձայն կանչելով միւս երամները, և զրգռելով զանոնք մարտնչելու։

Երբ դաշտը դալարիքով ծածկուած է, մեղուները իրենց ամրոցներէն դուրս կ՝ելլեն բաց օդին մէջ ոգորելու համար։ Նախ կը լսուի զէնքերու չկահիւնը, որ իրենց թեւիկներուն բախման չչուկին կը խառնուի։ Ստուերոտ հովիտը կը թնդայ անոնց յարուցած ժխորէն,

և մարտիկներուն համախմբումը մեծ ամբոխ մը կը ձեւացնէ։ Անհաղթ, զարհուրելի տեսարան։ Օդին բարձունքէն այնքան դիակներ կ'անձրեւեն գետնի վրայ, որքան խոզկաղիններ կը թափէ սաստկաշունչ քամին կաղնիէն վար։ Թռնուած անձրեւի պէս կը տեղան անոնք կամ սարսափելի կարկուտի նման։ Դշխոնները ծիածանին բոլոր գոյներով փողփողուն կը ներկայանան պատերազմիկներուն մէջտեղը, մեծ կորով մը ցոյց տալով իրենց փոքրիկ մարմնոյն մէջ։ Տիրելու համար ծնած՝ և փառքի վարժուած՝ չեն ուզեր տեղի տալ, ոչ ալ նահանջ միտքերնէն անցընել, մինչև որ հզօրագոյն կողմէն յաղթահարուած՝ մէկ կամ միւս կողմը չիյնայ դիտապատ։

ՌՈՒՉԷԼԼԱՅԻ (1)

116. Լուծել այս հատուածին անուններն ու յօդերը։

ԿԵԱՆՔԻ ՍԱՅԼԱԿԸ

Մեր սայլակը սըրընթաց
Կը գըլտորի սաստկավար.
Ժամանակն է ծերունի
Անոր անխոնջ կառավար։

Առտուն կանուխ երբ կ'ելլենք
«Այդ սայլակը գըրաւիչ
Քըշէ», կ'ըսենք խենդի պէս
Անգոսնելով ամէն ինչ։

(1) Ճիովաննի Ռուչէլլայի իտալացի բանաստեղծը Ֆլորանսի մէջ ծնած է 1475ին և մեռած 1525ին։ Ունի ողբերգութիւններ և քերթուածներ։

Բայց կէսօր է. յոգնած ենք.
Ճամբաներէն ցընցուած,
Եւ վախնալով փոսերէն
Կ'ըսենք. «Ցիմար, ալ կամաց։»

Ան կը քըշէ, ինչպէս միշտ.
Մենք վարժուած այդ ցընցման
Իրիկուան դէմ կը նիրհենք
Մինչև հասնինք կայարան։

Թարգմանութիւն ԲՈՒՇԷՌԻՆ (1)

ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆԻ (2)

117. Գոց սորվիլ, և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

---

(1) Ռուս բանաստեղծ, որ ծնած է 1799ին և մեռած 1837ին։

(2) Լեւոն Սեղբոսեան, ժամանակակից հայ գրագէտ, գրած է քերթուածներ և վէպեր։

Ա Ծ Ա Կ Ա Ն

ԿԱՆՈՆՆԵՐ

397. Ածականը բառ մըն է, որ գոյականի մը հետ կը գործածուի՝ անոր մէկ հանգամանքը ցոյց տալու կամ զայն որոշելու համար։

398. Ածականները ոչ թիւ ունին և ոչ հոլով, և յօդ չեն առներ. Փոքրիկ գրիչը, փոքրիկ գրչին, փոքրիկ գրչեն, փոքրիկ գրչով, փոքրիկ գրիչները, փոքրիկ գրիչներուն, փոքրիկ գրիչներեն, փոքրիկ գրիչներով։

399. Ածականները երբ առանձին գործածուին, այն ատեն գոյականի տեղ կ'անցնին, և անոր բոլոր փոփոխութիւնները կը կրեն, ինչպէս. բարին, բարիեն, բարիները, և այլն։

400. Հինգ տեսակ ածական կայ. Որակական, ցուցական, սացական, թուական, անորոշ։

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

401. Որակական ածականը գոյականի մը որպիսութիւնը կը ցուցնէ. Առաքինի մարդ, աշխատասէր տղայ։

402. Որակական ածականը երեք աստիճան ունի. Դրական, բաղդատական, գերադրական։

403. Դրական աստիճանը՝ առանց բաղդատութեան՝ առարկային ինչպէս ըլլալը կը ցուցնէ, ինչպէս. բարձր, փոքր։

404. Բաղդատական աստիճանը երկու առարկաներ իրարու հետ համեմատելով՝ ցոյց կու տայ մէկուն առաւելութիւնը, հաւասարութիւնը կամ նուազութիւնը։

405. Բաղդատականը երեք է.

1. Երբ «առաւելութիւն» նշանակէ, երկու ձեւով կ'ըլլայ. Ա. քոյ յետադաս մասնիկով. բարձրաքոյ, փոքրաքոյ։ Բ. -էլ մակբայով. -էլ ծանր, -էլ փոքր։

2. Երբ «հաւասարութիւն» նշանակէ, նոյն-ն, նոյն-ը-ի կամ նոյն իմաստը ունեցող մակբայներով, կամ ը-ի նախադրութեամբ կը կազմուի. Այս քարը նոյն-ը-ի ծանր է որ-ը-ի այդ քարը։ Այս տունը այդ տան ը-ի փոքր է։

3. Երբ «նուազութիւն» նշանակէ, նո-ա մակբայով կը կազմուի. նո-ա ծանր, նո-ա փոքր։

406. Առաւելութիւն կամ նուազութիւն ցոյց տուող բաղդատականները կը կազմուին նաև պարզապէս բայառական խնդիր առնելով. Իրմէ գեղեցիկ, քրոջմէդ ազնիւ։

407. Երբ բաղդատութեան առարկան ածական մը կամ մակբայ մըն է, աւելի քան կամ աւելի քան թէ կը գործածուի, ինչպէս. Այս գիրքը -էլ գքսանեցուցիչ է -ն քան օգտակար. իր հասակը -էլ կարճ կ'ըսուի -ն երկար։ Այս պարագային չ'ըսուիր երբեք՝ օգտակարէ -էլ գքսանեցուցիչ. երկայնէ -էլ կարճ։

408. Առաւելութիւն նշանակող բաղդատական գոյն մասնիկը երբեք չի գործածուիր բուն աշխարհաբար ածականներու վրայ, և չ'ըսուիր երբեք. աղեկագոյն, աղուորագոյն, գեշագոյն, պզտիկագոյն, պաղագոյն, խենդագոյն, և այլն։

409. Ընտիր ածականին բաղդատականը կ'ըլլայ աւելի ընտիր կամ ընտրելագոյն։

410. Գերադրականը աստիճանը ցոյց կու տայ թէ առարկայ մը իր բոլոր նմաններէն գերազանց կամ ստորին է։ Գերադրականը երեք ձեւ ունի.

1. Ա.Դ բառով բարդութեամբ. ՈՄԴ-ածաւիր, ՈՄԴ-նաբարար:

2. Ա.Դ բառին բացառականով. ՈՄԴԷՆ ծաւիր, ՈՄԴԷՆ բարար:

3. Ածականը կրկնելով. աղեկին աղեկը, գեշին գեշը:

411. Բուն աշխարհաբար ածականները պէտք չէ ամենի բառով բարդել. լաւագոյն է ըսել ամենեն պզտիկ քան թէ ամենապզտիկ, ամենեն գեշ քան ամենագեշ, ամենեն պաղ քան ամենապաղ, և այլն:

412. Ձայնաւորով սկսող ածականները ամենի բառին հետ բարդութեամբ գերադրական ընելու չէ, պէտք չէ ըսել. ամենաանոյշ, ամենազնիւ, ամենաառոյգ:

413. Ածականին նշանակութիւնը աստիճան մը կ'աւելնայ կամ կը պակսի էէկ մասնիկով. մանրէէկ, ծանրէէկ, խոշորէէկ, շատէէկ, ցայնէէկ, և այլն: Մեծ բառին առջև էէկ՝ է-ի կը փոխուի. մեծէ-կ:

414. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ.— Դրական ածականներուն շատերը ընդհանրապէս խնդիր չեն առներ, ինչպէս. ճերմակ, անոյշ, և այլն:

415. Կան սակայն դրական ածականներ որոնք զանազան հոլով խնդիր կ'ուզեն:

416. Ուղղական հոլով խնդիր կ'առնեն այն ածականները որոնք չափ կամ աստիճան ցոյց կուտան, ինչպէս. Հինգ կանգուն բարար: Բաան տարմ ծաւիր: Երկու մաս երկայն: Հինգ կանգուն, բաան տարմ, երկու մաս ուղղական խնդիր են բարար, ծաւիր, երկայն ածականներուն:

417. Սեռական հոլով խնդիր կ'առնեն էէ վերջաւորող ածականները. Ցաւերու ամոիջ, աշխարհի փրկիչ:

418. Տրական հոլով խնդիր կ'առնեն նման, կարոս, արժանի, ծարաւ, անծանօթ, օգտակար, վնասակար,

նպաստաւոր, հակառակ, կարող, տեղեակ, հնուս, և այլն, ինչպէս նաև եղի վերջաւորող բոլոր ածականները. Մարդկութեան օգտակար, տեսնելու արժանի, քեզի նպաստաւոր, ամենի բանի հնուս, ընտանիքին սիրելի, հացի կարոս, և այլն:

419. Բացառական հոլով խնդիր կ'առնեն տարբեր, զերծ, հեռու, անտես, անոյշ, և այլն. Վտանգէ զերծ, պատնածէս տարբեր, աչքէ հեռու, ապրուստէ զուրկ:

420. Գործիական հոլով խնդիր կ'առնեն լի, լեցուն, զեղուն, նշանաւոր, և այլն. Ջուրով լեցուն, գիտութեամբ նշանաւոր:

421. Եաղ, ուած կամ ած վերջացող դերբայ ածականներէն ոմանք արական խնդիր կ'առնեն, ոմանք բացառական և ոմանք գործիական. Բարերու զարնուած, յոյսէ զրկուած, ընտանիքին զրեաղ, երեսէ ինկած, հոգերով բեռնաւորեալ, քրտինքով թրջուած, և այլն:

422. Ածականները խնդիր կ'առնեն նաև դիմորոշ յօդով գոյական մը կամ գոյականաբար գործածուած բառ մը, ինչպէս. Թեւը փրթած թռչուն մը: Ընկերը դիւրին, ընկերը դժուար խօսք մը: Հոգին եղած կին մը: Խելքը գլխին գացած անձ մը:

423. Բաղդատական ածականները միշտ բացառական հոլով խնդիր կ'առնեն, երբ առաւելութիւն կամ նուազութիւն կը յայտնեն. Ձեզմէ աւելի գեղեցիկ: Քրոջմէդ նուազ ազնիւ:

424. Գերադրական ածականները երբեք խնդիր չեն առներ:

425. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.—Որակական ածականը գոյականէ առաջ կը դրուի ընդհանրապէս, սակայն կրնայ ետքը դրուիլ հետեւեալ պարագաներուն մէջ.

1. Երբ խնդիր ունի, կամ քանի մը բառով բաղադրեալ է. Տղայ մը տեսանիք ապրուստէ զուրկ եւ պաշտպա-

նուրեան կարոս : Միջոցներ ձեռք առի բեզի նպաստաւոր, Մանկիկ մը տեսայ շոյսի պես աղուոր : Կին մը հինգ զաւկի տեր :

2. Բանաստեղծական արձակի մէջ ոճի վայելչութեան և ներդաշնակութեան համար. Խեղճ տղեկ մըն էր տժգոյն, տրտում՝ մարած նայուածքով : Ծաղիկ մը չթնաղ եւ փողփողուն :

3. Ոտանաւորի մէջ յանգի և վանկի յարմարութեան համար.

Ու գիտուրեանց մէջ օրէ օր
Կը զարգանար մանկիկն աղուոր :

126. Կան կարգ մը ածականներ որոնք իբր գոյական ալ կը գործածուին. Անառուան տարը : Գիշերուան ցուրտը :

127. Երբ ածական մը առանձին մնայ, այսինքն առանց գոյականի, գոյականաբար կը գործածուի և կրնայ յօդ առնել, յոգնակի ըլլալ և հոլովուիլ. [Կանանչը դեղինին եւ կապոյտին բաղադրութիւնն է : Զարերը երգ չունին :

128. Երբ երկու ածական իրարու վրայ իյնան, վերջինը իբրև գոյական կը գործածուի. Երկու վերջինները : Վերջին երկուքը: Կարծեցեալ գիտունը: Գիտուն կարծեցեալը :

129. Երբ ածական մը սեռական գոյականի մը առջև դրուի, կը նշանակէ նոյն գոյականին այս կամ այն տեսակը. Ջուրին տարը չի խմուիր : Մարգրիտին խոշորը յարգի է : Սոխին անոյշը կ'ըլլայ :

130. Ածականները երբ բայի մը վրայ դրուին մակբայ կ'ըլլան. Նոր սկսաւ կարդալ : Աղուոր կը խօսի : Միայն կ'արտասանէ :

131. Երբ ածական մը կրկնուի գոյականի մը քով, սաստկութեան դաղափար կուտայ. Սուր սուր խօսքեր : Մեծ մեծ խոստումներ :

ՀԻԱ. ՀԱՆԳՈՒՅՑ

ՔԵԱԹԻՊԵԱՆ ԵՒ ՍՊԱՐԴԱԼԵԱՆ

Երկուքն ալ նոյն տարիին մէջ անակնկալ կերպով մարեցան : Նոյն տարիին և գրեթէ նոյն տարիքին մէջ դրաւեցան երկուքն ալ, Յովհաննէս Քեաթիպեան և Յակոբ Սպարդալեան : Ամէնուն համար ուշնիլ և ամէնուն չրթունքով օրհնուիլ՝ այս եղաւ ճակատագիրը, այս էր կոչումը այն երկու չքնաղ անձերուն ալ : Դիտութիւնը, երկնային գիտութիւնն էր անոնց տիրական և անբաժան առաքինութիւնը. որբերու և կարօտեալներու և առհասարակ տառապեալներու համար արտասուքով լեցուն էին անոնց աչքերը, և ոսկիներով լեցուն՝ անոնց քսակները. բայց մանաւանդ մարմնոյ ցաւերով տառապեալներու՝ կրնանք ըսել՝ նուիրուած էին այդ երկու բարեգութ ազգայիններուն կեանքը : — Յակոբ Սպարդալեան կարծես հարստութիւն դիզեց միայն՝ հոյակապ հիւանդանոց մը կառուցանելու համար, և Յովհաննէս Քեաթիպեան կարծես գիտութիւն համբարեց միայն, — գիտութեան աղբիւրը արդէն ունենալով իր մէջ, — արծաթապաշտ հիւանդները ապաքինելու, և իր ճարտարութեան արդար վարձքը անարծաթ հիւանդներու ոգեպահիկին յատկացնելու համար :

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ (1)

118. Այս հատուածին մէջ գտնուած ածականներուն տեղ ուրիշ հոմանիշ ածականներ, և գոյականներուն ալ առջև մէյ մէկ յարմար ածական դնել.

119. Հետևեալ բառերուն առջև երեքական յարմար ածական դնել.

---

(1) Եղիա Տէմիրճիպաշեան, ծանօթ հրապարակագիր և գրագէտ, որ հրատարակած է այլ և այլ երկասիրութիւններ բազմազան նիւթերու վրայ.

Գիր, փոթորիկ, գարուն, աշուն, թուղթ, գինի, շղթայ, անդունդ, պատմութիւն, ջուր, բարեկամ, թշնամի, ուսուցիչ, հեղեղատ, փիղ, անտառ, ժպիտ, թիթեռնիկ, ծաղիկ, պտուղ, բանակ, հարուած, ծիծեռնակ, դէմք, օձ, քիթ, պարտէզ, կոհակ, սեղան, ժայռ, ծով։

120. Երեքական գոյականներ մարցնել հետեւեալ ածականներուն։

Տկար, տափակ, անաչառ, ողորմելի, ահարկու, միամիտ, հանճարեղ, որոշ, անձնուէր, կեռ, համադամ, արագ, գրահաշուական, ցրտաարսուռ, անխոնջ, երկրաչափական, պատմական, անբասիր, անհուն։

121. Յաջորդ նախադասութեանց մէջ գտնուած գիծերուն տեղ դնել հետեւեալ ածականներին մէկը։

Ուղղամիտ, ծաղրելի, փայլուն, թեթև, երկայն, անձնուէր, կարծր, ահագին, սեւ, չոր, նոր, շաղփաղփ, ծանր, արագ, առասպելական, նենգամիտ, խնամոտ։

Ծանրաչափը կը բարձրանայ երբ օդը — ըլլայ։ Փիղը հակառակ իր — և — մարմնոյն — և — քալուածք մը ունի։ Հարերութիւնը — բարեկամ մըն է, որ կ'օգնէ մեզի մեր վիշտերուն ծանրութիւնը կրելու։ Ջայլամին հաւկիթը — կճեպ մը ունի, — ձեւով ու փղոսկրի պէս — ։ Ափրիկէն — աշխարհը կը կոչուի, և Ամերիկան — աշխարհ։ Յունաստանի պատմութեան մէջ . . . գրոյցներ շատ կան։ Անծեղը — թռչուն մըն է։ Պարծենկոտ մարդը — կ'ըլլայ։ — բարեկամը — թշնամիէն աւելի վտանգաւոր է։ Պէտք է — ըլլալ ամէնէն դոյն բաներու մէջ իսկ։

122. Մէյ մէկ խնդիր տալ հետեւեալ ածականներուն վերոյիշեալ օրէնքներուն համեմատ։

Անարժան, հռչակաւոր, փոփոխուն, կարճ, լայն, ազատ, ծանր, գիտակ, անկարող, մօտ, վեր, գերազանց, ստորին, զարդարուն, առլցուն, հզօր, տկար, յափրացած, զզուած, ծանրացած, բեռնաւորեալ, նուազ շահագրգիռ, աւելի հարուստ, աղուոր, պակաս չար, սիրիչ, երգիչ, յուզեալ, պարփակեալ, շրջապատեալ, ապշած, մարած, վիրաւոր, անթափանց, անտարբեր, վշտահար, զարնուած, ակնկառոյց, խոնարհ, ծարաւ, փափաքող, հետեւող, ծառայող, աղքատ, անհասկանալի, համբերող, ծիծաղելի, անհամբոյր, անտանելի, քաղցր, հակակիր, յարգելի, յուսահատ, գեղազարդ, պանծալի, կարեկից։

ՆԵՂՈՍ ԳԵՏԸ ԱՄԱՌՈՒԱՆ ՄԷՋ

Միջօրէին արեւը իր կապարէ պաքները կ'արձակէր . գետափին մոխրոտ տիղմերէն բոցափայլ ցոլումներ կը ցայտէին . բիրտ լոյս մը՝ իր հոծութեամբ շատ փայլուն և շատ փոչելից՝ բոցաճաճանչ հեղեղներ կ'անձրեւէր . երկինքին կապոյտը տաքութենէն կը ճերմկէր , ինչպէս մեռաղը փուռին մէջ . հրաշէկ մշուշ մը կիզախանձ հորիզոնին վրայ կը մնար ։ Բնաւ ամպ մը չէր անցներ յաւիտենականութեան պէս անփոփոխ ու տրտում այդ երկինքին վրայէն ։ Նեղոսի ջուրը կը նիրհէր գոգցես իր ընթացքին մէջ , և հալած անագէ սիրոցի մը պէս կը փռուէր . Բնաւ շունչ մը չէր խորշոմեր անոր մակերեւոյթը , և իրենց ծղօտներուն վրայ չէր կքեր բաժակները լոտոսներուն , այնքան կարկամ որ քանդակուած կ'երեւային . հաղիւ հեռուէն հեռու ձուկի մը խայտանքը արծաթ թեւեր կը վէտվէտէր հոն , և նաւակներուն թեւճակները կարծես դժուարաւ կը ճեղքէին այդ սառ կարած ջուրին մրագոյն պարուտակը ։ Ափերը ամայի էին. անհուն հանդիսաւոր լռութիւն մը կը ծանրանար այդ հողին վրայ , որ մեծ գերեզման մը եղաւ յաւէտ , և որուն կենդանի բնակիչները կարծես մեռելները զմռսելէ ուրիշ բան գործ չունեցան ։ Տրտմութիւն ամուլ , չեչաքարի պէս չոր , անթախիծ , անդադրում , տրտմութիւն մշանջենապէս անասպատին նայելէ ձանձրացած ափինքի , որ չի կրնար զատուիլ կրանիտէ պատուանդանէն , ուր կը սրէ իր ժանիքները քսան դարէ ի վեր ։ Լռութիւնը այնքան խորունկ էր , որ կարծես աշխարհք համրացեր , և օդը՝ ձայն փոխադրելու յատկութիւնը կորսնցուցեր էր ։ Միակ շչուկը , որ կը լսուէր , տաքէն մարմրող կոկորդիլոսներուն փսփսուքն էր և անոնց խեղդուկ ծիծաղը , որոնք գետին կնիւններուն մէջ կը գլորտկէին , կամ քաջահաւ մը , որ մէկ տոպիկը փորին տակ՝ և վիզը ուսերուն մէջ՝ կայնելէ յոգնած՝ տեղէն կը շարժէր , ու իր ճերմակ թեւերով յանկարծ

օդը մարակելով, կ'երթար կը թաւէր կոթողի մը կամ արմաւենիի մը վրայ։

ԹԷՕՖԻԼ ԿՈԹԻԷ (1)

123. Զրուցագրել այս հատուածը և կետադրութեան նշաններ դնել։

124. Փոխել այս հատուածին մէջ գտնուած բոլոր ածականները, և անոնց տեղ հոմանիշ ածականներ դնել։

ԻՐԵՐՈՒ ՏԽՐՈՒԹԻՒՆԸ

Տըխուր էր բարը յիշելով կաղնին,
Որ ազատ կ'ասի ընդդէմ արեւին,
Դիտելով դաշտը ժայռէն բարձրադիր
Սարսռոտ և խընդուն երբ օդն է կարմիր։
Տըխուր էր կաղնին յիշելով երէն,
Որ կը վաղվըզէ մուռ պուրակներէն,
Ցից գըլխով կայտառող զուարթ եղջերուն,
Երկինք նետելով հընչիւնն երգերուն։
Երէն տըխուր էր, երբ արծիւն յիշեր,
Որ կը սըլանայ բիլ երկինքն ի վեր
Ծըծելով լոյսը աչքին բիբերով.
Մարդն ալ տըխուր էր Աստուած յիշելով։

ՀԱՆՐԻ ԳԱՉԱԼԻՍ (2)

125. Դոց սորվիլ և արտասանել այս հատուածը։

---

(1) Վիպասան և քննադատ Ֆրանսացի. Ծնած 1811ին, մեռած 1873ին։

(2) Ֆրանսացի ժամանակակից բանաստեղծ, ծնած 1840ին։

ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

132. Ցուցական ածականները ցոյց կուտան այն անունները որոնց վրայ կը խօսուի։

133. Ցուցական ածականներն են. այս, սա, սա, այդ, աս, այն, ան։

134. Այս կը գործածուի մեր քով գտնուող բանի մը համար. այդ՝ մեր խօսակցին քով գտնուողին, այն՝ հեռու եղողին համար։

135. Սա, աս, ան ցուցական ածականները հիմայ ա՛լ գրեթէ բնաւ չեն գործածուիր գրաւոր աշխարհաբարի մէջ, թէև միշտ կը մնան խօսուած լեզուին մէջ։

136. Ցուցական ածականէն ետքը եկող անունը սովորաբար որոշիչ յօդ կ'առնէ. Այս կաղամարը, այդ կատուն, այն սեղանը։ Բացառիկ են այն բառերը և հոլովները որոնք որոշիչ յօդ չեն առներ, ինչպէս բացատրուած է Յօդի գլուխին մէջ։

137. Ցուցական ածականը իրարու յաջորդող գոյականներու առջև կրնայ չկրկնուիլ. Այս աշխատութիւնն ու անձնուիրութիւնը։ Այն մարդն ու կինը։ Նոյնպէս երբ գոյականի մը մէկէ աւելի ածականներ կ'ընկերանան, հարկ չկայ ցուցականը կրկնելու իւրաքանչիւր ածականի առջև, նոյն իսկ երբ այդ ածականները տարբեր առարկաներու վերաբերին. Սա մեծ եւ պզտիկ տուները։ Այս ընդարձակ ու բեղմնաւոր դաշտերը։

ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

438. Ստացական ածականները բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն, և խօսքի մէջ յատկացուցիչի դեր կը կատարեն. Իմ տունս, քոնս տեսրակդ, էր գլխարկը:

439. Ստացական ածականները անձնական դերանուններուն սեռականներէն կը կազմուին, և հետեւեալներն են.

	Եզակի		Յոգնակի	
Ա. դէմք	Իմ	կամ իմին	Մեր	կամ մերին
Բ. »	Քու	» քուկին	Ձեր	» ձերին
Գ. »	Իր	» իրեն	Իրենց	

440. Իմին, քուկին, իրեն, մերին, ձերին ստացական ածականները հիմայ ա՛լ գրեթէ չեն գործածուիր գրաւոր աշխարհաբարի մէջ, թէև ռամիկ խօսակցութեանց մէջ գործածողներ կան: Այս ձեւերը կ'երեւան երբեմն գրականութեան մէջ ալ, երբ ոտանաւորին վանկերը կամ յանգերը պահանջեն, ինչպէս.

Մըրրիկն օր մը խորտակեց
Նեցուկս էջդ՝ կաղնին մեծ:

կամ

Երկրի մէջ ամեն իր
Ունի մաս արեւեն.
Փուշն ունի վարդ կարմիր,
Եւ գիշերն այգն էջդ:

441. Ան և անոնք անձնական դերանուններուն սեռականները, անոր և անոնց, կրնան իր և իրենց ստացական ածականներուն տեղ գործածուիլ իբրև յատկացուցիչ, ինչպէս. Անոր խօսուածքը հաճելի չէ ինծի

(էր խօսուածքը հաճելի չէ ինծի:) Անոնց գիրքերը չստացանք (էրէնց գիրքերը չստացանք:)

442. Միայն պէտք է դիտել որ երբ խօսքին մէջ երկու հատ երրորդ դէմքի անձ կայ, գլխաւոր դեր կատարող անձին համար՝ իր, իրենց կը գործածուի, իսկ երկրորդականին համար՝ անոր, անոնց. Մայրս գիտէր որ էր խօսքերը մեծ ազդեցութիւն պիտի ընէին քրոջը՝ եւ անոր աղջկան վրայ:

443. Իմ, քու, իր եզակի ստացական ածականներուն կցուած անուններն ս, դ, ն կամ ը դիմորոշ յօդերը կ'առնեն. իմ կարս, քու ասեղդ, իր մատնոցը:

444. Մեր, ձեր, իրենց յոգնակի ստացական ածականներուն կցուած անուններն ը որոշիչ յօդը կ'առնեն. մեր դերձանը, ձեր ակնոցը, իրենց ասեղը, նոյնպէս անոր գրիչները, անոնց տետրակները: Բացառիկ են այն բառերը և հոլովները որոնք որոշիչ յօդ չեն առներ, ինչպէս բացատրուած է Յօդի գլուխին մէջ:

445. Իմ, քու, իր ստացական ածականները ընդհանրապէս զանց կ'ըլլուին, և անոնց տեղ՝ ս, դ, ն կամ ը դիմորոշ յօդերը միայն կը դրուին գոյականներուն վրայ. դերձանս, ասեղդ, մատնոցը: Բայց երբ անունները տարբեր դէմք ունին, այն ատեն հարկ կ'ըլլայ ամէնուն առջև ածականները նշանակել. Իմ ասեղս քարակ չէ, բայց քու դերձանդ հատ է: Իմ աչ թեւս կը ցաւի, քու աղ ձախդ:

446. Յոգնակի ստացական ածական առնող գոյական մը կրնայ յոգնակի ըլլալ երկու կերպով.

1. Պարզ յոգնակի, որ պարզապէս յոգնակի է ստացողին տեսակէտով. Մեր տետրակը, Ձեր նաւակը:

2. Կրկին յոգնակի, որ թէ՛ ստացողին և թէ՛ ստացուածին տեսակէտով յոգնակի է. Մեր տետրակները, Ձեր նաւակները:

447. Մեր, ձեր, իրենց սեռական ածականներն ալ կրնան զեղչուիլ հետեւեալ օրէնքներով.

448. Երբ գոյականը բազմավանկ է նիս, նիդ, նին մասնիկները կ'աւելցուին. Գաւառ-ՆԷ, գաւառ-ՆԷՐ, գաւառ-ՆԷՆ. գաւառներ-ՆԷ, գաւառներ-ՆԷՐ, գաւառներ-ՆԷՆ:

449. Երբ գոյականը միավանկ է, պէտք է զանազանել.

1. Պարզ յոքնակին, որ կը կազմուի երնիս, երնիդ, երնին մասնիկները աւելցնելով գոյականին վրայ. Տուն-ԷՐՆԻՍ (մեր տունը), տուն-ԷՐՆԻՐ (ձեր տունը), տուն-ԷՐՆԻՆ (իրենց տունը):

2. Կրկին յոքնակին, որ կը կազմուի նիս, նիդ, նին մասնիկները աւելցնելով գոյականին վրայ. Տուներ-ՆԻՍ (մեր տունները), տուներ-ՆԻՐ (ձեր տունները), տուներ-ՆԻՆ (իրենց տունները):

450. Նիս, նիդ, նին մասնիկներուն ծայրը գրաւած ս, դ, ն տառերը դիմորոշ յօդ են, իսկ նի յոքնակի չինող մասնիկ մըն է, որ առանձին ալ կը գործածուէր երբեմն նախնեաց ամկօրէնին մէջ:

451. Գոյականները թէ՛ սեռական ածականով և թէ՛ միայն դիմորոշ յօդով կամ նիս, նիդ, նին մասնիկներով կրնան հոլովուիլ. Իմ գիրս, իմ գրիս, իմ գրէս, իմ գրովս, իմ գիրքս, իմ գիրքերս, իմ գիրքերուս, իմ գիրքերէս, իմ գիրքերովս, մեր գիրքը, մեր գրին, մեր գրէն, մեր գրով, մեր գիրքերը, մեր գիրքերուն, մեր գիրքերէն, մեր գիրքերով, կամ գիրս, գրիս, գրէս, գրովս, գիրքս, գիրքերս, գիրքերուս, գիրքերէս, գիրքերովս, գիրքեր-նիս, գիրք-երնուս, գիրք-երնէս, գիրք-ովնիս կամ գիրքեր-նիս, գիրքեր-նուս, գիրքեր-նէս, գիրքեր-ովնիս:

452. Պէտք է դիտել որ միավանկ բառերուն պարզ յոքնակին և կրկին յոքնակին նոյն ձեւը ունին,

երբ ըսենք տուն-երնիս (մեր տունը) և տուներ-նիս (մեր տունները), բայց ի գործածականէն որ կը տարբերի տուն-ովնիս (մեր տունով), տուներ-ովնիս (մեր տուներով):

453. Աչուրներ, մատուրներ, ոտուրներ յոքնակիները սեռականով բացառաբար կ'ըլլան աչուրնիս, մատուրնիս, ոտուրնիս, աչուրներնիս, մատուրներնիս, ոտուրներնիս, և այլն:

454. Նիս, նիդ, նին և երնիս, երնիդ, երնին մասնիկներով կազմուած ձեւերը արդի աշխարհաբարին մէջ չատ չեն գործածուիր, մանաւանդ երբ հոլովուած են: Լաւագոյն է ըսել. Մեր պարտեզներուն պահապանները, քան պարտեզներնուս պահապանները: Սակայն երբեմն երկարաբանութենէ խուսափելու համար սա ձեւերը կը գործածուին. Ձեռքերնէս ձեռնոց դրած, գլուխնէս գլխարկ՝ ներկայ գտնուեցանք այդ արարողութեան:

455. Սեռական ածականը իրարու յաջորդող գոյականներու առջև կրնայ չկրկնուիլ. Իր քաջութիւնն ու անձնուիրութիւնը: Նոյնպէս երբ գոյականը մէկէ աւելի ածականներու ընկերանայ, հարկ չկայ սեռականը կրկնել իւրաքանչիւր ածականի առջև, նոյն իսկ երբ անոնք տարբեր առարկաներ նշանակեն. Մեր մեծ եւ փոքր տուները, և այլն:

ՀՈԼՈՎՈՒՄ

ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ

	Ա. ԴԷՄՔ	Բ. ԴԷՄՔ	Գ. ԴԷՄՔ
		Եզակի	
Ո. Հ.	Իմ գիրքս	Քու գիրքդ	Իր գիրքը
Ս. Տ.	Իմ գրքիս	Քու գրքիդ	Իր գրքիՆ
Բ.	Իմ գրքէս	Քու գրքէդ	Իր գրքէՆ
Գ.	Իմ գրքովս	Քու գրքովդ	Իր գրքով
		Յոգնակի	
Ո. Հ.	Իմ գիրքերս	Քու գիրքերդ	Իր գիրքերը
Ս. Տ.	Իմ գիրքերուս	Քու գիրքերուդ	Իր գիրքերուՆ
Բ.	Իմ գիրքերէս	Քու գիրքերէդ	Իր գիրքերէՆ
Գ.	Իմ գիրքերովս	Քու գիրքերովդ	Իր գիրքերով
		Պարզ յոքնակի	
Ո. Հ.	Մեր գիրքը	Ձեր գիրքը	Իրենց գիրքը
Ս. Տ.	Մեր գրքիՆ	Ձեր գիրքիՆ	Իրենց գրքիՆ
Բ.	Մեր գրքէՆ	Ձեր գիրքէՆ	Իրենց գրքէՆ
Գ.	Մեր գրքով	Ձեր գիրքով	Իրենց գրքով
		Կրկին յոքնակի	
Ո. Հ.	Մեր գիրքերը	Ձեր գիրքերը	Իրենց գիրքերը
Ս. Տ.	Մեր գիրքերուՆ	Ձեր գիրքերուՆ	Իրենց գիրքերուՆ
Բ.	Մեր գիրքերէՆ	Ձեր գիրքերէՆ	Իրենց գիրքերէՆ
Գ.	Մեր գիրքերով	Ձեր գիրքերով	Իրենց գիրքերով

ՀՈԼՈՎՈՒՄ

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴՈՎ ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ

	Ա. ԴԷՄՔ	Բ. ԴԷՄՔ	Գ. ԴԷՄՔ
		Եզակի	
Ո. Հ.	Գիրքս	Գիրքդ	Գիրքը
Ս. Տ.	Գրքիս	Գրքիդ	ԳրքիՆ
Բ.	Գրքէս	Գրքէդ	ԳրքէՆ
Գ.	Գրքովս	Գրքովդ	Գրքովը
		Յոգնակի	
Ո. Հ.	Գիրքերս	Գիրքերդ	Գիրքերը
Ս. Տ.	Գիրքերուս	Գիրքերուդ	ԳիրքերուՆ
Բ.	Գիրքերէս	Գիրքերէդ	ԳիրքերէՆ
Գ.	Գիրքերովս	Գիրքերովդ	Գիրքերովը
	Միավանկ բառեր		
		Պարզ յոքնակի	
Ո. Հ.	Գիրք-ԵրՆիս,	ԵրՆիդ,	ԵրՆիՆ
Ս. Տ.	Գիրք-ԵրՆուս,	ԵրՆուդ,	ԵրՆուՆ
Բ.	Գիրք-ԵրՆէս,	ԵրՆէդ,	ԵրՆէՆ
Գ.	Գիրք-ԵրովՆիս,	ԵրովՆիդ,	ԵրովՆիՆ
		Կրկին յոքնակի	
Ո. Հ.	Գիրքեր-Ցիս,	Ցիդ,	ՑիՆ
Ս. Տ.	Գիրքեր-Ցուս,	Ցուդ,	ՑուՆ
Բ.	Գիրքեր-Ցէս,	Ցէդ,	ՑէՆ
Գ.	Գիրքեր-ովՆիս,	ովՆիդ,	ովՆիՆ
	Բազմավանկ բառեր		
		Պարզ յոքնակի	
Ո. Հ.	Տետրակ-Ցիս,	Ցիդ,	ՑիՆ
Ս. Տ.	Տետրակ-Ցուս,	Ցուդ,	ՑուՆ
Բ.	Տետրակ-Ցէս,	Ցէդ,	ՑէՆ
Գ.	Տետրակ-ովՆիս,	ովՆիդ,	ովՆիՆ
		Կրկին յոքնակի	
Ո. Հ.	Տետրակներ-Ցիս,	Ցիդ,	ՑիՆ
Ս. Տ.	Տետրակներ-Ցուս,	Ցուդ,	ՑուՆ
Բ.	Տետրակներ-Ցէս,	Ցէդ,	ՑէՆ
Գ.	Տետրակներ-ովՆիս,	ովՆիդ,	ովՆիՆ

ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

456. Թուական ածական կ'ըսուին այն բառերը որոնք անունի մը քանի հատ և քանիերորդ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս. տասը, քսաներորդ, հինգական:

457. Թուական ածականները երեք տեսակ են. բացարձակ, դասական, բաշխական:

458. Բացարձակ են այն թուական ածականները որոնք անունի մը քանի հատ ըլլալը ցոյց կու տան, ինչպէս: Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, տասնըմէկ, տասներկու, տասներեք, տասնըչորս, տասնըհինգ, տասնըվեց, տասնըեօթը, տասնըութը, տասնըինը, քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, ինսնըսուն, հարիւր, հազար, բիւր, միլիոն, երկիլիոն, եռիլիոն, քառիլիոն, հինգիլիոն, վեցիլիոն, եօթնիլիոն, և այլն:

459. Դասական են անոնք որ անունի մը քանիերորդ ըլլալը ցոյց կու տան: Դասական ածականները կը կազմուին բացարձակներուն վրայ երորդ մասնիկը աւելցնելով, ինչպէս. հինգերորդ, վեցերորդ, քսաներորդ, հարիւրերորդ, և այլն:

460. Մէկին դասականը մէկերորդ չ'ըլլար, այլ առաջին: Նոյնպէս բացառիկ կերպով կը չինուին երկրորդ, երրորդ, չորրորդ դասականները:

461. Եօթը, ինը, տասը բացարձակներուն ը գիրը երորդ մասնիկին առջև կը փոխուի ն-ի, ինչպէս. եօթներորդ, ինեներորդ, տասներորդ: Ութը կ'ըլլայ ութերորդ, որովհետև գրաբարի մէջ կը գրուի միշտ ութ:

462. Երբ դասական ածական մը կազմուած է քանի մը թիւերով, վերջինը միայն կ'առնէ երորդ մասնիկը. չ'ըսուիր վեցերորդ հազարերորդ, այլ վեցհազարերորդ,

463. Դասական թուականները կրնան նշանակուիլ նաև հայ այբուբենով միշտ գլխագիր, ինչպէս. Ա. առաջին, Բ երկրորդ, Գ երրորդ, Դ չորրորդ, Ե հինգերորդ, Զ վեցերորդ, Է եօթներորդ, Ը ութերորդ, Թ ինեներորդ, Ժ տասներորդ, ԺԱ. տասնըմէկերորդ, ԺԲ տասներկուերորդ, ԺԳ տասներեքերորդ, ԺԴ տասնըչորսերորդ, ԺԵ տասնըհինգերորդ, ԺԶ տասնըվեցերորդ, ԺԷ տասնըեօթներորդ, ԺԸ տասնըութերորդ, ԺԹ տասնըիններորդ, Ի քսաներորդ, Լ երեսուներորդ, Խ քառասուներորդ, Ծ յիսուներորդ, Կ վաթսուներորդ, Հ եօթանասուներորդ, Ձ ութսուներորդ, Ղ. ինսնըսուներորդ, Ճ հարիւրերորդ, Մ երկուհարիւրերորդ, Եայլն, Ռ հազարերորդ, Ս կամ ԲՌ երկուհազարերորդ, Վ կամ ԳՌ երեքհազարերորդ, Եայլն:

ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

464. Անորոշ ածականները տարտամ և անորոշ իմաստ մը կու տան գոյականին, ինչպէս. Գ-ս գիրքը:

465. Անորոշ ածականները հետեւեալներն են.

Ամէն, բոլոր. — Քանի մը, մէկ քանի, ինչ ինչ. — Ամէն մէկ, իւրաքանչիւր, անձնիւր. — Նոյն, միեւնոյն. — Ուրիշ, միւս. — Ոչ մէկ. — Որ եւ է. — Այս ինչ, այն ինչ. — Այսպէս, այդպէս, այնպէս. այսպիսի, այդպիսի, այնպիսի. ասանկ, ասանկ, անանկ. — Այսքան, այդքան, այնքան. այսչափ, այդչափ, այնչափ. — Որչափ, որքան, որպիսի. — Ո՛ր, ի՛նչ, քանի՛, ինչպէ՛ս, քանի՛ քանի՛, և այլն:

466. Առանցմէ ամէնքն ալ հարցական ձեւով ալ կրնան գործածուիլ, բայց մասնաւորապէս հետեւեալները հարցական կը կոչուին. ո՞րչափ, ո՞րքան, ո՞ր, ի՞նչ, քանի՞, ի՞նչպէս:

ՍՏԱՑԱԿԱՆ, ՑՈՒՑԱԿԱՆ, ԹՈՒԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

467. *Ստացական, ցուցական, թուական և անորոշ ածականները միշտ գոյականէն և որական ածականէն առաջ կը դրուին. Իմ գեղեցիկ շունս կորսնցուցի: Այս չար տղան սիրտս կը հատցնէ: Երկու ծոյլ աշակերտ ունիմ: Միւս բարակ վարագոյրները պիտի գործածեմ:*

468. *Ստացական և ցուցական ածականները անորոշ ածականներէն առաջ կը դրուին ընդհանրապէս. Իր բոլոր դիտողութիւնները ընդունեցայ: Այդ ամէն ըսածներդ գիտեի արդէն:*

469. *Ստացական, ցուցական և անորոշ ածականները թուականներէն առաջ կը դրուին. Իր չորս գիրքերը, այս երկու տղաք, միւս երկու տուները:*

470. *Ստացական ածականները ցուցականներէն առաջ կը գործածուին ընդհանրապէս. Մեր այս գիրքը, իր այդ դիտողութիւնը:*

471. *Սակայն ոտանաւորի մէջ կարելի է ասոնց տեղը փոխել, և նոյն իսկ գոյականէն ետքը դնել զանոնք.*

Մեղանչեցաք ընձեզ իմ
Քեզ հետ ըղձանք մտերիմ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՌԱՅԼՈՒԹԻՒՆ

Մաքդուս պիտոյքներէն չատերուն բուն պատճառն ու աղբիւրները՝ իր բնաւորութիւնը, կիրքերն ու ախորժակներն են, ուստի որչափ որ հնար է, մեր մանկութենէն պէտք է չափաւորութեան, բաւականասիրութեան ու պարզութեան վարժուիլ, և չթողուլ որ մոլութիւնը, ունայնասիրութիւնը և փառասիրութիւնը սիրտերնուս վրայ տիրէ: Դրամը և ուրիշ բարիքները թէպէտ գործածուելու համար եղեր են, բայց այս գործածութեան նպատակը կրկնակի է: Երբեմն մեզի վայելք տալու համար պէտք է ըլլայ, երբեմն ալ ուրիշ նոր բարիքներ հայցնելու համար: Իրեն համար ապրուստի միջոց մը ըլլալիք հարստութիւնը վատնող չդայլը՝ աշխարհիս վրայէն ալ նոյն չափով կատոր մը ճարտարութիւն կը վերցնէ, ու միանգամայն այն ստակով բանելիք աղքատ գործաւորը իր վաստակէն կը զրկէ: Խնայող մարդը չատ հոգերէ ազատ կը մնայ: Պարտք չունեցող մարդը մէկէն չի վախնար, ու թէ որ ունեցածը քիչ ալ ըլլայ, գոնէ այն քիչը իրը եղած կ'ըլլայ: Իր բոլոր աշխատանքը ուրիշներուն անյագ աչքը լեցնելու համար չէ, այլ իր ու իր ընտանիքին բարեկեցութիւնը աւելցնելու համար կ'ըլլայ: Ըրած ժուժկալութիւնները անպտուղ չեն մնար, և թէպէտ առջի բերան քիչ մը դժուարութիւն կը քաշէ, բայց ետքը, իր վիճակը չդայլ մարդուն վիճակին հետ բաղդատելով, երբ տեսնէ որ ծուլութիւնը՝ պարտքերը՝ աղքատութիւնն ու յուսահատութիւնը անոր չորս կողմը աւեր են, գոհ կ'ըլլայ իր վիճակէն, ու իր չափաւորութեան պտուղը եղող բարեկեցութիւնն ու հանգստութիւնը աւելի յարգ կը տանան իր աչքին առջև:

ՆԻԿՈՂԱՅՍ ՁՕՐԱՅԵԱՆ [1]

---

[1] Նիկողայոս Զօրայեան (1821—1859) դշնաւոր մտեսագէտ, գրագէտ և հրապարակագիր. աշխատակցած է Մասիսին, ուր գրած է տնտեսագիտական և մանկավարժական յօդուածներ. թողած է Ընթերասիրութիւն, Բաղդատական տնտեսութիւն և ուրիշ օգտակար երկասիրութիւններ.

126. Զրուցագրել այս հատուածը և կետադրութեան նշաններ դնել։

127. Նշանակել այս հատուածին մէջ գտնուած որակական և ստացական ածականները։

128. Հետագայ խօսքերուն մէջ թուանշանով նշանակուած թիւերը գրով գրել.

Երկրագունտիս շրջապատն է 10.000 փարսախ կամ 40.000 քիլոմէթր։ — Ամէն շրջանակ 360 աստիճանի կը բաժնուի։ — Ամէն միջատ 6 ոտք ունի։ — 3 Շնորհքները, 3 Պարկաները, 3 Ընդղաները և 9 Մուսաները դիցաբանութեան մէջ կարևոր տեղ բռնած են։ — Լաֆոնթէն 100 աչեայ մարդ կ'անուանէ տան մը տէրը։ — Փետրուարը ընդհանրապէս 28 օր է, բայց 4 տարին անգամ մը, այսինքն ամէն նահանջ տարի, 29 օր է։ — Տարուան մէջ կայ 4 եղանակ, 12 ամիս, 52 շաբաթ և 365 օր։ — 7 ամիսներուն մէջ կայ 31 օր, և չորս ամիսներուն մէջ 30 օր։ — Մէկ լիտր զտուած ջուրը 100 կրամ կը կշռէ։

129. Հայ գլխագիրներով գրել հետեւեալ խօսքերուն մէջ գտնուած թուականները.

Կիւթէմպէրկ տպագրութիւնը հնարած է 15րդ դարուն։ — Վենետիկի Թերակղզին Մխիթարեան Միաբանութեան նուիրած է Ս. Ղազարու կղզին 1717ին։—Եղնիկ Կողբացիի Եղծ աղանդոց գիրքը տպուած է առաջին անգամ 1762ին։ — Եէտի-գուլէի Ազգային Հիւանդանոցը շինուած է 1832ին։ — 1066ին ատենները, Անգլիացւոց կաղանդը դեկտեմբեր 25ին էր։

130. Պարզ թուանշանով գրել հետեւեալ հայ գլխագիրներով գրուած թիւերը.

ԺԴ ՌԿԲ ՏՃԱ ԻԵ ՄԼԴ ՌՋ ՌՊԻԹ ՀԸ ՁԱ ՑԺԲ ՆԹ ՈԿՋ

131. Հետեւեալ խօսքերուն մէջէն վերցնել ստացական ածականները և անոնց փոխարէն՝ գոյականներուն վրայ դնել *ա, ի, և, ը* դիմորոշ յօդերն ու *նիս, նիդ, նին, երնիս, երնիդ, երնին* մասնիկները.

Ուղղենք մեր Թերութիւնները։—Զանացէք արժանի ըլլալ ձեր ծնողքին սիրոյն։ — Առիւծը ազնուական կերպարանք մը ունի. իր սրունքներուն բարձրութիւնը լաւ կը համեմատի իր մարմնոյն երկայնութեան։ —

Մեր գործերուն յաջողութիւնը շատ անգամ մեր մտքի արթնութենէն կախում ունի։ — Մարդիկ իրենց գիտցածէն աւելին կ'ուզեն ծախել։ — Մենք մեր կիրքերուն յաղթենք, որպէս զի անոնք չյաղթեն մեզի։ — Դուք ձեր զաւակներուն ոչ միայն մայրը, այլ անոնց դաստիարակը եղաք։ — Վեր բարձրացէք ձեր թշնամիներէն, եթէ կ'ուզէք զանոնք ամչցնել։ — Զանացէք ձեր առողջութեան հոգ տանիլ, վասն զի առողջութիւնը՝ հանճարի և գեղեցկութեան նման եզական յատկութիւն մըն է։ — Ձեր գեղեցկութիւնը խնամելէ աւելի, սիրտերնիդ մշակեցէք, վասն զի առանց բարութեան գեղեցկութիւնը առանց հոտի վարդ մըն է։

132. Պէտք եղած *ցուցական* և *անորոշ* ածականները դնել հետեւեալ խօսքերուն մէջ՝ գիծերուն տեղ.

— բան տեղ մը պէտք է ունենայ, և — գործ ժամանակ մը — տան մէջ ուր տանտիկին մը կայ։ Թելացի մարդը երկու անգամ չի սխալիր — կէտին վրայ։ — դեղը կրնայ մէկուն օգտակար և մէկուն վնասակար ըլլալ։ — կարծիքը կը յայտնեն — բժիշկներ։ Ամերիկայի մէջ կան — ժողովուրդներ որ մարդակեր են։ — քաղցր է երախտագիտութիւնը ազնիւ սրտի մը համար։ — անձերը որ մեր թերութիւնները կ'արդարացնեն վատ շողոքորթներ են։

133. Հետեւեալ նախադասութեանց մէջ *ցուցական* և *ստացական* ածականներուն ընկերացող գոյականներուն վրայ դնել յարմար *դիմորոշ* ու *անորոշ* յօդերը, կամ գեղջել ու փոխել անյարմարները.

Քաղաքավարութիւնը մեզի հետ ապրող անձերը մեզմէ և իր անձէ գոհ ընելու արուեստն է։ — Այդ խօսքերովը չես կրնար զիս համոզել։ — Պատուաւոր մարդը միշտ իր խօսքի տէր է։ — Զանա՛ բու ուսուցիչներու համակրանքի արժանանալ, բու աշխատութեամբը ու բարի վարքովը։ — Կեղծաւորը միշտ իր մտածումի հակառակը կը խօսի։— Եսաւ իր անդրանկութեանը իրաւունք ծախեց Յակոբին։ — Անցեալ շաբաթ ցուրտ առնելով հիւանդացայ. այն օրէ ի վեր անկողին էի։

134. *Անոր* ստացականը դնել հետեւեալ նախադասութեանց մէջ հարկ եղած տեղը *իր* բառը գեղջելով.

Այս մարդը պաշտպանեց իր քոյրը և իր (քրոջ) պատիւը։ — Նորընտիր Ակադեմականը զովեստով խօսեցաւ իր նախորդին և իր (նախորդին) երկերուն վրայ։

135. Հայ գլխագրով նշանակել հետևեալ բուսանշանները.

Սկիւտարի ձեմարանը Կարապետ Պալեան և Յովհաննէս Սէրվէրեան ամիրաներու նախաձեռնութեամբ հիմնուած է 1839ին։ — Մկրտիչ Սանասարեանց հիմնած է Սանասարեան վարժարանը 1881ին Էրզրում։ — Յովսէփ Իզմիրեանց 10,000 ռուբլի՝ նուիրած է ազգին, սահմանելով անոր տոկոսը՝ տարեկան 600 ռուբլի գրական մրցանակի մը, որ կը տրուի երկու տարին անգամ մը գրականութեան և հնախօսութեան վերաբերեալ լաւագոյն երկին։ — Էջմիածնայ ձեմարանը հաստատուած է 1874ին։ — Էսայեան վարժարանը կառուցուած է Բերայի մէջ 1898ին։

ՊԱՐԻԿԻ ՄԸ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պարիկ մը տեսայ անցեալ օր պառաւ,
Որ ելեր կ'երթար վազելով հարաւ,
Ըսի. «— Ինչո՞ւ դուն ըզմեզ կը թողուս,
Ո՛վ բարի պարիկ, պաշտպան ամէնուս։»
«— Ո՛հ, թող որ մեկնիմ, գոչեց անհամբեր,
Հոս եկած չէի դարերէ ի վեր,
Եւ այնքան փոխուած, և այնքան վատթար,
Այնքան մոլորած կը տեսնեմ աշխարհ,
Որ վայրկեան մ'առաջ կը փութամ տալ խոյս,
Զայն բարւոքելու ալ չունիմ ես յոյս։
Ամէն աղջըկան կու տամ գեղ, գորով
Եւ ամէն մանչու՝ քաջութիւն կորով,
Թելք միտք ծերերուն, հիւանդին դարման,
Եւ բոլոր աշխարհք մէկ ձայն, մէկ բերան
Վ.ըրաս կը խընդայ, ամէնքը մէկէն
Հեգնոտ ձայներով ինձ կ'աղաղակեն.
«Կըրնանս տալ մեզի ոսկի և արծաթ,
«Ուրիշ բան պէտք չէ մեզի անկէ զատ։»
Ու այս պիղծ երկրէն կը մեկնիմ ես շուտ
Որ մի գուցէ ծառն, արտեր ու թաւուտ
Եւ ծաղիկները՝ մանիշակ, շուշան,

Վարդի թուփերն ալ կազմելով խուժան,
Խընդրեն շըղարշէ ներբրահիւս քօղեր,
Եւ կամ զըմրուխտէ ցոլացիկ օղեր.
Թիթեռնիկներն ալ կառքեր պահանջեն
Անցնելու համար մարմանդին մէջէն։»
«— Ո՛չ, ո՛չ, գոչեցին վարդերը բոսոր
Որ լըսեր էին տըրտունջներն անոր,
Մենք շատ ցօղ ունինք մեր թերթերուն մէջ,
Այդ ցօղը՝ լոյս մը, գոհար մ'է անշէջ։»
Թիթեռնիկներն ալ թեթև ու սիրուն
Պատասխան տուին անոր խօսքերուն.
«— Մեր թեւին վրայ ունինք ոսկի շատ,
Արծաթ բանուած է մեր կուրծքն ու ճակատ։»
Եւ պարիկն ըսաւ. «Ասոնք են ահա
Լոկ լուրջ էակներն աշխարհի վրայ։»

Նիւթը քաղուած ԺՕՐԺ ՍԱՆԻ (¹) մէկ արձակ հատուածէն

(¹) Ժօրժ Սան, ֆրանսացի նշանաւոր գրագիտուհի, ծնած 1804ին և մեռած 1876ին։ Գրած է վէպեր և ուրիշ երկեր։

ԱԾԱԿԱՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Մաքով տկար մարդիկ միշտ ուրիշներուն վրայ թերութիւն կը գտնեն։ — Իր կիրքերուն յաղթող մարդը մեծ դժուարութեանց ալ կրնայ յաղթել։ — Բարձրաբերձ լեռները յաւերժական ձիւնով ծածկուած են։ — Թռչունները իրենց ուրախութիւնը երգովնին կ'արտայայտեն։ — Ի՞նչ սիրտ ունիք որ կը դիմանաք այդ տառապանքներուն։ — Ամէն օր եթէ մէյ մէկ գնդասեղ գտնէք գետնէն, կ'ըսէ Ֆրանքլին, տարիէ մը երկու ղրուշ կ'ունենաք։ — Ոճրագործին բարձը փուշերով լեցուն է։ — Իմաստուն մարդը իր ժամանակն ու խօսքերը խնայողութեամբ կը գործածէ։ — Համբի մը լեզուն ստախօսի մը լեզուէն նախամեծար է։ — Եթէ ընկերդ եօթանասունըեօթը անգամ մեղանչէ, եօթանասունըեօթներորդ անգամ ներէ՝ իրեն։

Մաքով	հսկ. ան. եզ. գրդ. խնդ. *տկարին*։
տկար	որակ. ածական *մարդիկին*(¹)։
Իր	ստաց. ած *կիրքերուն*։
կիրքերուն	հսկ. ան. յք. տրլ. խնդ. *յաղթողին*։
յաղթող	որկ. ած. *մարդին*։
մեծ	որկ. ած. *դժուարութեանցին*։
Բարձրաբերձ	որկ. ած. *լեռներին*։
յաւերժական	որկ. ած. *ձիւնովին*։
ձիւնով	հսկ. ան. եզ. գրդ. խնդ. *ծածկուածին*։
ծածկուած	որկ. ած. ստորգ. *լեռներին*։
իրենց	ստց. ած. *ուրախութիւնին*։
Ինչ	անրշ. ած. *սիրտին*։

(¹) Խնդիր ունեցող ածականները, ինչպես մեր տկար, բաղադրեալ ածական ալ կը կոչուին։

այդ	ցուց. ած. *տառապանքներուն*։
Ամէն	անրշ. ած. *օրին*։
մէյ մէկ	ըշխկ. թվկն. ած. *գնդասեղին*։
երկու	ըցրցկ. թվկն. ած. *ղրուշին*։
փուշերով	հսկ. ան. յք. գրդ. խնդ. *լեցուն*։
լեցուն	որակ. ած. ստորգ. *բարձին*։
Իմաստուն	որկ. ած. *մարդին*։
իր	ստցկն. ած. *ժամանակին*։
լեզուէն	հսկ. ան. եզ. բցռկ. խնդ. *նախամեծարին*։
նախամեծար	որկ. ած. ստորգ. *լեզուէնին*։
եօթանասունըեօթը	ըցրցկ. թվկն. ած. *անգամին*։
եօթանասունը-եօթներորդ	դասկն. թվկն. ած. *անգամին*։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՁՄԵՌԸ ՍՐԱՆՏԻՆԱԻԻՈՑ ՄԷՋ

Ով որ հիւսիսային երկիրներու մէջ չէ բնակած, չի գիտեր թէ որպիսի՛ նոր կեանք մը կը բերէ անոնց ձմեռը։ Շաբաթներով ձիւնը կը տեղայ հոծ ծուէններով խիտ առ խիտ, և այնքան առատ, և այնքան թանձր, որ մարդ. անոր տեղալը չի տեսներ։ Ցուրտ աղուամազէ ամալի մը մէջէն կը քալես, կը զգաս ինքզինքդ պաշարուած սպիտակ յորձանքով մը որ ամէն մէկ քայլիդ՝ կարծես կը սեղմուի շուրջդ, և կը փաթթէ զքեզ բամպակէ սառուցիկ կապանքներու մէջ։ Հողը ձիւն կտրած է ոտքիդ տակ, միշտ ձիւն։ Աշխարհի վրայ մէկ տարբ մը միայն կայ, ձիւնը։ Այն ատեն շատ ցաւալի է ուղեւորին վիճակը։ Սահելի բնաղդմամբ կը քալէ քան դատողութեամբ։ Ըստ բախտի կը քալէ կէս կուրցած. իր ձիերը տրամօրէն գլխիկոր՝ ա՛լ չկարենալով սովորական հետքերը գտնել, կ'երթան ուր որ քշուին, առանց

ուր երթալնին գիտնալու։ Եթէ կանգ առնէք, եթէ աչքերնիդ ուրիշ կողմ դարձնէք, եթէ վայրկեան մը անուշադիր ըլլաք, ա՛լ չէք կրնար գտնել ձեր անստոյգ ճամբան։ Կորսուած էք։ Ականջը՝ որ ի զուր կը ջանայ թրթռում մը լսել համր օդին մէջ, կ՚ահաբեկի այս թախծագին անդորրութենէն, որ պատկերն է մահուան։ Զիւնը կը տեղայ անչշուկ, և ծանր քայլը կը մեղմանայ կակուղ բամպակին վրայ... միայն մերթ ընդ մերթ ագռաւ մը կը թօթվէ ճերմակ միջոցին մէջ իր մութ ու լորտ թեւերը, և կը չափէ թախծոտ կրասով մը այդ անդոհական լռութեան անջրպետները։

ԼՈՒԻ ԷՆՕ (¹)

136 Լուծել այս հատուածին անուանները, յօդերը և ածականները։

ՍԻՐԱՄԱՐԳԸ ԵՒ ՍՈԽԱԿԸ

Սիրամարգը պոչին վրայ կը պարծէր,
Եւ սոխակն ալ ձայնին գովեստ կը կարդար։
Տըխմար բան է անձը գովել անդադար.
Բայց ո՞ր մարդը, ըլլայ տըղայ, կին թէ ծեր,
Այս սըխալը իր կեանքին մէջ չէ՛ գործեր։

Թաւշափետուր թռչունն անմիտ ու հըպարտ՝
«Գեղն է, կ՚ըսէր, միայն պատուոյ արժանի։»
Տաղանդ, ձիրքեր թռչուններու խելանի
Կ՚արհամարհէր, և պըչրանքով մը հանդարտ
Կը ցուցադրէր իր պերճ ագին փետրազարդ։

(¹) Լուի Էնօ, Ֆրանսացի վիպասան, ծնած է 1824ին և մեռած 1900ին։

Իսկ սոխակն ալ իր ապրանքը կը քըշէր,
Սուր ծիծաղ մը թռցընելով կոկորդէն,
Ուրիշ դիւթիչ մեղեդիներ կը յորդեն։
Երբ վերջապէս վըրայ հասաւ մութ գիշեր
Սև քօղի մէջ փաթթելով վարդն ու փուշեր։

Փայլուն լոյսերն ըստուերին մէջ մարեցան,
Սիրամարգը անհետացաւ մութին տակ,
Մինչ սոխակին գեղգեղն անոյշ և յըստակ
Եթերին մէջ ծաւալելով ցիր ու ցան,
Դիւթեց երկինքն իր վանկերով քաղցրաձայն։

Գեղեցկութեան կը յաղթէ խելքն ու տաղանդ.
Աչքին լոյսը տարիքին հետ կը մարի.
Մըտքին լոյսը՝ քանի կեանքը երկարի,
Կը բողբոջէ և կ՚ուռճանայ մանաւանդ,
Ինչպէս տունկ մը հողի վըրայ արգաւանդ։

ՀՆՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

137. Արձակի վերածել այս ոտանաւորը։

ԴԵՐԱՆՈՒՆ

472. Դերանունը բառ մըն է, որ անունի մը տեղը կը դրուի զայն չկրկնելու համար. Երբ ճշմարտութիւնը ստութեան հետ կը մրցի, վերջապէս կը զգեստնի ՝ն։ Զանձրոյթը հիւանդութիւն մըն է, որուն դարմանը աշխատանքն է։ Մեր երջանկութիւնը կը կրկնապատկենք, երբ ուրիշներն ալ մասնակից կ'ընենք ՝անոր։ Եթէ աղքատը իր ցաւերը ունի, հարուստն ալ էրէնդէրը չունի՞։ Այս նախադասութեանց մէջ՝ զայն, որուն, անոր, իրենցերը բառերը դերանուն են, վասն զի ստութիւն, հիւանդութիւն, երջանկութիւն, ցաւ բառերուն տեղ դրուած են։

473. Դերանունը անունին պէս կրնայ ըլլալ ենթակայ, սեռի խնդիր, յատկացուցիչ, ստորոգեալ, բնութեան խնդիր, եայլն։

474. Դերանունը ունի թիւ, հոլով և դէմք։

475. Դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմքը խօսողը ցոյց կու տայ. Ես կը գրեմ։

Երկրորդ դէմքը՝ ցոյց կու տայ զայն որու կը խօսուի. Դուն կը գրես։

Երրորդ դէմքը՝ ցոյց կու տայ զայն որու վրայ կը խօսուի. Ինք կամ ան կը գրէ։

476. Դերանունները հինգ տեսակ են. Անձնական, Ցուցական, Ստացական, Յարաբերական և Անորոշ։

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

477. Անձնական դերանունները կը ներկայացնեն անձերն ու անոնց դէմքերը, և հետեւեալներն են. Ես

դուն, ինք կամ ան կամ անիկա, մենք, դուք, իրենք կամ անոնք։

478. Անձնական են նաև իրար, զիրար, մեկզմեկ փոխադարձ դերանունները։

479. Ինք կցուելով զինք հայցականին կը կազմէ նաև յատուկ բառ մը, որ դիմորոշ յօդերուն հետ կը գործածուի. ինքզինքս (ես զիս), ինքզինքդ (դուն զքեզ), ինքզինքը (ինք զինքը)։

480. Բոլոր այս դերանունները իրենց յատուկ հոլովումները ունին, ինչպէս կ'երեւայ 178 էջի պատկերին մէջ։

481. Մեկզմեկ, իրար, զիրար, ինքզինքս, ինքզինքդ, ինքզինքը ուղղական չունին։

482. Անձնական դերանունները բային առջև ընդհանրապէս չեն կրկնուիր, այլ զօրութեամբ կ'իմացուին. Եկայ, տեսայ և յաղթեցի, փոխանակ ըսելու Ես եկայ, Ես տեսայ և Ես յաղթեցի։

483. Կան պարագաներ սակայն, ուր հարկ է դերանունը դնել.

Ա. Երբ բայերուն դէմքը կը փոխուի. Դուն պիտի նուագես, Ես պիտի երգեմ։

Բ. Երբ անձն ու դէմքը որոշ կերպով չեչտել կ'ուզենք. Ես եմ որ զքեզ կ'ամբաստանեմ։ Դո՞ւ պիտի պաշտպանեք ինքզինքդ։

484. Ինք, ան, անիկա դերանունները կրնան հաւասարապէս իրարու տեղ գործածուիլ. միայն պէտք է դիտել թէ երբ խօսքին մէջ՝ Գ. դէմքի երկու տարբեր անձ կայ, միշտ գլխաւոր անձին համար ինք կը գործածուի, և երկրորդական անձին համար ան կամ անիկա. Գրիգոր եկաւ Յովհաննէսին հետ. Ինք (Գրիգոր) զոհ չէր անկէ (Յովհաննէսէն)։ Գրիգոր եկաւ Յովհաննէսին հետ. անոր հետ (Յովհաննէսին) խօսեցաւ Ինք (Գրիգոր)։

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

485. Ցուցական դերանունը կը ծառայէ ցոյց տալու այն անձերը և իրերը, որոնց տեղը դրուած է։

486. Ցուցական դերանուններն են. այս, այդ, այն, աս, աս, ան, սա, ասիկա, ասիկա, ասոնք, ասոնք, անոնք, որոնցմէ առաջին եօթը բառերը ցուցական ածականներն են առանց գոյականի՝ այսինքն առանձին գործածուած։

487. Այս յիշուած առարկայի մը կամ գաղափարի մը համար կը գործածուի, սա յիշուելիք առարկայի մը, ինչպէս. Ըրէ՛ ուրիշին ինչ որ կ'ուզես որ քեզի ընեն. — Այս է Աւետարանի բարոյականը։ — Քրիստոս սա պատուէրը կու տայ մեզի. Մի՛ ընէք ուրիշին ինչ որ չեք ուզեր որ ձեզի ընեն։

488. Ցուցական դերանունները կը հոլովուին 180 էջի պատկերին համեմատ։

489. Երբ ան ցուցական դերանունը իբր անձնական գործածենք, անձնական դերանուններու հոլովման համաձայն՝ հայցականի մէջ ը կ'առնէ, և կ'ըլլայ զայն կամ զանիկա։

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

490. Ստացական դերանունները ստացական ածականներէն, այսինքն անձնական դերանուններուն սեռականներէն կը շինուին, անոնց վրայ աւելցնելով ս, դ, ն կամ ը դիմորոշ յօդերը, և բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն. իմ, իմին — քոյդ, քոյինդ — իրը, իրենը, և այլն։

491. Ստացական դերանուններն ալ թիւ և հոլով ունին. տե՛ս պատկեր էջ 180-181։

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

492. Յարաբերական դերանունը որ բառն է, և իրմէ առաջ յիշուած անուն մը կամ դերանուն մը կը ցուցնէ. այդ անունը կամ դերանունը կ'ըսուի յարաբերեալ. Զմայրենի է այն բնաւորութիւնը, որ ամէն մասերը կատարեալապէս ներդաշնակ են իրարու հետ։

493. Յարաբերական դերանունը ունի թիւ, հոլով, և երեք դէմքի համար ալ կրնայ գործածուիլ. Ես՝ որ զձեզ կը յարգեմ, հիմայ կ'արհամարհեմ։ Դուն՝ որ զիմքը կ'արհամարհեիր, հիմայ կը յարգես։ Ան՝ որ զձեզ կը յարգեր, հիմայ կ'արհամարհեմ։

494. Յարաբերական դերանունը կը հոլովուի. տե՛ս պատկեր էջ 182։

495. Յարաբերական դերանունը միշտ յարաբերեալէն յետադաս է, իսկ բայէն կամ խնդիրէն նախադաս. Ոսկին յ--ա--ր մնն է, որուն դէմ-ը-- բոլոր դուռները կը բ-ա-ց-ին։

496. Յարաբերականը ընդհանրապէս յարաբերեալին քով կը դրուի, սակայն ի հարկին կրնայ անկէ բաժնուիլ, ինչպէս. Այն հ-ն-է-ա-ն սովորութեանց կը հետեւիմք ընդհանրապէս, որ-ոնց հետ կ'ապրիմք։

497. Յարաբերական դերանունին եղակին շատ անգամ յոքնակիի տեղ ալ կրնայ գործածուիլ ուղղական և հայցական հոլովներուն մէջ, երբ յարաբերեալին կից ըլլայ. Այն բ-ր-է-ն-ը-ը ը-ր այսօր կ'ընեմք, վաղը երջանիկ պիտի ընեն զմեզ։ Իսկ երբ յարաբերեալէն անջատուած է, ընդհանրապէս յոքնակի կը գործածուի. Այն բ-ա-ն-է-ր-ա-ն վրայ չեմք զմայիր բնաւ, ը-ր-ա ամէն օր կը տեսնեմք։

498. Յարաբերեալը միշտ գոյական անուն մըն է կամ դերանուն մը, բայց երբեմն ալ ամբողջ խօսք մը

կրնայ ըլլալ։ Այդ պարագային՝ փոխանակ որ յարաբերականին՝ լաւագոյն է գործածել ինչ որ. կեռնէ դէջ յաջողելու համար պէտք է դէշ կեղծել, ինչ որ երբեմ չեմ կրցած ընել։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

499. Անորոշ դերանունները սարսամ և անորոշ անձեր և իրեր կը ներկայացնեն։

500. Անորոշ դերանունները ընդհանրապէս անորոշ ածականներն են, իրենց վրայ որոշիչ կամ անորոշ յօդով մը, ինչպէս. բոլոր (ածական) մարդիկ, բոլորը (դերանուն). շատ (ածական) մարդիկ, շատ մը (դերանուն)։

501. Անորոշ դերանուններուն ամենամեծ մասը կը հոլովուի գոյականներուն հոլովման ընդհանուր օրէնքին համաձայն, և ոմանք յոգնական ալ ունին, ինչպէս. ուրիշը, ուրիշին, ուրիշեն, ուրիշով, ուրիշները, Բայց։

502. Զարտուղի հոլովումներ ունին ամենը, մեկը, ո՞վ, ո՞ր, ոմանք, որո՞նք. տես պատկեր էջ 182։

503. Հետեւեալ անորոշ դերանունները յոգնական չունին.

Մեկը, ամեն ոք, ամեն մարդ, մարդ, ամեն մեկը, իւրաքանչիւրը, իւրաքանչիւր ոք, անձնիւրը, ոչ ոք, ոչինչ, ուրիշ մը, նոյնը, միեւնոյնը, նոյն ինքն։ — Բան մը, ամեն բան, ամեն ինչ, այս ինչը, այն ինչը։ — Այսչափը, այդչափը, այնչափը, այսքանը, այդքանը, այնքանը։ — Ինչ որ, ո՞ւրչափը, ո՞ւրքանը, շատ մը, մաս մը, մեկ մասը։

504. Իսկ հետեւեալները ընդհանուր օրէնքին համաձայն յոգնական կ'ընդունին.

Շատը, քիչը, ուրիշը, այսպիսին, այդպիսին, այնպիսին, ասանկը, սանկը, անանկը, ով որ, ո՞վ, ինչ, ինչ բան, քանի՞, քանի՞ն, ո՞ր, ինչը, ո՞ր պիսին, մեկ քանին։

505. Ոչ մեկը յոգնական մէջ կ'ընդունայ ոչ մեկերին, միւսը կ'ընդունայ միւսները։

506. Ոմանք, մեկը եւ միւսը, ամենը, ամենքը, բոլորը յոգնական բայ կ'ուզեն. Բոլորն ալ մեկնեցան։ Ամենքն ալ հոն էին։ Միայն բացառաբար կրնայ ըսուիլ. Ամենը այս է։

507. Անորոշ դերանունները թէ՛ բացառական և թէ՛ սեռական հոլով խնդիր կ'առնեն. Բանորդներուն շարերը վիրաւորուեցան։ Կանանց դէմ մասը շատախօս է։ Զեղծ ոչ դէնուն խօսքին կը հաւատամ։ Մեղքէ ետքինէ՛ յուսախաբ եղան։

508. Քանի մը անորոշ դերանուններ, ինչպէս ոմանք, մաս մը, մեկը, Բայց միայն բացառական հոլով խնդիր կ'առնեն. Զեղքէ ոմանք յաջողեցան։ Այդ պարոնէրէն մաս մը իրիկուան պահեցիք։ Աշակերտներէն դէնը մասնեց իր Տէրը։

509. Անորոշ դերանունները երբեմն ալ փոխանակ սեռական կամ բացառական խնդիր առնելու՝ ստացական դերանունի ձեւով՝ դիմորոշ յօդ կ'առնեն. (Դուք) ամենքդ ալ անիրաւ էք։ Շատերնիս (մեզմէ շատերը) հոն պիտի մնանք։ Ամեն մեկնիրնին (անոնցմէ ամէն մէկը) մեր մեկ պայուսակ ունեին ձեռքերնին (իրենց ձեռքը)։

510. Շատ անգամ անորոշ դերանունները կամ քիչ մը, մաս մը, Բայց բառերը զանց կ'ընդունին, և անոնց բացառական խնդիրը կը մնայ բային քով, ինչպէս. Ունեցածէդ (քիչ մը) տո՛ւր աղքատին։ Այս ընթրիքէն (մաս մը) ես ալ ունիմ։ Այս կերակուրէն (քիչ մը) չէ՞ք առներ։

ՀՈԼՈՎՈՒՄ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

	Ա. ԴԷՄՔ		Բ. ԴԷՄՔ	
	Եզ.	Յոգ.	Եզ.	Յոգ.
Ո.	Ես	Մենք	Դուն	Դուք
Հ.	Ձիս	Ձմեզ	Ձքեզ	Ձձեզ
Ս.	Իմ, Իմին	Մեր, Մերին	Քու, Քուկին	Ձեր, Ձերին
Տ.	Ինձ, Ինծի	Մեզ, Մեզի	Քեզ, Քեզի	Ձեզ, Ձեզի
Բ.	Ինձմէ, Ինէ	Մեզմէ, Մենէ	Քեզմէ, Քենէ	Ձեզմէ, Ձենէ
Գ.	Ինձմով	Մեզմով	Քեզմով	Ձեզմով

Դ. ԴԷՄՔ

	Եզ.	Յոգ.	Եզ.	Յոգ.
Ո.	Ինք	Իրենք	Ան, Անիկա	Անոնք
Հ.	Ձինք	Ձիրենք	Ձայն, Ձանիկա	Ձանոնք
Ս.	Իր, Իրեն	Իրենց	Անոր	Անոնց
Տ.	Իրեն	Իրենց	Անոր	Անոնց
Բ.	Իրմէ	Իրենցմէ	Անկէ	Անոնցմէ
Գ.	Իրմով	Իրենցմով	Անով	Անոնցմով

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ո.	—	—
Հ.	Մէկզմէկ	Իրար, Ձիրար
Ս.	Մէկզմէկու	Իրարու
Տ.	Մէկզմէկու	Իրարու
Բ.	Մէկզմէկէ	Իրարմէ
Գ.	Մէկզմէկով	Իրարմով

ԻՆՔ ԴԵՐԱՆՈՒՆԻՆ ԿՐԿՆԱԿ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա. ԴԷՄՔ

	Եզ.	Յոգ.
Ո.	—	—
Հ.	Ինքզինքս	Ինքզինքնիս
Ս.	Ինքզինքիս	Ինքզինքնուս
Տ.	Ինքզինքիս	Ինքզինքնուս
Բ.	Ինքզինքէս	Ինքզինքնէս
Գ.	Ինքզինքովս	Ինքզինքովնիս

Բ. ԴԷՄՔ

	Եզ.	Յոգ.
Ո.	—	—
Հ.	Ինքզինքդ	Ինքզինքնիդ
Ս.	Ինքզինքիդ	Ինքզինքնուդ
Տ.	Ինքզինքիդ	Ինքզինքնուդ
Բ.	Ինքզինքէդ	Ինքզինքնէդ
Գ.	Ինքզինքովդ	Ինքզինքովնիդ

Դ. ԴԷՄՔ

	Եզ.	Յոգ.
Ո.	—	—
Հ.	Ինքզինքը	Ինքզինքնին
Ս.	Ինքզինքին	Ինքզինքնուն
Տ.	Ինքզինքին	Ինքզինքնուն
Բ.	Ինքզինքէն	Ինքզինքնէն
Գ.	Ինքզինքովը	Ինքզինքովնին

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Այս

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Այս , աս , սա , ասիկա	Սոոնք
Ս. Տ.	Սոոր	Սոոնց
Բ.	Սակէ	Սոոնցմէ
Գ.	Սով	Սոոնցմով

Այդ

Ո. Հ.	Այդ , ատ , ատիկա	Սոոնք
Ս. Տ.	Սոոր	Սոոնց
Բ.	Սակէ	Սոոնցմէ
Գ.	Սով	Սոոնցմով

Այն

Ո. Հ.	Այն , ան , անիկա	Անոնք
Ս. Տ.	Անոր	Անոնց
Բ.	Անկէ	Անոնցմէ
Գ.	Անով	Անոնցմով

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ԴԷՄԲ

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Իմս , Իմինս	Իմիններս
Ս. Տ.	Իմինիս	Իմիններուս
Բ.	Իմինէս	Իմիններէս
Գ.	Իմինով	Իմիններով

	Եզ.	Յոք.
Ո. Հ.	Մերը , Մերինը	Մերինները
Ս. Տ.	Մերինին	Մերիններուն
Բ.	Մերինէն	Մերիններէն
Գ.	Մերինով	Մերիններով

Բ. ԴԷՄԲ

Ո. Հ.	Քուկդ , Քուկինդ	Քուկիններդ
Ս. Տ.	Քուկինիդ	Քուկիններուդ
Բ.	Քուկինէդ	Քուկիններէդ
Գ.	Քուկինովդ	Քուկիններովդ

Ո. Հ.	Ձերը , Ձերինը	Ձերինները
Ս. Տ.	Ձերինին	Ձերիններուն
Բ.	Ձերինէն	Ձերիններէն
Գ.	Ձերինով	Ձերիններով

Գ. ԴԷՄԲ

Ո. Հ.	Իրը , Իրենը	Իրենները
Ս. Տ.	Իրենին	Իրեններուն
Բ.	Իրենէն	Իրեններէն
Գ.	Իրենով	Իրիններով

Ո. Հ.	Իրենցը , Իրենցինը	Իրենցինները
Ս. Տ.	Իրենցինին	Իրենցիններուն
Բ.	Իրենցինէն	Իրենցիններէն
Գ.	Իրենցինով	Իրենցիններով

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

	Եզ.	Յոգ.
Ո.	Որ	Որոնք
Հ.	Զոր	Զորս
Ս.	Որուն	Որոնց
Տ.	Որու	Որոնց
Բ.	Որմէ	Որոնցմէ
Գ.	Որով	Որոնցմով

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՌԻԿ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

Ո. Հ.	Ո՞վ, Զո՞վ	Ո՞րը	Մէկը
Ս. Տ.	Որո՞ւ	Որո՞ւն	Մէկուն
Բ.	Որմէ՞	Որմէ՞	Մէկէն
Գ.	Որո՞վ	Որո՞վ	Մէկով
Ո. Հ.	Ամէնը	Ոմանք	Որո՞նք
Ս. Տ.	Ամէնուն	Ոմանց	Որո՞նց
Բ.	Ամէնէն	Ոմանցմէ	Որոնցմէ՞
Գ.	Ամէնով	Ոմանցմով	Որոնցմո՞վ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱՄԱՌԻԱՆ ՑՈՒՇԵՐ

Անոյշ հովեր կը փչեն զով
Այազմային սարերէն.
Հրսկայ ծառեր՝ ցից բովէ բով՝
Լայն թեւերնին կ'օրորեն.
Դալխուս վերև կը ծածանի
Իրենց կամարը շարժուն,
Եւ իրենց երգը վայրենի
Կ'երգեն ամէն իրիկուն։
Այս հրաշալի բարձունքէն՝ մարդ
Կ'ընդգրկէ մէկ նայուածքով
Դաշտ մ'ընդարձակ, կանանչազարդ,
Ցեղոյ, հանդարտ կապոյտ ծով.
Ուր կը ցցուին կըզգինեբուն
Ուռուցիկ լանջքն ու կըռնակ.
Իսկ թաւիշէ լեռներ՝ հեռուն
Այս պատկերին շրջանակ։
Դաշտին վրայ լայնածաւալ,
Գորգի նման բանուած ճոխ
Կը նշմարեմ անակընկալ
Տեսարաններ միշտ փոփոխ,
Երբ արեւուն կայծեր վերջին՝
Երկար սիւներ շողշողուն՝
Ամպին ծոցէն դուրս կը թռչին,
Կը ծաւալին, կը զեղուն.
Արտը դեղին, կանանչ այգին,
Եզրը ծովուն, լերան սար,
Կը փայլփլան, կը բեկբեկին
Ինչպէս մէյ մէկ զուտ գոհար։
Սարէն, ձորէն միշտ կը փչեն
Հովերն առողջ և կայտառ,
Ծառերն ալ միշտ շարժման մէջ են
Նըւագներով անբոպառ։

Եւ ես հանդէպ այս խորանին
Լոյսերու մէջ ողողուած,
Հանդէպ այս մեծ տեսարանին
Կը ծընրադրեմ երկիւղած։

ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ (1)

138. Արձակի վերածել այս ոտանաւորը։

139. Գոց սորվիլ և բարձրաձայն արտասանել այս ոտանաւորը։

140. Ըսել թէ հետեւեալ խօսքերուն մէջ դերանունները ինչ բառերու տեղ դրուած են.

Սպարտայի մէկ օրէնքը կը տրամադրէր որ երիտասարդները ոտք ելլեն ծերերուն առջև, և լռեն անոնց խօսած ատեն։ — Հայ հարսերը՝ դաւառներու մէջ՝ չեն խօսիր տարիներով իրենց մեծերուն առջև, և գլխու շարժումներով միայն կը պատասխանեն անոնց։ — Եթէ ուռենի՛ մը գլխովայր սնկենք, անոր ճիւղերը արմատ՝ և արմատները ճիւղերու կը վերածուին։ — Հաւը, որ բնապէս շատ վախկոտ է, արծիւի մը պէս բաւական կը դառնայ երբ հարկ ըլլայ իր վառեակները պաշտպանել։ — Հայր Արսէն Բագրատունի նշանաւոր բանաստեղծ մըն է, որ հեղինակած է հոյակապ բերթուած մը, նաև Թարգմանած կարգ մը նշանաւոր երկեր։ — Մարդիկ կան որ շատ կը խոստանան և քիչ կը կատարեն, կան ալ որ քիչ կը խոստանան, բայց կը կատարեն ինչ որ խոստացած են։ — Սիրեցէ՛ք կեանքը, վասն զի բարի է անոր համար, որ ուրիշ ճամբէն կ'երթայ, որ կ'աշխատի անվնաս, և աշխատութեան մէջ կը գտնէ սիրուանները իր վիշտերուն։

141. Հետեւեալ խօսքերուն մէջ աւելորդ դրուած բառերուն տեղ դնել յարմար դերանուններ.

Արտոյտները կը շինեն իրենց բոյները ցորեններուն մէջ, երբ ցորենները կանանչ են։ — Մոլութեան յաղթելու համար պէտք է փախչիլ մոլութենէ։ — Մարդուս համբաւը ծաղիկ մըն է. թեթև շունչ մը կրնայ համբաւը խամրեցնել։ — Ճշմարտութիւնը վերջապէս կը յաղթէ այն խոչընդոտներուն, զոր ճշմարտութեան առջև կը հանեն։ — Շողոքորդը ամբարտաւանները կը սիրէ, շողոքորդը հազարումէկ գովեստներ կը կարդայ ամբարտաւաններուն, և շողոքորդը կ'տրրի ի վնաս ամբարտաւաններուն։

(1) **Մկրտիչ Աճէմեան**, ժամանակակից բանաստեղծ, հրատարակած է բազմաթիւ բերթուածներ։

ՁԵՌՆՈՑ

Սոխուծներու պայքարին ներկայ գտնուելու համար՝ փակարանին առջև բազմեր էր Ֆրանսուա թագաւորը. իր շուրջը կը կենար արքունիքին աւագանին, և աւելի բարձր՝ վերնատան մէջ՝ չքեղ պատակ մը տիկիններու։

Վեհապետը ձեռքովը նշան կու տայ, անագին վանդակ մը կը բացուի, և առիւծ մը ներս կը մտնէ զգուշաւոր քայլուածքով. լռին՝ իր շուրջը կը նայի, երկար յօրանջումներով, իր բաշը կը թօթուէ, կը ճապկըտի և կը պառկի։

Թագաւորը նորէն նշան կ'ընէ. խակոյն ուրիշ դուռ մը կանակի վրայ կը բացուի, ուրկէ վագր մը դուրս կը խոյանայ վայրենի ոռոմումով մը։ Առիւծը տեսնելով, ահարկու մռնչիւն մը կ'արձակէ, պոչովը գետինը կը դոպէ պարուրաձև, սոսկալի, լեզուն դուրս կը ձգէ, վախով բոլորքը կը պոռալ անագնագոչ կատաղի առիւծին. յետոյ, մրմռալով ինք ալ գետինը կ'երկննայ ահոռ քով։

Թագաւորը դարձեալ նշան կ'ընէ. երկփեղկ վանդակէ մը դուրս կը ժայթքեն միահաղոյն երկու ընձառիւծներ, ու բոցեւանդ՝ կռուի կը վազեն վագրին վրայ. վագրը թաթուլովը զարհուրելի հարուած մը կու տայ, և առիւծը մռնչելով տեղէն կ'ելլէ։ Ամէն կողմ հանդարտութիւն կը տիրէ, և շուրջանակի, բոլորաձև կը յածին ահռելի գազանները արիւնախանձ։

Նոյն վայրկեանին՝ վերնատան մէկ քովէն ձեռնոց մը վար կ'իյնայ աղուոր ձեռքէ մը, վագրին ու առիւծին միջև, ճիշդ մէջտեղը։

Այն ատեն Տը Լօրժ ասպետին դառնալով, հեգնոտ կերպարանքով մը կ'ըսէ իր նշանածը՝ Օրիորդ Քիւնէկոնտ. «Պարո՛ն ասպետ, եթէ ձեր անձնուիրութեան խոստումները անկեղծ են, գացէ՛ք ձեռնոցս բերէ՛ք։»

Ասպետը, առանց վարանելու, մրցարանը կ'իջնէ ապառով քալուածքով մը, և ճիւաղներուն մէջէն ձեռնոցը կ'առնէ անվրկեան։

Ասպետները և տիկինները՝ ահաբեկ՝ անոր կը նա-

յին, մինչ ինքը՝ անվրդով՝ ձեռնոցը կը բերէ։ Ամէն կողմէ կը շնորհաւորեն զինքը, և Օրլոորդ Ֆիւնէկոնտ երախտապարտ նայուածքով մը կ'ընդունի զայն։ Բայց ասպետը անոր երեսին կը նետէ ձեռնոցը. «Ա՛լ պէտք չունիմ, Օրլո՛ոդ, ձեր համակրանքին։»

Եւ յաւէտ կը բաժնուի անկէ։

ՇԻԼԼԷՐ (¹)

142. Զրուցագրել այս հատուածը, և կետադրութեան նշաններ դնել։

143. Բացատրել այս հատուածին մէջ գտնուած հետեւեալ բառերը.

Պայքար, փակարան, բաշ, արքունիք, աւազանի, ճապկրտիլ, խոյանալ, զոսկէ, պարուրաձև, ԾաՁուլ, արիւնախանձ, ասպետ, աներկեւան։

144. Բացատրել հետեւեալ առածները դերանուններ գործածելով.

Անգործ ձեռքը կը մոլորայ։ — Ո՛չ նկուր, անոյշ եկուր։ — Թաւալող քարը մամուռ չի բռներ։ — Գոյ՝ սիրտը գոր։ — Քիչ բեռցիր, շատ գարձիր։ — Կատուն ունի հաց ու պանիր, գիշերը բունը չի տանիր։ — Անցուկը մոռցուկ կ'ըլլայ։ — Աչքէ հեռու՝ սրտէ հեռու։ — Դլորեր է պտուկը, գտեր է իր խփիկը։ — Գնա մեռիր, եկուր սիրեմ։ — Էշն ինչ գիտէ նուշը, կ'երթայ կ'ուտէ փուշը։

Օրինակ. — *Անգործ ձեռքը կը մոլորայ։ — Ով որ չ'աշխատիր, աղքատ, Քշուառ և ուրիշին կարօտ կ'ըլլայ։*

145. Մէյ մէկ խօսք շինել հետեւեալ անորոշ դերանունները գործածելով.

Ո՞ւրչափը, շատը, ամէն ինչ, անձնիւրը, բան մը, ուրիշ մը, մաս մը, ոմը, ոչ մէկը, ով, մէկ քանին, ինչ բան, ոչ մէկերնին, միւսնոյնը, այդչափը, մարդ, քիչը, մաս մը, ոմանք։

(¹) Շիլլէր, գերման մեծ գրագէտ, թատերագիր ու պատմագիր, ունի շատ մը կարեւոր երկեր։ Ծնած է 1751ին և մեռած 1805ին։

ԴԵՐԱՆՈՒՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ուրիշներուն վիշտը տխրելով, գթասիրտ մարդը ինք ալ կը տխրուի։ — Խայտիտները իրենց բոյները ծառերուն ոստերուն վրայ կը շինեն, իսկ ծիծեռնակները իրենցը պատերն ի վար կը կախեն։ — Անձնասէրը ոչ ոք կը սիրէ։ — Ով որ ճշմարտութիւնը գիտէ, պէտք է ամէնուն ըսէ։ — Քաղցր ընտանութիւնը առաքինութիւն մըն է, առանց որուն անհնար է հաճելի ըլլալ։ — Մեծերը իրենց բեռը ունին, պզտիկներն ալ իրենցը։ — Ամէնէն մեծ հաճոյքը ուրիշին հաճոյք պատճառելն է։ — Ըսէ՝ ինծի ո՞վ է ընկերդ, ըսեմ քեզի թէ ո՞վ ես։ — Վատաճութիւնը կը շանի մարդ, բայց չի կրնար բռնի ձեռք ձգել զայն։ — Ուրիշին թերութիւնները քննադատելէ առաջ, նախ քուկիններդ սրբագրէ։ — Աթենաս, որ Աթէնքի պաշտպան դիցուհին էր, Հռոմն ալ պաշտպանեց։ — Գէշ գիրքերը թոյն մը կը ձգեն իրենցմէ ետքը, որ մեր հոգին կ'ապականէ, և մեր ճաշակը կը թիւրէ։ — Խելացի մարդը իր սխալանքներուն պատճառը ինքզինքին կը հարցնէ, տխմարը՝ ուրիշներուն կը հարցնէ։

Ուրիշներուն	անորշ. դրն. յոք. սեռկն. յտկցչ. վիշտին։
ինք	անձ. դրն. եզ. ուղ. ենք. կը տխրուիին։
իրենցը	ստացկն. դրն. յք. հյց. սեռի խնդ. կը կախեն։
ոչ ոք	անորշ. դրն. եզ. հյց. սեռի խնդ. կը սիրէին։
Ով որ	անորշ. դրն. եզ. ուղ. ենք. ըսէին։
ամէնուն	անորշ դրն. եզ տրկ. ընք խնդ. ըսէին։
որու	յր. դրն. եզ. տրկ. խնդ. առանցին։
իրենցը	ստց. դրն. յոք. հյց. սեռի խնդ. ունին։
ուրիշին	անորշ. դրն. եզ. տրկ. ընք. խնդ. պատճառելին։
զայն	ցուց. դրն. եզ. հյց. սեռի խնդ. ձեռք ձգելին։
Ուրիշին	անորշ. դրն. եզ. սեռկն. յտկցչ. թերութիւններուն։
քուկիններդ	ստացկն. դրն. յք. հյց. սեռի խնդ. սրբագրէին։

որ	յր. դրն. եզ. ուղ. ենք. *հրին։*
իրենցմէ։	անձ. դրն. յգ. բցական. խնդ. *հտրբին։*
ինքզինքին	անձ. վիպոյ. դր. եզ. տկ. բբ. խդ. *կը հարցնեին։*
ուրիշներուն	անորշ. դրն. յգ. տրկ. բնբ. խնդ. *կը հարցնեին։*

ՌՈՒՍԻՆԵԱՆ

Ռուսինեան քիչ կարդացեր՝ շատ խորհրդածեր էր. ընդհանուր սկզբունքներ ունէր, որոնց յարած էր, ինչպէս կը յարի մարդ իր հաւատքին։ Իր միտքը ընդունակ էր միայն բացարձակը ըմբռնելու. ամէն խնդիր ինքնուրոյն կը նկատէր, առանց ուշ դնելու ուրիշ խնդիրներու հետ ունեցած աւանդութեանը։ Ռուսինեան չէր կրնար հասկնալ թէ բանականութեան ուղածին պէս չի կրնար ձեւակերպիլ ամէն բան, և թէ կարելի չէ պարզութեան վերածել ինչ որ խառն է։ Նոյնպէս թերեւս իր մտքին մէկ դեղեցիկ պատրանքը կարենար համարուիլ, եթէ միանգամայն անձնական բան մը ի յայտ չբերէր իր բնաւորութեան մէջ։ Արդարև անձ մըն էր ան ինք իր վրայ կեդրոնացած. ինքնին կ'ապրէր. դուրսէն ազդեցութիւն չէր ընդուներ, և միայն իր ազդեցութիւնը գործածելու համար երբեմն հաղորդակցութեան կը մտնէր իրերու և անձերու հետ։ Չէր կրնար համոզուիլ թէ ինչ որ ազէկ է իրեն համար, կրնայ ուրիշներուն համար ազէկ չըլլալ, և առաջին ու վերջին պայմանը այն էր ամէնուն հետ՝ որ իրեն համակերպէին։ Վերջապէս ամէն բան իր անձնական յարմարութեանցը վերածելու անյաղթելի տրամադրութիւն մը ունէր։

ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ (¹)

146. Լուծել այս հատուածին անունները, յօդերը, ածականները, դերանունները

(¹) Գրիգոր Օտեան, նշանաւոր գրագէտ. ունի բազմաթիւ գեղեցիկ գրական էջեր հայ պարբերականներու մէջ. ծնած է 1834ին և մեռած 1887ին։

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

Էջ

Դասական գիտելիք

Գաղափար, լեզու, գիր 1
Առոգանութիւն 9
Ուղղագրութիւն 18
Տառադարձութիւն 30
Տրոհութիւն 39
Բառակազմութիւն 48
» (Շար.) բարդութիւն 55
» (Շար.) ածանցում 61
Նմանաձայն, հոմանիշ, հականիշ և բազմանիշ բառեր . . . 72

Անուն կամ Գոյական

Անունները տեսակները և թիւը 79
Հոլովում 88
Հոլովներու գործածութիւն 107
Գոյական գոյականի հետ համաձայնութիւն 115
Գոյականին լուծումը 123

Յօդ

Որոշիչ, անորոշ, դիմորոշ յօդ 127
Յօդին լուծումը 140

Ածական

Որակական ածական 144
Ցուցական, ստացական, թուական և անորոշ ածական . . . 153
Ածականին լուծումը 168

Դերանուն

Անձնական, ցուցական, ստացական, յարաբերական և անորոշ դերանուն 172
Դերանունին լուծումը 187

ՅԱՆԿ ԱՐՁԱԿ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ

Լեզուն	Սրբոնի Տիւսաբ	5
Քաղաքավարութիւն	Նանապետ Ռուսինեան	15
Բնութիւնը և մարդը	Էլիզապէթ Պարէթ Պրաուինինկ	16
Քաղացում	Գալուստ Կոստանդեան	26
Զինորսը	Կեօրկ	28
Ճանճաւաը	Պիֆոն	36
Վերջալոյսը Բիքարտիոյ մէջ	Վիքթոր Հիւկօ	46
Թռնարին և հպարտը	Գրիգոր Գեշտիմալճեան	52
Մայրենի սէր	Թովմաս Թիրզեան	58
Ասեղնագործութիւն	Կարապետ Եւրիւճեան	68
Ճիտին պարտքը	Գրիգոր Զօնրապ	75
Աշխատութիւն	Ռ. Յ. Պէրպէրեան	84
Շեփորիկը	Մարբէոս Մամուրեան	104
Գետը	Ռուբէն Զարդարեան	111
Նիակարայի վրայ	Շարապրիան	120
Պլինիոս իր մայրը կ'ազատէ	Տիւսուշ	125
Մեր արդի բանաստեղծները	Յակոբ Պարոնեան	136
Մեղուներուն պատերազմը	Ռուշելլայի	142
Բեանթիպեան և Սպարդալեան	Եղիա Տէմիրճիպաշեան	149
Նեղոս գետը ամառուան մէջ	Թէոֆիլ Կոթիի	151
Թնայոգութիւն և շռայլութիւն	Նիկողայոս Զօրայեան	163
Զմեռը Սրանտինաւիոյ մէջ	Լուի Էնո	169
Զեռնոցը	Շիլլեր	185
Ռուսինեան	Գրիգոր Օտեան	188

ՅԱՆԿ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒ

Տուարծիկը	Անատոլ Թէոտիկ	6
Մանիչակին խղճը	Հեռեւողութիւն	36
Մոմը	Արտաշէս Յարութիւնեան	45
Տերեւներուն պարը	Բոլ Ժիլրուա	53
Փոքրիկ մայրը	Ժաք Նոռման	59
Շուշանը և կաթիլը	Անաթոլ տը Սէկիւռ	71
Լուսնի լոյսով	Էր Բոնթ տը Լիլ	77

Կոյսի մը մահը	Ռոնսար	87
Գեղջկուհւոյն յուղարկաւորութիւնը	Պոդիզէս	105
Երկու ճամբորդները	Անակ Ֆլոռիանի (Հեռանդ.)	114
Ուղիներուն բով	Աղեքսանդր Փանոսեան	120
Շաբաթները	Սիւլլի Բրիւսոմ	126
Կոտրած անօթը	Սիւլլի Բրիւսոմ	138
Կեանքի սայլակը	Բուշքին (Թարգմանութիւն Լեւոն Սեղբոսեանի)	142
Իրերու տխրութիւնը	Հանրի Գազալիս	152
Պարիկի մը ճամբորդութիւնը	Ժորժ Սանի հեռանողութիւն	166
Սիրամարգը և սոխակը	Հեռեւողութիւն	170
Ամառուան յուշեր	Մկրտիչ Սէճմեան	183

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Սխալ	Ուղիղ	Էջ	Տող
Պակաս	Պակառ	8	14
Սարթ	Սաթ	8	15
Եղբօրս աղջիկը	Եղբօրս աղջի՛կը	10	20
Իրենց բարդերուն	Իրենց ածանցներուն ու բարդերուն	13	6
Ստորադասական ներկային	Ստորադասական անկատարին	14	24
(՛) նշանը	Թաւ (՛) նշանը	14	29
Բայերուն հրամայականները	Ա՛ղ վերջացող բայերուն հրամայականները	19	9
Եւայլն։	Եւայլն։ Բացառիկ է այո՛ մակբայը։	20	32
Միութեան գիծ	Միացման գիծ	23	15
Վէսդա	Վէստա	31	8
Սփինքս	Կիկլոպ	31	9
Sphinx	Cyclobe	31	9
Pytagore	Pythagore	32	9
Թոյլ	Շչական	40	7
(Զ, ս, ժ, շ)	(Զ, ս, ժ, շ)	40	7
Կը գործադրուի	Ընդհանրապէս կը գործադրուի	61	10-11
Դիակ	Դեստակ	64	30
Զրեղէն	Բանջարեղէն	65	12
Թոյլ	Շչական	81	14
Խանութպան	Մեծաբան	86	17
Բացառիկ է տեղի տալ բացատրութիւնը	Բացառիկ են տեղի տալ, տեղի ունենալ, եւայլն բացատրութիւնները	89	3-4
Ովկիանիայի	Ովկիանիոյ	95	24
Աչքերն	Աչքին	138	18

Պ. ՊԱԼԵՆՑ

ԳՐԱՎԱՃԱՌ-Հ՛ԱՏԱՐԱԿԻՉ

Թիւ 20, Զամամաճիրար հոզուտու, Կ. Պոլիս

Հետեւեալ գասագիրքերը, որոնք կը ներկայացնեն արդի ուսումնարարի Մանկանոցական ամբողջ դասընթացք մը, Կրթական Ծրագրին համաձայն պատրաստուած եւ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ վաւերացուած բլլալով, ընդունուած են Կ. Պոլսոյ Լիսէպէ գասատուին քաղաքներու կարեւոր հայ վարժարաններուն մէջ.

Գարձնական Քերականութիւն արդի ուսումնարարի, ԶԱՊԵԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ. Ա. ԴԻՐԵՐ. Բ. Տիպ. Տարրական Գասընթացքի յատուկ . . . . . Գին 3 դր.

Գարձնական Քերականութիւն արդի ուսումնարարի, ԶԱՊԵԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ. Բ ԴԻՐԵՐ. Գ Տիպ. Միջին Գասընթացքի յատուկ . . . . . Գին 4 դր.

Գարձնական Քերականութիւն արդի ուսումնարարի, ԶԱՊԵԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ. Գ ԴԻՐԵՐ. Գ Տիպ. Բարձրագոյն Գասընթացքի յատուկ . . . . . Գին 5 դր.

Ուղղակի Գրատան հասցէին դիմողներուն մասնաւոր զեղչ

معارف نظارت جليله‌سنك ٥ ذى الحجه ٣١٨ و ١٣ مارت ٣١٧ تاريخلى و ١٣ نومرولى رخصتنامه‌سيله طبع اولنمشدر